



# ՄԻՌ

ԾԱՆՈԹԱԿԱՆ - ԳԵՂԱՏՈՒՄ

№ 7-12

2004

digitised by

A.R.A.R.©

2013

# ՄԻՈՆ

ԱՄՍԱԳԻՐ  
ԿՐՕՆԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

ՀԸ. ՏԱՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

2004  
2004

ՅՈՒՆԻՍ - ԴԵԿՏԵՄԲԵՐ  
JULY - DECEMBER

ԹԻՆ 7-12  
No. 7-12

# S I O N

VOL. 78

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY  
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

*Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem*



St. James Press, Jerusalem

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ՄԱՅՐ ԱԹՈՒՍՈՒՐԻ ԷՋՄԻԱԾԻՆ



SUPREME PATRIARCH  
CATHOLICOS  
OF ALL ARMENIANS  
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

**ԳԱՐԵԳԻՆ Բ. ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ԶՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ, ԵՒ ԿԱՍՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԴԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՒՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՑ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾԻՆ**

ԶՐԻՍՏՈՍԱԿԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՄԱԴԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆՂՆՈՒՊՈԼՍՈՅ.

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐՂԱՊԵՏԱՅ, ԶԱՅԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱԿԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՈՆԵԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱԲԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Ձի ուր գանձք ձեր են՝ անդ և սիրտք ձեր եղիցին»  
(Մատթ., 2 21)

Հայոց Գրերի 1600-ամեակի պանծալի յոբելեանի առջև, երբ մեր հայեացքները ուղղուած են դէպի բազմադարեայ գրաւոր մեր արժէքները, Հայրապետական Մեր այս կոնդակով, գոհունակութեամբ տեղեկացնում ենք, որ արդէն երեք տարի է, ինչ հաստատուել է «Մատենադարանի Բարեկամներ» բարեգործական հիմնադրամը՝ կոչուած ծառայելու Երևանի Մատենադարանում պահուող տասնեակ հազարաւոր ձեռագրերի, վաւերագրերի ու հնատիպ գրականութեան բարոք պահպանմանն ու հարստացմանը, ուսումնասիրմանն ու հրատարակմանը, կոչուած նաև նպաստելու հայագիտութեան և ձեռագրագիտութեան ասպարէզներում երիտասարդ նոր սերնդի կրթութեանը:

Սուրբ Մեսրոպ Մաշտոց Վարդապետի անունը կրող Մատենադարանը ազգային մեր նուիրական հաստատութիւններից է, գանձարան մեր նախնիներից աւանդուած բազմադարեայ ժառանգութեան: Արդարև, անհնար է ճանաչել հայ ժողովրդին առանց ձեռագիր մատենաների, ծաղկած յիշատակարանների և վաղ տպագրութիւնների, որոնցում իր ամենապայծառ արտայայտութիւնն է գտել հայութեան հոգին: Գիրքը մեր հաւատի անբաժան մասն է, անբաժան մասն է առ Հայրենին մեր նուիրումի ու սիրոյ, ճանաչողութեան ու արարումի ոգու, որը Աւետարանի լոյսով բացուեց ու փթթեց ու պտուղներ տուեց անմահ:

Մեր հայրերը Ոսկեղէնիկ հիմնգերորդ դարից ի վեր գրեցին ու թարգմանեցին այն ուրախութեամբ ու խանդավառութեամբ, որով դիմաւորեցին Մաշտոցին, երբ վերադառնում էր Աստուծոյ Կամբով բերելով հանճարածնունդ ու հանճարագործ 36 տառերը հայերենի: Գրեցին, որ յայտնի լինի «երանելի մարդկանց ազնուութիւնը, ճշմարիտ հաւատքի հաստատութիւնը, աստուածամերձ, աստուածամոտ կեանքի վայելչութիւնը, սքանչելի կեանքի պայծառութիւնը»: Ինչ որ գրեցին, գրեցին աղօթքով, գրեցին հակառակ աւերի ու թալանի: Կակառակ խաւարի: Դարեր-դարեր անխոնջ գրեցին, մատենաներ ու յիշատակարաններ ծաղկեցին, ու գիրքը դարձաւ սրբութիւն, լոյս ու ճանապարհ:

Յիրաւի, պատմութեան մէջ եզակի երևոյթներից է այն իրողութիւնը, որ ազգային պետականութիւնը կորցրած, օտարի ամենածանր տիրապետութեան ներքոյ գտնուող հալածական ժողովուրդը ձեռագրեր էր ստեղծում, գրքեր տպագրում: Գրում և տպագրում էին դժուարութիւններ յաղթահարելով, գոհողութիւնների գնով, տարագրութեան մէջ, բայց՝ անձանձիր, հաւատալով հայախօս ու աղօթաշունչ այդ գրքերի լուսաբեր, ազգապահպան ու ազգաչին առաքելութեանը, հաւատալով լուսարորութեան ուժին, մարդկութեան առաջագնաց, խաղաղ գալիքին: Այս հաւատով փորձութիւնների, աւերների ու կոտորածների ժամանակ նախևառաջ գրքերը փրկեցին, պահպանեցին գաղթի ճանապարհներին, օտարութեան մէջ, պահպանեցին ինչպէս սուրբ ճշխար:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



SUPREME PATRIARCH  
CATHOLICOS  
OF ALL ARMENIANS  
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

ՄԱՅՐ ԱԹՈՌ-ՍՈՒՐԷ ԷԶՄԻԱԾԻՆ

Այսպիսին է Մատենադարանում հաւաքուած մեր գրաւոր ժառանգութիւնը, որն իր պատմական, մշակութային ու իմացական և իր հոգևոր արժեքով միայն մերը չէ, այլև համայն մարդկութեանը: Մատենադարանը պիտի պահպանենք իբրև հոգու սրբազան տաճար, գիտութեան ու արուեստի լուսեղէն կաճառ՝ միշտ մնալով շարունակողները մեր նախնիների իմաստասէր վարքի: «Զի ուր գանձք ձեր են՝ անդ և սիրտք ձեր եղիցին», - ասում է Քրիստոս՝ մեր Փրկիչն ու Տէրը: Մեր գանձերը կշարունակեն ապրել, կշարունակեն իրենց առաքելութիւնը, քանի դեռ մենք նրանց հնաբոյր, բազմախօս էջերում կփնտրենք մեր հոգին ու էութիւնը, մնալով նաև շարունակողները մեր նախնիների նուիրումի ու նախանձախնդրութեան, որով վանքերում՝ գրչութեան կենտրոններում գրքեր հաւաքեցին և ընդօրինակեցին ու մատենադարաններ կազմեցին:

Սուրբ Սահակ Պարթև Հայրապետի և Սուրբ Մեսրոպ Մաշտոց մեր մեծ Ուսուցիչների խնամքով ծնունդ առնելով՝ տասնհինգ հարիւրամեակ Մայր Աթոռի հովանու ներքոյ պահպանուեց ու հարստացուեց Սուրբ էջմիածնի Մատենադարանը: Այդ հարուստ ու անգնահատելի հաւաքածուի ժառանգորդն է այսօր Երևանի Մատենադարանը՝ աւելի քան կես դար գործելով իբրև պետական գիտական հաստատութիւն և շարունակելով լինել մեր ժողովրդի հպարտութեան ու հոգածութեան առարկան:

Մատենադարանը, սիրելիներ, պիտի շարունակի մնալ համազգային մեր սիրոյ և ուշադրութեան կենտրոնում, որպէսզի մեր անգնահատելի արժեքները ամբողջութեամբ ու լիարժեքօրէն ուսումնասիրուեն, մատուցուեն ու ճանաչելի դառնան մեզ և միւս ժողովուրդներին, շարունակելով լոյս սփռել՝ իմացութեան, հաւատի, սիրոյ ու նուիրումի: Գանձեր ունենք Մատենադարանում ամբարուած, ուրեմն, թող այնտեղ լինեն նաև մեր սրտերը:

Ոգեկոչելով Սուրբ Սահակ և Սուրբ Մաշտոց Երանելիներին, մեր մատենագրութեան բոլոր անխոնջ մշակներին՝ գրիչներին, ծաղկողներին, կազմողներին, ստացողներին, օրինաբանելով ձեռագրեր փրկագնողներին ու բարերարներին, յորդորում ենք բոլորիդ, հաւատացեալ ու սիրեցեալ Մեր ժողովուրդ, հայ դպրութեան, մշակոյթի, մատենագրութեան և պատմութեան նկատմամբ խորը ակնածանքի և խոնարհումի զգացումով մասնակցեք Մատենադարանի գործունէութեանն ու ծրագրերին ձեր ընծայաբերումներով, սատարեք ու զօրակցեք նրա առաքելութեանը: Հաւատարիմ ու հոգացող սրտերով պահպանենք ու փոխանցենք մեր գանձերը սերունդներին, որպէսզի անցեալի ու ներկայի յարատև շաղկապումով լուսաշող ծնունդ առնի մեր վաղուայ օրը, ու պայծառ փայլի հայոց ապագան, որպէսզի սերունդների շուրթերին շարունակի հպարտօրէն հնչել. «Զի թպտ և ենք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, ... սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի»:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւետ օրինեալ ի Մենջ, անէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 3-ն Սեպտեմբերի  
Յամի Տեառն 2004 և ի թուին Հայոց ՈՆԾԳ  
ի Մայրավանս Սրբոյ էջմիածնի  
ընդ համարաւ 254

ԿՐՕՆԱԿԱՆ

ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Առն միոջ էին երկու որդիք. ասէ կրտսերն ի նոցանէ ցհայրն.

«Հայր, տո՛ւր ինձ բաժին որ անկանի յընչիցդ»: Եւ նա  
բաժանեաց նոցա զկեանսն: (Ղուկաս ԺԵ. 11)

20րդ դարու սկիզբները, երկու ծանօթ կրօնականներ, մին՝ Իրլանտացի Կաթոլիկ վարդապետ մը, եւ միւսը՝ Բողոքական ֆարոգիչ մը, երկուշաբթի առտու մը կը հանդիպին իրար եւ վարդապետը կ'ըսէ ֆարոգիչին.

- Լսեցի թէ երէկ Աստուածամօր մասին խօսած ես եղեր:

- Այո՛, նիշդ է, կը պատասխանէ ֆարոգիչը:

- Ի՞նչ ըսիր, հարց կու տայ վարդապետը:

- Ձեմ կարծեք թէ սխալ բան ըսի, կը պատասխանէ ֆարոգիչը, միայն ըսի թէ ան մօրս նման լաւ կին մըն էր:

- Ուրախ եմ, կ'ըսէ կաթոլիկ վարդապետը, մայրերու մասին խօսք չունիմ, սակայն բացայայտ է որ ահագին մեծ տարբերութիւն կայ զաւակներուն միջեւ...:

Նոյն ընտանիքին պատկանող երկու զաւակներ, սակայն եւ այնպէս այնքա՛ն մեծ տարբերութիւն երկուքին միջեւ: Այս էր Կաթոլիկ վարդապետին ըսել ուզածը, հոգ չէ թէ կատակով ըսուած: Եւ ահա միեւնոյն բանն է որ կ'ըսէր մեզի այսօր Ղուկասի Աւետարանէն առնուած Անառակ Որդիի առակը. տարբերութիւնը երկու եղբայրներու միջեւ, մէկը՝ բարի, իսկ միւսը՝ ոչ-բարի, չըսելու համար չար:

Եղբայրներէն մին ըմբոստ էր. ան կ'ուզէր հեռանալ իր հօրենական տունէն, տարածել իր թելերը եւ ընդլայնել հորիզոնը իր կեանքի կարելիութիւններուն, ըլլալ բացարձակապէս ազատ ու անկախ,

եւ մանաւանդ չզգայ ճնշող բեռը պատասխանատուութիւններուն, զորս երբեմն կեանքը կը դնէ մեր վրայ: Եւ ինչպէս յաճախ կը պատահի, անոր ծրագիրները ջուրը կ'իյնան:

Վստահ եմ թէ բոլորդ ալ տեսած ըլլալու էք մեծ ֆաղափներու փողոցներուն վրայ ցիր ու ցան եղած հազարաւոր անտուն եւ անտէր երիտասարդներ, որոնք կամովին հեռացած իրենց ընտանեկան յարկերէն՝ անցորդներէն դրամ, կերակուր, ջերմութիւն եւ պատսպարան մը կը մուրան: Անառակն ալ, անցնելով այդ վիճակներէն, երբ այլեւս սկսած էր քաղցիկ յուսահատութեան դռները, յանկարծ ֆաջութիւնը կ'ունենայ եւ կ'որոշէ վերադառնալ տուն, այնտեղ՝ ուր կը պատկանէր: Եւ վստահ եղէք, որ այդպիսի ֆայլ մը առնելը այնքան ալ դիւրին բան չէր, մանաւանդ իրեն նման երիտասարդի մը համար, որ շփացած մեծցած էր, որուն համար կեանքը ամէն ինչ բերած էր իր ուղղութեամբ, եւ որ կը կարծէր թէ ինք ամէն ինչ ունէր: Հետեւաբար այդ ֆայլը իրեն համար պիտի նշանակէր կլլել իր արժանապատուութիւնն ու ընդունիլ իր սխալը եւ տուն վերադառնալ, ուր նախ վստահ անգամ չէր եթէ պիտի ընդունուէր կամ ոչ: Բայց չէ՞ որ զղջումն ու անոր յաջորդող ներումը դիւրութեամբ չեն գար մեզի, անոնք որոշ գին մը կ'ենթադրեն, զոր ենթական պարտի վճարել: Ուրեմն պէտք է լաւ ըմբռնենք անոր ներքին խոռովն ու զգանք անոր էութիւնը կրծող անհանդարտ վիճակը:

Միւս եղբայրը, որ այսպէս ըսած քարի գաւակն էր, երբեք չէր հեռացած տունէն: Ան յարատեւ գտնուած էր իր հօրը մօտ, միշտ ներկայ՝ օգտակար ըլլալու անոր իրենց առտնին գործերուն մէջ: Ան աշխատասէր էր եւ գիտակից իր պատասխանատուութեանց, այսու ամենայնիւ օր մը օրանց չէր արժանացած իր հօր գնահատականին, ուրեմն բնաւ զարմանալի չէր որ երբ իր անառակ եղբայրը կը դառնար եւ կ'արժանանար հերոսի վերադարձին, ան այլեւս չը համբերէր եւ կորսնցնէր ինքզինքն եւ դառնօրէն գանգատէր իր հօր անտրամաբանական վարուելակերպին համար: Եւ այդ արարքով ան ցոյց կու տար թէ ինք որքա՞ն տարբեր էր իր հօրմէն:

Ու վայրկեանի մը համար թող ձեր ականջներուն մէջ հնչէ երկխօսութիւնը, որ տեղի կ'ունենայ հօրը եւ տունը մնացած զաւկին միջեւ: Հայրը կ'ըսէ. «եղբայրդ», մինչ զաւակը ականարկելով իր Անառակ եղբօր, քամահրանով կ'ըսէ. «է՛ն այս զաւակդ»: Սակայն իմաստուն հայրը խտրութիւն չի դնէր զաւակներուն միջեւ. անոր սէրը անհուն է եւ անսահման երկուքին հանդէպ:

Մեր Փրկիչը՝ առակ մը կու տայ մեզի այսօր, որուն դերակատարները Հայր մը եւ իր երկու զաւակներն են. մին՝ ինքզինքը օտարացուցած, մինչ միւսը՝ այսպէս ըսած «կատարեալ» զաւակն է, եւ Քրիստոս մեզի կը թողու քաղցատեղ երկուքին ընթացքը: Կրտսեր եղբայրը, որ այդ ընտանիքին մաս կը կազմէր, ինքզինքն հեռացուցած էր ընտանեկան ապահովութենէն եւ ստրկէն: Սակայն ան անգամ մը եւս ինքզինքն կը գտնէր իր ընտանեկան յարկին տակ սիրուած եւ նախկին փառքին արժանացած: Ան բնաւ քննադատական կամ խիստ խօսք մը չէր լսեր իր հօրմէն,

ընդհակառակը՝ ջերմօրէն կ'ողջագուրուէր անոր կողմէն:

Երեց զաւակը, որ միշտ մնացած էր իր ընտանիքին հետ, եւ վայելած անոր ապահովութիւնն ու ջերմութիւնը, իր խեղ բնաւորութեան պատճառով ինքզինքն է որ դուրս կը թողուր իր ընտանեկան յարկէն: Ան կը ծառանար իր հօր դէմ, անոր արդարամտութեան, սիրոյ եւ մանաւանդ անոր ներելու անհուն կարողութեան դէմ: Մինչ կրտսեր զաւկին հոգին կը տենչար արժանանալ հօրը ներողամտութեան, անդին՝ երեց զաւակը, որ իրա՛ն անառակն էր, կարիքն անգամ չէր զգար ներուելու:

Սուրբ Գրային մեկնաբաններ ուրիշ տարբերակ մը եւս կու տան Անառակ Որդիի առակին, համաձայն որուն Աստուած ունէր երեք զաւակներ, որոնցմէ երկուքը հողածին էին, իր ձեռագործները, մինչ երրորդը երկնային որդին էր, ծնունդը՝ յաւիտեանական Աստուծոյ: Երկրի վրայ գտնուող կրտսեր հողածինը, մոռցաւ իր իսկական տունը եւ իբր հետեւանք խօլ հաճոյքներու՝ թաղուեցաւ մեղքի մէջ: Երկրածին երեց որդին, հակառակ այն իրողութեան որ անտարբեր չէր հանդէպ երկինքին, սակայն ան ալ իր ամբարտաւանութեանը մէջ սկսաւ ատել իր եղբայրը:

Երկինքի մէջ գտնուող որդին շարունակ եղաւ եւ ապրեցաւ իր հօր ուրախութեանը մէջ, քայց միշտ երբ Հօրը հետ կը յիշէին երկրի վրայ գտնուող երկու եղբայրները, տխրութիւն մը կը պատէր զիրենք: Օր մը, անակնկալ կերպով, Հայրը ըսաւ իր երկնային զաւկին.

- Քեզ՝ յաւիտեանական որդիս, պիտի դրկեմ փնտռելու երկու եղբայրներդ:

Ու երկնային որդին ըսաւ.

- Կ'երթամ, որպէս զի եղբայրներս տուն դառնան եւ Հայրս այլեւս չտա-

նապի վիշտով:

Այսպէսով, երկնային որդին մարդկային մարմին առաւ եւ քաղց երկրի ու մարդոց ճամբաներէն: Ան գտաւ կրտսեր անառակը եւ կիսեց անոր ամօթանքներն ու դառնութիւնները, քայց դարձեալ կրտսեր անառակը մնաց խուլ, ըսելով. «Աստուած հեռաւո՛ր անուն մըն է միայն, որ նոյնիսկ այլեւս սարսափ չ'ազդեր»:

Ասկից ետք երկնային որդին գտաւ երէց անառակը, որ կը թուէր ըլլալ քարեպաշտ եւ հնազանդ գաւակ մը, սակայն այս մէկն ալ իր արտաքին կրօնապաշտի պատեանին տակ կը կրէր քարացած սիրտ մը, ու ան դառնացած ըսաւ իր երկնային եղբօր. «Ինչո՞ւ կը փնտռես մեր կրտսեր եղբայրը, որ անառակ մըն է լոկ. դուն ալ անկէ լաւ չես երեւիր»:

Եւ ապա պատահեցաւ ամենասարսափելի եւ անգութ բանը. երկու անառակ եղբայրները միանալով իրենց թշուառութեանը մէջ, սպաննեցին յաւիտեանական որդին, որովհետեւ անոր լոյսը ցաւ կը պատճառէր անոնց հիւանդկախ աչքերուն: Իրենց դառնութեանը մէջ, անոնք սպաննեցին իրենց երկնային եղբայրը խաչի մը վրայ, եւ մինչ կը մեռնէր, ան աղօթեց ու ներում խնդրեց անոնց համար, թէ եւ երկու անառակներն ալ քաջ գիտէին թէ երկինքի որդին իրենց հետ պիտի ըլլար յաւիտեան, քարեխօսելու իրենց երկնաւոր Հօր, ջնջելու անոնց մեղքերու տոմարը եւ իր հրաշագործ նայուածքով բուժելու անոնց հոգիին վերքերը:

Ետք, իր անսիրտ արարքէն գղջացած, կրտսեր անառակը ըսաւ. «Ես կը դառնայի Աստուծոյ, եթէ սպաննած չ'ըլլայի իր Միածինը»: Մինչ երէց անառակը կ'ըսէր. «Ձէի անդրադարձած իմ անսէր ըլլալուս մինչեւ որ տեսայ իր

սէրը. եւ հիմա արդէն ուշ է, քանի որ սպաննած եմ գինե...»: Սակայն վերջը, յաւիտեանական որդին յարութիւն առաւ մեռելներէն, որովհետեւ ո՛չ մէկ գերեզման - ի՛նչ խորութեամբ եւ մեծութեամբ ալ ըլլար - կրնար բանտարկել անոր սէրը:

Մեծ Պահոց շրջանը, սիրելի հաւատացեալներ, մեզմէ իւրաքանչիւրին առաջ կը դնէ հետեւեալ հարցումը. «Յետոյ ի՛նչ ըրին երկու եղբայրները»: Մեզմէ իւրաքանչիւրս իր մէջ ունի երկու անձնաորութիւններ, ուրախ եւ երջանիկ՝ որ խարուսիկ է ու ժամանակաւոր, իսկ երկրորդը՝ տխուր եւ դժգոհ, որ առեղծուածային թուելով հանդերձ, իրա՛ւ երջանկութիւնն է: Առաջինը, որ կը թուի ըլլալ իրաւ, մեզի կու տայ խոստումներ՝ որոնք երբեք չեն իրագործուիր, մինչ տխրութիւնը՝ որ չիրագործուող երազ մը կը կարծենք, մեր առաջ կը դնէ պահանջներ՝ որոնք մեզ կ'առաջնորդեն կատարելութեան:

Անառակ Որդիին՝ «Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո» խօսքը, ուրիշ բան չէ եթէ ոչ համակերպիլը, շատերուս այդ տխուր ու միօրինակ թուող կեանքին, որ բաժինն է այս աշխարհին: Ան չէր ծնած ուրիշին ծառան կամ գերին ըլլալու, եւ ա՛յն անձը որ կրնայ ընդունիլ իր սխալը եւ կը գիտակցի իր մեղքին ու յանցանքին՝ չի կրնար երբեւիցէ ուրիշին ծառան ըլլալ: Մեր Փրկչին նպատակն էր դուրս բերել ստրուկի հոգեբանութեան տիղմին մէջ խրած մարդը՝ եւ տալ անոր պէտք եղած քաջութիւնը որպէս զի ան միանգամընդմիջտ կարենար ձերբազատուիլ հեթանոսութեան եւ կամ հրէութեան կրօններու պարտադրած կաշկանդումներէն, եւ այդպէսով մտնէր Քրիստոնէութեան ազատ կեանքին մէջ, վերադառնար իր հայրական տունը, ուր իրեն կը սպասէր իր նախկին փառքն ու պատիւը:

«Ասեմ՝ ձեզ, զի այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ», կ'ըսէ մեր Տէրը, «Կորսուած Ոչխարի» առակին մէջ: Արդարեւ, երկինք աւելի կ'ուրախանայ մէկ մեղաւորի փրկութեամբ, քան թէ իննսուն եւ իննիս համար՝ որոնք ներուելու կարիքը չունին:

Անառակ Որդւոյն առակը մեզ դէմ առ դէմ կը դնէ կարգ մը ճշմարտութիւններու, եւ Մեծ Պահոց այս ժամանակաշրջանը յարմարագոյն ատենն

է քննելու մեր սիրտերուն խորը եւ փորձել բուժել հոն գտնուող հին վերքերը, դառնութիւնները, քէներն ու հաշիւները:

Չի փորձենք նմանիլ տուն մնացած երէց զաւկին, այլ նմանինք Անառակին՝ իր անկեղծ զոյջումով եւ տուն դարձով, վերստին արժանանալու այն երանաւէտ կեանքին, մեր նախկին փառքին՝ որմէ հեռացուցած էին մեզի մեր նախածնողները իրենց անհնազանդութեամբ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. Ամէն:

ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

### ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԱՆՀԵՐՔԵԼԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ Է

Եթէ ամենօրեայ ապրուստի դժուարութիւնները յաղթահարելու համար՝ անհրաժեշտ է պայտարիլ, ո՛րքան զօրութիւն եւ կորով պէտք է սպառել՝ հոգեկան կարծր պայտարներու մէջէն՝ յաղթական դուրս գալու համար, երբ տկար մարդը՝ փորձութիւններէ մտրակուած՝ ծնկաչոք կը ծոխ ու կ'իյնայ, եւ յուսալուած՝ կը մնայ գետնամած:

Փորձառութեան դասերը կը վկայեն, թէ տեսլական մաքառումներու մէջ մարդուն յամառ ջանքերը, ի վերջոյ յանգած են վճռական յաղթութիւններու:

Երբ կ'իյնաս ու չես վերականգնիր ու կը մնաս մինչեւ վերջ գետնամած, մի՛ յուսար, որ Աստուած երկինքէն վար պիտի գայ ու քառնայ քեզ այդ անել վիճակէն:

Այդ պարագային, միայն յուսահատութիւնն է, որ կը շարժի եւ գոհ մը գտած ըլլալու փութկոտութեամբ կու գայ եւ իր սառուցիկ թւերուն մէջ կը գրկէ քեզ ու կը նետէ ցեխաջուրներու մէջ, որ հոսանքէն փետուրի պէս էշուխ ու ողբերգական վախճանդ տեսնես:

Անկեալը մեղաւոր մըն է. ինչ

յուսալիչ դրութեան մէջ ալ գտնուի, կրնայ իր հաւատքին զօրութեամբ ամրապնդել ներքին ուժականութիւնը եւ իր պարտութիւնը վերածել գեղանահանջ յաղթութեան:

Ո՞վ կրնայ ապացուցել, որ այս մեղապարտ աշխարհին մէջ մեղէն չփորձուած սուրբեր կան: Մինչեւ անգամ հինաւորց սրբակեաց բարեպաշտները չեն յաջողած փորձութեան համեղանաշակ խայծերէն չիրապուրուիլ: Որքան ալ անոնք առաքիլութեան բուրաստանին մէջ ծաղկած՝ քաղմանառագայթ շողարձակում տուած են իրենց ինքնութեան: Ամէնքն ալ անխտիր համտեսած են մեղքին դառնահամ պտուղները ծանր ու թեթեւ անկումներով: Բայց արտասուաթոր զոյջումով քալած են իրենց անհաւելի մեղքերը:

Անոնք՝ այս աշխարհի բարոյական նեխուրութեան մէջ աղօթանուէր վերացումներով ու Քրիստոսի շնորհներով փառաւորուեցան եւ անցան երկրի մթին սահմաններէն դէպի հոգեւոր աշխարհ, արդարացած ու լուսապսակուած:

Նոր Հաւատքին մեծագոյն հալա-

ծիչը եւ անգուգական ֆարոգիչը Պօղոս Առաքեալ՝ երկրագունտի ծանրութիւն տուաւ իր մեղքերուն եւ դարձաւ պարագլուխը չարագործութեան, Քրիստոսի Աւետարանին դէմ իր շղթայագերծուած կատաղի հալածանքներով: Բայց երբ լսեց Վարդապետին աղու ձայնը, որ կ'ըսէր,

- Սաւուղ, Սաւուղ, ինչո՞ւ գիս կը հալածես...

Նոյն րոպէին հրաշքը կատարուեցաւ եւ Սաւուղ զգեցաւ նոր հոգի, նոր կեանք, նոր անուն եւ կոչուեցաւ Պօղոս Առաքեալ, որ եղաւ անգուգական եւ բոցաշունչ ֆարոգիչը Քրիստոսի աստուածութեան եւ Սիրոյ Յեղափոխութեան:

Այսօր, նիւթապաշտ ժամանակներուն, ֆանի՛ ֆանի՛ օտար եւ հայ կրօնաւորներ, բացառութիւնները զանցանելով, մեղքերու ծանրակշիռ բեռը շալկած՝ սրբազան բեմերէն սէր կը ֆարոգեն եւ գիրար չեն սիրեր, գիրար կը հալածեն եւ դրամը ըրած են իրենց հաւատքին կուռքը:

Ոտքի վրայ՝ անկեալ կեանք ունին, կրօնէին բարոյականը նիւթականացուցած, հարստանալու հեռանկարով, ԱՌԱՔԵԼԱԿԱՆ գործ կը կատարեն: Անոնցմէ նմոյշ մը, գորլաւ կը ճանչնամ, միլիոնատէրի համբաւ մը կը վայելէ:

Մեղքին շահագործումներով բրգացած այդ հարստութիւնը, հիւանդագին ալեւորութեան մէջ պիտի չկրնայ վայելիլ՝ կեանքին տարիները սպառած ըլլալով: Բնական է, գանձը պիտի անցնի այնպիսի մարդոց ձեռքը, որոնց պիտի չուզէր փէնի մը անգամ ժառանգ թողուլ:

Բայց ընչաքանց մարդիկ, որ չեն հաւատար մեղքին մտրակումներուն եւ ոչ ալ մահուան ժամանումին, կը կարծեն թէ պիտի չմեռնին, եւ այդ կոյր

գիտակցութեամբ րոպէ մը դադար չեն տար անիրաւ շահերու արշաւին, մինչեւ իրենց դագաղին մէջ ամփոփուիլը՝ մեղքին հետ իրենց մեղսակցութեան կապը կը պահեն անխզելի:

Մարդոց արժանապատուութեան հետ կրնաս խաղալ ու մնալ անպատիժ, բայց Աստուծոյ Սրբութիւնը, երբ կը փորձես մրտտել սուտին արատներով, կը նշանակէ գեհեմի բոցերուն հետ խաղալ ու պատուհասուիլ:

Հին օրերուն, ո՞ր բարեպաշտ հոգեւորականը կրնար նախատեսել, թէ օր մը վաշխառուներ պիտի յաջողին նուիրապետութեան բարձունքներուն վրայ լանջախաչերով ճառագայթել ու կրեստներու դիրքով շլացնել իրենց կերպարին վրայ նիւթապաշտութիւնը:

Ես՝ անմեղ մը չեմ, որ 93 ամեայ տարիքիս կարգ մը անուղղայ վեղարաւորները հրապարակաւ կը նշաւակեմ, առանց բացայայտելու իրենց ինքնութիւնները: Թող իրենք կարդան ու անդրադառնան իրենց մեղքերուն:

Շատ անգամ՝ երիտասարդ օրերուս կշտամբուեր եմ խղճիս կարծր ազդարարութիւններէն եւ զղջացեր ու հոգեւորապէս վերանորոգուեր: Անկէ ասդին կը հպատակիմ խղճիս յորդորներուն եւ ինչ որ Աստուածահանոյ է՝ կը կատարեմ, եւ ինչ որ կշտամբելի է, կը պախարակեմ հրապարակաւ, առանց բացայայտելու զանոնք անուամբ: Մեղքը որքան ալ փոքր ըլլայ, եթէ ոտքիդ մատին ծայրով դպչիս՝ ամբողջ մարմնով կը կալանուիս իր ցանցին մէջ:

Կեանքի պայքարին մէջ անխուսափելի են եւ մերթ անյաղթելի դժուարութիւնները: Բայց՝ Աստուծոյ զօրութեան ապաւինած բարեպաշտը իր ներքին ուժերու զօրակոչումով կը յաջողի

այնպէս մը պողպատեղ իր հաւատքը, որ իր կեանքին առջեւ հորիզոնական կը բացուին յաջողութեան դարպասները:

Երկնային ֆողարկուած օրէնքները միշտ ալ հրաշագործներ են եւ առիթը ընծայելու գաղափարական մարդոց, որ արդիւնաւորեն իրենց ճիգերը:

Հաւատքի մարդուն համար, ո՛չ մէկ անկում անվերականգնելի չէ եւ ո՛չ մէկ ձախողութիւն անիրագործելի:

Անմահութեան գաղափարը՝ մարդուն գիտակցութեան մէջ բնածին է եւ այդ հաւատքով կը սնուցանէ իր երանաւէտ ապագային յոյսերը:

Ամէն մարդ, որ աշխարհ կու գայ ապրիլ կ'ուզէ, ո՛չ թէ այս հողեղէն կեանքը, որ այսօր կայ, վաղը չկայ, եւ կրնայ ծերութեան հանգրուանին չհասած անժամանակ շիջիլ, այլ՝ կ'ուզէ ապրիլ այն կեանքը երկրի վրայ ու երկնքին մէջ, որ գերբնական ու գերբերկրային է ու մշտնջենական:

Մեղքին ուրացումով ապրող մարդիկ կ'անգիտանան այս մեծ ճշմարտութիւնը ու չեն ուզեր հեռաւոր յոյսերու զօդել իրենց հաւատքը:

Եթէ այս անցողական կեանքէն՝ տարբեր կեանք գոյութիւն չունի, որ մարդուն հոգին տիեզերական անպարագրելի տարածքներու վրայ յաւերժութիւնը ողջունէ, ինչո՞ւ Աստուած մարդուն գիտակցութեան մէջ պիտի արմատացնէր անմահութեան գաղափարը: Կրնա՞յ կեղծիք մը ըլլալ այդ մտածումը, կրնա՞յ ամենաբարի Արարիչը խաբել իր բանաւոր գաւակը եւ հիասթափ ընել անոր հաւատքը:

Աստուած չստեղծեց մարդը, որ անբաններու բնագրական բերումներով ապրի, գլուխը գետին ծռած՝ մարմինը սնուցանէ ու մահանայ:

Մահը Աստուծոյ ստեղծագործութիւնը չէ, այլ՝ մեղքին յղացումը:

Աստուած ուզեց որ մարդկային մարմինը երկրի վրայ հողին հետ տարրալուծուելէ ետք, երկնքին մէջ մշտնջենական կեանք ունենայ եւ նանչնայ զԱստուած նախայաւիտեաններու փառքին մէջ:

Երբ չես հաւատար յարութեան եւ գերեզմանը կը համարես կեանքիդ վախճանը, այն ատեն կը ժխտես Աստուծոյ գոյութիւնը եւ դուն ալ անգոյութեան մէջ կը կորսուիս:

Գոնէ ես՝ իմ տկար դատողութեամբ, չեմ կրնար հաւատալ, որ Արարիչը իր ստեղծագործութեան հրաշակերտը աշխարհային կարճատեւ կեանքէն վերջ, դատապարտէ անգոյութեան:

Եթէ ընդունինք անաստուածներու այն հաւաստումը, թէ մարդը եկած է անգոյութենէ ու կը դիմէ դէպի անգոյութիւն: Այ՛ ինչո՞ւ հոգեւոր կեանք ապրիլ, ինչո՞ւ երկար ժամանակ սպառել աղօթասացութեամբ, ինչո՞ւ միտք եւ հոգի մշակել, ինչո՞ւ յոյսերով ու իղձերով նպատակներ հետապնդել, երբ այս բոլորը պիտի շոգիանան մեր մարմնին փոշիացումէն ետք:

Մարդկային բնութիւնը եւ բանականութիւնը կը ժխտեն այս բոլոր յուսալիչ նախատեսութիւնները ու պիտի շարունակենք հաւատալ ու պաշտել ՏԻԵՋԵՐԱԿԱԼԸ, որ նախախնամող գորովագութ չայր մըն է եւ մեր հոգիին պահանջն է, որ հաւատանք ու ապրինք իր սիրոյ օրէնքին համաձայն:

Այս հաւատքը շատ խոր արմատացած է մեր էութեան մէջ եւ փորձութիւնները, որքան ալ ձգողական ըլլան, ի զօրու չեն մեզ հրապուրելու:

Այս ջերմեռանդ նեղգացումով կը հաւատայ ճշմարիտ բրիստոնեայ մարդը եւ երկրի քաղաքացիութենէ հրաժարելով, ինքզինք կը հռչակէ երկնաքաղաքացի՝ Աստուածային յաւերժալոյս Հովանաւորութեան ներքեւ:

ՎԱՐԴԱՆ Ա. ՔԷՆՅ. ՏԻԻԼԿԷՐԵԱՆ

## ՈՒԽՏ ԵՒ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

«Յինձն են ուխտ իմ, Կոր տաց քեզ,  
Աստուած, օրհնութեամբ»: (Մաղմ. ԾԵ 12)

Միրելի հաւատացեալ եւ ուխտաւոր ժողովուրդ.

Կ'անցնի եւս մէկ ժամ եւ 2004 թուականի Աստուածամօր ուխտի օրուայ մասին կը խօսենք իբր անցեալում կատարուած մի դէպք: Սակայն անցեալը, լինելով ժամանակի շղթան սկզբնաւորող կարեւոր օղակը, իր ազդեցութիւնն ու հետեւանքներն է թողնում ներկայի եւ ապագայի վրայ: Մեզանից իրաքանչիւրի ուխտը կապուած է ապագայի հետ, մեր աղօթքներն ուղղուած են ապագայում կատարուելիք դէպքերի եւ գործերի յաջողութեան համար: Դա օրինաւոր է:

Նախ պարզենք, թէ ինչ է նշանակում ուխտ բառը: Ուխտ նշանակում է Աստծու եւ մարդու միջեւ կնքուած խոստում, դաշինք: Երբ Աստուած է ուխտ կնքում մարդու հետ, ապա այդ ուխտը յախտենական ուխտ է: Նմանօրինակ ուխտ կնքուել է Աստծու եւ Նոյի, Մովսէսի եւ ուրիշների միջեւ: Իսկ երբ մարդն է ուխտ կնքում Աստծու հետ, այդ ուխտը ժամանակաւոր է:

Աստուածաշնչում Աստծու եւ մարդու միջեւ կնքուած յախտենական ուխտի առաջին դէպքին համըխառնում ենք Ծննդոց գրքում՝ ջրհեղեղի պատմութեան նկարագրութեան մէջ, երբ ջրհեղեղի աւարտին երկինքը ծիածանում է եւ Աստուած խօսում է Նոյի հետ ու ասում. «Ծիածանը թող լինի Իմ ուխտի նշանը . . . Այլեւս ջրհեղեղ չի լինի, որպէսզի բոլոր էակները չոչնչանան»:

Սակայն այս ամէնից վեր ու այս ամէնը իմաստաւորող ուխտը Աստծու եւ մարդու միջեւ կնքուած այն ուխտն է, համաձայն որի՝ Աստուած Իր Միածին Որդուն ուղարկեց՝ աշխարհ մարդկութեան մեղքերի քաւութեան եւ թողութեան համար: Յիսուս յաղթեց մահը եւ մարդկութեանը շնորհեց անմահութիւն: Դա իրաքանչիւր անհատին տրուած երկնային ամենամեծ եւ մնայուն պարգեւն է, մարդկային ցեղի սկզբնաւորումից ի վեր: Պատարագի ընթացքում արտասանուած հետեւեալ խօսքերը այդ ուխտի մասին են ակնարկում «Արքեպ ի ամանէ ամենեքեան, այս է արին իմ նորոյ ուխտի, որ յաղագս ձեր եւ բազմաց հեղանի ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց»:

Հեթանոսական ժամանակաշրջանում, իբր ուխտի նուէր, հաւատացեալները չաւտուածներին մատուցում էին տարուայ լաւագոյն բերքը, ամենապարարտ կենդանիները, երբեմն նաեւ, Կոհաբերում էին դեռատի եւ գեղեցկադէմ կոյս աղջիկներ:

Բրիտանական իրականութեան մէջ, ուխտ հասկացութիւնը կրել է բովանդակային որոշ փոփոխութիւններ: Բրիտանեաները ուխտում են ծառայել վանքում կամ եկեղեցում, քահանայագործել, վանք կամ եկեղեցի կառուցել, կարիքաւորներին օգնել կամ էլ ուխտագնացութիւն կատարել:

Կարեւոր է հասկանալ ուխտ եւ ուխտագնացութիւն բառերի տարբերութիւնը: Մենք ուխտ ենք անում ուխտագնացութիւն կատարել, այսինքն՝ ուխտագնացութիւնը ուխտի մի ձեւ է, որը առաջին դարի քրիստոնէականներից մեկ հասած արանդութիւնն է: Բրիտանական Եկեղեցու կարնաւորման սկզբնական ժամանակներից ի վեր քրիստոնէաները այցելել են Սուրբ Երկիր եւ հոգեպէս հաղորդուել Բրիտանի կեանքի հետ կապ ունեցող արքայութիւններին եւ սրբավայրերին: Հայ իրականութեան մէջ, երուսաղէմ ուխտի եկած հաւատացեալները «մկրտուել» են *մահտեսի* պատուանունով: Ուխտագնացութիւններ են կատարում նաեւ այլ սուրբ վայրեր, վանքեր կամ սուրբերի ու մարտիրոսների գերեզմաններ:

Այսօր մենք, հետեւելով դարերի խորքից եկող Երուսաղէմեան աւանդութեանը, ուխտի ենք եկել Աստուածամօր գերեզման:

Աստուածամայրը Հայ կնոջ համար եղել է այն տիպար օրինակը, որի կեանքի օրինակով փորձել է ապրել Հայ կինը: Շատերը իրենց նորածին դուստրերին կոչել են Մարիամ: Հայ Եկեղեցին Աստուածամօրը նուիրում ունի 5 տօներ, որոնցից մէկը՝ Վերափոխման տօնը, հինգ տաղաւար տօներից մէկն է: Աստուածամօր մասին կան բազմաթիւ երգեր եւ բանաստեղծութիւններ:

Նոր Կտակարանում Մարիամի կեանքի մասին պատմող դրուագները քիչ են: Գիտենք, որ Աստուածամայրը հնապանդում է Աստուծու կանքին, յղանում ու ծնում է աշխարհի Փրկչին՝ Յիսուս Բրիստոսին: Իր այս արարքով, Աստուածամայրը հանդիսանում է հեպտութեան եւ խոնարհութեան կատարեալ մարմնացում: Իսկ երբ Աստուածամայրը ննջում է, Յիսուս նրան վերափոխում է երկինք: Վերափոխման այդ դէպքը կատարուել է հենց այստեղ, ու նրա մարմնով դէպի երկինք վերափոխուած լինելու իրողութիւնը, ինչպէս նաեւ Յիսուս Բրիստոսի մայրը լինելու հանգամանքը, սրբերի դասում նրան վերապահում են բացառիկ դեր: Նա ամենամեծ բարեխօս սուրբն է:

Միաձայնենք մեր աղօթքը Նարեկացու հետ ու նոյն յուզումով, երկիւղածութեամբ բարբառենք մեծ սրբի ջերմագին այս տողերը ասելով.

-Հայեացքս է պղտոր, ձեռքս անմարտի, աննուիրական:

Բայց բեկում արտով, մատներով դողդոջ՝ առած դարձի յոյս,

Երեսս հողին, պաղաւտում եմ քեզ, օ՛ մայր Յիսուսի,

Երկնի խկուհի՛, կեանքի փրկանա՛կ,

Բարեխօ՛ւ եղիր ու մեղաւորիս մաղթի՛ր քառութիւն,

Դու, որին երկրից մատուցում են միշտ

Հօտանուջ իւղեր, խնկաբորումներ եւ օրհնէրգութիւն:

Թող Աստուած ընդունի ձեր բոլորի ուխտը եւ թող ձեր բոլոր նուիրական իղձերը իրականութիւն դառնան: Ամէն:

ԿՈՐԻԻՆ ԱԲԵՂԱՅ

## ԱՂՕԹՔ

«Խնդրեցէք, եւ կը տրուի ձեզ»:

Մատթ. Է-7

Աղօթքը սոսկ խնդրանք մը չէ Աստուծոյ ուղղուած: Իրականութեան մէջ այն մարդկային հոգիի կարօտի կանչն է, մանկան աղաղակը առ Արարիչ Հայրը: Աղօթքը նամբորդութիւն է, ներքին անդիմադրելի ձգտում է՝ ներկայանալու, հասնելու Աստուծոյ: Ուստի, ան նաեւ հանդիպում է Տիրոջ հետ եւ հանդիպում լուսեան՝ մեղսական մէջ, սրտի փակ դուռերու ներքեւ: «Մտի՛ր բու սենեակդ, գոցէ դռները եւ ծածուկ աղօթէ բու հօրդ», մի՛ մոռնար սիրտիդ սենեակէն դուրս հանելու սնափառութիւնը, ձգելու մարմնի ախտաւոր ցանկութիւնները եւ անպայման արգիլէ մուտքը չար կիրքերու, դուռերու ետեւ թող ամէն երկրային ու վերացի՛ր երկինք: Այս է նշմարիտ աղօթքի հիմքն ու սկիզբը:

Սովորական ու պարզ դարձած աղօթք-խնդրանքներու բով՝ որ կ'արտասանենք ու կը լսենք մեր առօրեայ հոգեւոր կեանքէն ներս, այսօր պիտի խօսինք առաջին հայեացքէ խորթ, արտասովոր, մինչեւ իսկ մարմնաւոր մարդու համար անցանկալի աղօթքներու մասին, որ թելադրուած են ու առաջարկուած եկեղեցւոյ Սրբազան հայրերու - մասնաւորաբար Ս. Նեղոս Սինայեցու կողմէ:

Աղօթքը հոգեւոր վերացման երանելի պահն է՝ մուտքը հոգեւոր բարձր ոլորտներ: Մարդու սիրտը այդ պահուն ողողուած է Աստուծոյ գիտութեան լոյսով. մենք համակ սէր ենք, խաղաղութիւն, իսկ ներողամտութեան, բարութեան անձրեւը կ'ոռոգէ հոգիի չորցած արտերը:

Աղօթքը հոգեւոր իմացութեան աղբիւր է. ան գերագոյն ճիգ մըն է՝

ինքզինք գտնելու, աշխարհին մէջ ինքնահաստատուելու եւ իմաստաւորելու մեր երկրային գոյութիւնը: Աղօթքի ամենէն բարձր մակարդակը մեր եւ Աստուծոյ էութիւններու ներթափանցումն է: Մարդը Աստուծոյ մէջ է, եւ Աստուած՝ մարդու:

«Խնդրեցէք եւ կը տրուի ձեզ» խօսքերը ըսելով, Տէրը նկատի ունէր ճիշտ այս ապրումը: Մարդուն կը տրուի երկնային Սէրն ու խաղաղութիւնը: Արդեօ՞ք հետեւցնենք ասկէ, թէ անպիտան են մարդու համար աշխարհի ու մարմնին վերաբերող խնդրանքները: Բնաւ ոչ. բայց Յիսուս թելադրած է խնդրել այն ինչ շահ է հոգիին եւ անհրաժեշտ՝ մարմնին: Ուրեմն նախ խնդրելու ենք Աստուծոյ Արքայութիւնը, արդարութիւնը, սէրն ու խաղաղութիւնը եւ ապա անոնց հետ գտնելու ենք եւ նիւթական անհրաժեշտութիւնները:

Լսենք Ե. դարուն ապրած Ս. Նեղոսի խրատները աղօթքի կապակցութեամբ, զոր կը ներկայացնենք փոխադրութեան կերպով եւ իմ մեկնաբանութիւններով:

Ահաւասիկ Սուրբին առաջին յորդորը. - նախ աղօթէ արտասուքներ ստանալու համար, որպէս զի ազատուիս անձիդ խստութենէն ու անօրինութիւններդ խոստովանելով մեղքերու թողութիւն ստանաս:

Ի՛նչ արտասովոր խնդրանք... Աղօթենք որպէսզի արտասուք ստանանք: Մի՛ գարմանաք: Քրիստոնէութեան մէջ այնքա՛ն արտասովոր ու անհասկնալի բաներ կան, սկսած նոյն Իրմէ՛ Քրիստոսէ:

Սուրբին ըսածին մէջ իրականութիւն կայ: Ապաշխարութեան

արցունքները նման են մաֆուր անձրեւաչուրերու, որ երկինքէն թափուելով կը մաֆրեն, կը սրբեն նամբաներու աղտն ու փոշին: Անձրեւը կը թարմացնէ պտղաբեր տունկերը ու կ'արթնցնէ դաշտերու մէջ պառկած ծաղիկները: Արցունքները անհրաժեշտ են հոգուն, որովհետեւ անոր համար կենդանարար անձրեւ են եւ ցօղ:

Եւ գիտե՞ք ինչ... արցունքները անելի սիրտին կը պատկանին, քան աչքերուն: Անոնք աստուածային օրհնութիւն են՝ անջրդի սիրտի համար: Եւ ամենէն օրհնաբեր ու գեղեցիկ արցունքները անոնք են որ կը հոսին մարդուս ներսը, եւ տեսանելի չեն աչքով:

Ս. Նեղոս Սինայեցիին երկրորդ թելադրանքը կը հնչէ այս կերպ. - գնա՛ վաճառէ ունեցուածքդ եւ տո՛ւր աղատներուն: Վերցնելով խաչդ՝ ուրացի՛ր անձր ու աշխարհը, որպէս զի կարողանաս անգրաղ աղօթել:

Նիւթապաշտ մեր դարին մէջ այս խօսքերը կարելի է վերագրել միայն յիմարի մը:

Մարդկութեան մեծամասնութիւնը կ'աղօթէ որ Տէրը իրենց բարեկեցիկ ու հանգիստ կեանք պարգեւէ, իսկ Սուրբը կ'ըսէ «ունեցածդ ալ բաժնէ, որպէս զի կարող ըլլաս անգրաղ աղօթել: Որպէս զի միտքդ զբաղած չգտնուի նիւթական հաշիւներով: Բայց մինչեւ իսկ աղօթքի առիթը մարդու համար շատ անգամ նիւթական է, կամ ուրիշ խօսքով՝ աղօթքէն սպասելիքները աշխարհի հետ են կապուած:

Յիշեցէ՛ք Ժիպրան Խալի Ժիպրանի «իմաստուն շուն» առակը. կատունները ժողովուած կը լսեն իրենց առաջնորդին խօսքը, որ յորդորելով ամէնը՝ կ'ըսէ. «Աղօթե՛ք եղբայրներ, եւ երբ բոլոր կասկածները փարատին եւ դուք վեր առա՛վէ՛ք ձեր աղօթքները, նշմարիտ կ'ըսեմ՝

ձեր, մուկերը անձրեւի պէս կը թափուին ձեր վրայ»: Շունը այդ նաոր լսելով կը խնդայ, մտածելով թէ ինչ կոյր են կատունները եւ անխելք, քանի որ գրուած է թէ աղօթքի ու հաւատքի պարգեւը ոչ թէ մուկերն են, այլ ոսկորները, որ անձրեւի նման պիտի իջնեն երկիր: Այսպիսին է այն հասարակ գաղափարը, որ մարդիկ կազմած են աղօթքի մասին:

Սուրբ Նեղոսի երրորդ կոչն է, - եթէ կ'ուզես գովելի կերպով աղօթել, ուրախացիր Տիրոջմով, դիմացիր նեղութիւններուն, համբերէ տառապանքներուն եւ կը գտնես պտուղը աղօթքիդ, ճիշդ այնպէս ինչպէս գիւղացին աշնան կը ստանայ իր ամբողջ տարուայ յոգնութեան բարի արդիւնքը:

Իւրաքանչիւր նոյնիսկ աննշան քայլ դէպի Աստուած՝ քայլ է դէպի փորձութիւն. ծայրայեղ պարագաներուն այն դժբախտութիւն ու անյաջողութիւն է՝ աշխարհիկ առումով: Ս. Գիրքէն անելի լուրջ ու ծանրակշիռ փաստարկ կարելի չէ ունենալ այս առթիւ. «Եւ ամէն անոնք որ կ'ուզեն աստուածապաշտութեամբ ապրիլ Քրիստոս Յիսուսով՝ հալածանք պիտի կրեն: Բայց չար ու խարբարայ մարդիկ չարութեան մէջ պիտի յառաջանան, մոլորեցնելով ու մոլորելով» (Բ. Տիմ. Գ. 12-13):

Այսպիսով վե՛ր, դէպի բարին ու կատարեալը ձգտող խոնարհ մարդու նամբան փշոտ է - այստեղ հնարաւոր է աղէտ, կարիք, չճաւորութիւն, կորուստ, մահ, բայց եւ այս յոգնութիւններու պտուղը յաւերժութիւնն է:

Ով համարձակ է՝ կ'ընտրէ փշոտ նամբան:

Չափազանց գեղեցիկ ու իմաստուն կը հնչէ Ս. Նեղոսի հետեւեալ միտքը: Ան կ'ըսէ. - կը ցանկաս աղօթել ինչպէս յարկն է, ուրեմն մի՛ տրտմեցնէր որեւէ մէկ անձ: Մի՛ տրտմեցնէր, վնաս մի՛ պատճա-

ներ ո՛չ խօսում, ո՛չ վարմունքով ոչ ալ ալ կերպ: Աւա՛ղ, տկար հաւատացեալներէն ոմանք ոչ միայն կը տրտմեցնեն, ալ կ'աղօթեն Աստուծոյ որ զիրենք յաջողեցնէ չար մտադրութիւնները իրագործելու:

Սուրբին կարեւոր խրատներէն մէկն ալ հետեւեալն է - Մի՛ աղօթք որ քու կամքը կատարուի, քանզի այն միշտ չէ որ համաձայն է Աստուծոյ կամքին, ալ աղօթէ ինչպէս Տէրը պատուիրեց «Քու կամքդ թող ըլլայ, ինչպէս երկնքի մէջ, այնպէս ալ երկրի վրայ»:

Այս խօսքերը կամագորկ մարդու շուրթերէն չէ որ կ'ելլեն, ալ իմաստունի, քանզի միշտ ալ հայր մը լաւ գիտէ իր որդիին պէտքերը: Ամէն պարագայի Տէրունական աղօթքին յիշեալ տողերը եւ ամբողջ «Հայր Մեր»ը կ'արժէ տարբեր առիթով մեր ուշադրութեան նիւթը ընելու: Ուստի հոս չենք քննարկ:

Քրիստոնէութեան մէջ աղօթքի ուսուցման դասագիրքեր գոյութիւն չունին, կարելի ալ չէ: Սուրբ Հոգին ինք կը սորվեցնէ մեզի, աղօթելու կերպն ու նիւթը կը հայթայթէ. քայքայե՛ք երբեք գրուին այդպիսի աղօթքի դասեր, գոնէ որպէս դաստիարակութեան ու կրթութեան միջոց, կ'արժէ անպայման հոն տեղ տալ նաեւ Ս. Նեղոս Սինայեցիի հոգեշահ խրատներուն: Առնուազն մարդիկ պիտի հասկնան թէ ի՞նչ կ'արժէ խնդրել Աստուծմէ եւ ի՞նչ կրնան ձեռք բերել ինքնուրոյն աշխատանքով ու ջանքով:

Դառնանք նորէն Ս. Նեղոսի հետեւեալ խրատին. - Մի՛ խնդրք Աստուծմէ նոյն ժամուն հաւատարման խնդրանքին մէջ, ալ ըմբռնելու գրոյցը Տիրոջը հետ: Առեւտրականի նման ապրանք առնելով, կամ պայմանագիր կնքելով մի՛ հեռանար: Մնացի՛ր, գրուցէ Աստուծոյ հետ, երանելի է այս միութեան պահը:

Աղօթէ քու եւ ուրիշներուն սրբութեան համար, փորձութենէ ու ծուլութենէ ազատուելու համար. մաքրէ՛ միտքդ որոյր պիղծ մտածումներէ, անմաքուր պատկերներէ, մօտեցի՛ր աննիւթականին՝ աննիւթապէս:

Մի՛ ցանկար աղօթքի տեսնել որեւէ կերպարանք, ձեւ կամ գոյն, եւ միշտ յիշէ՛ - աղօթքի գովեստը ոչ թէ քանակն է՝ ալ որակը. «Երբ աղօթքի կենսա, շատախօս մի՛ ըլլաք». մարդիկ միշտ ալ քանակին կարեւորութիւն տուած են, եւ ո՛չ միայն աղօթքի պարագային: Անոնք չեն հարցներ թէ ինչի՞ համար կ'աղօթէ հաւատացեալը, ալ՝ քանի՞ անգամ կ'աղօթէ: Եթէ պատասխանենք, օրինակ՝ օրուայ մէջ հինգ անգամ, պիտի քայքայենք՝ «ի՞նչ քարեպաշտ է ուրեմն»: Եւ այսպէս «քանի»ներու շարքը կ'երկարի: Քանի՞ հաւատացեալ ներկայ կը գտնուի եկեղեցին: Քանի՞ ժամ կը տեւէ արարողութիւնը: Քանի՞ մկրտութիւն կը պատահի տարին: Քանի՞ հոգեւորական կը ծառայէ թեմէն ներս: Քանի՞ տարուայ շինութիւն է տաճարը...:

Եւ այս ձեւով մարդիկ կը կարծեն թէ գաղափար կազմեցին հաւատացեալի ու անոր հաւատքի մասին, կամ լիովին ճանչցան եկեղեցին: Իսկ հաւատքը ներքին իրականութիւն է, անտեսանելի՝ մարմնի աչքերով:

Ըստեցաւ թէ երկարաշունչ աղօթքն ու ունայնախօս լեզուն Աստուծոյ չեն խնդացներ, ալ՝ սուրբ սիրտը, ուղիղ հոգին ու մաքուր միտքը միայն:

Խաւարային խօսքերն ու աղտոյի խորհուրդները՝ միայն կը դառնացնեն աղօթքի անուշահոտութիւնը: Թերեւս ճարտասանութեամբ ու քաղցր լեզուով կրնաս խաբել մարդիկը ու նոյնիսկ օճր բոյնէն դուրս հանել, քայքայ երբէք չես շահիր Աստուծոյ Սէրը, որ սիրտերը քննող է:

137-2004



Լռութիւնն ալ աղօթք է. հոն խորհուրդներ կան պահուած:

Մովսէս մարգարէն ծնկաչոք, ապա իյնալով երեսն ի վայր՝ լուռ աղօթեց ու աղաչեց Տիրոջը իր սրտին մէջ: Անոր աղօթքը անբարբառ էր. ու յանկարծ Տէրը ըսաւ. «Ինչո՞ւ ինծի կ'աղաղակես» (Ելից ԺԴ 15): Աստուած լսեց սիրտին ձայնը, աղաղակը:

Ըսել է աղօթքը ճառ մը չէ, նախապէս սորվուած ռտանաւոր մը չէ, լոկ խնդրանք ու զրոյց չէ որ վարժուած ենք լսելու:

Աղօթքը պիտի ծնի որպէս արդիւնք այս աշխարհի մէջ մեր ճամբորդութեան, որպէս ապրելու ճիգ, հասկնալու ձգտում, յաւերժանալու փափաք: Աղօթքը նուէր մըն է՝ յոգնած ու ծարաւ թափառականի հոգիին, որ վերջապէս գտած է իր որոնածը: Գտած է հանգիստ ու խաղաղութիւն, ինչպէս Ս. Գրային

մեծագոյն ճամբորդը՝ Մովսէս: «Եկէ՛ք առ իս» կը հրաւիրէ Յիսուս, որպէս զի գտնէ՛ք հանգիստ ու սէր:

Աղօթքը մարդու ճամբորդութիւնն է առ Տէր: Սկսինք այդ ճամբորդութիւնը: Ճամբորդութիւնն է որ պիտի կապէ մարդը Աստուծոյ հետ. ան հաստատուն կամուրջ է: Եւ հաւատացէ՛ք, աղօթքը անհրաժեշտ է միևչեւ իսկ անհաւատ մարդուն, որ դատողութիւններ կ'ընէ Աստուծոյ չգոյութեան մասին: Ինչո՞ւ... Որովհետեւ կարելի չէ փաստել Արարչի բացակայութիւնը տիեզերքէն՝ առանց փորձելու հաղորդակցուիլ Անոր հետ: Բազմաթիւ իմաստասէրներ ու գիտուն այրեր ձախողած են իրենց անաստուած տեսական ուսումնասիրութիւններուն մէջ, թերի փորձին մէջ, բանզի Արարիչը փնտրած են դուրսէն, եւ ոչ հոգիին խորքը:

Եկէ՛ք ճամբորդենք մեր հոգիին խորք...:

ԶԱՔԱՐԻԱ ՔԶՆ. ՍԱՐԻԲԷԿԵԱՆ

### ԱՂՔԱՏ ՂԱԶԱՐՈՍԻ ԱՌԱԿԸ

(Ղուկաս ԺԶ 19-31)

Մարդկային ընկերութիւնը բաղկացած է զանազան կարգի անձնաւորութիւններէ, անոնք որ դրամական հարստութիւն դիզած են, եւ անոնք որ այդ չունենալով յանախ անկարող կը դառնան իրենց ֆիզիքական պէտքերուն գոհացում տալու: Այս վերջինները կը տառապին նաեւ իրենց մարմիններու տկարութիւններով վասն զի միջոցը չունին բժիշկի հոգատարութեան ենթարկուելու: Ահա այսպիսի անհատ մըն էր Ղազարոս որուն մասին Յիսուս խօսեցաւ, զայն դէմ յանդիման դնելով հարուստ անհատի մը:

Այս հարուստը՝ կ'ըսէ առակը, հինգ եղբայրներ ունէր, որոնց հետ,

ինչպէս եւ այլ բարեկամներու եւ ազգականներու հետ, խնճոյք կը սարքէր եւ օրերը այսպէս կ'անցնէր: Առաւել՝ ան փառահեղ զգեստներ կը հագնէր եւ ամէն տեսակի պատիւներու կ'արժանանար: Սակայն, Ղազարոս չունէր ոչ ուտելիք եւ ոչ ալ շնորհեով հագուստ: Անօթի էր, հիւանդ էր եւ, պատահմամբ եկած եւ հարուստի տան մուտքին՝ դրան առջեւ, նստած, կը սպասէր որ ճաշի սեղաններէն աւելցած հացի եւ այլ ուտելիքի փշրանքներէն բաժին ստանար:

Դրան հտին հարուստը եւ իր բարեկամները կը շարունակէին իրենց հանոյալի կեանքը երգով, պարով եւ նուագով: Դժբախտաբար Յիսուսի

աւետարանը չէ արձանագրած այս հարուստին եւ եղբայրներուն անունները: Թէեւ չեմ կարծեր թէ այդ անհրաժեշտ էր իմանալ: Վասն զի անունէն աւելի անոնց վարած կեանքի օրինակը կը շեշտուի այս առակին մէջ թէ իրենցմէ անդին որո՞ւ մասին հետաքրքրութիւն ցոյց կու տային: Ի՞նչ տեսակ մարդոց ընկերութիւնը եւ բարեկամութիւնը կ'ուզէին ունենալ:

Վայրկեան մը երբ մեր աչքերը քանանք, այսպիսի մարդիկ պիտի գտնենք նաեւ մեր օրերուն: Չիկայ անհատ մը որ չի ճանչնայ նեղութեան մէջ եղող մարդիկ: Նեղութիւն ըսելով կ'ուզեմ իմանալ մտքի տառապանք, հոգիի անհանգստութիւն, գործի պակաս ունեցող մարդիկ: Ո՞վ կը հետաքրքրուի այսպիսի անհատներով: Ո՞վ օգնութեան ձեռք կ'երկարէ, ըլլայ դրամական, ֆիզիքական, եւ կամ բարի խօսք մը ըսելու: Մենք այդ աղատին ֆովէն կ'անցնինք զինք չի տեսնալ ձեռքներով, չենք ուզեր անհանգիստ ըլլալ անդրադառնալով որ անոր վիճակը այնքան ալ գեղեցիկ պատկեր մը չի ներկայացներ մեր մտքին առջեւ:

Չենք ուզեր վայրկեան մը կանգ առնել եւ երկու խօսք ըսել անոր, վասն զի այդ ընելով մեր ժամադրութենէն ետ պիտի մնանք եւ կամ ալ ինքզինքնիս պատկերացած պիտի ըլլանք: Եւ կը մտածենք, եթէ մէկը մեզ տեսնէ հոն կեցած եւ խօսակցութեան մէջ՝ փողոցի անկիւնին նստած անկարող մարդու հետ, արդեօք ի՞նչ պիտի խորհի մեր մասին:

Ահա, այսպիսի վերաբերում մը ցոյց կու տայ Յիսուսի պատմած առակի հարուստը, որու դրան առջեւ նստած կը մնայ աղատ Ղազարոսը: Եւ յանկարծ օր մըն ալ այդ հարուստը կ'անդրադառնայ որ Ղազարոս հոն չէ, մեռած է: Կարծես ծանր բեռ մը վերցուած ըլլայ իր ուսերէն: Այլեւ ոչ մէկ պարտաւորութիւն կը զգայ անոր հանդէպ:

Ժամանակ մը վերջ հարուստն ալ

կը մեռնի: Ղազարոսի պարագային՝ ըստ հրէական դաւանանքին, հրեշտակներ կը հանգչեցնեն անոր հոգին Արրահամի գիրկը: Իսկ հարուստի հոգին կ'երթայ դժոխք: Այս երկուքը՝ Ղազարոս եւ հարուստը, հեռու են իրարմէ, բայց կը տեսնեն զիրար: Ղազարոս երջանիկ է, իսկ հարուստը կը տառապի: Ան կ'աղաչէ որ Արրահամ հոգայ իրեն ջուրի կաթիլներով զովացնելու իր լեզուն: Պատասխանը յստակ է: Ով հարուստ, բուռնութեան վայելեցիր ամէն տեսակի բարիք, իսկ Ղազարոսը ոչինչ ունեցաւ:

Յուսահատած, հարուստը կ'աղաչէ դարձեալ որ գոնէ մեռեալ մը յարութիւն առնէ եւ երթայ խօսի իր եղբայրներուն, որպէս զի անոնք ալ այս նոյն վիճակին չի հասնին իրենց մահէն ետ: Արրահամ կը պատասխանէ: Անոնք ունին Մովսէսն ու մարգարէները, եթէ անոնց մտիկ չեն ըներ հիմա, մտիկ պիտի չընեն նոյնիսկ եթէ մեռելներէն մին յարութիւն առնելով երթայ եւ խօսի անոնց:

Աղատ Ղազարոսի այս առակը ներկայացնելով Յիսուս շեշտած կ'ըլլայ թէ ո՞րքան անհրաժեշտ է նուիրեալ եւ օգտաշատ կեանք մը ապրիլ: Վասն զի եթէ ամէն ոք իր կարողութեան չափով բերէ իր նպաստը տկար անհատի մը, այլեւ մարդկային ընկերութիւնը պէտք չունենար բարեգործական կազմակերպութեանց եւ երկրի պետութեան կողմէ հաստատուած օգնութեան յանձնախումբերու: Այնուհետեւ ամէն անհատ կ'ապրի գոհ եւ երջանիկ: Եւ երբ օրին մէկը մահանանք ստիպուած չենք ըլլար խնդրելու որ Արրահամ իր մատները թրջելով ջուրի կաթիլներով զովացնէ այրող մեր լեզուները:

Ապրինք գիտակցելով մեր մարդկային պարտաւորութեանց՝ հանդէպ մեր նմաններուն: Ամէն:

ՇԱՀԷ Ա. ՔՀՆՅ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

# «ԵՐԱՆԻ՝ ԱՅՆ ՄԵՌԵԼՆԵՐՈՒՆ՝ ՈՐՈՆՔ ԱՅԺՄԷՆ ԻՍԿ ՆՆՋԵՑԻՆ Ի ՏԷՐ»

Յայտ. ԺԳ. 13

Նոյնիսկ երկինքի հրեշտակները կ'երգեն ու երանութիւն կը մաղթեն այն հաւատարիմ հաւատացեալներուն, որոնք հալածանքի՝ մէջ իսկ կը պահեն Յիսուսի անունը եւ յոգնութիւն չեն սեպեր կեանքի դաժան դժուարութիւնները: Ինչո՞ւ, որովհետեւ հաւատարիմ եւ գործօն հետեւողները Յիսուսի, պիտի չկորսնցնեն իրենց աշխատանքը եւ վարձքը: Ա՛յն գործերը եւ վկայութիւնները որ անոնք գործեցին իրենց Փրկչին Անունով, պիտի չկորսուին, այլ՝ պիտի հետեւին իրենց ետեւէն: Մարդ արարածը չի կրնար իր հարստութիւնը, փառքը եւ կալուածները տանիլ իր ետեւէն (գերեզմանէն անդին), իսկ համեստ հաւատացեալի մը ըրած ծառայութիւնը եւ անձնագոհութիւնը ինքնի՛ն պիտի երթան որպէս աւա՛նդ անոր ետեւէն:

Նախապատմական դարերէ ի վեր, բնաւ չէ՛ իմացուած որ մահն ու գերեզմանը պարտուած ըլլան ոեւէ մարդ արարածի գորութեամբ: Մի՛ միայն եղիա եւ եղիսէ մարգարէներն էին որոնք վերակենդանացուցին երկու մեռեալներ: Մահն ու գերեզմանը յաղթահարողը եղաւ միայն Յիսուս Քրիստոս Իր պանծալի Յարութեամբ: Քանի՞ կոապաշտ հաւատացեալներ նահատակուած են իրենց չաստուածներուն համար: Քանի՞ կոապաշտ անձեր թողած են տուն եւ ընտանիք ու անձնագոհ ծառայութեամբ շատագոված են հաւատքը:

Հին Կտակարանին մէջ շատ քիչ քան գրուած է մեռելոց յարութեան մասին:

1. Ովսեայ ԺԳ.14 «Զանոնք գերեզմանին ձեռքէն պիտի փրկեմ, Զանոնք մահուանէ պիտի ազատեմ. քու ժանտախտդ ո՞ւր է,

ով մահ. Քու աւերումդ ո՞ւր է, ով գերեզման»:

2. Սաղմոս 71.20 «Նորէն զիս պիտի կենդանացնես, Ու երկրի անդունդներէն նորէն զիս պիտի հանես»:

3. Եսայի մարգարէն է որ կը գրէ «մեռելոց յարութեան» մասին, ըսելով. «Քու մեռելներդ պիտի ողջնան, Իմ մեռելներուս մարմինները յարութիւն պիտի առնեն: Արթնցէ՛ք ու ցնծութեամբ երգեցէ՛ք, ով հողի մէջ բնակողներ, քանզի քու ցօղդ խոտերու ցօղ է: Ու երկիր իր մեռելները դուրս պիտի նետէ»:

Եսայի մարգարէն առանց ոեւէ մէկուն յարութիւն տուած ըլլալու կը գրէ սոյն յայտնութիւնը: Ուստի մարգարէին ժամանակակից անձերը «յարութեան» իմաստը չէին հասկնար եւ սոյն գրութիւնները իրենց համար այլարանական յայտնութիւններ եւ ազգայի՛ն վերածնունդ ըլլալ կը կարծէին:

Յիսուս Քրիստոսի Յարութիւնը կը մնայ գագաթնակէտային իմաստով ամենէն փառապանծ եւ ներշնչող տօնը եւ իսկութիւնը, փառապսակը Քրիստոսի կեանքին եւ կտակին:

«Յարութիւն» բառը, Յունարէն լեզուի մէջ կը նշանակէ. «բարձրացնել, կանգնեցնել եւ արթնցնել»: Առաւել ըլլալով ունի. նաեւ վերակառուցումի իմաստը: Ո՛չ թէ մահը պիտի առաջնորդէ հաւատացեալը մեռելոց յարութեան, այլ հաւատացեալին Աստուծոյ վրայ ունեցած վստահութիւնը եւ հաւա՛տքը, իրեն պիտի շնորհեն մահէ՛ն ու գերեզմանէն ազատիլ եւ յարութիւն առնել:

Կեանքի հանդէպ մեր հայեցողութիւնը կախում ունի, թէ կը հաւատա՞նք

«մեռելոց յարութեան», թէ ոչ կեանքը կը սահմանափակենք մահով՝ որպէս «ողորբգական տրամա»ի մը վերջին արարք: Այս վերջին պարագային, որքան ալ քաջարի, լեցուն ու բարեպաշտ կեանք մը բոլորած ըլլանք, մահը անոր վերջակէտը պիտի մնայ: Մինչդեռ Յարութեան յոյսը պատմական իրազէկ ոլորտի մը մէջ կը դնէ մեր առօրեայ կեանքը, տալով խիզախութիւն, նուիրում, անձնուրացութիւն, առանց վախճալու մահէն, քանի որ մեր կեանքը ազատագրուած է արդէն ու մեր կեանքը մահումը չէ՛, որ պիտի վերջանայ, այլ Յիսուս Փրկիչ մեզ մահէն ու գերեզմանէն յաւիտեանական կեանքի պիտի փոխադրէ:

Յարութիւնը կը յայտնէ ստեղծագործութեան նպատակը, գոյարանական պատճառը, թէ ինչու եկած ենք աշխարհ եւ դէպի ո՞ւր կը դիմենք:

«Յիսուս մահումը զմահ կոխեաց եւ Յարութեամբն Իւրով մեզ զկեանս պարգեւեաց»:

Մարդ իր ապրելու տենչը, իր կեանքի իմաստը կը ստանայ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Յարութեան լոյսէն: Ան ըսաւ. «Ես իսկ եմ Յարութիւնը եւ կեանքը. ան որ ինծի կը հաւատայ, թէպէտ եւ մեռնի, պիտի ապրի» Յով. ԺԱ. 25-26: Հաւատացեալը պիտի ապրի՝ թէ՛ իր երկրաւոր կեանքի ընթացքին դրսեւորուած հաւատքի ապրումներով, եւ թէ իր թողած եւ յաւերժօրէն ապրող ու խօսող վկայութիւններով եւ գործերով:

«Մեր մեռելները բոլոր Միահամուռ ոստումով Պիտի կանգնին գերեզմանին մէջ

իրենց

Ու անհամբեր հեռո՛ւն ակնապիշ Պիտի սպասեն վարդահեղեղ գալուստին

Արշալոյսի մ'Արշալոյսի մը՝ որուն

(Հաւատացէ՛ք ինձ Մայրեր) Ես ոտնաձայնը կ'առնեմ...»

Դ. Վարուժան

Յիսուս Քրիստոսի Յարութիւնը, առաջին Դարու Քրիստոնեաներուն համար համաշխարհային կեդրոնական դէպք մըն էր: Առաքեալներու հանդիպումը Յարուցեալ Քրիստոսին, թէ՛ վառվրուն էր եւ թէ անմոռանալի (Ա. Յով. Ա. 1-2): Պօղոս առաքեալ քիւրեղացուց Քրիստոնէութիւնը որպէս Յարութեան Աւետարան ու տարածեց համայն Հռոմէական կայսրութեան մէջ (Ա. Կորնթ. ԺԵ. 3-4): Քահանաներուն շինծու եւ սուտ հանրային կարծիքը փլաւ առաքեալներու նշմարիտ վկայութեան առջեւ: Առաքեալները ճառագայթեցին անպարտելի ինքնավստահութիւն: Քրիստոսի Յարութիւնը օրուան տեղեկատուութիւնն էր Երուսաղէմ քաղաքի փողոցներուն մէջ: Տէր Յիսուսի մարմնական Յարութիւնը կերպարանափոխեց քաղմաթիւ կեանքեր:

Պետրոս առաքեալ փողահարեց Քրիստոսի յաղթական Յարութիւնը: Հրեայ իշխանները, որոնք խաչել տուած էին Յիսուսը, իրենց վախէն պաշտպանողականի դարձան փոխանակ յարձակողական ըլլալու: Առաքեալներ եթէ կը ջատագովէին կեղծ ու խարդախ Յարուցեալ Յիսուսը, իրենց վկայութիւնները շուտով պիտի հերքուէին քահանայապետներու ապացոյցներով: Մինչդեռ Յիսուսի Յարութեան իրական եղելութիւնը ցնցեց Երուսաղէմը: Քրիստոսի ժամանակակից զանազան ազգայնամոլ շարժումներ գոյութիւն ունեցան, որոնցմէ ո՛չ մէկը դարձաւ համաշխարհային տիրապետող:

Աւետարանը բարոյագիտական օրէնսդրութիւն մը չէ՛: Ոչ ալ քննադանգական տեսութիւն մըն է: Աւետարանը առաջագոյն բարի ու

մխիթարական լուր մըն է: Առաքելներու վկայութիւնը հաւատալի դարձաւ, որովհետեւ իրե՛նք ալ կը հաւատային: Բնականն ու անբնական գորութիւններ, չկրցան ծածկել Յիսուսի Յարութեան իրողութիւնը:

«Մեր Հայաստան աշխարհը չեղաւ միայն Գողգոթայ, մեր կեանքը չեղաւ սոսկ խաչելութիւն, մեր կեանքը եղաւ գերազանցօրէն Յարութիւն»: «Կեանքը մեր ազգին եւ հայրենիքին մէջ նորոգեալ կենսայայտութեամբ եւ ստեղծագործականութեամբ կ'առաջանայ» - Գարեգին Ա. Կաթողիկոս: Եթէ կայ մէկը որ չի հաւատար մեռելոց Յարութեան նշմարտութեան, թող երթայ Տէր Զօր, տեսնէ հաւաքական գերեզմանը, ապա երթայ Հայաստան, Արարատի լանջերուն տեսնէ նոյն ժողովուրդին Յարութիւնը եւ վերածնունդը:

Քրիստոսի Աւետարանին յեղաշրջող առաւելութիւնը այն է, որ Աստուած Որդին մարդկութեան համար մարդացաւ ու Ի՛ր եկեղեցին հիմնեց հոգիի գերագոյն սիրոյ եւ եղբայրութեան վրայ: Սակայն կղերականները, նախանձի ու ատելութեան պատճառով սպաննեցին Նազովրեցի Մարգարէն: Բայց Աստուած իր հրաշագեղ գորութեամբ Յարութիւն տուաւ Իր Յիսուս Որդւոյն եւ Բարեխօս կարգեց զԱյն Իր Աշին:

Վերոյիշեալ հաստատումը կարելոր է, որովհետեւ ցոյց կու տայ Քրիստոսի վարդապետութեան նշմարտութիւնը եւ իր խոստումին գործադրութիւնը: Հաւատացեալը չի՛ սարսափիր անծանօթէն՝ Մահէն ինչպէս ծովու անվերջ հորիզոնները չեն վախցնելու յանդուգն նաւորդը: Աշխատանքը, վկայութիւնը եւ անձուրացութիւնը, հաւատացեալի մը համար վայելիք է, որովհետեւ պիտի ապացուցանէ իր հաւատքին գորութիւնը եւ իսկութիւնը: Ի

Տէր ննջող մեռելները երբ լսեն ձայնը Աստուծոյ փողին, յարութիւնը իրենց պիտի թուի որպէս արեգնաշող եւ պայծառալոյս առաւօտ մը: Յարութիւն ստացած հաւատացեալները իրենց մարմիններուն մէջ պիտի զգան իրենց Յիսուս Փրկչին վեհափառ Ներկայութիւնը շօշափելիօրէն եւ տեսանելիօրէն, որովհետեւ պիտի տեսնեն՝ զԱյն, որ պիտի ըսէ յարուցեալներուն.

«Եկե՛ք, իմ Հօրս օրհնեալները, ժառանգեցե՛ք աշխարհի սկիզբէն ձեզի համար պատրաստուած Արքայութիւնը, վասն զի անօթեցայ, եւ ուտելիք տուիք ինձի, ծարաւեցայ, եւ խմելու ջուր տուիք ինձի. օտար էի, եւ ձեր մէջ առիք զիս, մերկ էի՝ եւ հագուեցուցիք զիս, հիւանդ էի, եւ զիս տեսնելու եկաք, բանտի մէջ էի, եւ մօտս եկաք»: Այն ատեն յարուցեալները պիտի պատասխանեն Անոր եւ ըսեն. «Տէ՛ր, ե՞րբ տեսանք էեզ անօթի՝ ու կերակրեցիմք, կամ՝ ծարաւ, եւ ջուր տուիմք. ե՞րբ տեսանք Քեզ օտար՝ եւ մեր մէջ առիմք, կամ՝ մերկ՝ եւ հագուեցուցիմք. ե՞րբ տեսանք Քեզ հիւանդ կամ բանտի մէջ՝ ու էեզի եկանք»: Թագաւորը պիտի պատասխանէ եւ ըսէ անոնց. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, քանի որ Իմ այս փոքրիկ եղբայրներէս մէկուն ըրիք՝ Ինձի ըրած եղաք» Մատթ. ԻԵ. 34-40:

Խաւարը կը փախչի, մէզը կը մեկնի, մառախուղը կը հեռանայ, աղջամուղջը կը սպառի գերեզմանի մէջ ննջողներուն, ու հեռուէն կ'երեւի մօտեցող Յարութեան Պայծառակերպ արշալոյսը բոլոր Յիսուսը սիրող հաւատացեալներուն: Մահն ու գերեզմանը պիտի խոնարհին Յիսուսի երկրորդ Գալուստին: Յարութեան Այգալոյսին՝ անցեալն ու ապագան պիտի գրկախառնուին ու դառնան Յաւիտեանական Ներկան: Յարութիւնը վաւերական նախադրուոն է Աստուծոյ Թագաւորութեան այսօր, այնքան, որքան էր երէկ եւ որքան

պիտի ըլլայ նաեւ յաւիտեան:

«Հոն՝ ուր կախաղաններն են նոնուում,

Ազատութիւնն է ման գալիս:

Հոն ուր մեռելներն են ննջում,  
Յարութիւնն է մօտալուտ»:

– Փարամագ

Յիսուսը սիրողներ եւ Անոր հաւատացողներ առանց ընկրկելու հուրի եւ սուրի առջեւ, անտրտունջ տուին իրենց պարանոցները: Յարութիւնը իրրեւ դէպք, իրրեւ հրաշք, իրրեւ հաւատք, իրրեւ մեր կեանքին յոյսը կը դողանջէ իւրաքանչիւր հաւատացեալի սրտին մէջ: Հաւատալը՝ հաւատքն է Անհաւատալիին, ջերմօրէն ու խանդավառօրէն: Հաւատքը խթանն է մեր ապագայ խոյանքներուն եւ խարիսխը անտեսանելի, բայց զգալի յոյսին:

Եթէ Քրիստոս ձեր մէջն է, թէպէտեւ ձեր մարմինները պիտի մեռնին, սակայն Սուրբ Հոգին դարձեալ կեանք պիտի տայ ձեզի, որովհետեւ արդարացաք Յիսուսի հաւատալով:

1. Այսինքն, «եթէ Աստուծոյ հոգին ձեր մէջ կը բնակի, Աստուած, որ Յիսուս Քրիստոսը մեռելներէն յարուցանեց, իր Հոգիին միջոցաւ որ ձեր մէջ կը բնակի՝ պիտի կենդանացնէ նաեւ ձեր մահկանացու մարմինները» -- Հոռմ. Ը. 10-11:

2. «Մենք եւս ներքնապէս կը հեծենք՝ ակնդէտ սպասելով որդեգրութեան, այսինքն մեր մարմինին փրկութեան» -- Հոռմ Ը. 23:

3. «Հողեղէն այս տունը, որ մեր մարմինն է եւ որուն մէջ կը բնակինք, պիտի քայքայուի»... Բայց երկինքի մէջ ունինք Աստուծոյ կողմէ պատրաստուած անձնագործ եւ յաւիտեանական մարմին մը՝ իրրեւ տուն.-- Բ. Կորն. Ե.1:

Հունտը ծա՛ն ըլլալու կը ձգտի, մանուկը՝ մա՛րդ, տգէտը՝ գիտո՛ւն: Աշխարհի կեանքը անդու ջանք մըն է,

ա՛նցք մը, զօրութենէն՝ դէպի արարք, անկատարութենէն դէպի կատարելութիւն, ոչ-էութենէն դէպի էութիւն, հողայնութենէ դէպի աստուածանմանութիւն յարանուն կերպով: Յիսուսի Յարուցեալ Մարմինը, ունենալով հանդերձ մահուան անարգ նշանները (գամբրուն), ցոյց տուաւ նաեւ գերբնական յատկութիւններ՝ երեւում եւ անտեսանելի դառնալ, ուտել եւ խմել եւ աննանաչելի ըլլալ, կարծես երկրային օրէնքներու սահմանումէ գերիվեր, հրաշափառ մարմին մը ունէր Յիսուս:

Յիսուսի յարուցած անձերը պարզապէս վերակենդանացած մահկանացուներ եղան, սակայն Իր Յարութիւնը ոչ թէ վերակենդանացում կամ վերամարմնացում մըն էր, այլ մեռելո՛ց յարութիւն ու յաւերժական գերահրաշ Մարմին մը:

Անոր յարութիւնը թէեւ պատմական դէպք եւ իրողութիւն է, սակայն այդ եղելութեան ի՞նչպէս մարդկային հասկացողութենէն գեր ի վեր է: Ականատեսի վկայութիւնը չունինք թէ ի՞նչպէս Յիսուսի մեռած մարմինը վերստացաւ հրաշափառ Յարուցեալ ու ոգեղէն մարմին, հետեւաբար կ'ըսենք «Խորհուրդ մեծ եւ սքանչելի»: Սոյն պատճառաւ Յիսուս չյայտնեց իր Յարուցեալ պայծառակերպութիւնը աշխարհի, այլ միայն Իր մտերիմներուն եւ Ջինքը սիրող հաւատացեալներուն:

Յարութիւնը աստուածային առատագեղ սիրոյ խորախորհուրդ արտայայտութիւնն է: Քրիստոսի Յարութիւնը կեանքի՛ն ներշնչումն է, ապրելու փափակ է, ապրելու ջանքն է ու ո՛չ յուսահատելու: «Յարութեան Տօնը կը մնայ գագաթնակէտային իմաստով ամենէն փառապանծ եւ ներշնչող տօնը, փառապսակը Քրիստոսի կեանքին եւ կտակին»: Յիսուսի հրաշափառ Յարութեան, Հրեայ կրօնաւորները

չհաւատացին: Ինչո՞ւ, որովհետեւ հաւատալ չուզեցին:

Յարութիւն է, երբ մենք կ'ապրինք այն հաւատքը, որ Քրիստոս սորվեցուց եւ պատուիրեց գործադրել: Յարութիւն է, երբ Քրիստոսի հանդէպ մեր ունեցած յոյսը ուժն է մեր կեանքին: Ողբերգութիւնը կեանքի մէկ երեսակը կը դրսեւորէ, իսկ Յարութիւնը՝ կեանքի ամբողջական երեսակները: Քրիստոսի Յարութիւնը գերազոյն բարձունքն է Աւետարանին եւ սկզբնաւորութիւնը առաքելական եկեղեցւոյ: Աշակերտներուն կեանքը, տեսիլքը եւ գործունէութիւնը գլխաւորապէս Քրիստոսի Յարութեան վրայ կեդրոնացաւ: Քրիստոսի եկեղեցին կը ճանչցուի ու կը հասկցուի մի միայն Յարութեան լոյսի ներթափանցումով:

Յիսուս Քրիստոսի Յարութիւնը երեւոյթ մը չէր, գաղափարական տեսութիւն մը չէր, ո՛չ ալ հոգեմայական ցնորք, կամ երեւակայական մտաբերութիւն մը, այլ առաքելական եկեղեցւոյ անխոցելի գօրութիւնը եւ անսպառ ուժ-կորովը: Շատեր կ'ուզեն Յարութիւնը, կ'ուզեն, սակայն՝ առանց խաչի զոհաբերութեան: Քրիստոսի Յարութիւնը եթէ առանց մեռնելու վերակենդանութիւն էր, հապա ի՞նչպէս բացատրել Անոր անսպասելիօրէն տեսնուիլն ու յանկարծ խորհրդաւոր անտեսանելի դառնալը:

1. Յիսուսի Յարութիւնը ոգեկան ներկայութիւն՝ յայտնատեսութիւն մը չէր միայն:

2. Փոխակերպուած Յիսուս Քրիստոսի Յարուցեալ մարմինը, տեսականութիւնն ու շարունակութիւնն էր երկրային Յիսուսի:

3. Մարմնական այս փոխակերպումը դժուար է ըմբռնել, որովհետեւ Յարութիւնը աննախընթաց ու բացառիկ եղելութիւն մըն էր, որուն կը հաւատանք, բայց չենք ըմբռններ:

Երկոտասան առաքելները, որոնց վառ յոյսերն ու պայծառ երազները խորտակուած էին Յիսուսի խաչելութեամբն ու թաղումովը, յանկարծ նոր կեանք ստացան, արիացան «Յարուցեալ Տէրը» տեսնելով, ու սկսան աներկիւղ ֆարոգել Անոր հրաշափառ Յարութիւնը եւ նահատակուեցան:

«Աստղերուն տակ դեռ չհնչած

Այս ղօղա՛նջը,

Մարդերուն մէջ դեռ չլսուած

Այս նոր կա՛նջը,

Մարդու ձայնով կա՛նջն Աստուծոյ...»

Ժագ Ա. Յակոբեան:

Քրիստոսէ 3 հարիւր տարի առաջ եգիպտացիք կը տօնէին Օսիրիսի մահն ու վերամարմնացման առասպելը, ո՛չ որպէս եղելութիւն: Աթիսի՝ Ատտիսի երկրպագուները, Քրիստոսէ 250 տարի առաջ, Հռոմ գացին որպէս Աթիսի յարութեան տեսարաններ: Եգիպտական Օսիրիսի վերակենդանութեան առասպելը հնարուած էր որպէս գարնանային պտղաբերութեան խորհուրդ եւ կախարդութիւն: Քրիստոս որպէս եգպկի ու պատմական դէմք կը յիշուի, Հռոմէական պատմութեան մէջ հակադրուելով Օսիրիսի առասպելին:

Քրիստոսի վկայ եղող մը, ճանչցած եւ զգացած ըլլալու է Ջայն յարուցեալ վիճակի մէջ: Ան պարտ է վկայ ըլլալ նաեւ Անոր Աւետարանին: Վկայող ֆարոգիչ մը հոգեփոխուելու եւ հոգեխառնուելու է Յարուցեալին ապրումին ու զոհողութեան Հոգիին հետ: Յարուցեալին աշակերտներն իսկ՝ որոնց ֆարոգած էր Իր Յարութիւնը, տրամադիր չէին՝ առանց փորձերու եւ հակափորձերու՝ ընդունելու Ջայն, մինչեւ Յիսուս Ի՛նք յայտնուեցաւ անոնց: Տարակուսող Թովմաս չկրցաւ հաւատալ իր ընկեր աշակերտներուն վկայութեան ու ըսաւ անոնց.

«Եթէ Անոր ձեռքերուն վրայ

չտեսնեմ գամերուն նշանը եւ իմ մատներս գամերուն տեղը չդնեմ ու իմ ձեռքս չմխրեմ Անոր կողմն մէջ՝ չեմ հաւատար» -- Յով. Ի. 25:

Ուր որ յետոյ աշակերտները դարձեալ ներսն էին, եւ Թովմաս ալ՝ անոնց հետ: Յիսուս եկաւ գոց դռներէն, կեցաւ մէջտեղը եւ ըսաւ. «Խաղաղութի՛ն ձեզի»: Ապա ըսաւ Թովմասին. «Բե՛ր քու մատներդ եւ դի՛ր ալստեղ ու տե՛ս իմ ձեռքերս. եւ քե՛ր քու ձեռքդ ու մխրե՛՛ իմ կողմն մէջ: Անհաւատ մի՛ ըլլար, այլ՝ հաւատացեալ»: Թովմաս պատասխան տուաւ Անոր եւ ըսաւ. «Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ»: Յիսուս ըսաւ անոր (ու նաեւ կ'ըսէ մեզի).

«Դուն Ձիս տեսար եւ հաւատացիր. երանի՛ անոնց որ չեն տեսած ու կը հաւատան»:

Կորին (380-450) Հայ պատմիչ, վարդապետ, թարգմանչաց շարժման գործիչ: Մեսրոպ Մաշտոցի առաջին աշակերտներէն: Կ'ուզէ պատմագրել, կը գիշանի պատմագրել՝ դարձեալ հետեւած ու աշակերտած ըլլալու համար միակ աստուածային վարդապետին, «անարգամեծար» Քրիստոսի: Ան, օրինակած ըլլալու համար Աստուածաշունչը, դէպքերէն ու դէմքերէն անդին տեսնելու եւ ցուցնելու համար Անտեսանելին, Յաւերժականը՝ Իրականութիւնը, որ Աղբիւրն է՝ խորութիւններու ընդերքներէն հոսող ճշմարտութիւնը՝ Աստուած: Ի՞նչն է մնայունն ու յաւերժականը եւ ի՞նչն է զգայունն ու անցողիկը, ո՞վ կը ճշդէ, ո՞վ կ'որոշէ այս բոլորը, եթէ ոչ ամենագոր Արարիչ Աստուած: Ճշմարիտ Քրիստոնեայի մը ամենագեղեցիկ, ամենահզօր եւ յաւերժական միակ ընելիքը՝ ինքնագոհողութեան զգացումն է:

Մարդոց յիշողութեան մէջ կը յաւերժանան միայն արիւնով գրուած ճշմարտութիւնները:

Աղօթքը կը ծնանի հերոսներ, կը

կերտէ ազատարարներ եւ կը դարբնէ նուիրեալներ, կը պարգեւէ յաւերժացողներ: Աստուծոյ Թագաւորութեան մէջ, յետ Յարութեան, տարեդարձները պիտի փոխուին դարադարձներու, հազարամեակներու եւ յաւերժութեան: Հարիւրաւոր խաչքարեր դէպի երկինք կը նային ու յաւերժութեան ակունքէն, ապրողներու յաւերժութեան գրոյց կու տան: «Ո՛վ Յարուցեալ Յիսուս՝ Քեզմով անցեալը կը դադրի անցած ըլլալէ: Քեզմով ներկան կը դադրի անցաւոր ըլլալէ: Քեզմով յաւերժութեան մրմունջը կը դառնայ Քայլերգ...»:

Առաքեալներու կեանքը համակ եղաւ զրկանք ու տառապանք, նուիրում, պայքար ու նահատակութիւն որպէս զի չկորնչի յաւերժութեան Լոյսը՝ Յիսուս Քրիստոս:

Հաւատքը կեանքի յաւերժութեան վահանն է:

Յիսուս Քրիստոս մեր կեանքին Լոյսն է, իմաստը մեր գոյութեան, Աղբիւրը մեր գօրութեան եւ Դաղսնիքը մեր յաւերժութեան: Այժմու Քրիստոնեաներու պարտականութիւնը մարմնական կաւիւն մէջ զգալ է աստուածային ներգործութիւնը: Մեր անզուգական եւ սրբազան առաքեալներու եւ պապերու յիշատակը յաւերժացնելու համար ընթանալու ենք Յիսուս Քրիստոսի լուսաշող հետքերէն ու մեր անձնուրաց պապերու շաւիղէն, փոխանցելու համար մեր յաջորդներուն, անոնցմէ ժառանգուած աւանդը աւելի զօրացած վիճակի մէջ:

Հաւատքի կեանքը արժեւորող եւ յաւերժացնող գօրութիւնը կու գայ վերէն՝ մեր երկնաւոր Հօրմէն: Տիեզերքի Արարիչը, մարդուն մէջ դրած է յաւիտեանականութեան իղձը, մարդ արարածը կը տեսչայ մշտական կեանքին, կ'ուզէ ապրիլ յաւերժօրէն: Այս ըղձանքը ինքնին, գրաւականն է յաւիտեանութեան: Դարձի եկող Քրիստոնեայ մը, այլեւս. «Ձի

նայիր տեսանելի բաներուն, այլ՝ անտեսանելիներուն, որովհետեւ տեսանելիները ժամանակաւոր են, իսկ անտեսանելիները՝ յաւիտենական»։ Բ. Կորնթ. Դ. 18:

Գիտութիւնը չունի մէկ հատ իսկ յաւիտենական օրէնք: Գիտութիւնը հիմնուած է յարաբերական օրէնքներու վրայ: Սանդիմէքրին, կռամին եւ երկվայրկեանին, ալսինքն միջոցին, կշիռֆին եւ ժամանակին վրայ:

«Յաւիտենականութիւն է, ուր չկայ տարիներու համբանք. կայ սկիզբ բայց ոչ վախճան, ուր չկայ տարիք եւ ոչ կնքիւ. բայց կայ ուրախութիւն եւ կայ երջանկութիւն»: Շնորհիւ Յիսուսի մէկ նայուածքին, որ վայրկեանը յաւիտենականութիւն դարձուց: Երբ Յարուցեալը խօսեցաւ, բոլոր ունկնդիր աշակերտները յափշտակուեցան: Անոր մեղանուշ ձայնն ու յարուցեալ մարմնին հրապոյրն ու շնորհը, յափշտակած էր յուսահատութեան եւ շփոթութեան մէջ ընկղմած աշակերտները:

Յիսուսի Աւետարանը գրող հոգիներն ու աստուածայայտ աւետարանագիրներ, միանգամ ընդմիշտ ներգրաւուած են, ինքզինք բացայայտող Յարուցեալի հոգեկան ներկայութեամբ, ու իրենց ապրուած աստուածփորձառութիւնը աւանդած են հետագայ ժողովուրդներուն: Աւետարանին կարգ մը հատուածները, աւելի վսեմ տեսիլներու, աւելի բարձր յափշտակութիւններու, աւելի երկնասլաց խոյանքներու եւ խոր փորձառութիւններու արդիւնք են: Յարուցեալին Հոգեկան ներկայութիւնը կ'անհետացնէ ենթական զգացողական աշխարհի զգաստութենէն դէպի երկնային զգացողութիւն:

Ս. Մեսրոպ, Գողթնեաց գաւառին մէջ, որ իր գործունէութեան առաջին դաշտն էր եղած, իր իսկ խղճին մէջ զգացած էր օտարալեզու պաշտամունքէն

եւ քարոզութենէն առանց իրեն սրտին մէջ հոգեւոր նորոգումի կայծ մը ընդունելու՝ անմխիթար մեկնող ժողովուրդին կսկծանքը: Առանց իմաստաւորելու հաւատքը՝ կրօնքը մեռած ուժ մը, ու եկեղեցին անիմաստ պերճանք մը պիտի մնային: Այս էր անտարակոյս Մեսրոպի համոզումը:

Յիսուսի առաքելներուն մեծագոյն վկայութիւնն ու քարոզութիւնը, իրենց Փրկչին մեռելներէն Յարութիւն առնելն էր: Լսե՛նք Պօղոս առաքելին պերճախօս վկայութիւնը, որ կ'ըսէ յաւերժութեան.

«Եթէ չկայ մեռելներու յարութիւն՝ ուրեմն Քրիստոս յարութիւն առաջ չէ: Իսկ եթէ Քրիստոս յարութիւն առած չէ, ի զուր է մեր քարոզութիւնը, ի զուր է նաեւ ձեր հաւատքը: Եւ Աստուծոյ սուտ վկաները եղած կ'ըլլանք, քանի որ Աստուծոյ համար վկայեցինք թէ յարութիւն տուաւ Քրիստոսի. արդարեւ, յարութիւն չէր տար անոր՝ եթէ յարութիւն չառնէին մեռելները: Իսկ եթէ մեռելները յարութիւն չեն առնիր՝ ուրեմն Քրիստոս ալ յարութիւն առած չէ: Իսկ արդ, անոնք որ ննջեցին ի Քրիստոս, կորստեա՞ն մատնուեցան արդեօք: Եթէ միայն այս կեանքին համար յոյս դրած ենք Քրիստոսի վրայ՝ ողորմելի ենք քան բոլոր մարդիկ»:

«Բայց արդ, մեռելներէն յարութիւն առած է Քրիստոս՝ ննջեցեալներու առաջին պտուղը: Քանի որ մէկ մարդով մահ եղաւ, մէկ մարդով ալ՝ մեռելներու յարութիւն»։ Ա. Կորն. ԺԵ. 13-22:

Քրիստոսի առաքելութեան մէջ քնորոշիչ է Անոր ուժ-կորովը, իր հակառակորդներու քննադատութիւնները եւ աշակերտներուն Ջինք ըմբռնելու դանդաղամտութիւնը: Ուժ մըն էր Պօղոս առաքելի իր գրիչով, ուժականութիւն մըն էր սակայն իր հաւատով եւ անձնաւորութեամբ: Ամենէն ուժգնագրե-

ցիկ զօրութեան աղբիւր, մարդ արարածին հաւատալ կարենալու կա՛մքն է: Անտեսանելի եւ աննիւթական իրողութիւններու հաւատքը չէ կորսուած դրամատիրական եւ նիւթապաշտ ներկայ քաղաքակրթութեան մէջ, ու ո՛չ ալ պայտարը վերջացած, այլ կը շարունակուի այսօր եւս եւ առաւել՝ ուժգնութեամբ: Բարձրաբերձ լեռներն ու անդնդախոր ձորերը երբեք չեն կրնար կասեցնել հաւատքի արշաւը դէպի հոգետեսական Յարութեան:

Դաժան ու անբարոյ ուժեր կը պատրաստուին վերստին արեան մէջ խեղդելու ազատատենչ մարդկութիւնը: Աշխարհի մեծերն ու հարուստները, կ'ուզեն իրե՛նք ըլլալ տիրապետող ու մեծ: Անոնք կը պատրաստուին վերստին երկիրը վերածել անեզր սպանդանոցի: Սակայն հոգեկան եւ բարոյական որոշումներ կան, որոնք ի յայտ կը բերեն մարդուս ներքին դատումն ու գութը, եւ կը փոխեն ենթակային ընդհանուր ուղղութիւնը: Այսպիսի փոփոխութիւն մըն էր որ տեղի ունեցաւ Ջակֆէոս մաքսապետին սրտին մէջ: Այսպիսի մտածումն ու կամենալը կը կոչուի ապաշխարութիւն եւ «ինքզինքին գալ»:

Ամէն մարդու մէջ աստուածադիր ուժի մասնիկ մը կայ: Ջինք կը զգուշացնէ եւ բարիին կ'առաջնորդէ: Ան «խորհրդաւոր» եւ Յիսուսի Յարութենէն արտաբխող գերբնական ուժն է, որով մարդ կը հաղորդուի անջրպետին հետ եւ ուսկից կը ստանայ թելադրանքներ՝ ներշնչումներ: Եթէ ջուրի, կրակի, ելեկտրականութեան եւ քարիւղի ուժի աղբիւրները չգործածուէին մարդու կողմէ, կրնա՞ք երեւակայել թէ ի՛նչ պիտի ըլլար իր ապրելակերպը:

1. Ի՞նչ պիտի ըլլար հաւատացեալի մը կեանքը եթէ Հոգեւոր Ուժին Ակնադրիւրը, եւ Մեծելոց Յարութիւնը չխոստացուէր, ու Աստուծոյ Թագաւորութեան երկրի

վրայ Գալը չյայտնուէր եւ չարին վերջնական պարտութիւնը չ'ըլլար:

2. Ա՛յս է ներկայ աշխարհի այլասերած եւ անհաւատութեան վիճակին պատճառը:

Մեծելոց Յարութեան հաւատալուն յաղթանակները:

Ուիլիամ Պլէյքֆ ներքողեց ու հռչակեց թէ երեւակայութիւնն ու խորհրդարանութիւնը անելի՛ գերակայ են քան 18րդ դարու նիւթապաշտական բանապաշտութիւնն ու արուեստականութիւնը (artificiality):

Ուիլիամ Քէյրի, 1761-1834 պարզ հնակարկատ մըն էր, ու ինքնագարգացումով սորվեցաւ լատիներէն, յունարէն, եբրայերէն եւ ֆրանսերէն: Շատ անձուկ վիճակի մէջ հինգ տարուայ ընթացքին Նոր Կտակարանը թարգմանեց Պենկալի լեզուին, ու սկսաւ Պենկալի լեզուով քարոզել ժողովուրդին:

1. 1809ին թարգմանեց ու հրատարակեց ամբողջ Աստուածաշունչը Պենկալի լեզուին:

2. Աստուածաշունչի կարգ մը մասերը ան թարգմանեց անելի քան 26 լեզուներու:

3. Այս հնակարկատը Ուիլիամ Քէյրիին, դարձաւ Կալկաթայի Համալսարանի Արեւելեան լեզուներու փրոֆեսոր:

4. Ուիլիամ Քէյրի ներշնչեց մօտ երկու հարիւր պատուելիներ, որոնք 1795ին հիմնեցին Լոնտոնի Աւետարանչական ընկերակցութիւնը անտարանելու համար ոչ-Քրիստոնեայ ազգերը:

5. 1804ին Լոնտոնի Աւետարանական ընկերութեան հետեւանքով, հիմնուեցաւ Աստուածաշունչի ընկերութիւնը՝ *British and Foreign Bible Society*-ն:

Վերոյիշեալ բոլոր դէպքերը իրողութիւնները արդիւնքներն են մարդկային հոգեկան ներշնչումին, ներքին թելադրութիւններուն է վեհ գաղափարներուն որոնք կու գան աստուածային

յայտնութեամբ: Աստուածային յայտնութիւնը, նման արեւի շողերուն, հեռասփռուած է համայն տիեզերքին մէջ: Աստուծոյ հեռասփռուած յայտնութիւնները (շողերը) կը ստացուին միայն կեանքի եւ անում ունեցող էակներէ եւ բուսականութիւններէ: Օրինակ, արեւին շողերը (ճառագայթներ) չեն փոխակերպեր ժայռերը, հողը եւ քարերը, սակայն կ'անեցնեն բոյսերը, ծաղիկները, պտուղները, անասունները եւ մարդկութիւնը:

Ասոնց բոլորին մէջ, աստուածային յայտնութիւնը ստացող եւ իր Արարիչին նմանութեան ազդեցութեան ենթարկուողը՝ մարդ արարածն է: Կարգ մը մարդոց համար, կեանքը իրերու, դէպքերու եւ երեւոյթներու շարունակութիւն մըն է լոկ, եւ իրենք՝ զոհը այդ յորձանուտին, որովհետեւ չունին նպատակ, տեսիլք ու կամք: Այսպիսիներու համար կեանքը պատահականութեանց եւ դիպուածներու հոլովոյթ մըն է:

Մարդ արարած իր ազատ կամքով կ'ընտրէ փոխարկուիլ իրմէ աւելի վատ անասունի, կամ հաւատալով ու սիրելով իր Արարիչը, կը դառնայ աստուածակերպար: Անասունի փոխակերպուիլը, դէպի գառիվար ճամբայ է, իսկ աստուածանման ըլլալը, մագլցիլ է միացեալ ուժով եւ բարձրանալ Պայծառակերպութեան լեռը:

Առաջին ֆրիստոնեաներու մէջ բարոյական գերադաս ուժ մը արտայայտուեցաւ, աստուածային գերիմաստ կեանք մը եւ նկարագիր մը ի յայտ եկաւ: Ի՞նչ ուժն էր, որ ուրացող Պետրոսը քաջակորով քարոզիչի փոխակերպեց, Թովմաս անհաւատը, Հնդկաստանի աւետարանիչի, եւ Յիսուսի եկեղեցին հալածող Պօղոս, եղաւ Քրիստոսի եկեղեցւոյն մեծագոյն ախոյեանը: Վերոյիշեալ երեք փոխակերպուող անձերը իրենց մարմնական

աչտով տեսա՛ն Յարուցեալ Յիսուսը եւ խօսեցան Անոր հետ:

Այս յօդուածին վերնագիրը չ'ըսեր. «Երանի Այն Մեռելներուն՝ Որոնք Ննջեցին», այլ՝ կ'ըսէ. «Որոնք ննջեցին Ի Տէ՛ր»:

Ինչո՞ւ:

Նախ յարութիւն պիտի առնեն բոլոր անոնք, որոնք հաւատացին ու սիրեցին իրենց Տէր Յիսուս Փրկիչը, եւ հաւատարիմ մնացին իրենց կեանքին բոլոր տեւողութեան ու նահատակուեցան: Այս անհամար մարտիրոսներուն հետ միասին յարութիւն պիտի առնեն բոլոր հաւատացեալները եւ զԱստուած սիրողները: Կենաց Գրքին մէջ գրուած եւ «Ի Տէր» ննջող բոլոր անձնուրաց ժողովուրդները պիտի լսեն Աստուծոյ փողին Զայնը եւ պիտի արթնան իրենց մահաբռնէն: Քրիստոնեայ հաւատացեալները ուրիշներէ առաջ յարութիւն պիտի առնեն ականատես ըլլալու Խաչեցեալ եւ Յարուցեալ Յիսուսի համաշխարհային յաղթանակին:

Բոլոր անոնք, որոնք անարգուեցան, չարչարուեցան, մորթագերծ եղան, եւ հալածուեցան «Ի Տէր Յիսուս», պիտի կորսուին ու անյայտանան աշխարհէ:

Աստուծոյ արդար եւ վերջին դատաստանէն յետոյ, Աստուած սիրողները եւ Անոր Որդւոյն հաւատացող հաւատարիմները պիտի ժառանգեն երկիրը ու աշխատին վերականգնելու եւ դրախտի վերածելու Աստուծոյ ստեղծած երկրագունդը: Այս լուսաւոր լոյսին, ստոյգ վերականգնումին եւ յաւերժօրէն ուրախանալի վարձատրութեան համար, համայն աշխարհի Քրիստոնեաներ կ'աղօթեն ըսելով.

«Եկեսցէ արքայութիւն քո.

Եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի»:

ԱԼ ՊԷՒ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

## ԻՆՉՊԷ՞Ս ՍԳԱՅ ՍԻՐԵԼԻՆ

Երբ ես մեռնիմ՝ սըգացե՛ք, բայց արցունքի փոխարեն՝  
 Խանդաղատա՛նք ու գորո՛վ միայն բըխի ձեր սիրտէն.  
 Ջի կը չորնան արցունքներն, եւ վիշտերն ալ կը մարին  
 Ժամանակի կարեկից, ըսփոփարա՛ր թեւերուն՝

Ինչպէս արցունքը այրող մոմին որ հուսկ կը հատնի  
 Բարակ ցօղունն իր գրկած, եւ այդ լոյսն ալ կը շիջի:  
 Առանց այդ տա՛ք գորովին, միջոցին մէջ առկախեալ,  
 Հոգիս մընայ պիտի որբ՝ մինչեւ վախճա՛նն աշխարհի,

Մինչեւ մարմի՛նն իմ առնէ գերեզմանէն յարութիւն,  
 եւ գայ գտնել կորուսեալ սիրելիները նախկին:  
 Թող մի՛շտ սըգան ետեւէս անոնք որ զիս սիրեցին,  
 Անոնց զոր ե՛ս սիրեցի, որ բոյրն եղան իմ կեանքին,

Նո՛յնիսկ լեղի օրերուն. եւ մի՛շտ՝ նեցուկ ամրակուռ,  
 Երբ չար հովերն աշխարհի զիս խոցեցին խորերէն:  
 Թող զիս սըգան անարցունք, հպարտութեամբ, վե՛հօրէն,  
 Քաղցըր վիշտով անպատում, բայց որ մարդիկ չըտեսնեն:

Հաւատարիմ ո՞վ կայ արդ՝ որ ընթացք տայ փափաքիս,  
 Որ իր սրտին մէջ պահէ զիս երբ մեկնիմ աշխարհէն,  
 Սիրտը որուն ըլլայ մի՛շտ աւելի ջերմ ու անքէն,  
 Որ սիրելով ազատէ՛, ինձ մոռացման անդունդէն:

«Ի լրումն ժամանակի»

Անտիպ հատորէն

ԱՆԵԼ

## ՀԱԻԱՏՔ

Առաջ՝ Աստուած եւ ա՛յա Ազգ.  
 Հայրենիքէ առաջ Հաւատք:  
 Վերցո՛ւր Աստուած՝  
     Բա՛ն չմնաց  
 Կեանքէդ, ազգէդ, հայրենիքէդ:  
 Կորսնցո՛ւր Ձայն՝  
 Կը կորուսե՛ս ինչ որ ունիս:  
 Մարէ կրակն՝ ի՞նչ կը մնայ...  
 Առաջ՝ Յիսուս, յե՛տոյ Մասիս:  
 Խաչը կ'ապրի դրօշէն վեր.  
 Հազար տեսակ դրօշներէն,  
     Որ անցեր են,  
 Միմիայն խա՛չն է վերապրեր  
     Ու գերապրեր:  
 Լո՛կ Աստուածով ես՝ լման մարդ.  
 եւ եթէ վրան ալ աւելցաւ  
 Հայրենիքի սէրը հպարտ՝  
     Աւելի՛ լաւ.  
 Կրցար նաեւ հա՛յ մարդ ըլլալ,  
     Հա՛յը իրաւ  
     Ու իտէալ,  
 Որուն սրտին մէջ անբաժա՛ն  
 են միևնչեւ մահ Աստուած ու Ազգ:  
 Ջի չես կրնար քեզ հայ զգալ  
 Առանց Անո՛ր,  
 Որ ստեղծեր է ըզքեզ հա՛յ՝  
 Լեզուններուն մէջէն անթիւ,  
 Ջի չե՛ս կրնար ըլլալ դուն հայ՝  
 եթէ չես նախ ֆրիստոնեայ...

ԺԱԳ Ս. ՅԱԿՈՐԵԱՆ

### ՔԱՐԱԻԱՆ

Երբ յանկարծ մօտենաս իմ կեանքի փռատուած օրերին,  
Զծաղրես, չխնդաս, որ խարուած քո հոգին եմ սիրել,  
Ես կ'այրուեմ, կը փութեմ քո ներմակ, քո մաքուր շորերին,  
Իրրես մուր, եւ տխուր մի հեփաթ, որ բախտը հոգուս է նուիրել:

Ա՛խ, յուշ է ե՛ւ ուշ է, ե՛ւ գալիք, իմ անցեալը մրոտ,  
Ոսկեծամ անձրեւներ յորդառատ միայն քո աչքերից կաթեցին,  
Արցունքներ, որ ընկած իրրես վիշտ, լուսիւն ու կարօտ,  
Եւ խօսքեր քո ձայնից, որ հոգիս շերմօրէն խայթեցին:

Անձրեւ ես, անձրեւ ես, ա՛խ թանկ է, թէ եւ չար է հոգիդ,  
Հեկեկում, լցնում ես աչքերդ, ալիքներն ալեկոծ ծովերի,  
Գինեմոլ, վառ օրեր քո սրտում, իրրես մութ գիշերներ իմ կողմին,  
Իրրես լոյս, բայց անլոյս ապրեցին, փշրելով մնացած օրերն իմ:

Դեռ երկար, շատ երկար կը փայլես, կը հրճուես յաղթութեան ծափերից,  
Ապրեցի, պարտուեցի, ինչ արած, աշխարհ է, դեռ խաւարն է յաղթում,  
Բայց ափսոս իմ սէրը, որ ծնուեց ու կախուեց միայն քո ափերից,  
Ու ես քեզ իմ փամած ապրումներն, իմ անցած ճանապարհն եմ մաղթում:

Անիծում եմ ես քեզ, ինձ նման, իմ սիրով ապրիր դու,  
Գէթ մի օր վայելիր այս անուշ տանջանքի բերկրանքներ,  
Եւ կը զգաս վիրաւոր իմ թռչուն, որ բոյնըդ դարձել է մի անդուռ  
Հին մատուռ, ուր փոշում թաւալուեց իմ կեանքը:

... Երբ յանկարծ մօտենաս իմ կեանքի փռատուած օրերին,  
Զծաղրես, չխնդաս, որ խարուած քո հոգին եմ սիրել,  
Ես կ'այրուեմ, կը փութեմ քո ներմակ, քո մաքուր շորերին՝  
Իրրես մուր, եւ տխուր մի հեփաթ, որ բախտը հոգուս է նուիրել:

ԱՐՏԱԿ ՀԱՄԱՐԶՈՒՄԵԱՆ

## ԱՆԱՆՑԸ

Աշխարհը մեր հնամեայ.  
Շատ է տեսած անոնցմէ՝  
Այն մեծանուն կայսրերէն,  
Արքաներէն փառասէր,  
Աստուածացած դէմքերէն:

Մեր երկրին մէջ Տիգրան Մեծ,  
Ուրիշ տեղ Մեծն Աղեփսանդր,  
Անյաղթելի Ափիլէսն,  
Ու անոնց պէս շատ շատեր:

Անոնց մէջէն մէկն եղաւ  
Տիրակալ մաս մ'աշխարհի,  
Տպեց դըրամ իր դէմֆով,  
Կազմեց բանակ մը հզօր,  
Ու քաղաք մ'իր անունով,  
Եւ կամ ինքզինք հռչակեց  
Աշխարհարնակ մէկ աստուած:

Բայց անոնցմէ ի՞նչ մընաց.  
Միայն ճղճիմ բեկորներ  
Իրենց կանգնած բերդերէն,  
Ու պղինձէ լումաներ  
Փոխան ոսկի շոպյանքի,  
Մերթ անուններն իսկ ինկած  
Գիրքի մաշուած տողէն դուրս:

Այդ վախազդու դէմքերէն  
Որո՞ւն անունը կրնայ  
Այլեւրս մեզ վախցընել:  
Անոնք հող են ու փոշի,  
Եւ ի վերջոյ պիտ' թաղուին  
Մոռացութեան վերմակին  
Մէջ փաթթուած ու սառած:

Ու ես յոգնած՝ պատմութեան  
Գիրքըս երբոր կը կարդամ,  
Այս անունները բոլոր  
Կը խառնըին իրարու,  
Եւ տուեալներն ալ անոնց  
Կը մոռցըին ա՛լ արդէն:

Հոգւոյս մէջ բայց կ'ապրի մի՛շտ,  
Շո՛ւնչը Անոր, որ բոլոր  
Հոգիներուն աշխուժ կեանք  
Կը պարգեւէ շատ յանախ:  
Շունչն է Անոր՝ կենսատու,  
Արցունքն Անոր՝ ոռոգիչ,  
Ցասումն Անոր՝ կործանիչ,  
Ու սէրն Անոր՝ ըսփոփիչ:

Անունն Անոր՝ պատմութեան  
Գիրքերուն մէջ գրուելով  
Զէ կարելի զԱյն ճանչնալ,  
Եւ ոչ մարդոց միտքերու  
Փաստարկութեան ենթակայ.  
Ան մի միա՛յն կ'ապրուի:

Երբ կործանուած ես հոգւով  
Կամ մարմինով անկարող,  
Ան իբրեւ Տէրն ամենուն  
Կրնայ քեզ խոր ջրհորէն  
Բարձրացընել դէպ անյայտ  
Ծաղկազարդուած բարձունքներ,  
Անծայրածիր պարտէզներ:

ԹՈՐԳՈՄ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԳՐԱԿԱՆ

ՀԱՄՕՆ

Քառասուն գարուններ բոլորած, երիտասարդական խանդով լի տղայ մըն էր Համօն, երբ գործի բերումով ծանօթացայ իրեն: Փոքր տարիքին կորսնցուցած էր հայրը: Ընտանիքին ամենափոքրն էր: Չորս աղջիկներէ ետք... միակ տղայ գաւակը:

Ծնած էր Հալէպ: Նախնական կրթութիւնը ստանալէ ետք Նոր Գիւղի Սահակեան Ազգային Վարժարանին մէջ, կեանքը զինք նետած էր «հացի եամբուն» վրայ... «թոռնոնի»ի մը խանութը... ուր իր մատղաշ միտքը ալօսած էր մեքենագիտութեան գաղտնիքներով: Սուրիոյ քաղաքական անկայուն վիճակը զինքը նետած էր Խաղաղականի այս ակնարկը: Արեւելեան կեանքի տաք ու պաղ օրերը տեսած եւ մեքենագիտութեան արհեստին տիրացած Համօն երբեք դժուարութիւն չէր ունեցած գործ գտնելու եւ ընտելանալու ամերիկեան միջավայրին: Մինակ էր: Իր գիտցած ճանապարհը այս նոր աշխարհին մէջ, տունէն՝ գործ... գործէն տունն էր եղած: Հակառակ իր կուրծքին տակ կոտտացող ցաւին, քիչով գոհացած էր: Գիշեր ցերեկ աշխատած էր իր թափուն վիշտը ամոքելու համար: Ընտանիքին կարօտը, ընտանիքին տիրութիւն ընելու որդիական պարտքի գիտակցութիւնը, ընկճած էր հոգին, որ հիմա որպէս բարեկամ, գէթ՝ շարաթը անգամ մը այցելութեան կու գար մեզի, մեղաւոր զգալու տառապանքը աչքերուն մէջ: Սակայն անհուն միտքարութիւնը կ'ունենար, որ կը կարողանար ամիսը անգամ մը՝ իր ամսականէն «տոկոս մը» առաքելու իր մօր եւ բոլորներուն, որոնք կարօտին հետ, նաեւ կարիքը ունէին Համօյի օգնութեան: Ու յաճախ հարազատներուն հետ հեռաձայնով խօսելէ ետք, երջանկութեան արցունքներ

աչքերուն՝ կու գար ու կը պատմէր երազային Հալէպէն...

- Ի՛նչ երազներ հիւսած են բոլորերս: Ի՛նչ հարսնցու աղջիկներ որոշած են, որ երբ վերադառնամ՝ հաւնած աղջիկս կին առնեմ: Մօրս միակ փափաքն էր, որ զիս ամուսնացնէ - կը պատմէր Համօն:

- Լա՛ւ կ'ընես, ամուսնացիր, ընտանիք կազմէ... - կը քաջալերէի զինք միշտ:

- Մայրս կայ, ես մօրս չեմ կրնար առանձին ձգել: Հիմակուայ աղջիկները տան մէջ կեսուր չեն ուզեր:

- Գնա՛՛ քաղաքէն ընտանիքիդ ծանօթ յարմար աղջիկ մը գտիր, ամէն ինչ լաւ կ'ըլլայ - կը միտքարէի Համօյին:

Անցան տարիներ, ու Համօն օր մըն ալ, լուռ ու մունջ տիրացաւ ամերիկեան քաղաքացիութեան:

Պանդխտութեան դառն օրերը մոռացած, իր առաջին պարտականութիւնը համարեց այցելութիւն մը տալ իր ընտանիքին, որուն կարօտը օրէ օր կը լեռնանար իր հոգւոյն:

Համօյէն առաջ արդէն լուրը կայծակի արագութեամբ հասած էր Հալէպ, Նոր Գիւղէն՝ Ազիզիայ... ու Սիւլէյմէնի-եայէն՝ Դամասկոս... ուր հիմա բնակութիւն հաստատած էին Համօյի բոլորերը:

Շարաթներ կը սահէին ու ամիսը կը վերջանար, սակայն Համօյի վերադարձի լուրը կ'ուշանար: Ու երկու տարի վերջ, երբ Համօն ալ յիշողութեանս մէջ, անցած էր պատմութեան գիրկը, յանկարծ հեռաձայն մը ստացայ Գալիֆօրնիոյ՝ Պարսօ քաղաքէն:

Համօն էր հեռախօսողը:  
- Ա՛յ տղայ... ո՞ւր ես... Հալէպ գացիր, վերադարձար, սակայն մարդ

լուր մը կու տայ... երկու տարիէ ի վեր ձայնդ չկայ: Այսպէ՞ս եղաւ մեր բարեկամութիւնը - հարց տուի զարմացած:

- Զէ՛ եղբայր չէ... ի՞նչ բաներէ անցայ... փորձեց արդարանալ Համօն, ու պատմեց...

- Հալէպ գացինք, գլխուս աղջիկ մը փաթեցին, ամուսնացանք, երախայ մըն ալ ունեցանք, մօրս ալ Ամերիկա բերի, մինչ այդ՝ ընկերութիւնը ուր կ'աշխատէի տեղափոխուեցաւ սա անպատային անիծեալ քաղաք... ահա այս բոլոր տաղտուկներէն՝ հազիւ սկսայ շունչ մը քաշել:

- Է՛... յուսամ լաւ հանգիստ ես:

- Ի՞նչ կը սպասես... անպատի մէջ նստած եմք, հայ կեանքի կարօտը մեր սրտին: Ի՞նչ կրնամ ընել...

- Հոգ մի ընեք, «Ուր հաց, հոն կայ» կ'ըսէ հայկական առածը - ըսելով, փորձեցի մխիթարել:

- Կ'ուզեմ ձեզ ընտանեօք մեզի հրաւիրել, Շարաթ օրով եկուք, երկու օր միասին ժամանակ կ'անցնենք. - բարեկամութիւնը վերահաստատելու շեշտով մը հրաւիրեց Համօն:

- Ո՞ւր գամ անպատի մէջ... բայց եթէ օր մը Լաս Վեկաս երթանք, ճամբուս վրայ կը հանդիպինք. - պատասխանեցի յուսալից խօսքերով:

- Երբ որ գաս տունս բաց է ձեզի համար, կը սպասենք... - ըսելով ու ցտեսութեան մաղթանքով հրաժեշտ առաւ Համօն:

Անկեղծ բարեկամ էր: Հակառակ այդ հեռաւորութեան երկու, երեք ամիս անգամ մը կը հեռաձայնէր, առանց մոռանալու իր հրաւերը:

Տարիներու ընթացքին հրաւերին պատասխանելու խոստումներս այնքան կուտակուած էին, որ հիմա պարտք համարեցի շարաթավերջին երեք օրով Լաս Վեկաս երթալ «արձակուրդի», ու

ճամբուս վրայ ո՛չ միայն շնորհաւորել Համօյի հարսանիքը, այլ նաեւ նորածին երախաները եւ նոր տունը:

Անակնկալներով լի շարաթավերջ մը անցկացնելու զգացումով, ընտանեօք ճամբայ ելանք Ուրբաթ առտու մը: Ուր տարիէ ի վեր Լաս Վեկաս չէինք այցելած: Լսած էինք գեղեցկացած Լաս Վեկասին ու նոր քաղաքներուն մասին: Համօյին անակնկալ մը ընելու համար, լուր անգամ չէի տուած այցելութեանս մասին, որուն համար ալ վերջը զղջացի:

Պարսօ քաղաքն եմք, Համօյի տան հասցէն ձեռքերնիս ու հիմա կը փորձենք գտնալ Համօյի բնակարանը: Քանի մը փողոցներու մէջ ման գալէ ետք, կանգ կ'առնենք Համօյի տան առջեւ: Կասկած չունինք, որ ճիշդ հասցէն գտած եմք: Համօյի ձայնը կը լսուի արդէն փողոցի երկայնքին: Ըստ երեւոյթին կնոջ հետ է բարկութիւնը:

Պահ մը կը տատանիմ դուռը թակելու: Երանի՛ լուր տայի չեկած... հիմա սա ընտանեկան անհասկացողութեան մէջ, ի՞նչ գործ ունիմ ես... կը մտմտայի, մինչ կինս քաջութիւնը կ'ունենար դուռը թակելու:

Լուրսերը ո՛չ միայն փոխակերպեց տան բնակիչներու հոգեվիճակը, այլ անակնկալի եկած դէմքերուն վրայ ժպիտ մըն ալ ուրուագծեց, երբ Համօն դուռը բացաւ ու ողջագուրուեցաւ հի՛ն օրերու կարօտով:

- Կեանք բերիք մեր տան, Աստուած ձեր կեանքը երկարէ, - աղօթքը շրթունքին ըսաւ Համօյի մայրը, մեզի ծանօթանալով:

- Առաջին հայն է՛ք որ մեր դուռը զարկիք: Մայրս հայու, հայ դրացիի կարօտը ունի. - ըսաւ Համօն, փորձելով լրացնել մօր միտքը:

- Ես վրո՛ւմ, մէկ հատ եկեղեցի չկայ, հայերէն խօսող չկայ, ի՞նչ ընեմ ես հոս... նեղե՛ք սա Ամերիկային:

Ղուրպան եղեր եմ ես մեր Հայէպին:  
 Հոստեղ մարդ քեզի հարցնող չկայ:  
 Տղաս առտուն կ'երթայ, գիշերը յոգնած  
 կու գայ: Երկու բառ խօսելու ժամանակ  
 ալ չունի: Զօնուխները պապա տէյի խենթ  
 կ'ըլլան: Ի՞նչ ընէ... գիշեր ցերեկ  
 կ'աշխատի, մէյ մըն ալ ճէհէննէմին  
 տիպը կը դրկեն իրեն:

- Լա՛ւ, մամա... հիմա իրենք մեր  
 պատմութիւնը լսելու չեկան. - ըսելով  
 հարսը ներս եկաւ բարեւելով մեզի:  
 Համօն՝ իր դառնութիւնը մեղմացուցած  
 պատմեց իրենց ծանօթացումին ու  
 ամուսնութեան մասին:

Հիմա երեք երախայի հայր եղած  
 է Համօն: Երկու տղայ եւ մէկ աղջիկ:  
 Զաւակները՝ երկուքը մկրտուած են Լոս  
 Անճելըսի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, իսկ  
 երրորդը տակաւին չէ մկրտուած: Ցաւ  
 մը՝ որ խորապէս կը ճնշէ ծերունի մօրը  
 վրայ:

- Ժամանակ չունիք. -  
 կ'արդարանար Համօն: Շարաք... Կիրակի  
 մը ունիմ, հազիւ տան գործերը կրնամ  
 ընել, շուկայի գնումները... երախաներուն  
 խաղերը... խոտի մաքրութիւնը... պարտէզի  
 գործերը... տան նորոգութիւնները... ո՞ր  
 մէկը ըսեմ:

- Էտ ճէհէննէմին գործն ալ ըսէ.  
 - միջամտեց մայրը:

- Նորմալ ամերիկեան կեանք  
 այս է, Հա՛մօ, մեզի նորութիւն մը չես  
 յայտնեք ըսածովդ. - փորձեցի մխիթարել  
 զինք:

- Դուք գոնէ փոքրիկ Հայաստանի  
 մէջ կ'ապրիք, մարդ կը տեսնէք, ամէն  
 բանի մօտ էք, հո՛ս անոնք ալ չկան. -  
 պատասխանեց հարսը:

- Էտ ճէհէննէմին գործը հէլէ... -  
 կրկին յուշարարի դերով միջամտեց  
 ծերունին:

- Լա՛ւ, մա՛մա... հիմա ատոր  
 ժամանակը չէ. - ըսելով խուսափեցաւ

Համօն պատմելէ:

Մենք, որ հազիւ մէկ կամ երկու  
 ժամ դադարի մը ծրագրով որոշած էինք  
 հանդիպիլ Համօյին, կը փորձէինք խոյս  
 տալ երկարապատում պատմութիւններէ,  
 երբ Համօյի հիւրասէր կիներ ճաշի  
 պատրաստութեան սկսաւ: Անկարելի եղաւ  
 համոզել Համօյին ու կնոջ, որ ուրիշ  
 ատեն դարձեալ կը հանդիպինք:

- Ո՞ւր պիտի երթաք, ես վրում,  
 նստեք ենք, գոնէ հայու սուրաք մը  
 տեսանք - ըսելով կը մխիթարուէր հէզ  
 մայրը:

Լոնլեայն կը զգայի ծերունիին  
 տառապանքն ու հոգեվիճակը: Հայէպէն՝  
 Լոս Անճելըս, ու կարճ շրջան մը վերջ,  
 Պարսօյի խուլ մէկ անկիւնը: Ու այս  
 բոլոր ցաւերուն վրայ, տակաւին հարս ու  
 կեսուրի պատմութիւն մը գուցէ:

- Լա՛ւ կ'ըլլայ, մայրիկ, Համօն  
 շուտով մեր կողմերէն գործ կը գտնայ,  
 Լոս Անճելըս կը տեղափոխուիք. - ըսի  
 յոյս ներշնչելով ծերունիին:

- Աստուած բերնէդ լսէ, ես վրում,  
 սա չօճուխը մէյ մը կ'ունենք ալ ընէինք,  
 սրտիս տէրտ եղաւ. - պատասխանեց  
 մայրիկը:

- Այս մեծ տղաս է, Կարօն, այս  
 աղջիկս է՝ Մարին, այս ալ մեր պզտիկ  
 ձագուկն է՝ Արօն, - ըսելով երախաները  
 մեզ ներկայացուց Համօն:

- Քանի՞ տարեկան ես Կարօ. -  
 հարցուցի մեծ տղուն:

Փոքրիկը պահ մը ամչնալով,  
 չուզեց պատասխանել: Ապա ծերունիին  
 ու հօր թելադրանքներուն վրայ, Կարօն  
 ակամայ հինգ մատերը ցոյց տուաւ: Ու  
 երբ փորձեցինք բերնէն լսել այդ  
 մատներուն թիւը... Կարօն «Յայվ» մը  
 մրմնջաց հազիւ լսելի ձայնով մը:

- Հինգ ըսէ... տղաս, հինգ...  
 հինգ... - կը ջանար ըսել տալ թիւը Համօն  
 ու հէզ մայրը:

- Ի՞նչ ֆայլ - կը կրկնէր Կարօն, հաստատ հիմա իր ծանօթ լեզուին:

- Ա՛խ, ի՞նչ ըսեմ ես սա կնոջս: Հազար անգամ ըսինք որ սա երախաներուն հայերէն սորվեցուր: Հայերէն խօսիր հետերնին: Փոխանակ ասոնց հայերէն սորվեցնէ, ինք իրենց հետ կը նստի եւ անգլիերէն կը սորվի, անգլիերէն կը խօսին. - ցաւը սրտին պատասխանեց Համօն:

- Ամէն օր մեր տան մէջ սա կոխը կայ իշտէ, հայերէն խօսեցէք կ'ըսենք չեմ հասկնար, քիչ առաջ դուք չեկած, նորէն հայերէնի կոխ կար, ի՞նչ ընենք եսվրում. - կը փորձէր դարման գտնել իր ալ ցաւին խեղճ ծերունին:

- Այս ցաւը ամէն տեղ կայ մայրիկ, մեր Լոս Անճելըսի մէջ ալ կայ: Զաւակներդ նոյնիսկ հայկական վարժարան կը դրկես, որ հայ մեծնան, հայերէն խօսին, տան մէջ կամ դուրսը իրարու հետ անգլիերէն կը խօսին. - ըսելով, փորձեցի մ'իթարել Համօն ու իր մայրը:

- Ես հաւատփի ու կամփի կը հաւատամ. - կտրուկ շեշտով պատասխանեց Համօն ու շարունակեց...

- Տարի մը առաջ գործով Ալաւա դրկեցին զիս: Հինգ օր մնացի Ժիւնօյի մէջ, մօրս ըսած ետէնէնէմին տիպն է սա: Յատուկ գործիքներ պէտք է սարքէի: Աշխարհի մէկ խուլ անկիւնն եմ, միմակ, առանձին: Մարդ չեմ ճանչնար, տեղ մը չեմ գիտեր: Առաջին մտածումս եղաւ, թէ արդեօք հայ կա՞յ սա աշխարհի քէօշէն: Գիշերը, պանդոկի հեռաձայնի տետրակը բացի, ու սկսայ մականուններուն մէջ «եան» վերջաւորութեամբ անուն գտնել: Երկար փնտռտուրէ ետք Մայք Մանուկեան անունով մէկը գտայ: Ուրախութիւնս անսահման էր: Անմիջապէս հեռաձայնեցի: Ու ո՛վ գարմանք, ան ալ Հալէպէն գաղթած էր,

ինծի նման թոռնոնի էր: Հակառակ գիշեր ըլլալուն, անմիջապէս եկաւ իր տունը տարաւ զիս: Կարծես հի՛նք բարեկամներ ըլլալինք: Այդ օտարութեան մէջ, Մայքը՝ որուն բուն անունը Մկրտիչ է, ամուսնացած էր տեղացի աղջկայ մը հետ: Հինգ երախայ ունէին: Այդ օտար կիներ՝ չէք հաւատար... պլպուլի պէս հայերէն կը խօսէր: Զաւակներուն անունները հայերէն էին: Բոլորն ալ տան մէջ հայերէն կը խօսէին: Մայքը կնոջ պայման դրած էր որ տան մէջ հայերէն պիտի ըլլար ամէն ինչ:

Իսկ երբ կիներ ընթրիք պատրաստեց ու սեղան նստանք, աչքերս արցունքով լեցուեցաւ երբ աշխարհի խուլ մէկ անկիւնը, այդ հայ երախաները միասնարար «Հայր Մեր»ը աղօթեցին եւ «Ճաշակեսցուք» ըսին: Ա՛յս է կիներ ու մայրը:

Երբ օտարը հայերէն կը սորվի ու զաւակները հայ կը մեծցնէ, այն ալ Ալաւալի պէս տեղ մը... ի՞նչ ըսեմ մեր կիներուն որ կ'ուզեն արդիական ըլլալ... անգլիերէն խօսելով գիտուն երեւալ... քանի հայերէնը մօտա լեզու չէ եղեր... հո՛ս անգլիերէն գիտնալը կարեւոր է եղեր...

Տակաւին Մայքը ամէն Կիրակի, հայկական պատարագի ժապաւէնը կը լսէ ու զաւակներուն հետ մեր շարականները կ'երգէ: Կիներ հայկական կերակուրներ կը պատրաստէ: Այս է հաւատքը, այս է կամքը:

Եթէ Մայքը յաջողած է այդ հինգ երախաներուն ու օտար կնոջ հայերէն սորվեցնել, ե՛ս... որ կինս հայ է ու արեւելի շերմութեամբ մեծցած, հո՛ս արեւմտփի մէջ, չեմ հասկնար ինչպէ՞ս այդ հաւատքն ու շերմութիւնը այսօր արագ ստոցեան իր մէջ, ու ես ալ գուցէ ու ես ալ գուցէ մեղքի հաւասար բաժին մը ունիմ...: Հազար ամօթ ինծի եւ

կնոջս, որ այս վիճակի մատնած ենք մեր գաւազները:

Տեսա՛ր Կարօն, ինչպէս հինգ մատները բացաւ ու մէկ հատ մայրենիով հի՛նգ բառը չըսաւ... չկրցա՛ւ ըսել... չուզե՛ց ըսել... Ֆայլ մը գլտորեց բերնէն, ֆայլ մը... - յուզուած ու թաց աչքերով պատմեց Համօն ու լռեց:

- Մենք անապատի աւազներուն վրայ սորվեցանք մեր ա՛յր բե՛ն գի՛մը, եավրում: Ես դպրոց չեմ գացած, որք մեծցած եմ, բայց բոլոր որբերուն հետ մենք հայերէն սորվեցանք, աղօթել սորվեցանք, հիմա սա չօնուխներուն հետ ի՞նչ խօսիմ, եավրում... ինծի չեն հասկնար: Իմ միակ տղուս գաւազներն են, գաւազս պէս կը սիրեմ բոլորին... բայց ի՞նչ ընեմ... հարսերնիս անգլիերէն կ'ուզէ սորվիլ ու խօսիլ... ա՛խ մեր կոխն ալ ամէն օր «իշտէ» այս է. - խոկաց ծերունիին:

Պահը հոգեբնշիչ էր...: Համօն լուռ էր: Լուռ էինք եւ մենք: Ու այդ լուռութեան մէջ նստած, ակամայ կը մտաբերէի Շահնուրի խօսքերը... «Կը նահանջեն ծնողք, որդի... կը նահանջեն բարք, ըմբռնում... կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն: Եւ մենք դեռ կը նահանջենք բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղա՛յ, մեղա՛յ Արարատին»:

Մայքին պատմութիւնը խորապէս ազդած էր վրաս: Ե՛ս ալ իմ կարգիս կը

նանչնայի Մայքին նման հայորդիներ, որոնք օտարութեան մէջ, թէպէտ օտարի հետ նարօտ կապած, սակայն իրենց կիներուն հայերէն սորվեցուցած էին, որպէս զի գաւազներն ալ հայ մեծնային:

Ընտանիքներ, որոնք կը պահէին նաեւ հայկական աւանդութիւնները: Սակայն ֆանի՞ հայ Մայքեր կան այսօր: Մինչ Համօյի ցաւը՝ համընդհանուր սփիւռֆահայու ցաւն է:

Համօն ճիշտ էր... գիտակցութեան, հաւատքի կամքի կարօտ հարց էր:

Սակայն արդիականութիւնը... սա նոր աշխարհին հետ համընթաց ֆայլ պահելու մարդոց ցանկութիւնը, դժբախտաբար կը տժգունէ հայկական դիմագիծը անոնց, որոնք ամէն բանէ առաջ կը մոռնա՞ն թէ՛ կը մերժեն ըմբռնելու յոյն փիլիսոփայ՝ Սոկրատին խօսքը՝ «Ծանի՛ր Զեբզ». խօսք մը՝ որ սա հայակույ ոստանին մէջ կը դառնայ «ձայն բարբառոյ յանապատի», ուր փոխանատոր, Շահնուրին բառերով... «մե՛նք, կը վճարենք իբրեւ վերջին փրկագին այն որ պիտի գայ: Իբրեւ վերջին փրկագին՝ մանուկներ որոնք կրնային մեծնալ, ապագայի սերունդներ որոնք մեզմէ վերջ պիտի գային: Որովհետեւ այն որ պիտի գայ, պիտի ըլլայ օտար, բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ», այնպէս ինչպէս հիմա՝ Համօն կը վճարէ այդ վերջին փրկագինը... կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ:

ՆԱՀԱ ՊԵՏ ՄԵԼ ԲՈՆԵԱՆ

## ԵՐԳԸ

Ըսուած է՝ «Զարեբը երգ չունին ...»: Շիտակ խօսք: Եթէ երգը ճախրանք մըն է, պոռթկում մը՝ ուրախութեան ու օրհնութեան, փառաբանութեան եւ մաղթանքի, կոչ մը՝ հրճուանքի ու խոյանքի, որոշ է՝ զարեբը չեն կրնար երգ ունենալ: Անոնց պոռթկումը մաղձ է, եւ մաղձը երգ չէ, խժալուր աղմուկ է, զգուելի՛...:

Երգը թոնչք կու տայ հոգիի: Երանք ու բոց կու տայ բառերու: Խօսքը արգասիքն է մտքի, երգը՝ մեղեդին է սրտի: Միտքը համակարգիչն է, սիրտը՝ թրթռացող լարը...: Զարեբը երգ չունին. անոնց սիրտը ուծացած, թուլցած լար է, չի թրթռար:

Եկեղեցին երգ ունի: Երգող հաւաքականութիւն է, աղօթող: Աղօթքը մտքի լեզուն է, երգը՝ սրտի թրթռացումը, բառերուն թոնչք տուողը՝ շեշտ ու իմաստ: Երգը աղօթքին կու տայ թոնչք ու արձագանք:

Առէ՛ք սաղմոսները, շարականները, երգ երգոցը, հոգեւոր երգերն ու կանդադաները, կցուրդները, եւ օրհներգները, եւ հիացէ՛ք անոնց ներդաշնակութեան ու մեղեդիին ներշնչիչ զօրութեան: Անոնք թեւ կու տան աղօթքին եւ դրական արձագանք անոր...:

«Երգեցէ՛ք ու սաղմոս՝ս ըսէ՛ք», կը պատուիրեն Տէր Յիսուսի առաքեալները:

«Սաղմոսներով, օրհնութիւններով ու հոգեւոր երգերով ձեր սիրտերուն մէջ» օրհնեցէ՛ք զԱստուած: «Եթէ մէկը ուրախ է, սաղմոս թող երգէ» (Եփ. 5.19, Յակ. 5.13): Գեթսեմանիի ճամբուն վրայ, Տէր Յիսուս սաղմոս կ'երգէ իր աշակերտներուն հետ (Մարկ. 16.26): Հրեշտակները տեւապէս կ'երգեն Աստուծոյ ներկայութեան՝ երկինքի մէջ (Յայտ. 5.9, 15.3):

Եկեղեցին երգող հաւաքականութիւն մըն է: Պէտք է միախմբուիլ զԱստուած փառաբանելու համար, շնորհակալութիւն յայտնելու համար, ապաշխարելու եւ ողորմութիւն խնդրելու համար, վկայելու եւ աւետարանելու համար, գիրար յորդորելու եւ քաջալերելու համար եւ, մանաւանդ, ահագանք հնչեցնելու համար գործի...:

Անտարակոյս, կարելի է այս բոլորը ընել առանց երգի: Աստուած կը լսէ մեր փսփսուէն ալ: Մեր մտքին խորհուրդները, մեր սրտին փափաքները չեն կրնար ծածկուած ըլլալ Անկէ:

Հակառակ այս իրողութեան, մեր բառերը՝ ո՛րքան ալ ազնիւ, կը մնան անարձագանք՝ առանց երգի: Երգը խոյանք կու տայ անոնց, շեշտ ու իմաստ:

Ալէլուիա՛: Նոր ե՛րգ երգեցէ՛ք Տէրոջ...:

ՎԵՐ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՐՃԵԱՆ

ԹՐՎ ՌՌԻ ՆԸ

Աշակերտ մըն է ան Հայոց Վարժարանի, ու դեռ անհաղորդ ալ Հայ Հոգիին:

Տասներեք տարեկան պատիկէ մը կրնա՞նք պահանջել որ զգայ ու տեսնայ Հոգին իր ազգին պատմութեան, անոր երգերուն կամ ոեւէ մէկ ըստեղծագործութեան մէջ. ու սիրէ ալ ազնուութիւնը, քաղցրութիւնը անոր: Չենք կրնար, մանաւանդ երբ պատիկին աշխարհը այնքան քարի է եղած: Տունին մէջ միշտ իր մօրը գուրգուրանքն է տեսեր, հրեւոսն տուողը իր պատիկ հոգիին: Իր հօրը քարութիւնը՝ զակին սիրտը երբէք չցայցընելու: Անոնց սէրը՝ որ չուզեր նոյնիսկ կաթիլ մը արցունք անոր թարթիչներուն հաւաճուի: Իսկ համբոյրները՝ գիշերներուն, տաք-տաք, անոր աչքերը փակող նոյնքան խաղաղ ուրիշ աշխարհի մը երագանքին: Հապա ի՞նք՝ ծիծաղով ու խանդով ծաղկող: Գարնան պէս, արեւին դիմաց, թրվոուն, թրվոուն, աղուոր ու անհոգ:

Դասերու ալ հոգը չունի ա՛ն, Թրվոունը: Արթուն է իր միտքը, կ'ըմբռնէ շուտ: ամէն բան: Դասերու ժամանակ Թրվոունը ինքնիրեն իր խաղերը կը կազմակերպէ, սպասելով զանգակին: Սիրուած ալ է ուսուցիչներէն: Եւ ուսուցիչը չի կրնար հրեւոսնով չդիտել Թրվոունի խանդը զքօսանքի գացած պահուն, վազելով սանդուխներէն, արմուկներովը հրելով ցամաքն զքայ արգելք եղող աշակերտները: Ու շուտով բակն է հասեր, եւ իր ընկերները իր շուրջը: Ու Թրվոունը կը հնարէ իր խաղերը, կը վազեն, կը ծիծաղին պատիկի քարձք եւ ուրախ ձայնով: Ան իր խաղերուն մէջ ամբողջ շարժում է, տաճարին, քաղցրութիւն, թրվոուն: Իսկ իր պատկերը՝ սեւ գոգնոցին մէջ, որուն կոնակի կոնակները փակուած կ'ըլլան միշտ, տարօրինակ հրապոյր մը ունի այնքան ալ սիրուելիք, ծաղկուն իր հասակով: Փայլուն, լայն ու տաք նակատ մը, խայտացող աչքեր, ու շրթներուն ծիծաղ ու ծիծաղ:

Այս է կեանքը պատիկին որ կ'անի Գարնան պէս, արեւին դիմաց, թրվոուն, թրվոուն, աղուոր ու անհոգ:



Կիրակի առաւօտ մըն է: Աշակերտները եկեղեցի պիտի երթան խումբով: Դպրոցին բակը հաւաճուել կը խաղան իրենց զքօսանքներու խաղերը: Թրվոունն ալ հոն է, ու չի կրնար խաղողներուն հետ չըլլալ, մինչեւ իսկ Կիրակի օրերու իր համազգեստին մէջէն: Նորէն նոյն ջերմութեամբ, նոյն աշխոյժով:

Բայց ահա զանգակը: Ու դժգոհի նայուածք մը Թրվոունի դէմքին: Բայց Թրվոունը չի կրնար միտակ ալ մնալ:

Կը մօտենայ բակի երկայնքին ֆով ֆովի, իրարու հետ փառող երկու աշակերտներու: Իրեն քարեկամ ընկերներ են ասոնք: Աւելի լուրջ ու մեծի հովեր առած պատիկներ, որոնց ապրումները, լրջութիւնը չի կրնար Թրվոունը ամբողջովին հասկնալ եւ սակայն չի կրնար չսիրել ալ զանոնք: Ու ամէնէն աւելի մօտիկ է անոնց: Ու հիմա, իր հոգը, իր դժգոհութիւնը շրթներուն կը հարցնէ անոնց, ջղային շեշտ մը իր ձայնին: - "Ըսէ՛ք, ի՞նչպէս եկեղեցին կը սիրէք. կը սիրէ՞ք պատարագի երգերը:" Դժուար էր պատասխանել անոր հարցումին: Իրենց այնպէս կուգայ որ վաղուց զգացեր են հրապոյր մը, տարբեր համ մը, բան մը եկեղեցիի այդ երգերուն մէջ, եւ իրենց մեծերը ըսեր են իրենց թէ այդ հրապոյրը Հայ Հոգին է այդ երգերուն մէջ, եւ իրենք այնքան ալ կը սիրեն լսել "Սուրբ, Սուրբ"ը որ հրեշտակներու թեթեւ ու պայծառ հասակներ կը կախէ կարծես երկինքէն: "Հոգի Աստուծոյ"ն որ այնքան

վստահութեամբ, պարզութեամբ աղաչանք է, յուզում է, երկինքի մէջը ըլլալու, երկինքին հրեշտակները գրկելու: Ու այսպէս միւսները, բոլորն ալ: Իրենք գիտեն հիմա, թէ Հայ Հոգին է որ կրցեր է այդ թեթեւութիւնը, այդ պայծառութիւնը, վստահութիւնը, պարզութիւնը, քաղցրութիւնը դնել քառերուն, ասոնց եղանակին, ելեւէջներուն մէջ, իրենց թռիչքին հետ հոգիներն ալ մօտեցնելով երկինքին: Բայց ի՞նչպէս քացատրեն այս ամէնը Թրվոունին. չէ՞ որ ան պզտիկ է, ու չի հասկնար:

–“Աղուոր է եկեղեցին. ամէն ինչ հայ է այնտեղ”, կ’ըսէ մէկը իր երկու ընկերներէն: Այսչափ միայն: Թրվոունը կը նայի անոնց աչքերուն եւ կ’ուզէ բան մը հասկնալ: Ու կը բաժնուի:

Շարքին մէջն է Թրվոունը, իր մութ գոյն համազգեստով: Ու կը փախ լրջութեամբ մը որ իր տարիքին ու իր հասակին այնպէս անուշ արտայայտութիւն մը կուտայ: Անիկա չէ այլեւս նայուածքը մէկ տեղ պահելու, սեւեռելու անկարող պզտիկը, որ ամէն վայրկեան դուրս կը թափի կարծես ինքզինքէն, իր շարքէն: Եկեղեցի կը մտնեն: Իրենց տեղերն են, ամէն անգամուան պէս: Թրվոունը անկիւն մըն է իր կարգին, վերնատան մէջ: Կը նայի ուղիղ իր դիմացը, ու կը կրկնէ մտքին մէջէն, “աղուոր է եկեղեցին, աղուոր է եկեղեցին”:

Կը դիտէ ջահերը՝ քաղմաթիւ գոյներու ճառագայթումով եկեղեցիին մէջ տարածուող, ներմակ մոմերու լոյսէ գիծերը, որոնք կը փափփին ու կ’երկարին ոսկիի բարակ երիզներու պէս: Իրեն այնպէս կուգայ որ նոր կը տեսնէ այս ամէնը: Ի՞նչ աղուոր է զարդարուեր խորանը, ներմակներու եւ լոյսերու մէջ, ազնուական ճաշակի մը զգացումը արթնցնելով իր ներսիդին: Հապա Բահանա՞ն: Պատարագիչի իր զգեստաւորումով, թագով, խորանին առջեւ, սկիւր ձեռքը: Ժողովուրդը, երգող դպիրները: Ամէնքը ծնրադիր, կը խաչակնքեն, կ’աղօթեն: Թրվոունը կը դիտէ այս բոլոր ջահերը, գոյները, լոյսերը, սեւ վերարկուներու, վեղարներու խորհրդաւորութեան մէջ անցնող վարդապետները, եկեղեցին լեցնող քաղմութիւնը եւ ձայները, ու ինքն ալ կը լեցուի, կը սիրէ, կը զգայ թէ կը սիրէ այդ ամէնը:

Ու զանգակներու, բշտցներու արձագանգներուն մէջէն կը բարձրանայ խորունկ ու ծփուն ձայնը խումբին՝ “Սուրբ, սուրբ”, այնպէս ֆնֆուշ, յետոյ այնպէս պայծառ, զուարթ, կամարներէն վեր թեւ առնող դէպի երկինք: Թըրվոունին սիրտը կը լեցուի յուզումով մը: “Աղուոր է եկեղեցին:” Կը սիրէ երգը, քառերուն զօրութիւնը, անկեղծութիւնը, աղուորութիւնը: Կը զարմանայ, կ’ուզէ գիտնալ թէ ո՞վ է գտեր, ու դրեք երկնային սա քառերը, եղանակը: Ու կ’ուրախանայ: Իր ընկերը ըսաւ. “Ամէն ինչ հայ է այնտեղ:” Ուրեմն իր հին հայրերէն մէկն է այսպէս աղօթած ու երգած: Եւ Թրվոունը կ’ուզէ անլին զգալ: Կը շարունակուի պատարագը, հետգհետ անլի խորհրդաւոր: Ամէն երգ անլի ընտանի շունչ մը կը դառնայ իրեն:

Ծունկի են դպիրները: Ամբողջ ժողովուրդն ալ, իր ընկերներն ալ, ինքն ալ: Այսպէս անլի լաւ էր: Ինք կ’ուզէր արդէն ծունկի գալ:

Ու վարէն ձայն մը կը բարձրանայ մինա՛կ ու մեղմ: Այդ եղանակը, այդ “Տէր ողորմեա՛ն” ծանօթ է իրեն: Բայց հիմա, եղանակին ու երգին մէջէն զուսպ տրտմութիւնը շեշտին այնքան իրական է իրեն համար, ու այնքան համեմատելի՝ գեղումին հետ իր խոսքուն հոգիին: Կարծես հիմա՛ միայն կը հասկնայ իրեն պատմուածը: Կոմիտաս Վարդապետ, վերջին անգամ “Տէր ողորմեա՛ն” մըն է երգած, տարագրութեան օրերուն, ամայութեան մը մէջ, վրանի մը տակ: Թըրվոունի աչքերուն անլի յստակ կուգայ պատկերը վրանին, արեւուն տակ: Հայեր են ծունկի եկողները, հեռու իրենց հայրենի օճախէն, պարտէզներէն, հօտաշէն լեռներէն, ամէնքն ալ տարագիր: Ով գիտէ անոնցմէ քանիներուն համար վերջին պատարագն էր ատիկա, իրենց կեանքը դեռ չմարած: Ի՞նչ տրտմութիւն է վրանին անկիւնները կծիկ եղած ծերունիներուն դէմքին վրայ,

ձիւն մագերով, յոգնած, աչքերնուն մէջ սարսափը մահուան ու դիակներու: Ի՞նչ դող է անոնց շրթներուն ու վեր բարձրացած, երբող թեւերուն: Ասոնց ամէն մէկուն ֆովիկը, մանրուկ հասակները պատիկներու, պատառոտուն հագուստներով, բոպիկ, եւ անօթութիւնը իրենց նայումսներուն մէջ: Ասոնց հետ միասին, քախտով ու հագիւ ազատած հայ հարսնուկ մը, ծունկի, տժգոյն, լաչակը գլխուն, ձեռքերը ամուր գրկած, աչքերը գետին, տրտում Աստուածածնի մը բարի դէմքը յիշեցնելով: Ու ամէնքը՝ ծերունի, մանուկ, հարսնուկ, կ'ընկերանան ձայնին, որ խորունկը վրանին, ծունկի, սեւի մէջ, կ'երգէ "Տէր Ողորմեան", առանց ալ գիտնալու որ վերջին պոռթկումն է իր հոգիին, իր մէջ հաւաքած ամբողջ ցաւը, տրտմութիւնը հայ հոգիներուն, վրանէն ներս աղօթող կամ վրանէն դուրս տառապանքի եւ արիւնի ճամբուն մէջ իրենց վերջին վայրկեանները ապրող, առանց կարենալու իրենց հոգիներուն խոռվէր պատմել:

Թրվոունը չէր եղած այսօրն ինքամփոփ:

Վարէն երիտասարդ վարդապետ մըն է որ կը շարունակէ եղանակը, ծփուն ու թրթռուն իր ձայնով՝ "Յիսուս Փրկիչ մեզ Ողորմեա": Ու Թրվոունը կը սիրէ աղաչանքը, տրտմութիւնը քառերուն, վստահ է հիմա որ տարբեր է ֆաղցրութիւնը Հայ Հոգիին, ու կը դողայ իր սիրտը, հպարտութենէն, հրնուանքէն որ կը լեցուի իր հոգիին:

Ու Թրվոունը կուլայ, առանց զսպելու իր պոռթկումը, ու կրկնելով ինքզինքին, "աղուոր է եկեղեցին, աղուոր է հոգին իմ պապերուն":

### ՊՈՒՐԱԿԻՆ ՄԷՁ

Տղայ մը կ'երթեւեկէ պուրակի մը խաղաղ ծառերու շուփին, որոնք վաղուց ընտանի են իրեն: Ինք եկաւ հոն օր մը, երբ մարդոց անխորհ կեանքէն ձանձրացած, ուզեց ապրիլ հոն խաղաղութեան մէջ, առանձնութեան ֆաղցր վայրկեաններ: Այն օրէն ի վեր պուրակը ընտանի վայր մըն է իրեն համար, ուր ինք յանախ կ'այցելէ: Այսօր հոն է ան իր ցաւին հետ ու կը ֆալէ տետրակ մը ձեռքին, տրտում մայրիներու շուփին, որոնց սլացիկ հասակներուն մէջ իր փոքր մարմինը կորսուեր է ամբողջ: Ան կը դիտէ ծառերու նեղներուն մէջերէն հեռուն՝ մթնող երկինքը վերջալոյսի, ու կը ժպտի իր սեւ աչքերով, ժպտալ մը տրտում, որ իր հոգիին պատկերը կ'արտայայտէ, իր յոգնած դէմքին տարբեր գեղեցկութիւն մը տալով: Կը բանայ տետրակը ուր ընդօրինակուած կան իրմէ սիրուած ֆերթուածներ: Անկէկա մասնաւոր սէր մը ունի բանաստեղծութեան հանդէպ, որ հետեւանքը չէ միայն իր տարիքին, ուր ամէն պատանի բանաստեղծ է ֆիչ մը: Ան իր մէջ ներքին հակում, զօրաւոր փափաք մը զգացած է գրելու:

Տարիներ անցեր են այն օրէն երբ ինք զգացած էր այդ ըզանքը գրելու: Սակայն հիմա, պարտէզին մէջ տետրակը ձեռքին, ինքզինք հեռու կը զգայ իր երագէն: Ու այնքան ալ տրտում է անոր համար: Իր մտածումները ակամայ ետ կ'երթան, ու պատճառները որոնք արգելիք եղան իրեն իր երագին հասնելու, իր մտքին հայելիին մէջ ան կը տեսնէ յստակ ու անգուր: Կ'ուզէ մոռնալ քայց չի կրնար: Տրտմութեամբ կը յիշէ թէ իր ծնողքը չեն ուզած ձգել զինք առանձին իր զգացումներուն ու երագներուն հետ: Ան որքան ուզած է ձմեռ գիշերներ կրակին ֆով նստիլ ու գրել անձրեւի երգը՝ եւ սակայն տան մէջէն ոչ ոք հասկցած է իր հոգին, ու իր ծնողքը ստիպած են զինք որ կանուխ անկողին երթայ, անոր առողջութեանը վախէն, ու քանի անգամներ տղան ստիպուած ձգեր է թուղթն ու մատիտը իր սեղանին եւ գացեր է անկողին չուզելով:

Տակաւին ուրիշներ եղած են աւելի չար: Ինք չի կրնար մոռնալ քանի մը օր առաջուայ գիշերը, տժգոյն լոյսի մը տակ երբ գրեք էր տողեր, ու պատմեր էր իր յոյսերէն, երազներէն, եւ մարդիկ որոնք ոչինչ հասկցեր էին իր կեանքէն, կասկածելով, ուզեր էին ոչնչացնել եւ այրել իր թուղթերը: Զինք չար կարծեցին ու փորձեցին խրատել եւ յուսահատեցնել իր երազէն, որ ըլլար տափակ ու անխորք: Երազը մոռնա՞լ: Տղան գայն ամբողջ հոգւով կը սիրէր: Ի՞նչպէս, ի՞նչպէս կրնար ուրանալ:

Ու այդ բոլորը դառնացուցին զինքը մարդոց դէմ: Ան չուզելով գիտցաւ թէ չար էին մարդիկ, ու կորսնցուց իր վստահութիւնը ամէնուն հանդէպ: Հիմա չունի ան իր դէմքին՝ գուարթութիւնը առաջուայ: Ու ան կը փախչի մարդերէ, հեռու մնալու, մեռնակ՝ իր երազին հետ գոր չուզեր լքել: Հոս ծառերու թեւերուն տակ ան արդէն պաշտպանուած կը զգայ ինքզինք, ու մթնոլորտը երկնքին հանդարտութեանը մէջ կ'ապրի լուռ, երազն իր աղուոր: Հոս ոչ ոք պիտի կրնայ զինք արգիլել:

Կը նստի ծառի մը բունին, ցաւը գրկած ու կը մտածէ իր ցաւին: Պէտք է դիմանալ, իր ներսիդէն ձայն մը կ'ըսէ շարունակ՝ «ցաւը քաղցր է, անով միայն հոգիներն կրնան հասնիլ դէպի բարձունքը լոյսէ:» Կը ժպտի, այնքան լեցուն իր ցաւով, ու կը յիշէ տողերը բանաստեղծին որ սիրած է ցաւը ու երգած ալ գայն: Այդ բաները յոյս կուտան իրեն եւ ան ցած կ'արտասանէ.–

«Այլեւս չեմ հերքեր քեզ. հոգիին ցունց կուտաս դուն.

Ու կըրելով հանդերձ քեզ, երիտասարդ իմ հոգին

Բարձրացրէ պիտի վեր շէնքը տրտում օրերուն,

Սեւեռուն մեծ մարդերու յաւերժութեան, հըրաշփին...»

Եւ մարդերուն տուած տառապանքին հակառակ, ան կ'ուզէ կեանքը բանաստեղծի մը հոգիովը ապրիլ: Ինք պիտի ամոքէ վիշտերը ուրիշներու, հոգ չէ թէ անոնք ըլլան մարմնական կամ հոգեկան: Ան կը տեսնէ գալիք տարիները, կը տեսնէ մայրիներով շրջապատուած շէնք մը. հիւանդանոց մըն է ան ուր հիւանդներ կան լեցուն, ու անոնցմէ շատեր հոգիի վիշտն ալ ունին մարմնի ցաւին հետ միասին: Կը տեսնէ ինքզինք ներմակներու մէջ, պզտիկի մը մահիկին քով ծոած ու անոր ձեռքերը իր ձեռքերուն մէջ առած կը սփռփէ գայն: Իրեն կը թուի թէ կը լսէ՝ հիւանդները կը փսփսան. «աղուոր է սա տղան». ու ինք պիտի լսէ ու անցնի: Պիտի ժպտի ու հարցական աչքերով պիտի նայի ամէնուն: Յետոյ յոգնած երբ անկողին մտնէ, պիտի աղօթէ իր հիւանդներուն համար: Կը ժպտի նորէն սուրբի մը բարի ժպտով:

Ծառերուն մէջ հով մը, խումբով թռչուններու ճրվճրվոցը, կը սքափեցնեն զինք: Ոտքի է տղան, հանդարտ որոշումով իր երազին հասնելու:

ԱԼԻԲ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԹՈՒՐԳԵՐԷՆ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՆԵՐԸ

Երևանի Գրականութեան եւ արուեստի թանգարանում պահպանուող Կոմիտասի ձեռագրերի մէջ կան մեծ թուով թուրքերէն երգեր՝ գրառուած Կոմիտասի կողմից: Այս երգերից 4ը տարբերուում են միւսներից: Գրանի բազմաձայն են եւ աչքի են ընկնում կառուցուածքային ու մեղեդիական ունի առաձնայատկութիւններով, ինչը ակնյայտօրէն առանձնացնում է այս երգերը միւս բազմաձայն շարքից(1) եւ «թուրքի»ներից, որոնք Կոմիտասը գրի է առել ու հաւաքել: 4 երգերից 3ը գրուած են երգչախմբի համար, իսկ չորրորդը մի մենեղծ է՝ դաշնամուրի ընկերակցութեամբ: Այս 4 երգերը յօրինել է հենց ինքը Կոմիտասը, եւ այս յօդուածը նուիրուած է միայն այս 4 երգերին:

Խմբերգերից մէկը, «Սելանիֆդեն չըփտըլար», գտնուում է Կոմիտասի ֆոնդի 443 եւ 445 համարների տակ: Երգը գրի է առնուած բազմաթիւ կրկնութիւններով, բոլորն էլ սեւագրեր են, մասամբ թերի վիճակում, կարելի է ընդունել, որ Կոմիտասը այն հետագայում մաքրագրել է: Այդ մասին վկայում են էջերի վրայ դրուած մեծ « » նշանները: Կ. Ֆ. 443 համարի վաւերագիրը մի նոտայի տետր է: Էջերը տասը փողանի են: Երգը արձանագրուած է տետրի միայն երկու էջերի վրայ: Գրուած է հինգ տողի վրայ վեց ձայնի համար՝ ՏՂ, T1, T2, B1, եւ B2: Թէեւ մի շարք հատուածներում սուի բանալիի կողմը դրուած է Ֆա կիսվեր (dies) նշանը, որը պատկանում է «սու մեծալար» «դո մեծալար» (Sol Major) կամ «մի փոքրալար» (Mi Minor)

ձայնակայքին (tonality), իշխող ձայնակարգը «դո մեծալար» է, ամանակը (metre) 4/4:

Երգը ամբողջական է: Վերջում աւելացուած են ճրդ եւ 7րդ տների երկու տարբերակներ: Գրուած է մատիտով: Ելնելով Կոմիտասի աշխատանքից, այստեղ ներկայացուած էիչ ուղղումներով նիւթը կարելի է ընդունել որպէս վերջնական տարբերակ, որը ամենայն հաւանականութեամբ այս ձևի տակ էլ մաքրագրուել է՝ թերեւս աննշան փոփոխութիւններով: Այս երգի բազմաթիւ արձանագրութիւնները գտնում ենք Կ. Ֆ. 445 համարի տակ, որը բաղկացած է տարբեր չափսերի յատուկ նոտագրութեան համար պատրաստուած առանձին թերթիկներից:

Երգի տարբերակները գրուած են 3, 4 եւ 5 տողերի վրայ իսկ մի դէպքում աւելացուած է նաեւ դաշնամուրի ընկերակցութիւնը: Համարեայ բոլոր գրառումներն էլ սեւագիր վիճակում են, երգը հազուադէպ է արձանագրուած ամբողջովին եւ միայն մի դէպքում է վերջնական մաքրագրուածի տպաւորութիւն թողնում: Այն նուիրուած է Օսմանեան պետութեան երկրորդ սահմանադրութեանը ու մասնաւորապէս «Շարժման Բանակ»ին (3): Երգի բանաստեղծութիւնը շարադրուած է ժամանակակից թուրքերէնով, որը եղել է Օսմանեան Թուրքիոյ խօսակցական լեզուն:

Երկրորդ խմբերգը, «Է՛յ մուազգամ», նոյնպէս գտնուում է Կոմիտասի ֆոնդի 443 եւ 445 համարների տակ: Ինչպէս որ վերը տեսանք, «Սելանիֆդեն չըփտըլար» երգի

գրառումները Կ. Ֆ. 445 համարում անելի շատ են, քան Կ. Ֆ. 443 համարում: «է՛յ մուազզամ» երգի դէպքում ուղիղ հակառակ պատկերն է նկատուում: Կ. Ֆ. 445 համարում կատարուած գրառումներում այս երգը գրուած է 5 տողերի վրայ S, A, T1, T2, եւ B, (B1, B2) ձևով, ընդամէնը 3 էջ: Ընդհանուր առմամբ ձայները թերի են արձանագրուած, իսկ մի դէպքում էլ S/Aր ցոյց է տրուած Յրդ տողում: Կ. Ֆ. 443 համարում կան երգի բազմաթիւ տարբերակներ՝ հեղեղուած սրբագրութիւններով:

Այս գրառումներից միայն մէկն է ամբողջովին եւ մաքուր արձանագրուած, բոլոր ձայները եւ երաժշտական նշանները անթերի են եւ, ինչը խիստ հազուադէպ է հանդիպում Կոմիտասի մօտ, գրուած են առանց որեւէ ուղղումների: Այս տարբերակում երգը սկզբից գրուած է 4 տողի վրայ T1, T2, B1, եւ B2 յետոյ անցել է 5 տողի՝ S, A, T1, T2, եւ B: Գրառումներում սույի բանալիի մօտ ոչ մի նշան չի դրուած, ինչը նշանակում է «դո մեծալար» ձայնակայք: Միայն երկու դէպքում գրառման սկզբում դրուած է չորս կիսվեր նշաններ, որը նշանակում է «մի մեծալար»:

Վերջնական տեսք ունեցող տարբերակի մէջ էլ, ըստ երեւոյթին, ճիշտ նշաններն են դրուած, որոնք երեք կիսվեր նշաններն են սույի բանալիի մօտ, որը «լա մեծալար» ձայնակայք է նշանակում: Այդ ձայնակայքով էլ ընթանում է այս ստեղծագործութիւնը: Երգը սկսում է 4/4ով: Երգը նուիրուած է Օսմանեան կայսրութեան մեծապետ փատիշահին: Երգի բանաստեղծութիւնը շարադրուած է օսմաներէնով (հին թուրքերէն) (4): Փատիշահի անունը չի նշուում ոտանաւորի մէջ, սակայն

Կոմիտասի՝ Պոլսում գտնուելու ժամանակաշրջանում Արդուլ Համիդ IIը արդէն գահից հեռացուել էր ու փոխարէնը Մեհմետ V Ռեշատն էր սուլթան նշանակուել երիտթուրքերի կողմից (27-4-1909): Նրա գահակալութիւնը տեւեց մինչեւ իր մահը (4-7-1918): Բացի այդ, փառաբանութեան մէջ ասում է «նեվեհ», որը նշանակում է «նոր գահակալած»: Սուլթան Մեհմետ V Ռեշատը այս երգի ստեղծման ժամանակ իր գահակալման երեք տարին դեռ չէր բոլորել: Այստեղից հետեւում է, որ երգը կարող էր ձօնուած լինել միայն սուլթան Մեհմետ V Ռեշատին:

Առաջին յիշատակութիւնը «թուրքական երգեր»ի մասին հանդիպում ենք Կ. Պոլսում հրատարակուող «Ազատամարտ» թերթի երրորդ էջում: «Մանր Լուրեր» բաժնում թերթը հաղորդում է Կոմիտասի մասնակցութեան մասին իր երգչախմբով Տրիպոլիսի վերաւոր զինուորների օգտին կազմակերպուող նուագահանդէսին. «Կոմիտաս վարդապետը ուրախութեամբ ընդունած է (կարգադիր մասնախմբի - Տ.Լ.) այս հրաւերը եւ արդէն սկսած է քանի մը թուրքերէն երգեր ալ սովորեցնել 6-8 ձայնով իր խմբին...» (5):

Նմանօրինակ յայտարարութիւն թերթը տալիս է նաեւ համերգի օրը, այսինքն 21 մարտ 1912ին. «Զինուորական վարժարանի սրահի մէջ տեղի է ունենում Տրիպոլիսի հիւանդ զինուորների օգտին կազմակերպուած պետական նուագահանդէսը: Այլոց բոլում համերգին մասնակցում է նաեւ Կոմիտասի ղեկավարած երգչախումբը՝ կատարելով մի քանի թուրքական երգեր» (6): Վերջապէս, արդէն տեղի ունեցած համերգի մասին գտնում ենք յիշատակութիւն Թորոս Ազատեանի մօտ: «1912 մարտ 21... քանի մը

թրքերէն երգեր սորվեցուց... զինուորական վարժարանի սրահին մէջ... տեղի ունեցաւ նուագահանդէսը (Պոլիս) (7):

Նշանակալից է, որ երեք արձանագրութիւններում էլ խօսուում է «մի քանի» թուրքական երգերի մասին, որոնք, ըստ «Ազատամարտ» թերթի, «6-8 ձայնով» են: «Սելանիֆէն չըֆտըլար»ը պէտք է այդ երգերից լինի, քանի որ իր սեւագիր տարբերակների մէջ կան մասեր, որոնք մշակուած են 6-7 ձայնի համար: Առկայ են նաեւ դաշնամուրի ընկերակցութեան հետքեր: Մեր ձեռքում եղած պատառիկներից կարելի է եզրակացնել, որ երգի վերջնական տարբերակը եղել է, իրաւի, 6-8 ձայնով դաշնամուրի ընկերակցութեամբ: «Թուրքական երգեր»ի մասին աւելի յստակ տեղեկութիւն գտնուում ենք հենց Կոմիտասի մօտ:

Մարգարիտ Բարսեանի նուղուած 15/28 մարտ 1912 թուակիր նամակում հետաքրքիր բազմիմաստ նախադասութիւն ունի Կոմիտասը. «Երկու հատ էլ տանկերէն երգ եմ գրել. մէկը Սուլթանի, միւսը սահմանադրութեան նուիրուած, որպէս զի գործերնիս յաջողուին, եւ բաւական ընդարձակ շրջան անեմ պալատի մէջ» (8): Այս մի նախադասութիւնը լուսաբանում է միանգամից 3 հարցադրում: Առաջինը՝ նշուում է երգերի քանակը, որոնք երկուսն են: Երկրորդը՝ ակնարկում է նաեւ երգերի հասցէատեստը. «մէկը Սուլթանի, միւսը սահմանադրութեան նուիրուած»: Երրորդը՝ ինչ նպատակով են յօրինուել երգերը:

Այսպիսով, կարող ենք վստահօրէն ասել, թէ մեր ձեռքում եղած երկու երգերը՝ մէկը Սուլթանի

նուիրուած (է՛յ մուազզամ), իսկ միւսը սահմանադրութեանը (Սէլանիֆտէն չըֆտըլար) հենց այն երգերն են, որոնց մասին խօսուում է «Ազատամարտ» թերթում եւ Կոմիտասի նամակում: Բարբրախտարար կայ նաեւ 8 ապրիլ 1912 թուականի համերգի ազդարարութիւնը նոյն «Ազատամարտ» թերթի էջերում, որտեղ տրուած է նաեւ օրուայ յայտագիրը» (9): Բացի երգերի անուններից, յայտնի է դառնում նաեւ երգի խօսքերի հեղինակներից մէկի անունը՝ դա պոլսահայ մտաւորական Գէորգ Սիմֆեշեանն է, իսկ «Շարժման բանակ»ին ձօնուած երգի դէմ նշուած է «Ազատութեան երգերէն»:

Արդեօ՞ք կարելի է հետեւութիւն անել, թէ Կոմիտասը մէկից աւելի «ազատութեան երգ» է յօրինել: Յամենայնդէպս, Կոմիտասի ձեռագրերի մէջ այդպիսիք չկան, բացի 444 ֆոնդային համարի տակ գտնուող մի հայտատու թուրքերէն խմբերգի, դժբախտարար այն աստիճան անընթեռնելի վիճակում, որ անհնար է լիովին վերծանել, սակայն ակնյայտ է, որ դա նոյնպէս մի գովերգ է: Այն ուղղուած է փատիշահին «հայկական դպրոց»ի կողմից եւ ոչ մի դէպքում չի կարող դասուել «ազատութեան երգեր»ի շարքում: Յայտնի չէ, թէ ո՞ր դպրոցի համար է յօրինել Կոմիտասը այդ երգը եւ ի՞նչ առիթով: Գրուած է 30 տողանի մեծ նոտային թղթերի վրայ, բաղկացած է երկու էջից: Մի մասը գրուած է 4, իսկ մնացածը 2 տողի վրայ 4 ձայնի համար՝ S, T1, T2, B, եւ S/A, T/B: Առաջին եւ երկրորդ տների բառերի միջեւ եղած վանկերի տարբերութեան պատճառով նոյն եղանակը փոքր-ինչ տարբերութիւններով երկու անգամ է արձանագրուած (խօսքը վերաբերում է 4 տողի վրայ գրուածներին): Ամբողջ

ստեղծագործութիւնը ընթանում է «դոմեծալար» ձայնակայքի մէջ: Առաջին տունը սկսում է 9/4 ու շարունակում 25/8 ամանակով, իսկ երկրորդ տունն ընթանում է 9/4 ու յետոյ 11/8 ամանակով: Երկուական տողի վրայ գրուածները երգի տարբերակների են եւ առանց բառերի:

Այս երգերի հետ կապուած մի «ականատեսի վկայութիւն» գոյութիւն ունի: Կոմիտասի Յունդի 74 համարի տակ գտնուում են յուշեր Կոմիտասի մասին: Յուշերը գրի է առել Ստեփան Միխայէլեանը, «Գուսան» երգչախմբի անդամ քարիտոն Արամ Աստուածատրեանից, Երեւանում, 1950 թուականի Յունուար ամսուայ մէջ: Աստուածատրեանն ի միջի այլոց տալիս է նաեւ շահեկան տեղեկութիւններ՝ կապուած 1912 թուականի ապրիլի 8ի համերգի ու վերոյիշեալ թուրքական երգերի իմաստի մասին: Միայն 1912ի փոխարէն նշում է 1913 թուականը: Ամենեւին էլ զարմանալի չէ, եթէ ի նկատի առնենք, որ յիշուած իրադարձութիւններից անցել էին շուրջ 40 տարիներ: Ահա թէ ինչ է գրում Արամ Աստուածատրեանը. «1913 թուին պոլիսում, Մենիս Խալիֆան, Կոմիտասի մասին գնահատելի տեղեկութիւններ էր ստացել՝ որպէս տաղանդաւոր գեղարուեստագէտ եւ դրա համար շատ էր սիրում:

«Մի քանի անգամներ անձամբ խալիֆան, Կոմիտասից խնդրել է թիւրքական երգչախումբին դեկավարման պաշտօն ստանձնելու: Սակայն Կոմիտասը մի շարք յարգելի եւ օրինաւոր պատճառներով մերժում է: Այս մերժումի վրայ խալիֆան Կոմիտասից խնդրում է գտնէ մի օր Գուսան երգչախումբի համերգին ներկայ գտնուել: Խալիֆային խնդրանքը

ընդունուում է Կոմիտասից:

«Կոմիտաս՝ ըստ իր ցուցակին, աւելացնում է նաեւ երկու հաս թիւրքական եղանակներ, դաշնաւորելով երգչախումբին սովորեցնում է:

«Գալիս է խալիֆայի եւ Կոմիտասի ժամադրութեան պանծալի օրը: Գուսան երգչախումբը, կազմ ու պատրաստ սպասում է Կոմիտասին: Հանդիսականների հոծ բազմութիւնը հաւաքուել էր արդէն, բայց խալիֆան դեռ չէր եկել:

«Համերգը պիտի սկսէր հայկական նոր ժամադրութեամբ կէսօրուայ նիշտ ժամը երկուսին: Կոմիտասը սոյն ժամադրութիւնից տասը րոպէ պակաս հասնում է երգչախումբի գլխին: Լինում է ժամը երկուսը, դեռ խալիֆան չէր երեւում, համերգը պէտք է սկսուեր թիւրքական երգով: Կոմիտաս՝ հրամայում է բանալ վարագոյրը, սակայն երգչախումբից բացագանչում են «Խալիֆան դեռ չէ՛ եկած...» Թող մի սուրն պակաս խմի: Նորից հրամայում է եւ վարագոյրը արդէն բացուում է: Կոմիտաս՝ հանդիսականներից դառնալով ողջունում է եւ բուռն ծափահարութիւնից յետոյ սկսում է երգչախումբը երգել թուրքական առաջին երգը:

«էյ Մուազզամ...

«Երգի վերջաւորութեան հասնում է խալիֆան իր մի քանի հետեւորդների հետ, երգը վերջանում է, Կոմիտաս ետ է դառնում ժողովրդին ողջունելու... Կոմիտասի եւ խալիֆայի աչքերը իրար զուգընդաց գալով, խալիֆան ուղղակի խոնարհական ողջունում է Կոմիտասին: Հանդիսականների հոծ բազմութիւնը բուռն կերպով ծափահարում են եւ երեք անգամ ուռռա բացագանչութիւններով թնդացնում են ամբողջ սրահը. երգչախումբը խնդրում է Կոմիտասից նորից

կրկնելու առաջին երգը: «Երկրորդը»: Ասում է Կոմիտաս եւ սկսում են:

«Սեւանիկտեն...»

«Յետոյ Գուսան երգչախումբը սկսում է մի շատ (շարժ - Տ. Լ.) հայկական երգեր. եւ վերջացնում են «Սիփանա ֆաջեր»ով: Ինչպէս ասում է Գուսան երգչախումբի պարիթոն՝ ընկ. Արամ Աստուածատուրեան՝ ամբողջ սրահը «Սիփանայ ֆաջերի» երգով եւ բուռն ծափահարութիւններով կարծես հիմնայատակ բնդացնում էր:

«Խալիֆան դուրս ելած պահուն դրսում՝ Կոմիտասին հանդիպելով՝ հրճուանքից, նոյնիսկ ձեռքը համրուելու աստիճան խոնարհական ողջունում է իր սիրելի Արուեստագէտին»:

Կոմիտասի հետ կապուած այս քաջառիկ արժէքաւոր դրուագը պարունակում է նաեւ անճշտութիւններ: Համերգը կայացել էր ոչ թէ 1913ին, այլ 1912ին, ինչպէս արդէն ասուեց: Հազիւ թէ իշխան Մեջիդը առաջին անգամ պիտի ունկնդրէր Կոմիտասին, քանզի նա ծանօթացել էր նրա արուեստին դեռեւս 1911ին: Վերջապէս՝ իշխանը դժուար թէ խնդրանքով դիմէր Կոմիտասին համերգին ներկայ գտնուելու համար: Միւս կողմից յուշերը պարունակում են հետաքրքրական տեղեկութիւններ, որոնց չենք հանդիպում ոչ մի ուրիշ տեղ: Այն վկայում է նաեւ Կոմիտասի սկզբունքայնութեան եւ իշխանի խոնարհութեան մասին:

«Դէպքը», որի նկարագրումը հասել է մեզ Արամ Աստուածատուրեանի միջոցով, աւարտում է հետեւեալ ձևով.

«Կոմիտաս ի պատիւ Գուսան երգչախումբի՝ որոշ ժամանակ յետոյ հաւաքոյթ է կազմակերպում «պէյխոզ» (Բէյխոզ - Տ. Լ.) զբօսավայրը:

«Վոսֆորում (Բոսֆոր - Տ. Լ.) սպասարկող մարդատար շոգենաւով գնում են «պէյխոզ» զբօսավայրը, մինչեւ իրիկուն ուրախ զբօսնելուց յետոյ, իրիկուայ դէմին վերադառնում են...»:

«Շոգենաւը սլանում էր ծովի վրայով. կապոյտ ալիքները մէկդի հրելով. խալիֆայի սերայը ծովի եզերքումն էր եւ շոգենաւը «սէրայ»ին մօտից էր անցնում: Կոմիտաս կանգնեցնում է շոգենաւը եւ երգչախումբին դառնալով ասում է «Հիմա կրկնեցէք այդ առաջին թիւրքական երգը». եւ երգչախումբը սկսում է երգել (էյ Մուազզամ եւ այլն.) խալիֆայի «սէրայ»ի փակ պատուհանները բոլորն էլ առանց խտրութեան քացում են եւ ունկնդրում են երկնային երգեցողութիւնը»: (10)

Կոմիտասի Մ. Բարայեանին ուղղուած նամակից երեւում է այս խմբերգերը գրելու նպատակը՝ «որպէս զի գործերնիս յաշողութիւն»: Դժուար ժամանակներ էին, ամբողջ աշխարհի գլխավերելում կախուած էր պատերազմի վտանգը, Հայկական հարցը օրակարգի վրայ էր դրուած, ինչպէս արտասահմանում, այնպէս էլ երկրի ներսում: Սկզբնական շրջանի ոգեւորութիւնը «թուրք եւ հայ ժողովուրդների եղբայրութեան» առիթով սկսել էր հետզհետէ մարել: Փողոցներում հայի եւ թուրքի գրկախառնութիւնից ու արցունքախառն «մեմֆ այլեւս եղբայր ենք» կոչերից յետոյ յուսախարութիւն էր առաջացել հայկական շրջանակներում:

Հակադարձ անվստահութիւն էր տիրում երկու ժողովուրդների յարաբերութիւնների մէջ: Նման պարագաների ներքոյ անհաւանական չէ, որ իշխանութեանը երգի միջոցով գովաբանելու մտայղացումը պոլսահայ համայնքին պատկանէր, որպէս տուրք

պետութեանը, որպէս հաւատարմութեան հաւաստիք, որպէս հայ-թուրք բարեկամութեանը ներդրուած լուծայ: Նոյնը կարելի է ասել «Տրիպոլիսի հիւանդ զինուորների օգտին համերգ»ի մասին, որը իրեն «առաջարկուել էր» եւ նա չէր կարող մերժել:

Հարկ է նշել, որ Օսմանեան եւ հետագայում էլ թուրքական պետութեան պետական վերնախաւին (մասնաւորապէս միապետին), ռազմական ուժերին, սահմանադրութեանը, խալիֆային եւ պետութեանը ուղղուած փառաբանութիւններ, գովարանութիւններ, ձօներգեր եւ ֆայլերգ յօրինուել են հայ երաժիշտների կողմից Կոմիտասից առաջ էլ: Այս առիթով կարելի է յիշատակել առաջին հերթին Հեֆիմեանի, Սանթուրջիեանի, Սինանեանի, Հիւրմիւզեանի, Մերջիեանի եւ Հանէսեանի անունները: Նոյն շարքի մէջ է նաեւ Ջուխաջեանի անունը, որի մի ստեղծագործութեան (11) բառերը, ուր նոյնպէս փառաբանուում է փատիշահը մի հայկական դպրոցի կողմից, այնքան նման են Կ. Ֆ. 444 համարի տակ գտնուող երգի բառերին, կարծես նրա մի տարբերակը լինեն:

Կոմիտասի գրչին պատկանող չորրորդ թուրքերէն երգը ամփոփուած է Կոմիտասեան ֆոնդի 522 եւ 523 համարների տակ: Սա մի մենբրգ է դաշնամուրի ընկերակցութեամբ: 523 ֆոնդային համարով նիւթը բնագիր է: Գրուած է թանաֆով, մաֆուր, ինչը վկայում է մաֆրագրուած մի տարբերակի մասին: Այնուամենայնիւ, Կոմիտասը, սովորութեան համաձայն, այս մաֆրագրուած տարբերակի վրայ էլ կատարել է բազմաթիւ նշումներ: Այսպիսով, մայր եղանակը սկզբից մինչեւ վերջ նորից է գրառուում մատիտով, արդէն երկու ձայն իջեցրած

ձեւով ու փոփոխութիւններով: Զրաւարարուելով նշուած ուղղումներով, Կոմիտասը երգի համարեայ 1/3 մասը ենթարկում է նոր ուղղումների, դարձեալ մատիտով, բայց այս անգամ Համբարձումեան ձայնանիշերով: Ամանակը 5/8 է: Երգի բառերը չեն արձանագրուած:

Գրուած է «մի փոքրալար» (Mi Minor) ձայնակարգի մէջ, Գերմանական, Breitkopf & Hartel ֆիրմայի նոտագրութեան յատուկ թղթերի վրայ: Ընդամէնը 5 էջ: Առաջին էջի վերեւի ձախ անկիւնում գրուած է ընթացքը (tempo), արարատառ (օսմաներէն-հին թուրքերէն): (12) Կ. Ֆ. 522 համարում գտնուում ենք նոյն երգը, գրուած ուրիշ ձեւով: Այստեղ ձայնակայքը իջեցրած է մէկ ձայնով՝ «ու փոքրալար»: Գրուած է նոտագրութեան յատուկ թղթերի վրայ, այս դէպքում Գերմանական J.F. & Co. ֆիրմայի: Բաղկացած է 5 էջից:

Անյայտ ընդօրինակողը որքան էլ մեծ բժախնդրութիւն ցուցաբերած չլինի ձայնանիշերը կարելի եղածին չափ գեղեցիկ գրելու մէջ, կատարած բազմաթիւ պարզագոյն սխալները մատնում են իր երաժշտութեան մէջ անիրագբեկ լինելը: Ունենալով այս երգի Կոմիտասեան բնագիր տարբերակը, կարելի է 522 համարի տակ գտնուող նիւթի երաժշտական մասը ընդհանրապէս ի նկատի չառնել: Սակայն այս նիւթը պարունակում է ուրիշ, աւելի կարեւոր տեղեկութիւններ: Ձայնանիշերի տակ տեղադրուած են երգի բառերը, որոնք պակասում են 523 համարի տակ եղող նիւթի մէջ. բացի այդ, արձանագրուած են երաժշտութիւնը յօրինողի եւ բանաստեղծի անունները, առաջին էջի վերեւի աջ ու ձախ անկիւններում: Առանց 522 համար վաւերագրի երբէք չէր պարզուի, թէ 523

համարի տակ գտնուող երգը ի՞նչ է իրենից ներկայացնում:

Բանաստեղծուքիւնը գրուած է արաբատառ (օսմաներէն-հին թուրքերէն): Բարեբախտաբար յաջողուեց ձեռք բերել այդ բանաստեղծութեան թուրքերէնի վերածուած ամբողջական տարբերակը: Բանաստեղծութեան վերնագիրն է «է՛յ իյնեմ, տիֆ» (Ո՛վ ասեղս, կարի՛ր): Հեղինակը, անուանի թուրք բանաստեղծ, ֆաղափական գործիչ եւ «թուրքականութեան» գաղափարի պարագլուխներից Մեհմեդ էմինն է: (13) Ի՞նչ կապ կարող էր լինել թուրանական գաղափարախօսութեան առաջատարներից մէկի եւ Կոմիտասի միջեւ: Այս հարցի պատասխանը սպանիչ կերպով տալիս է Սիրունին, երբ գրում է, թէ «Ան (Թիւրք օջաղըն Տ.Լ.) յոյս դրած էր Կոմիտասին վրայ ա՛լ՝ թուրք հարազատ երաժշտութիւն մը ստեղծելու իր նիգերուն մէջ»: (14)

Ճիշտ այդ պատճառով էլ թուրք ազգային գործիչներ ու անուանի արուեստագէտներ ելք ու մուտք էին անում Կոմիտասի բնակարանը, իրեն հրաւիրում ինչպէս ելոյթ ունենալու համար, այնպէս էլ իրենց տան մտերմական հաւաքոյթներին: Ջինուորական վարժարանում կայանալիք համերգի «հրաւէրը Կոմիտասը ընդունած էր»: 1912ն էր: Եղած տուեալների համաձայն Կոմիտասի հանդէպ եղած հետաքրքրութիւնը թուրք շրջանակներում այդ թուականից է սկսուում: Ըստ Հալիտէ էտիփի, (15) այդ տարիներին Կոմիտասի «անձնաւորութեամբ էին հետաքրքրուում ու զինքը լսելու գալիս» Յուսուֆ Աֆշուրան (16), որը «մղուած իր երաժշտասիրութենէն, բայց կը յայտարարէր թէ Կոմիտաս մեծ վնաս պատճառած է թուրքին, գողնալով անոր մշակոյթը երաժշտու-

թեան եւ երգերու ձեւով» (17):

Բանաստեղծներ Յահյա Քեմալը (18) եւ Մեհմեդ էմինը նոյնպէս «կը հետաքրքրուէին իր անձնաւորութեամբ եւ կու գային լսելու զինքը»: (19) Վերջինս, ինչպէս վերը նշուեց, թուրք-թուրանական գաղափարախօսութեան կրակոտ ջատագովներից էր եւ այդ նպատակով ծայր աստիճան ազգայնամոլ բանաստեղծութիւններ էր գրում: Ըստ երեւոյթին որոշել էր նաեւ անձնապէս օգտուել Կոմիտասի տաղանդից ու առաջարկել էր եղանակաւորել իր մի բանաստեղծութիւնը, գրուած 2 Սեպտ. 1913 թուականին: (20)

Զկարողանալով մերժել այդ առաջարկը, Կոմիտասը սակայն օգտուել է ձայնաւորման մասը ընտրելու իր իրաւունքից: Զարմանք է առաջացնում, թէ ինչպէ՞ս էր վարդապետը 24 տներից բաղկացած արնահոտ բանաստեղծութիւնից ընտրել այն տները, որոնք առանձին վերցրած միանգամայն ուրիշ տպաւորութիւն են թողնում: Սովորաբար գրուում է մի եղանակ, որը կրկնուում է այնքան, որքան տներ կան երգում: Կոմիտասի յօրինածը կրկնուող մի եղանակ չէ, այլ երկու տների վրայ տարածուող մի երաժշտական կտաւ: Բառերը գրուած են հնգագծի տակ, վերջում, սակայն, հնգագծերի վերելում աւելացուած է երկու տող: Դա ողջ բանաստեղծութեան եզրափակիչ տողերն են, ուր խտացած է թուրանական գաղափարախօսութեան հիմնական միտքը:

Մեզ թուում է, թէ նրանք աւելացուած են այդ տողերից գմայլուած հեղինակի (Մեհմեդ էմինի) կողմից: Բանաստեղծութիւնը տպագրուել էր «Թիւրք յուրտու» (Թուրքի հայրենիք) ամսագրում եւ «Թան

սեսլերի» (այգաճայներ) կոչուող Մեհմեդ էմինի բանաստեղծութիւնների գրքոյկում, որի երկրորդ տպագրութիւնը կատարուել էր արդէն Կոմիտասի յօրինած երգի նոտաներով: Այս փաստը կարելի է համարել որպէս Կոմիտասի ստեղծագործութիւններից մէկի առաջին տպագրութիւնը Թուրքիայում, ինչը ցայժմ յայտնի չի եղել Կոմիտասագիտութեանը: (21)

Յատկանշական է, որ «Թիւրք օջախը»-ն (22) իր դեկավարների՝ Համտուլլահ Սուփհիի (23), Հալիտէ էտիփի, Մեհմեդ էմինի եւ միւսների միջոցով հրատարակում էր Կոմիտասին բանաստեղծութիւնների ու համերգների, մեծարում էր իրենց եւ գովասաններ շնայում հայ ժողովրդի հասցէին: (24) 1914ին Կոմիտասին հրատարակել էին նոր կազմակերպուող թուրքական երաժշտանոցում դասաւանդելու: Զօպանեանին հասցէագրուած իր նամակում Կոմիտասը նշում է. «...տանիկ երաժշտարանը բացուելու է, եւ կա՛յ նոյնպէս երաժշտական բաժին: Ճէմիլ փաշան է հարցրել ինձ՝ բացակայութեանս եւ խնդրել է գալս իրեն յատենն. բուի, թէ ինձ եւս պաշտօն են առաջարկելու...»: (25)

Երուանդ Յակոբեանին ուղղուած մի ուրիշ նամակում Կոմիտասը խօսում է արդէն ստանձնած դասերի մասին: «Քաղաքացիութիւնը հիմը դնելու վերայ է երաժշտարանի մը, որի պաշտօնեաներէն մէկն ալ զիս կարգեցին, չը մերժեցի, բայց միայն ներդաշնակութեան դասերն ստանձնեցի, որ ձայնս խնայեմ ու խնամեմ» (26): Նամակից երեւում է, որ Կոմիտասի պարտականութիւնները շատ աւելի մեծ պիտի լինէին ստեղծուող երաժշտանոցում, սակայն նա հրաժարուում է պաշտօնավարութիւնից՝ ստանձնելով

միայն մի դաս:

Ի՞նչն էր պատճառը, որ ազգային եւ կուսակցական գործունէութիւնից զերծ մնացող երաժիշտ-հոգեւորականը, որի անհրաժեշտութիւնը զգացուում էր թուրքական երաժշտանոցը կազմաւորելու գործում, այնուամենայնիւ չխուսափեց ափսոսից: Արդեօ՞ք դա Աբշուրաների եւ իր նմանների նախանձն էր, թէ հասկացել էին, որ Կոմիտասը թուրքական երաժշտութիւն չի «ստեղծելու», մէջը բեֆելով հայկական երաժշտութիւնից: Վտանգաւոր էր: Հալիտէ էտիփի յուշերում թափնուած են հետաքրքիր ակնարկներ: «...մեծ առաջնորդ մը կը համարուէր հայոց մէջ» եւ «հայ ազգայնական մըն էր ան...»: (27)

Կոմիտասով հիացող ու նրանից օգտուողներից էլ Մեհմեդ էմինը, որի մասին Կարօ Ուշագեանը գրում է. «...ճանի մը անգամ տեսած էի վարդապետին մօտ, երբ եկած էր իր մէկ չափածոյ գրութիւնը եղանակաւորել տալու», (28) ստանալով Ուշագեանից վարդապետի ձերբակալման լուրը եւ ազատելու համար միջնորդութեան խնդրանքը, հետեւեալ կերպով է պատասխանում. «Էֆենտիմ, ատիկա կառավարական գործ է, չենք կրնար որեւէ միջամտութիւն կատարել. չեմ կարծեր որ ծանր պարագայ մը կենայ թերեւս (!-Տ.Լ.) ազատ կ'արձակեն» ու դնում է ընկալուչը: (29) Ուշագեանից նաեւ տեղեկանում ենք, թէ ինչպէս է Մեհմեդ էմինը ծանօթացել Կոմիտասի հետ. «Իսկ Մեհմեդ էմինը, աւելի կանուխէն ճանչցած էինք մենք զայն, երբ Ազատամարտ կը յաճախէր իր բերթուածները կարդալու մեզի...» (30) մենք էինք որ Կոմիտասի մէկ համերգին տարած էինք զայն առաջին անգամ»: (31)

Ներկայացուող վերոյիշեալ չորս թուրքերէն ստեղծագործութիւնները, որոնք բացառապէս Կոմիտաս վարդապետի գրչին են պատկանում, չեն կրում իր մէջ թուրքական երաժշտական ոճի կնիքը: Թուրքական երգերը գրելիս Կոմիտասը չի առաջնորդուել թուրքական ժողովրդական երաժշտութեան յատկութիւններով, ինչպէս որ դա արել էր հայկական երաժշտութիւնը բազմաձայնելիս: Այսօր դժուար է ասել, ցանկանո՞ւմ էր արդեօք Կոմիտասը թուրքական դասական երաժշտութեան ոճն ստեղծել: Եթէ այո, ուրեմն ի՞նչ հիմունքների վրայ էր այն կառուցելու: Ունենալով ձեռքի տակ միայն այս չորս երգերը, առանց որեւէ ուրիշ տուեալների, անկարելի է այսօր այդ հարցերին պատասխանել:

Միւս հարցը, որը կարող է ծագել թուրքական երգերի առիթով, հետեւեալն է. արժե՞ արդեօք այդ երգերով զբաղուելը, գուցէ եւ հրատարակելը: Միանշանակ՝ այո՛:

Այնտեղ կայ Կոմիտասի աշխատանքը, վաստակը եւ նրա ստեղծագործական ոգին: Այս երգերը Կոմիտասի ժառանգութեան մասն են կազմում, ուստի մենք միայն այդ մասին յօդուածներ գրելով չենք սահմանափակուել, այլ պատրաստել ենք տպագրութեան համար 100 միաւորից աւելի կազմող Կոմիտասի թուրքական ժառանգութիւնը, որը անտարակոյս պիտի ամբողջացնի իր պատկերը՝ մեծ հետաքրքրութիւն առաջացնելով ինչպէս հայ եւ թուրք, այնպէս էլ աշխարհի տարբեր երաժիշտների ու երաժշտութեան երկրպագուների մէջ: Բացի այդ, Կոմիտասի բեռլինեան շրջանը տասնեակ անտիպ ստեղծագործութիւններով, նոյնպէս կարող է հարստացնել մեր պատկերացումները մեծն Կոմիտասի մասին, ուստի մենք ուսումնասիրել ենք նաեւ իր գերմաներէն երգերը, վերծանել վերջիններս եւ նոյնպէս պատրաստել հրատարակութեան:

1. «Շարք» կոչուում են այն երաժշտական ստեղծագործութիւնները, որոնք յօրինուած են մասնագէտ երաժիշտների կողմից:
2. «Թիւրքի»ները ժողովրդական անանուն ստեղծագործութիւններ են:
3. Օսմանեան պետութեան պատմութեան ընթացքում երկու անգամ է սահմանադրութիւն հռչակուել: Առաջինը 23 Դեկտեմբեր 1876 թուականին, իսկ երկրորդը՝ 23 Յուլիս 1908ին: 31 Մարտ 1909ին «Շարիաթ»ի կողմնակիցները կազմակերպեցին մի յեղաշրջում, որը ճնշուեց Սելանիկից (Թեսաղոնիկէ) եկած «Շարժման Բանակ»ի կողմից:
4. Օսմանեան Թուրքիայի վերնախաւի լեզուն, որը խառնուրդ էր արաբերէնի ու պարսկերէնի (գերակշիռ մասը), լեզուի մէջ 15-20% բառեր ունէին թուրքական ծագում:
5. «Կոմիտասին հետ», Հ.Ճ. Սիրունի, «Էջմիածին», 1966, Ը, էջ 21:
6. «Ազատամարտ», 1912, նո. 822, էջ 3:
7. «Կոմիտաս Վարդապետ», Թ. Ազատեան, էջ 134:
8. «Նամակներ», ԳԱԹ, Երեւան, 2000, էջ 28-30, նո. 13:
9. «Ազատամարտ», 1912, նո. 866, էջ 4:
10. Ընդօրինակուած է բնագրին հաւատարիմ մնալով, առանց որեւէ ուղղումների: Տպագրուում է առաջին անգամ (մասնակի):
11. ԳԱԹ, Զուխանեանի Ֆոնդ. նո. 98:
12. Օսմանեան պետութեան մէջ օգտագործուում էր արաբերէն այբուբենը՝ յարմարեցուած թուրքական հնչունարանութեանը:
13. Բանաստեղծ եւ բաղաձայն գործիչ Մեհմետ Էմինը հետագայում ընդունել է Ցուրտաճուր (ազգի ծառայ) ազգանունը:

14. «Կոմիտասին հետ», Հ. Ճ. Սիրունի, «Էջմիածին», 1968, Գ, էջ 45:
15. Առաջին կին թուրք գրող:
16. Թուրք ազգայնամուլների պարագլուխներից, «Թուրք օջաղը»ի հիմնադիրներից:
17. «Կոմիտասին հետ», Յ. Ճ. Սիրունի, էջմիածին, 1968, Գ, էջ 48:
18. Բանաստեղծ Յահյա Քեմալը հետագայում ընդունել է Բեյաթը ազգանունը:
19. «Կոմիտասին հետ» Յ. Ճ. Սիրունի, «Էջմիածին», 1968, Գ, էջ 48:
20. "Mehmet Emin Yurdakul'un eserleri-1," Istanbul, 1989:
21. "Merchant Emin Yurdakul'un eserleri-1" Istanbul, 1989:
22. «Թիւրք օջաղը» կոչուող թուրքական ազգայնամուլների կազմակերպութիւնը հիմնուել է 25-3-1912 թուականին:
23. Բանաստեղծ Համտուլլահ Սուփիին հետագայում ընդունել է Թանրըյովեր (Աստուած փառաբանող) ազգանունը:
24. «Կոմիտասին հետ», Յ. Ճ. Սիրունի, «Էջմիածին», 1968, Գ, էջ 46:
25. «Նամակներ», ԳԱԹ, Երևան, 2000, էջ 158, նո. 31:
26. «Նամակներ», ԳԱԹ, Երևան, 2000, էջ 118-119, նո. 1:
27. «Կոմիտասին հետ», Յ. Ճ. Սիրունի, «Էջմիածին», 1968, Գ, էջ 48:
28. Նոյնը, Դ, էջ 30:
29. Նոյնը:
30. «Ազատամարտ»ը Հայ Յեղափոխական Դաշտակցութեան օրգանն էր:
31. «Կոմիտասին հետ», Յ. Ճ. Սիրունի, «Էջմիածին», 1968, Գ, էջ 30:

ՏԻՐԱՆ ԼՈԳՄԱԳՅՈՋԵԱՆ

### ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

## «ԶԻ ՈՒՐ ԳԷՇՆ ԻՑԷ, ԱՆԴՐ ԺՈՂՈՎԵՍՑԻՆ ԱՐԾՈՒԻՔ»

(Աստուածաշնչի բարգմանութիւնների մասին)

Անգղի եւ արծուի այս երկու թռչունների կենսաձեւի մասին տեղեկութիւններ իմանալն օգնում է Հին եւ Նոր Կտակարանեան որոշ համարների լուսարանմանը՝ րացայայտելով մի քանի խօսքերում ամփոփուած իմաստային տարբեր նրբերանգները: Այս իմաստով ուշադրութեան արժանի է Մատթէոսի Աւետարանի ԻԴ գլխի 28րդ համարը, որի համապատասխան հատուածը կայ Ղուկասի Աւետարանում (ԺԷ 37), որի հետ յարաբերուող նախադասութիւններ կան նաեւ, Յորի գրքում (Յոր ԼԹ 27-30):

Աւետարանի յիշեալ համարը ներկայացնում է հետեւեալ խորհրդաւոր նախադասութիւնը. «Զի ուր գէշն իցէ, անդր ժողովեսցին արծուիք» (ուր որ դիակն է, այնտեղ կը հաւաքուեն արծիւները): Հետաքրքիր ճանապարհ է սակայն անցել այս նախադասութիւնը տարբեր բարգմանութիւնների միջով, որի ընթացքում թռչունների արքայ արծիւն աստիճանաբար ասես կորցրել է իր զօրութիւնը եւ վերածուել է մի գիշակեր անգղի:

Զարմանալի է՝ բոլոր հին հրատարակութիւններում այս նախադասութեան մէջ արծիւ բառն է իշխում, սակայն որքան առաջանում ենք դէպի մեր ժամանակների նորագոյն հրատարակութիւնները, տեսնում ենք, որ դրանցում մեզ հետաքրքրող նախադասութեան մէջ արծուի փոխարէն ներկայանում է անգղ բառը: Այսպիսին է պատկերը ոչ միայն վերջերս հրատարակուած հայալեզու Աւետարաններում, այլեւ Աստուածաշնչի եւ Աւետարանների օտար լեզուներով նորագոյն հրատարակութիւններում:

Վերջիններս թէեւ անգղ բառն են նախընտրել (անգլերէնում *vulture*, ֆրանսերէնում *vautour*), Աւետարանի

այս հատուածում, սակայն, արծիւը պահպանել են ոուսերէն նորագոյն հրատարակութիւնները: Այսպէս է բարգմանուած նաեւ ուկրաիներէն Աստուածաշնչում:

**ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՐԾՈՒԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ**

Քսաներորդ դարասկիզբի՝ Աստուածաշնչի մի քանի մեկնաբանութիւններ պարզ տրամաբանական բացատրութիւններ են տալիս մեզ հետաքրքրող նախադասութեանը: Համաձայն մի մեկնաբանութեան սա մի առակ է կամ ասացուածք, որի միջոցով Քրիստոս խօսեց Երկրորդ Գալստեան մասին: Դիակի առկայութեան դէպքում նրա շուրջն են հաւաքուում արծիւները կամ անգղները: Այստեղ դիակը չար մարդիկ են, իսկ արծիւները՝ Քրիստոս եւ Նրա հրեշտակները: Ըստ այս կարծիքի հեղինակների՝ այստեղ կարելի է նաեւ, կարծես թէ նախասիրութիւնից ելնելով, մէկ այլ իմաստով էլ հասկնալ, ովքեր այս աւետարանական հատուածում ակնարկ են տեսնում Երուսաղէմի անկման վերաբերեալ, ըստ նրանց դիակը խորհրդանշում է հրեաներին, իսկ արծիւները՝ հռոմէական քանակը: Հաւանաբար այդ բացատրութիւնը հիւսուած է այն իրողութեան վրայ, որ նախկինում արծուի նշանը պատկերուած էր պարսկական եւ հռոմէական դրոշմներին:

Համանման մէկ այլ բացատրութեամբ արծիւները խորհրդանշում են յուդայիզմի նեխող դիակի վրայ յարձակուող հռոմէացիներին: Մէկ այլ աշխատութիւնում էլ այն միտքն է յայտնուում, որ Քրիստոս ժամանակի այս ասացուածքին տալիս է նոր իմաստ,

ըստ որի Դատաստանը տեղի կ'ունենայ իր ժամանակին: Այստեղ ասում է, որ անլի նախընտրելի է դիակի մօտ հաւաքուող թոչուններին անգղներ անուանելը, որովհետեւ անգղներն անլի շատ են դիակների մօտ հաւաքուում, քան արծիւները: Այս բացատրութեան մէջ նշում է որ Աւետարանի տուեալ նախադասութիւնը չի կարելի փոխարեական իմաստով հասկնալ, քանզի երբեմն տեսութիւններ են առջ քաշուել, ըստ որոնց մարմինը Քրիստոսն է Խաչի վրայ, իսկ անգղները՝ սրբերը, որոնք հաւաքուում են Նրա շուրջը: (5) Թէ ինչի վրայ է հիմնուած նման գզուշացումը, պարզ չէ, սակայն եթէ, ինչպէս նշում է նման աշխատութիւններում, անգղները խորհրդանշում են նաեւ Քրիստոսին եւ Նրա հրեշտակներին, ապա հենց միայն սա խօսում է անգղ բառի գործածութեան դէմ, ինչը ցոյց կը տրուի ստորեւ: Այս կարծիքի հիմնաւորումը մեծապէս նպաստում է նաեւ Յորի գրքի համապատասխան հատուածը:

**ԱՆԳՂԸ ԵՒ ԱՐԾԻՒԸ ՅՈՒՆԻՍ ԳՐԲՈՒՄ**

Յորի գրքի ԼԹ. գլխի 27-30 համարները կարծես թէ նախատիպն են Մատթէոսի եւ Ղուկասի Աւետարանների համապատասխան հատուածի: Ահա նշեալ համարների նախադասութիւնները. «Կամ թէ քո՞ հրամանաւ վերանայ արծուի, եւ անկղ ի վերայ բունոյ իւրոյ նստեալ դադարիցէ ի քարանձաւս վիմաց եւ ի ծածուկս. Անդ կայ եւ խնդրէ զկերակուր: Ի հեռաստանէ դիտեն աչք իւր: Եւ ձագ նորա արեամբ թաթախին, ուր ուրեք իցէ գէշ՝ անդ վաղվաղակի գտանի»: Սակայն հայերէն տարբեր հրատարակութիւններում 27 եւ 28 համարները տարբեր ձեւերով են ներկայացուած: Մի մասում խօսքը վերաբերում է միայն արծուին, եւ այստեղ բացակայում է անգղ բառը, իսկ միւս մասում՝ այս համարներում, խօսուում

է երկու թոչունների՝ արծուի եւ անգղի մասին, ըստ որում, եթէ առաջին տարբերակում յաջորդ գործողութիւնները վերագրում են արծուին, ապա այս վերջին դէպքում գլխաւոր դերում է անգղը, եւ յաջորդ գործողութիւնները վերագրում են արծուին, ապա այս վերջին դէպքում գլխաւոր դերում է անգղը, եւ յաջորդ նախադասութիւնները նրա մասին են: Այն հրատարակութիւններում, որտեղ առկայ է անգղ բառը, ինքնըստինքեան արդէն 30րդ համարում «իսկ նրա ձագերը գոհի արեան մէջ են թաթախուած» նախադասութիւնը մեզ ասում է, որ խօսքն անգղի ձագերի մասին է: Իսկ հակառակ տարբերակում, քանի որ անգղ բառը բացակայում է, ձագերն արդէն պատկանում են արծուին: Յորի գրքի այս հատուածում անգղ եւ արծիւ բառերը միասին գործածուած են ոչ միայն Արեւելահայերէն նոր թարգմանութեամբ Աստուածաշնչում (6), այլեւ Ոսկան Երեւանցու կողմից Ամստերդամում Աստուածաշնչի առաջին հայերէն հրատարակութիւնում (7): Մեր հայերէն հրատարակութիւններում երկու տարբերակներն էլ յանախ են հանդիպում:

Յրանսերէն հրատարակութիւններում այսպիսի երեւոյթ չկայ. դրանցում կ'ամ անգղ (8), կ'ամ էլ միայն արծիւ բառն է (9), եւ հետեւաբար յաջորդող, նախադասութիւններում պատմուող գործողութիւնները, ինչպէս նաեւ ձագերը յստակօրէն վերագրում են միայն մէկ թոչունին: Այսպէս է նաեւ անգլերէն (10) եւ ռուսերէն հրատարակութիւններում, ուստի կարելի է եզրակացնել, որ տարբեր խմբագրութիւններում այս հատուածը երկու տեսակի է. մի դէպքում նշում է միայն արծիւը, իսկ միւս դէպքում արծիւը եւ անգղը միասին: Բայց դա հիմն չի տալիս յաջորդող նախադասութիւններն ամբողջութեամբ վերագրել

անգղին: Գիտե՛նք, որ գրաբարում յաճախ նախադասութեան մէջ ենթական չի նշուում կամ էլ միայն մի դերանուն է դրուում եւ յաջորդող նախադասութիւններում արդէն պէտք է ըստ մտքի եզրակացնել, թէ այն ում է վերաբերում, իսկ աշխարհաբար թարգմանելու դէպքում էլ կարելի է նոյնիսկ ըստ մտքի աւելացնել տուեալ ենթական: Յորի գրքի այս հատուածում 27րդ համարում, խօսուում է արծուի մասին, իսկ 28-ում՝ անգղի: Գրաբար Աստուածաշնչում յաջորդող նախադասութիւններում, ենթական բացակայում է, եւ պէտք է կռահել, թէ ստորոգեալն ում է վերաբերում՝ անգղի՞ն, թէ՞ արծուին:

Հայերէն Աստուածաշնչի տարբեր հրատարակութիւնների տիտղոսաբերթերը նշում են, որ թարգմանութիւնները կատարուած են յունարէն եւ եբրայերէն բնագրերից: Յունարէն նոր հրատարակութեամբ Աստուածաշնչում՝ այս հատուածում, գործածուած է միայն *aetos* արծիւ բառը: Հին Կտակարանից որեւէ տող եւ բառ ստուգելու համար առաւել յուսալի է, ի հարկէ, եբրայական բնագիրը, քանի որ հենց այդ լեզուով էլ գրուել է Հին Կտակարանը: Հրեայ ուրբիները, որոնք ծայրայեղ նախանձախնդիր են Սուրբ Գրքի հանդէպ, Հին Կտակարանը բնագրից թարգմանել են ֆրանսերէն, եւ այստեղ՝ մեզ հետաքրքրող հատուածում, գործածուած է միայն արծիւ բառը: Եւ շեշտելու նպատակով, որ 30րդ համարում յիշուող ձագերը պատկանում են արծուին, նրանք օգտագործել են արծուի ձագեր *aiglons* բառը, որը ծագում է արծիւ *aigle* բառից: (11) Ի տարբերութիւն մեր աշխարհաբար Աստուածաշնչի, որտեղ 30րդ համարում միայն ձագեր բառն է, անգլերէն Աստուածաշնչում շեշտուած է արծուի ձագեր կապակցութիւնը (*the young eagles drink the blood*) (12): Սա հիմնաւորում է նաեւ այն դիպուկ

դիտարկումը, ըստ որի, Յորի գրքում կենդանական աշխարհի երեւոյթներին սկսում են կենդանիների թագաւորի (ԼԹ 39) եւ աւարտուում թռչունների արքայի նկարագրութեամբ: Հետեւաբար Յորի գրքում եւս շեշտուում է դիակի շուրջը հաւաճող արծիւների եւ ոչ թէ անգղների մասին:

ԱՐԾՈՒԻ ԵՒ ԱՆԳՂԻ  
ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ստ. Մալխասեանցի «Հայերէն բացատրական բառարանում» (13) արծուի յատկութիւններից թուարկուում է՝ սրատես, ուժեղ մագիլներով, «որ ոյծի եւ քաջութեան պատճառով կոչուում է թռչունների թագաւոր (*Aquila*)»: Այստեղ նշուում է նաեւ, որ արծիւը սրատես է, յափշտակում է մանր կենդանիներ, երբեմն նաեւ՝ երեխաներ: Սրան հակառակ՝ անգղի ճակկերը մեծ են, թոյլ եւ կարճ ճիւղերով, որոնք պիտանի չեն որսը բռնելու եւ պահելու համար: (14) Բացի դրանից, անգղը երկչոտ է, ուստի նախընտրում է դիակներով կերակրուել. քան թէ կենդանիների վրայ յարձակուել, եւ չափազանց որկրամոլ է (15), մինչդեռ արծիւները շատ հագուադէպ են լէշերով սնուում: (16)

Արծուի եւ անգղի միսը միւս բոլոր յափշտակիչ թռչունների պէս պիղծ էր հրեաների համար (Ղեւտ. ԺԱ 13-14), սակայն արծիւը գուցէ տարբերում էր սրանց միջից, որովհետեւ «ոչ ոք երբեք կ'ուտէր գայն (արծուի միսը), քայց եթէ ի դիպուածի հարկաւորութեան» (19): Եւ եթէ, ըստ վերոնշեալ մի մեկնութեան, արծիւները խորհրդանշում են Քրիստոսին եւ Նրա հրեշտակներին (18), ապա այս դէպքում պատշան է միմիայն արծիւ բառի գործածումը՝ իբրեւ ապացոյց Քրիստոսին վայելող արքայական պատուի եւ համարձակութեան:

### ՄԱՐՄԻՆ ԵՒ ԴԻԱԿ

Աւետարանական հատուածում փոփոխութիւնները է ենթարկուել նաեւ Ղուկասի Աւետարանի համապատասխան նախադասութիւնը: Խօսքը վերաբերում է մարմին քառին, որի փոխարէն Մատթէոսի Աւետարանն ունի գէշ-դիակ քառը: 989 թուականի ձեռագիր Աւետարանում նախադասութիւնն այս տեսքով է. «Ուր մարմին է, անդ արծուի՛ ժողովեսցին» (19): Մի չնչին տարբերութեամբ այն նոյն ձևով է նաեւ 1666թ. հրատարակուած առաջին տպագիր հայալեզու Աստուածաշնչում (անդ-ի փոխարէն անդր): Որոշ նոր թարգմանութիւններ արծիւներին անգղ դարձնելու հետ մէկտեղ, մարմինն էլ դիակ են դարձրել (ֆրանսերէնում՝ *cadavre*) (20) կամ մարմին քառի կողքին աւելացրել են մեռած քառը (անգլերէնում *dead body*) (21):

Սակայն, ինչպէս կը տեսնենք, Ղուկասի Աւետարանում ճիշտ եւ նախնական ձևով պահպանուած է մարմին քառը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՆԵՐԸ ԱՐԾՈՒԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Սուրբ Եփրեմ Ասորու մեկնութեան համաձայն, աւետարանական այս հատուածում (Մատթ. ԻԱ 28) Քրիստոս արծիւներ կոչեց թշնամիներին, ովքեր յարձակուելու են Երուսաղէմի վրայ, որն անուանուում է դիակ: Այսպէս է ասուում նաեւ մարգարէութեան մէջ. «Նրա երկվարներն աւելի արագընթաց են, քան արծիւները» (Երեմ. Գ 13): Եկեղեցական հեղինակը նշում է նաեւ, որ ոմանք սա հասկանում են մարմնի եւ հոգու, ինչպէս նաեւ աշխարհի վախճանի վերաբերեալ: Եփրեմ Ասորու մեկնութիւնը, բացի մարմնի եւ հոգու մասին ակնարկից, նման է վերոնշեալ մեկնութիւններին: Այստեղ եւս ակնյայտօրէն երևում է, որ

եկեղեցական Հայրը Աւետարանի այս մասում ճիշտ է համարել արծիւ քառի գործածութիւնը, մանաւանդ որ այն համեմատել է Երեմիայի մարգարէութեան մէջ յիշուող արծիւների հետ:

Շատ գեղեցիկ եւ խորհրդարանական մեկնութիւն է տալիս Սուրբ Ստեփանոս Սիւնեցին: Քրիստոս այստեղ «դիակ» եւ «ընկած» անուանեց Իր մարմինը, քանի որ չարչարուեց եւ մեռաւ, իսկ արծիւներ անուանեց Իրեն հաւատացողներին, ովքեր արքայավայել եւ արժանաւորապէս կերակրուում են Նրանից: Սիւնեցին եւս, ուշադրութիւն հրաւիրելով երկու թռչունների՝ արծուի եւ անգղի իւրայատկութիւնների վրայ շեշտում է, որ Քրիստոս հենց արծիւնե՛ր անուանեց Իրեն հաւատացողներին եւ ոչ թէ ագռաւներ կամ անգղներ, քանի որ արծիւը պատրաստ որս եւ մեռած մարմին ուտելը արժանի չի համարում, այլ ինքն է վաստակում եւ կերակրուում (23): Իսկ դիակ քառին անդրադառնալով՝ Սիւնեցին նշում է. «Նաեւ այս պէտք է գիտենալ, որ յունարէնում չի ասում դիակ, այլ ընկած» (24):

Եթէ Ստեփանոս Սիւնեցու մեկնութեամբ դիակը եւ մարմինը խորհրդանշում են Քրիստոսին, ապա առաւել եւս հասկանալի է դառնում խորհրդարանական իմաստով արծուի գործածութիւնն այս համարում: Քրիստոս Խաչի վրայ ինչպէս նաեւ Սրբազան Պատարագի խորհրդաւոր արարողութեան ընթացքում մեռնում է, քայց եւ միեւնոյն ժամանակ կենդանի է Իր աստուածութեամբ, որը եւ ցոյց են տալիս միմեանց լրացնող դիակ եւ մարմին քառերը: Ահա այս իմաստով ընդունելի չէ Ղուկասի Աւետարանում մարմին քառի կողքին տրամաբանութեամբ աւելացնել մեռած քառը: Եւ այս դէպքում առաւել քան տեղին է արծիւ քառի գործա-

ծուփիւնը, որովհետեւ արծիւը կենդանի արարած է նախընտրում ուտելու համար, բայց եւ միեւնոյն ժամանակ կարող է կերակրուել նաեւ դիակով:

Փոփոխուած ձեւով հրատարակութիւնները (չնայած որ այստեղ այս կամ այն դաւանանքի օգտին գիտակցական ինչ-որ բայեր չենք ցանկանում տեսնել) գուցէ ձեռնտու են այն «եկեղեցիներին», որոնք մերժում են Քրիստոսի աւանդած Նրա կենարար Մարմնի եւ Արեան Հաղորդութեան Սուրբ Խորհուրդը, հացը եւ գինին համարում են մի պարզ խորհրդանիշ եւ իրենց հետեւորդներին գրկում են Սուրբ Հաղորդութիւնից: Այսպիսի հրատարակութիւնները գուցէ ձեռնտու են նաեւ քաղկեդոնականութեանը հետեւողներին, որոնց համար ոչ մի արտառոց բան չկայ Ղուկասի Աւետարանում մարմինն բառի կողմին նաեւ մեռած որոշիչը դնելու կամ էլ այն ընդհանրապէս դիակ ձեւով արտայայտելու մէջ նոյնիսկ այն դէպքում, եթէ բոլորի համար յստակ լինի, որ Քրիստոս այստեղ նկատի ունէր իր մարմինը (25): Սակայն Հայ Առաքելական Եկեղեցու եւ ընդհանրապէս ճշմարիտ իմաստով միաբնակութիւնը հաստատող եկեղեցիներին համար այս դէպքում սա վարդապետական շեղման տանող ճանապարհ կարող է լինել, որն աւելի լաւ հասկանալուն օգնում է Քրիստոսի մահուան վերաբերեալ Հայ Առաքելական Եկեղեցու ըմբռնումները: **ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԵՍԱԿԷՏՐ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՀՈՒԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ**

Ողջ մարդկութեան պատմութեան մէջ ամենայնուհիւ, ողբերգական եւ միեւնոյն ժամանակ անգերազանցելի եւ ամենափառաւոր իրադարձութիւնը Քրիստոսի խաչելութիւնն է: Տիրոջ խաչելութիւնը յանուն մարդկութեան փրկութեան ցոյց տուեց Նրա սիրոյ անսահմանութիւնը իւրաքանչիւր մարդու

հանդէպ: Քրիստոս Աստուած սիրով մարդկային բնութիւն եւ մարմին առաւ մեր փրկութեան համար, մինչդեռ, օրինակ, մեծ փիլիսոփաներից Պլոտինի մասին պատմում են, որ նա, մեր բնութիւնն ունենալով, ամաչում էր, որ գտնուում է մարդկային մարմնի մէջ: (26) Բայց ո՞վ էր Խաչի վրայ չարչարուող եւ հոգու խորքերից առ Աստուած աղաղակողը: Այս հարցը գուցէ զարմանալի թուայ, որովհետեւ գիտենք, որ խաչեցեալն Աստծոյ Միածին Որդին էր՝ Յիսուս Քրիստոս: Քրիստոս, որ ճշմարիտ Աստուած էր. մարդեղացաւ դառնալով նաեւ ճշմարիտ մարդ: Ոմանք, սակայն, սա նկատի ունենալով, ասում էին, որ Խաչի վրայ չարչարուեց եւ մեռաւ միայն Քրիստոս մարդը: Քանի որ նման կարծիքների տարածումը մեծապէս ազդում էր քրիստոնեաների աստուածամբռնողութեան վրայ, ապա անհրաժեշտութիւն առաջացաւ ամրագրելու ճշմարտութիւնը վարդապետական հիմնաւորումների ձեւով:

Այսպիսին է Հայ Առաքելական Եկեղեցու դաւանութիւնը. «Խաչեալ եւ մեռեալ մարմնովն, եւ կենդանի Աստուածութեամբն. մարմինն եղեալ ի գերեզմանի միաւորեալ Աստուածութեամբն եւ Հոգւովն իջեալ ի դժոխս անբաժանելի Աստուածութեամբն:» (27)

Նրանք, ովքեր համաձայն չեն մեր եկեղեցու տեսակէտին, ասում են, թէ Աստուած Բանը անհաղորդ էր չարչարաններին եւ «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս» խօսքերը Քրիստոսի մարդկութիւնն ասաց իր աստուածութեանը: (28) Սրան նման է նաեւ Նեստորի ուսմունքը, ըստ որի, Քրիստոսի մարդկութիւնն է չարչարուել, մինչդեռ հակառակ ծայրայեղութեան է հասել Եւտիքէսի կարծիքը, որի համաձայն Աստուած է չարչարուել: Այսինքն՝ այս

բոլոր դէպքերում էլ տարբեր բաժանումներ են տեսնում, մի երեւոյթ, որը մերժելի է եղել Հայ Եկեղեցու կողմից բոլոր դարերում: Մի շարք մեկնութիւնների համաձայն՝ Քրիստոս Խաչի վրայ արտասանեց 21րդ սաղմոսի խօսքերը (1), բայց ոչ ոք վարդապետական վստահութեամբ չի կարող ասել, թէ նա ինչ նկատի ունէր այս խօսքերն ասելիս (29): Մէկ այլ մեկնութիւն, սակայն, այս նոյնն ասելով՝ ակնարկ է անում, որ այդ բաները Յիսուսի մարդկային բնութեան ճիշտ են (30): Այս պարագային տեղին է նշել, որ Ս. Գրիգոր Մփանցեալագործը, անդրադառնալով Եկեղեցու հաւատամքին, ասում է. «Եթէ ոք ասիցէ մարդ կատարեալ զՔրիստոս, բաժանելով զԱստուած Բան եւ ո՛չ խոստովանի մի Տէր զՅիսուս Քրիստոս, որպէս եւ գրեալ է, եղիցի՛ նզովեալ» (31): Նոյնպէս եւ Սուրբ Կիրեղը ներկայացնում է Ուղղափառ Եկեղեցու Հաւատամքը, որտեղ նշում է. «... վասն մերոյ փրկութեան... մարդացաւ, մեռաւ եւ յարեալ» (32):

Ն Ո Ր Կ Տ Ա Կ Ա Ր Ա Ն Ե Ա Ն  
ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ - Ղազար Զահկեցիին իր աստուածաբանական աշխատութեան մէջ, բերում է մի շարք նորկտակարանեան համարներ, որոնք հակառակ են վերը յիշուած կարծիքին: Մատթէոսի Աւետարանում (ԻԼ 5) հրեշտակն ասում է. «...գիտեմ, որ փնտրում էք Յիսուսին, որ խաչուեց, այստեղ չէ նա, քանի որ յարութիւն առաւ»: Զահկեցիին նշում է, որ եթէ յարութիւն առնողն Աստուած է, ուրեմն նաեւ խաչեցեալն է Աստուած: Ահա նորկտակարանեան մէկ այլ հիմնաւորում, Կորնթացիներին ուղղուած առաջին թղթում (Բ 8) Պողոս առաքեալը նշում է, որ փառքի Տիրոջ՝ Խաչը հանեցին: Այս խօսքերը լրացնում է Յակոբոս առաքեալը՝ ասելով. «...աշառութեամբ մի՛ պահէք մեր Տէր Յիսուս

Քրիստոսի՝ փառքի Տիրոջ հաւատը» (Յակ. Բ 1): «Առանց աստուածութեան սուկ մարդը չի կարող փառքի տէր լինել», եզրակացնում է Զահկեցիին: (33)

Նոյնկերպ նաեւ Գրիգոր Մփանցեալագործն է նշում, որ Տէրը ոչ թէ մարդուն մատնեց (չարչարանների ու մահուան) մեզ համար, այլ Իրեն մատնեց յանուն մեզ, ինչպէս եւ Քրիստոս Ինքն է ասում. «Քանզեքէ այդ տաճարը եւ երեք օրուայ ընթացում այն կը վերականգնեմ» (Յովհ. Բ 8)՝ նկատի ունենալով Իր մարմինը (34): Քրիստոս Ինքն ասաց, որ մարդու Որդին պէտք է մատնուի խաչի (Մատթ. ԻԶ 45): Աւելի խօսուն են Ղուկասի Աւետարանի հետեւեալ համարները, որոնցում յարութիւն առած Քրիստոս բացատրում է Իր աշակերտներին. «Ձե՞ որ Քրիստոս պէտք է նոյն այդ չարչարանները կրէր եւ այնպէս մտնէր փառքի մէջ» (ԻԴ 26) (35):

Բոլոր այս հատուածներում առաւել քան ակնյայտ է, որ Հայ Եկեղեցիին չի ասում սուկ Աստուած - մեռեալ կամ սուկ մարմինը խաչեալ, այլ Քրիստոսին ընդունում է կատարեալ կերպով եւ բաժանումներ չի անում: Այս նոյն կարծիքը հաստատում է նաեւ Պետրոս առաքեալը՝ ասելով. «Քանի որ Քրիստոս մարմնով չարչարուեց մեզ համար» (Ա Պետ. Դ 1):

Ի հերքումն քաղկեդոնական բաժանման, ըստ որի Աստուած Բանը անհաղորդ էր «Կրից չարչարանաց», բերեմն նաեւ համարներ Յայտնութեան Գրքից՝ «Ես եմ, որ մեռաւ (Ա 18), «Անսկիզբը եւ Անվախճանը, որ մեռաւ եւ կենդանացաւ» (Բ 8), «...մորթուեցիր եւ գնեցիր մեզ Քո արիւնով» (Ե 9), իսկ Պողոս առաքեալը դարձեալ ասում է. «...հաշտուեցինք Աստծու հետ նրա Որդու մահուամբ» (Հռոմ. Ե 10) (37):

Բուժուած կոյրը հարցնում է

Քրիստոսին, թէ ո՞վ է Աստծոյ Որդին, որ հաւատամ նրան, որին Քրիստոս պատասխանում է՝ ասելով, թէ տեսար նրան եւ խօսում է՝ քեզ հետ, իսկ սրանք մարմնին են վերաբերում (Յովհ. Թ՝ 35): Նոյն կերպ եւ Թովմաս առաքեալը Քրիստոսի մարմինը տեսնելով եւ շօշափելով Նրան Տէր եւ Աստուած դաւանեց (Յովհ. Ի՝ 24): Մինչ ոմանք ասում են, թէ այլ է տեսանելի եւ շօշափելի բնութիւնը եւ այլ է աստուածայինը (38), Ս. Յովհաննէս առաքեալը երկուսն էլ միասին է ասում. «Մեր ձեռքերը շօշափեցին Կենաց Բանը» (Ա Յովհ. Ա. 18):

ՆՁՈՎՔՆԵՐ - Գրիգոր Սփանչելագործի նգովքներում նշուում է, որ եթէ մէկն ասի, թէ այլ էր, որ չարչարուեց, եւ այլ էր, որ՝ ոչ, թող նգովեալ լինի (39): Նոյնպէս եւ Սուրբ Կիրեղի նգովքներում է նշուում, որ եթէ մէկը Հօր հետ նոյն բնութիւնն ունեցող Բանին Իր մարմնով հանդերձ նոյն Աստուածը չի դաւանում, ապա թող նգովեալ լինի (40):

#### ԱՄՓՈՓՈՒՄ

Ոսկեբերանն ասում է, որ Քրիստոս մեռաւ մարդկային բնութեամբ, սակայն անմահ մնաց նրան միացած աստուածութեամբ (41): Մեր եկեղեցու սուրբ հեղինակներից Յովհան Օսնեցին եւս ասում է, որ Քրիստոս է «չարչարելի մարմնով եւ անչարչարելի աստուածութեամբ: (42) Այսպիսին է նաեւ Ներսէս Շնորհալու կարծիքը. «եկաւ կամաւորաբար չարչարանքներու եւ չարչարչուեցաւ անչարչարելին՝ մեր չարչարելի բնութեամբ խաչին վրայ, մեռաւ նա, որ մահուան պարտական չէր, մեր մահկանացու մարմնով» (43): Ըստ Սուրբ Եփրեմ Ասորու՝ չարչարանքների ժամանակ Քրիստոսի աստուածութիւնը նահանջեց Քրիստոսի մարդկութիւնից, բայց ոչ այն աստիճան, որ բաժանուի, այլ այդ նահանջելը դրսեւորուում էր նրանով, որ

այդ ժամանակ աստուածային հզօրութիւնը չէր արտայայտուում:

Հայաստանեայց Սուրբ եկեղեցին եւս ասում է, որ անչարչարելին չարչարելիով չարչարուեց, անմահը մահկանացուով մեռաւ: (44) Բայց նման պնդումներով արդեօ՞ք պատշան է ասել, թէ Աստուած չարչարուեց կամ Աստուած մեռաւ, եւ արդեօ՞ք այսպիսով չենք դառնում աստուածաչարչարներ: Սակայն Հայ Առաքելական եկեղեցին չի ասում, թէ խաչուեց աստուածային բնութիւնը, այլ մեր քրիստոսաբանութեամբ՝ խաչուեց Յիսուս Քրիստոս, այսինքն՝ Քրիստոս ամբողջութեամբ, առանց բաժանումների: Հայաստանեայց եկեղեցին կարծես թէ միշտ զգուշացել եւ զգուշացրել է բաժանումներ անելուց՝ նշելով, որ դա վտանգաւոր է, եւ կայ մի սահման, որից այն կողմ անցնելը կարող է մոլորութեան տանել: Բայց ինչպէ՞ս հասկանալ «Աստուած չարչարեալ» արտայայտութիւնը: «Անչարչարելի աստուածութեամբ ասուում է ըստ բնութեան, իսկ Աստուած չարչարեալ՝ ըստ միաւորութեան» (45): Միաւորութիւնը Ջահկեցին բացատրում է հետեւեալ համեմատութեամբ: Ինչպէս հուրը երկաթի հետ միաւորուելով վերացնում է նրանից ցրտութիւնը եւ սելութիւնը, այսպէս էլ Քրիստոսի մարմինը, միաւորուած Աստուած Բանի հետ, ունի Բանի կարողութիւնը եւ աստուածութիւնը: (46) Հետեւաբար ոչ թէ ըստ բնութեան, այլ ըստ միաւորութեան, Աստուած չարչարեալ արտայայտութիւնը ճիշտ է:

Անդրադառնալով աւետարանական վերոնշեալ հատուածների արժիւ, մարմին եւ դիակ բառերին նշեմք, որ դրանք հին հրատարակութիւններին կամ վաղ ձեռագրերին հետեւելով ճիշտ կերպով անփոփոխ թողնելու դէպքում եւս մէկ հատուած ենք պահպանում, որն իր մէջ

ամփոփում է նաև յանուն մարդկութեան Աստուծոյն չէ, այլ մարդկանցը» (Մատթ. Քրիստոսի չարչարանքների եւ մահուան ժԶ 22-23): Եւ մինչ ոմանք ամօթ են գեղեցիկ եւ խորհրդական ակնարկը: Երբ համարում պարծանքների պարծանքը՝ Պետրոս առաքելը անպատշաճ համարեց տէրունական խաչը, մենք համարձակութեամբ փարզեցինք եւ երգեցինք մեր Աստուծոյ Քրիստոսն ասաց նրան. «Ետի՛ս գնա, Քրիստոսի չարչարանքները (47): սատանայ, որովհետեւ քո խորհուրդը

Ա.ԴԱՄ ՔԶՆՅ. ՄԱԿԱՐԵԱՆ

1. *A Commentary on the Holy Bible by various writers, edited by the Rev. J. R. Dummelow M. A. Queens' college, Cambridge, complete in one volume with general articles, New York, the Macmillan company, p. 704:*
2. Անգղ. բառի յոգնակին աւելի նիշտ է կազմել քր և ոչ թէ ներ վերջաւորութեամբ, սակայն այստեղ օգտագործել ենք աւելի տարածուած անգղեր ձեւը:
3. Այս մասին տես նաև 'A New Commentary on Holy Scripture, including the apocrypha, edited by Charles Gore, Henry Leighton Goudge, Alfred Guillaume, London, Society for promoting christian knowledge, Northumbreland avenue, W. C. 2, p. 192.
4. *The New Bible Commentary Revised, edited by Guthrie BD. MTH. PHD. lecturer in New Testament, London, Bible College, J. A. Motger MA, BD principal of Trinity College, Bristol, consulting editors A.M. Stibbs MA formerly Vice-Principal, Oak Hill Theological College, London D. J. Wiseman OBE, MA, DLIT, FBA, FSA professor of Assyriology, University of London, Inter-Varsity Press, p. 845.*
5. *The Interpreter's Bible. The Holy Scriptures in the King James and revised standard versions with general articles and introduction, exegesis, exposition for each book of the Bible, in twelve volumes, volume VIII, New York Abingdon Press Nashville, p. 305.*

*The Interpreter's Bible, volume VII, p. 549.*

2. ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ. ԱՐԵՒԵԼԱՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ, Հրատարակութիւն Հայաստանի Աստուածաշնչային Ընկերութեան, ՄԱՅՐ ԱԹՈՒՍ Ա. ԷՋՄԻԱԺԻՆ, 1994-ՌԵՆՈՒԴ:
7. Աստուածաշունչ Հնոց և Նորոց Կտակարանաց, ներ պարունակող շարակարգութեամբ նախնեացն մերոց եւ ճշմարտասիրաց Թարգմանչաց: Իսկ զկնի վեհափառ Տեսն Յակօբայ Հայոց Կարողիկոսի գլխակարգեալ եւ տնտեսալ ըստ Դաղմատացւոցն. նա եւ զհամաձայնութիւն հանուրց գրոց Աստուածաշնչից ընդ իրեարս առնթր կարգեալ ամենեցուն. նուաստի ումեմն բանի Տեսն սպասաւորի Ռսկանի երեսանեցոյ. յԱմստերդամ: Ներ Տպարանում Սրբոյն էջմիածնի. և Սրբոյն Սարգսի գօրավարի, ի թուում Փրկչին. 1666, իսկ Հայոց ՌՃԺԵ. յամսեանն մարտի մեծասանի:
8. *La Bible, Ancien et Nouveau Testament, avec les Livre Deuterocanoniques, traduite de l'hébreu et de grec en français courant, Alliance Biblique Universelle, Société biblique française, 1990.*
9. *La Sainte Bible qui comprend l'Ancien et le Nouveau Testament, traduite sur les textes originaux hébreu et grec par Louis Segond docteur en théologie, Nouvelle édition revue, Paris, 58, 1931 (այստեղ մեզ հետաքրքրող հատուածը գտնուած է 30-33 համարներում):*  
*La Bible, traduite du textes original par les membres du Robbinat français sous la direction de Zadoc Kahn Grand Rabbin, Paris, Librairie Colobo, 3 rue Richer, 5733, MCMLXXIII.*  
*La Sainte Bible, traduite en français sous la direction de l'école biblique de Jerusalem, M. CM. LV., le club francais du livre.*
10. Նշենք դրանցից երկուսը.  
*New American Standard Bible, study edition, Thomas Welson publishing, Nashville.*  
*Holy Bible, Good News Colour reference edition.*
11. *La Bible, traduite du textes original par les membres du Rabbinat francais sous la direction de Zadoc Kahn Grand Rabbin. Paris, Librairie Colobo, 3 rue Richer, 5733, MCMLXXIII.*
12. *Good News Bible, the Bible in today's english version, American Bible Society, New York.*  
*Holy Bible, Good News Colour reference edition.*
13. Հատոր Ա. Ա-Ե, Հայկական ՍՍԻ Պետական հրատարակչութիւն, Երևան, 1944, էջ 270:
14. Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր Ա. Երևան, 1975, էջ 384:
15. Ստ. Մայիսասեանց, Եզվ. աշխ., էջ 101:
16. Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր Բ, Երևան, 1976, էջ 70:

17. Աստուածաշնչի բառարան, էջ 70:
18. *A Commentary on the Holy Bible*, p. 704.
19. *L'Évangile Arménien, édition phototypique du manuscrit No 229 de la bibliothèque d'Eschmiadzin, publiée sous les auspices de M. Leon Mantacheff par Frederic Macler, professeur à l'école nationale des langues orientales vivantes, Paris, librairie Paul Geuthner, 13, rue Jacob (VI), 1920.*
20. Աստուածաշունչ նոր Կտակարան Յիսուս Քրիստոսի աշխարհարար նոր բարգմանութիւն, Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, Երեւան, 2001:  
Աւետարան, Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, Երեւան, 2001:  
*La Bible, Ancien et Nouveau Testament, avec les Livres Deuterocanoniques, traduite de l'Hebreu et du grec en français courant, Alliance Biblique française, 1990.*
21. *Good News Bible, the Bible in today's english version, Armenian Bible Society, New York.*
22. Ստեփանոս Սիւնեցի, նշվ. աշխ., էջ 106:
24. Նշենք, որ Յունարէն Աստուածաշնչում եւ նեսարի-Ալանդի նոր հրատարակութեամբ յունարէն Աւետարաններում Մատթէոսի Աւետարանի ԻԱ 28ում գործածուած է «փրօմա» դիակ բառը, իսկ Ղուկասի Աւետարանի համապատասխան հատուածում «սօմա» մարմին բառը (*Nestle-Aland, Novum Testamentum Graece, Deutsche Bibelgesellschaft Stuttgart*):
25. Օրինակ՝ Աստուածաշնչի ռուսերէն հրատարակութիւնները, չնայած կարծես ամէն տողում դրսևորուող իրենց նախնածախնորութեան, Ղուկասի Աւետարանի մարմին բառի նշանակութիւնն արտայայտել են միայն դիակ «բրուփ» ձևով:
26. Դաւիթ Անյաղթ, Երկեր, բարգմանութիւնը, առաջարանը եւ ծանօթագրութիւնը՝ Ս. Ս. Արեւշատեանի, «Սովետական գրող» հրատարակչութիւն, Երեւան, 1980, էջ 140:
27. Ժամակարգութիւն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ յորում պարունակին Սաղմոս Դաւիթի, Ժամագիրք Ասեմի եւ Տօնացոյց. Ջ տպագրութիւն (Նմանատպութիւն 1915թ. Դ տպագրութիւնից), ի Վաղարշապատ, ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ էջմիածնի, ՌՆԽԸ=1448, 1999, էջ 178:
28. Ղազար Զահկեցի, Աստուածարանական Դրախտ Ցանկայի, վերատպեալ ի տպարանի Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 2002, էջ 239:
29. *The Interpreter's Bible, volume VII, p. 607.*
30. *A Commentary on the Holy Bible*, p. 718.
31. Կնիք Հաւատոյ Ընդհանուր Սուրբ Եկեղեցւոյ յուղղափառ եւ հոգեկիր Հարցն մերոց դաւանողաց, յաւուրս Կոմիտասի Կաթողիկոսի համահաւաքեալ, հրատարակութիւն Կարապետ Սպիկոպոսի, ծախիւք Յովհաննու Շապուշիկեանց նոր-նախիջեւանեցւոյ, Ս. էջմիածին, տպարան Մայր Աթոռոյ, 1914, էջ 73:
32. Սահակ-Մեսրոպեան մատենադարան, Ե. Գիրք Թղթոց, մատենագրութիւն նախնեաց, (թուղթ Կիրդի առ Նեստոր), Թիֆլիս, տպարան Տ. Ռօտինեանց եւ Մ. Շարամէ, 1901, էջ 398:
33. Ղազար Զահկեցի, նշվ. աշխ., էջ 246:
34. Կնիք Հաւատոյ, էջ 75-76:
35. Ղազար Զահկեցի, նշվ. աշխ., էջ 250:
36. Նոյն տեղում, էջ 254:
37. Նոյն տեղում, էջ 254, 256:
38. Նոյն տեղում, էջ 182:
39. Կնիք Հաւատոյ, էջ 73:
40. Գիրք Թղթոց էջ 404:
41. Ղազար Զահկեցի, նշվ. աշխ., էջ 148:
42. Եզնիկ Մ. Վարդապետ Պետրոսեան, ղոկտոր աստուածարանութեան, Հայ Եկեղեցւոյ Բրիտանասարանութիւնը, Ս. էջմիածին, 1995, էջ 68:
43. Ընդհանրական բուղթ ներսէս Շնորհալի Կաթողիկոսին Հայոց, ուղղուած համայն հայ ժողովուրդին, որուն վերատեսչութիւնը Տիրոջմէ իրեն վստահուեցաւ, արեւմտեան հայերէնի վերածնց Շնորհի Արմ. Գալուստեան, Պատրիարք Հայոց Թիւրքոյ, Մարմարա տպարան, 1973, էջ 19:
44. Ղազար Զահկեցի, նշվ. աշխ., էջ 259:
45. Եզնիկ Մ. Վարդապետ Պետրոսեան, նշվ. աշխ., էջ 68:
46. Ղազար Զահկեցի, նշվ. աշխ., էջ 168:
47. Նոյն տեղում, էջ 251-252:

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ  
ՅԱԿՈՒՐ ՆԵՐՍՈՅԵԱՆ

ՄԻՍ ԵՐԵՍՆ ԷԼ ԴԱՐՁՆԵԼ ԵՐԵՐ ՏԵՂԻՆ ՀԱՐՅԵՐ

Տասնիններորդ դարի շատ դիտորդներ, նրանցից ամենաապրեցիկը՝ Նիտչեն, բացայայտ արհամարհանքով է նայում միսս երեսը դարձնելու հրահանգին, համարելով այն մի բան, որը մարդուն տալիս է ստրուկի կարգավիճակ: Նաեւ շատ ուրիշներ՝ ներառեալ Բրիտանական համակրող քննադատներ, ի թիւս որոնց թերեւս նաեւ Ռենոյդ Նիբոյը, այդ մտածողութեան եղանակը համարում են անգործադրելի, անհամարժեքի, անարդարանալիօրէն անջատուած կեանքի անողոք իրականութիւնից եւ ի վերջոյ անյարմար՝ մարդկային բնութեանը:

Բանի որ մենք փորձում ենք դիմագրաւել այդ մարտահրաւերը՝ միսս երեան էլ դարձնելու հրահանգի մէջ իմաստ գտնելու, երեք կարեւոր հարցեր պէտք է նկատի առնենք.

- ա. Ի՞նչ է հակամարտութիւնը լուծելու գործընթացի ամենաբարձր եւ կամ վերջնական նպատակը:
- բ. Բանակցութիւն վարողները, ու՞մ բարեկեցութիւնը պէտք է ի մտի ունենան:
- գ. Կարո՞ղ ենք բարոյական փոքումներ կատարել այն դէպքում, երբ հակառակորդի կեցումը սպառնում է ոչ միայն մեզ, այլ նաեւ մեր այն սկզբունքներին, որոնք մենք հաւատարմօրէն որդեգրել ենք:

ա) Սովորական յանառ կամ աշխարհիկ նպատակը, որը ուղղութիւն է տալիս մի սակարկութեան, այս է. Տուր հակառակորդին հնարաւորինս քիչ եւ վերցրու քեզ համար հնարաւորինս շատ: Նպատակը, ինչպէս երեւում է, կայանում է նրանում, որ կարողանաս ապահովել քո համար առաւելագոյն կարելի բաւարարումը: Մարդիկ, որոնք վարժուած են առաւելագոյն օգուտը իրենց համար ապահովելու արուեստին (կամ այն խմբի համար, որի համար աշխատում են), առ հասարակ, բարձր են վարձատրում: Սա պատշաճում է «խնր-ընդդէմ-քոնի» սկզբունքին, սկզբունք, որը տրամագծօրէն հակառակ է Աւետարանի ուսուցած արդարութեան սկզբունքին, այսինքն՝ այն կանոնին, որ իբրեւ Բրիտանոսի մարմնի անդամներ (իրական թէ հաւանական), մարդիկ արժանի են իրենց արդար բաժնին, որը տրամադրելի է Աստու աշխարհի մէջ բնակող իւրաքանչիւր անհատի բարեկեցութեանը:

բ) Ըստ նախորդ հարցի պատասխանի՝ տիպիկ քաղաքական եւ առեւտրական բանակցութիւններում էլ օրէնքն այն է, որ պէտք է հակառակորդի շահերով մտահոգ լինել այն չափով, որքան որ այդպիսի ուշադրութիւնը ատելի լաւ կերպով ծառայի անհատի սեփական շահերին: Սա չէ Բրիտանական պահանջը: Բրիտանական վերաբերմունքն է հաշուի առնել հակառակորդի շահը քո սեփական շահերի հետ միասին՝ երեւակայօրէն բանակցութիւնների մէջ ներառելով նաեւ երկու կողմերի գալիք բոլոր սերունդներին: Սեզ տուած պատմութեան պարզ եւ որոշակի դասը այն է, որ ոչ թէ վրիժառու յանառութեան վրայ հիմնուած բանակցութիւնները, այլ՝ փոխադարձ հոգատարութեան եւ ավնութեան զգացումը նոյնպէս պատահում է, որ լինեն իւելացի անելիք մի բան, մասնաւորապէս, երբ ի մտի ունենանք անսահման ապագան, ապա այդ դէպքում, այն կարող է էական սպրեցութիւն թողնել կողմերի վրայ, նրանց երեխաների վրայ, ինչպէս նաեւ նրանց թոռների վրայ: 1919 թուականի Վերսայի Դաշնագիրը այդ պարագաներից մէկն է: Եթէ այն ատելի մեծ մտահոգութիւն ցոյց տար պարտուողի նկատմամբ, ապա հաւանական է, որ Երկրորդ Համաշխարհային պատերազմը չպատահէր: Դարձեալ պարզում է, որ մենք կարիք ունենք՝ մեր տեսիլքը յուպէական զգացումներից այն կողմ տարածելու իմաստութեան: Դա պահանջում է Բրիտանական համբերութեան առաքինութիւնը:

Իմաստութեան եւ համբերութեան ներդրումով ոչինչ աւելի գործնական չի կարող լինել, քան Բրիստոնէտթինը, որ մի շարք յղացքներով, նրանց միջոցով մօտենալու համար անհատի բարոյական կեանքին կամ վարելու համար արտաքին մի քաղաքականութիւն: Ուստի այն սուտ յերիւրանքը, (կրկնում եւ, *սուտ յերիւրանքը*), ըստ որի՝ իբր Բրիստոնէտթինը լաւ գետին չէ, որի վրայ կարելի է կառուցել քաղաքականութիւն, իրապէս նշանակում է, որ մարդիկ բաւարար կերպով կրթելից ապաստ չեն՝ ինչպէս նաեւ իմաստուն եւ սիրով համբերատար չեն: Բրիստոնէտթինը մեծ չափերով չի կիրառում, ոչ թէ իր անկիրառելիութեան, անգործնական եւ անտրամաբանական լինելու պատճառով, այլ որովհետեւ այն պայքարում է խորը հաստատում քնական բնապիտանի դէմ, եւ այսպիսով՝ պահանջում է բարոյական արտակարգ ճիգ եւ քաջութիւն:

Իսկական քրիստոնէականները ստեղծում են իրենց սեփական Բրիստոսի ուսուցումը թէ մինչեւ աշխարհը չապաշխարհի, այն պիտի չդադարի Կանգունածային ցաւի թատերաբեմ լինելուց: Դարձեալ, ինչպէս Յիսուս ուսուցանում է, բոլոր այդ ցաւերը պայմանաւորում են մարդկային չարականութեամբ, որքանով որ նոյնիսկ հիւանդութեան կամ որեւէ արկածի հետեւանքով առաջացած մարդկային ցաւերը՝ տանելի են դառնում մարդկային կարեկցութեամբ: Գլխացաւի պարագային, կարող եւ վերցնել երկու ասպիրինի դեղահատ, բայց եթէ այն չօգնի, ասպա քեյ կ'օգնի այն, որ մէկը քո ձեռքը կարեքցանքով բռնի: Յաւը սփոփիչ է, երբ իմանում եւ, որ ուրիշ մէկը քո ցաւը կ'իսում է:

Բոլորի ապաշխարութիւնը միշտ կը մնայ մի հեռաւոր երայ: Այն աղօտ կերպով պատկերում է երկար եւ անծայրածիր ճանապարհի ծայրին: Այնուամենայնիւ, բարի քրիստոնէականները պէտք է իմաստութեամբ եւ համբերութեամբ շարունակեն աշխատել՝ ստեղծելու համար մի հասարակութիւն, որը անհատաբար եւ հաւաքաբար անկեղծ է Աստծո սիրոյն: Աւելի լաւ աշխարհը կարող է դառնալ թանձրացեալ մի կարելիութիւնը, միայն այն պարագայում, երբ արտաքին աշխարհը սրտաբաց ընդունի Սուրբ Երրորդութեանը, քանի որ յստակ է, որ ոչ մի հասարակական-քաղաքական կարգադրութիւն, ոչ նոյնիսկ ամերիկեան ժողովրդավարութիւնը, պիտի չիրագործուի այնքան ժամանակ, որքան որ պաշտօնեայ մարդիկ չեն լսում Տիրոջ ձայնը, որ սիրում է իր բոլոր արարածներին՝ ներառեալ աշխարհի բոլոր մարդկանց՝ անցեալ, ներկայ եւ գալիք սերունդներին, եւ բոլոր ֆիյիկական մարմերի մէջ, մեր շրջապատից մինչեւ մթնոլորտի վերին շերտը, որտեղ Նա տեղաւորել է նրանց: Մարդիկ, որոնք որեւէ մէկ վարչակարգում, նուիրում են իրենք իրենց աշխարհում իրական բարեպաշտութիւնը աւելացնելու ծրագրին, իրենց անձերը իմաստաւորում են գտնում՝ իբրեւ Աստծո կանակատարներ՝ Բրիստոսի մէջ իրենց վերաւերելով: Աշխարհում այս է նրանց լաւատեսութեան հիմը, որտեղ երջանկութիւնը մի պատահական ընդմիջում է՝ յաճախ պատահող ցաւայի միջադէպերի ժամանակագրութեան մէջ: Բոլոր մարդիկ չեն կարող սուրբ լինել, բայց այն սուրբերը, որոնք ներկայիս գործօն կերպով հնապանդում են Աստծո կանքին, պիտի աշխատեն ապագայի համար՝ առանց ձեւացնելու կամ անդրադառնալու, որ նրանք *կերտում* են այն: Նրանք ապագայի կերտումը թողնում են Տիեզերքի մարդասեր Իշխանին:

գ) Հակառակ որոշ աղանդների ուսուցումների, սխալ է աշխարհը բաժանել փրկուածների եւ չփրկուածների դասերի: Աւելին, կան ոմանք, ովքեր թէա արդէն կանգնած են բարոյականութեան բարձր աստիճանի վրայ, այդուհանդերձ քաջատեղեակ են իրենց մեղաւորութեան մասին եւ միշտ աշխատում են լինել մի փոքր աւելի արժանի՝ Բրիստոսի աշակերտ նկատուելու նախընտրութեան մէջ: Տասերորդ դարի Գրիգոր Նարեկացի հայ սուրբը, պատմութեան մէջ աչքի է ընկնում իբրեւ մի տիպար: Նա փարոս է նրանց համար, ովքեր իրենց անձերը նուիրել են մշտապէս Աստծո կատարելութեանը մերձենալու պահանջում գործին, որ իրենց

պաշտամունքի Նպատակն է: Անձի կողմից պարտադրուած այդ պարտականութիւնը, մղում է աշակերտին ամէն ջանք թափել եւ փնտռել յարմար մարդիկ, որոնք իր ընկերակցութեան կամ օգնութեան կարիքը կարող է ունենան:

Կրօնական սարահարթի ստորնակէտին, որտեղ ապրում են նախանձախնդիր մարդիկ, կան նաեւ անուանական քրիստոնէաներ, որոնք լիովին վայելում են իրենց ուղղամիտ լինելու իրողութիւնը: Որեւէ մէկին սպանե՛լ են կրանք: Ոչ: Բռնաբարե՛լ են որեւէ մէկին: Ոչ: Ինչ-որ բան գողացե՛լ են: Ոչ- շատ լաւ, թերեւս բացի այն պարագաներից, երբ դա օրէնքով արտօնուած է: Այս կարգի մարդիկ, կարող են լուրջ վերաբերուել Տաս Պատուիրաններին իրենց հասկացողութեան չափով: Նրանք, շատ յաճախ, հակուած են շնորհակալութիւն յայտնել Աստծուն, իրենց՝ մարդկային փանգումներից աւելի խելացի ծնուած լինելու համար եւ ցնձագին վայելել իրենց աշխատանքի պտուղը: Նրանք այս կերպ են վարում՝ կարծելով, թէ իրենց ապահովուած հարստութիւնը եւ պօրութիւնը իրենց տրուել է ոմն աստծու կողմից, իբր օրինութիւններ:

Այն ինչ, որ այս երկրորդ դասակարգի մարդիկ (տարբեր նրանցից, որոնք մշտապէս ձգտում են աւելի խորը սրբութեան) չեն հասկանում, հետեւեալն է. Մենք չէ, որ պատասխանատու ենք աշխարհում մեր գոյութեան համար, ոչ էլ մենք ենք որոշում մեր սեռը կամ մեր մարմնի եւ մտքի տաղանդները: Դրանք *պարպապէս* մեզ տրուել են: Ամէն պարագայի, քրիստոնէական մտածելակերպի շրջանակում դրանից կարելի է ելրակացնել, թէ այն բոլոր առաւելութիւնները, որ ի ծնէ մեզ տրուել են՝ Աստծու ձրի շնորհներն են: Բայց, առնուապէս, անպատշաճ է որ անհատը Աստծու շնորհները օգտագործի այնպիսի նպատակների համար, որ մեղանչի Աստծու դէմ, այսինքն՝ անձնակենսոյն եղանակով: Սա երախտագիտութեան տարրական առաքինութեան հարց է, որ մեզ տրուած էր շնորհները օգտագործենք ամբողջովին կամ նոյնիսկ նախընտրաբար ոչ միայն մեր բարեկեցութեան համար, այլ՝ մէջբերենք *Բիւզաւաթ Գիւսայից* մի դիպուկ համար. «աշխարհի հոգատարութեան» համար:

Վերջնական վերլուծութեամբ, կոտորակուած աշխարհ ունենալու պատճառը այն է, որ մարդկային փանգումների մտքերում եւ սրտերում սիրոյ եւ արդարութեան Աստուածը՝ Յիսուս Բրիստոսի Հայրը, որ երկնքում է, որ իրենց ետերի դռան մօտ է եւ թակում ու սպասում է, որ ներս հրախրուի, անտեսում է: Նա յաճախ անտեսում է ի նպաստ իրենց մտացածին աստծու, մի աստուած, որ պատուիրուած է իր հաւանութեան որոշմը դնելու իրենց ծառայող նախաձեռնութիւններին: Աշխարհի մասնատուած լինելու պատճառը այն է, որ շատ կռապաշտութիւններ աշխուժացնում են նրա բալում մշակոյթները: Այն որ այսպէս աշխուժացած աշխարհում սհաբեկչութիւն եւ ուրիշ արինալի ճակատումներ պիտի լինեն, դա ամբողջովին անխուսափելի է:

ՄԻՒՍ ԵՐԵՍԸ ՇՐՁԵԼԸ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆ Է՛ ՈՉ ԹԷ ԲԱՅԱՐՉԱԿ ՕՐԷՆՔ

Վերը նշուած երեք նկատառումներից յետոյ, մենք հիմա կարող ենք դիտարկել միւս երեսը դարձնելու հրահանգը: Ինչպէ՛ս է վարում ճշմարիտ քրիստոնէան, երբ հանդիպում է մի խմբի, որը սուլուել է աւելի ցած, քան մարդկային սրտի եւ մտքի ստորին սահմանը եւ դատում է անասնական չափանիշներով եւ վճռական է իր մտադրութիւնը ամէն գնով իրականացնելու մէջ, մինչեւ իսկ՝ սպանել անմեղ մարդկանց, կանանց եւ երեխաների:

Նախքան յառաջանալը, մենք պէտք է յիշենք, որ կեանքը Տիրոջ այգում լաւ է՝ դժուարութիւնը նուաճելու տեսակէտից: Բրիստոնէան իր կեանքը արժեքաւոր է համարում միայն այն չափով, որքանով այն առաջանում է դէպի նպատակը, որի համար Աստուած մարդացաւ եւ բնակուեց մեր մէջ: Առանց իր սեփական հասցէն

ունենալու, մարդացած Աստուածը շրջեց Երուսաղէմի փողոցներում, հնարաւորութիւններ ունենալով մարդկանց հաղորդելու իր անձնապիտոյթեան եւ բուժիչ ներկայութեան փորձառութիւնը: Նա իր տնօրինութեան վերջում միանգամայն յտակէցրեց, որ նա եկել է Իր միջոցով աշխարհը վերամիաորդելու Հայր Աստծու հետ: Այսպիսով՝ մարդեղացման նպատակը աստուածացումն է, այսինքն, որպէսի մարդ Աստուած դառնայ: Ուղղափառութեան առաջամարտիկ Մուրթ Աթանասի Մարդեղութեան մասին յայտնի գրքի խօսքերով՝ «Աստուած մարդացաւ, որպէսի մարդ Աստուածանայ»:

Այդ լինելով մարդեղութեան նպատակը, պարզ է դառնում, որ մարտահրաւերի կամ ճակատումի ժամանակ ճշմարիտ քրիստոնէայի իր անձին տալիք հարցադրումը պէտք է լինի հետեւեալը. ո՞ր պատասխանը՝ ներստեալ իմ (կամ մեր) մահը, առաւելապէս կը գոհացնի մարդացեալ Աստծուն: Հենց սա է քրիստոնէաների հիմնական մտահոգութիւնը: Միւս երեսը դարձնելու նիւթը, որպէս մէկ միջոց նպաստելու համար Աստծու նպատակի իրագործմանը, պէտք է ուսումնասիրուի այդ մտահոգութեան տեսանկիւնից: Այն որ այդպիսի մտահոգութեամբ մշակուած վարքագիծը, կենցաղը, քաջ եւ յանդուգն արարք է, արդէն պարզ էր նոյնիսկ Եսայի մարգարէին. «Տէրը բացել է իմ ականջները, եւ ես ապաստանք չեղայ, ոչ էլ ընդդիմացայ: Ես դարձրի թիկունքս նրանց, ովքեր հարուածեցին ինձ եւ իմ երեսը նրանց՝ ովքեր փեռտեցին իմ մօրուքը: Ես իմ երեսը չթաքցրի նախատիկներէից ու թօխից: Բանի որ Աստուած կ'օգնի ինձ, հետեւաբար ես պէտք չէ անաչեմ: Ես իմ երեսը դարձրի ինչպէս կարծր քար եւ ես զիտեմ, որ չեմ անաչելու»:

Նոր Կտակարանում, շրջանակը, որի մէջ միւս երեսը դարձնելու հրահանգը տրուած է, պահանջում է, որ մենք անբողջովին ձերբապատուած լինենք այն բաներից, որ մեր սեփականն ենք համարում եւ պատրաստակամութեամբ համակերպուենք նոյնիսկ վարթիչ ուժերի հրամանատարների կողմից տրուած հրամանին: Եթէ նա մեզ հրամայում է իր համար բեռ կրել մէկ կամ երկու մղոն տարածութիւն, ապա մենք պէտք չէ ընդդիմանանք: Չարժէ ընդդիմանալ (մտքբերենք Յիսուսի հետեւեալ խօսքը).

«Լսել էք՝ ինչ ասուեց. «Աչքի փոխարէն՝ աչք եւ առամի փոխարէն՝ առամ»: Իսկ ես ձեզ ասում եմ. Չարին հսկառակ չկանգնել, իսկ եթէ մէկը քո աջ ծնօտին ապրակ տայ, նրան միւսն էլ դարձրու: Եւ եթէ մէկը կամենայ քեզ բռնադատել եւ քո շապիկն առնել, նրան քո բաճկոնն էլ թող: Եւ եթէ մէկը քեզ հարկադրի մէկ մղոն ճանապարհ անցնել, նրա հետ երկու էլ գնայ: Ի՞նչ նրան, որ քեզնից ինչորում է. եւ ով կամենում է քեզնից փոխ առնել, երես մի՛ դարձրու նրանից»:

Ունեցումածքից չկառչելու նիւթը մասնաշաղկապ է Բրիստոնէութեանը: Բուրդայական ուսուցանող շինիչ գրականութեան մէջ կայ մի վանականի պատմութիւն, որը անապատում հանդիպում է մի առիծի: Առիծը ինչորում է վանականի ձեռքը: Վանականը, առանց երկնոսանքի ձեռքը մեկնում է կենդանուն: Գլխաւոր կէտը այն է, որ անհատի մարմինը ինքնին սեփականութիւն է եւ բոլորը պէտք է իրենց ուշադրութեան կենտրոնում պահեն այն, այսինքն՝ անհատի նիւթականութիւնը, հետաքրքրութեան կիպակէտը: Նա, ով իր անձը սահմանում է իր ունեցումածքի հետ կապուած, անկանխելի տարածութիւն է դնում իր եւ Դրախտային թագաւորութեան միջեւ:

Բայց մէկը կարող է ասել, նայիր մի պահ ոչ թէ տուողին, այլ՝ վերցնողին: Իսկ ի՞նչ կը լինի, եթէ թիքնոց վերցնելուց յետոյ, նա ուրի նստել իմ կօշիկները եւ յետոյ իմ պարենը: Արդեօ՞ք կայ դրան սահման: Եւ ինչու՞ ես պիտի գոհացնեմ մեղքը, այս պարագային՝ ազատութեան մեղքը: Եթէ ես անձնապէս պէտք չէ ազատ լինեմ, ինչու՞ հանդուրժեմ ուրիշի ազատութիւնը: Արդեօք հնարաւոր է, որ մէկը զիտակցական ընտրութեամբ լինի ապնիւ եւ յօժարական թոյլ տայ՝ մէկ ուրիշին անարդար լինել:

Կան արդարացի հարցադրումներ, բայց դրանք, որոշ իմաստով, անտեղի են: Բոլորի համար պատշաճ դասը այն է, որ չարը վերջանում է, երբ նրա պատճառները վերացած են, երբ դրանք բախում են Խաչեալ Աստծու ոչ-նախապարձակ, այլ սիրող վարմունքի հետ՝ խաչի վրայ: Դա տարածում է ամբողջ ժամանակի տեսողության վրայ, մինչ միս երեսը դարձնելը մեկի կամեցողության յայտանիշն է ջանասեր գործավար լինելու, ծառայելու փրկարար խաչի անընդհատ ներգործությանը: Ինչպես արդեն ակնարկեցինք, միս երեսը դարձնելը սա դարձնում է նպատակի միջոց եւ դա նշանակալիցորեն փոխում է իր կարգավիճակը: Դա դարձնում է այն ոչ թե բացարձակ օրէնք, այլ ռապնավարութիւն՝ ուրիշների կարգին: Իր թիկնոցն էլ պատրաստակամօրէն տալու նրան, ով վերցնում է իր վերարկուն եւ կանուխն իր միս երեսը դարձնելու միջեւ հասարակաց գետինը այս է. երկու դէպքում էլ անողը նա չէ, այլ՝ Բրիստոս, որ ապրում է իր մէջ: Անկասկած, Յիսուս նկատի ուներ ճիշտ այն, ինչ որ ասաց, եւ ասաց, ինչ նկատի ուներ, երբ նա հրահանգեց իր իսկական հետեւորդներին շղիանաղով չարին եւ դարձնել միս երեսը: սակայն եւ այնպէս, գաղափարը դադարում է բացարձակ պարտադրեցնող լինելուց, երբ դնում ենք այդ իր Նոր Կտակարանի առաւել մեծ բովանդակութեան մէջ:

### ՍԻՒՍ ԵՐԵՍԸ ՇՐՋԵԼԸ. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՇՐՋԱԳԾԻ ՄԷՋ

Այս շրջագծի մէջ հարկ եղած կերպով պէտք է նկատի առնենք այն իրողութիւնը, որ Յիսուս հանդուրժողութեան առաքիներեանը սահմաններ է դնում: Իր սեփական հանդուրժողութիւնը հասաւ իր սահմանին եւ տեղի տուեց ֆիլիքական հակադեցութեան, երբ նա տեսաւ, որ կրօնն ու կրօնական ծիսակատարութիւնները շահագործում են, կրօնական հաստատութիւնները բարեպաշտութեան փոխարէն՝ ուրիշ նպատակների համար են օգտագործում: Բանի որ հանդուրժողութիւնը միշտ պէտք է տեղի տայ խաղաղութեան եւ սիրոյ մէջ մնալու անհրաժեշտութեանը, այդ պատճառով առաքիներեանները պէտք է ենթարկուեն վերաբեւոյնան, երբ դրանք դրում են Աւետարանի շրջագծի մէջ: Վերցնենք քաջութիւնը: Դրա կարիքը կարող ենք զգալ պաշտանելու մեր անձը սպառնացող խելագար վերաբերմունքից կամ առանց դրդապատճառի նախապարձակ գործողութիւններից, որն սակայն պէտք չէ վերածուի վրէժից դրդուած դաժանութեան:

Մենք պէտք է հանդուրժողութեան վրայ դրուած այս սահմանափակումը ի մտի ունենանք, երբ նայում ենք Յիսուսին՝ իր աշակերտներին աշխարհի տարբեր ծայրերը ուղարկելիս՝ Իր գործը շարունակելու համար: Նա ասում է նրանց. «Ես ուղարկում եմ ձեզ իբրեւ գառներ գայլերի մէջ, ուստի եղէք խորագետ՝ օձերի պէս, եւ միամիտ՝ աղանիների պէս»: Սա, միս երեսն էլ դարձնելու հրահանգը դնում է ատելի լաւ լոյսի տակ: Սա անվերապահօրէն հնազանդուելու մի հրահանգն է: Իբրեւ հանդուրժողութեան մի տեսակ, միս երեսն էլ դարձնելու հրահանգը, ունի իր սահմանը: Դա ցոյց են տալիս նաեւ Յիսուսի միս հրահանգները: Եթէ անհրաժեշտ է, որ քրիստոնէաները որոշ չափապանցութիւնների պարագային լինեն անհանդուրժող, եւ եթէ անհրաժեշտ է, որ նրանք օձերի պէս խորագետ լինեն, ապա միս երեսը դարձնելը, իմաստուն քրիստոնէայի կողմից մի քանի հաւանական կիրառուելիք ռապնավարութիւններից մէկն է, Բրիստոնէական ծրագրերը իրագործելու համար: Համոզուած Բրիստոնէան, ուրիշ բան չի կարող լինել, եթէ ոչ միսիոնար, քանի որ, ինչպէս նախապէս մատնանշուեց, նա, որ ընթրում է ճշմարտութիւնը, անխուսափելիօրէն իր ընթրած ճշմարտութիւնը կը յայտարարի: Առաքելութիւնը կայանում է Աւետարանի սահմանների տարածման մէջ, ինչպէս նաեւ փրկութեան խոստումի յայտարարումը՝ քանի ու գործով իբր մի քրուցակից, խօսող եւ գրող, եւ, առհասարակ, իբրեւ մի վկայ: Այս է առաջադրուած նպատակը: Միս երեսը դարձնելը, այդ նպատակին հասնելու

միջոցներից մեկն է, մի միջոց, որը կարելի է անտեսել ուրիշ որոշ միջոցների օգտին, եթե պարագաները արդարացնեն: Բայց դա չի կարող փոխարինուել որեւէ ուրիշ միջոցով, քանի որ միջոցն էլ իր հերթին պետք է համապատասխանի Նոր Կտակարանի ոգուն: Օրինակ՝ սպանելը նախընտրությունն է, մասնաորաբար, երբ այն շարունակուող անխուսափելի պայքարի լուծման վերջին միջոցը է:

Մենք գիտենք սպանության դեմ եղած օրենքի բացառության օգտին ի նպաստ եղած փաստարկությունը. երբ Ա-ն սպառնում է Բ-ի կեանքին եւ կացութիւնը այնպիսին է, որ կա՛ւ Ա-ն եւ կաւ Բ-ն անխուսափելիօրէն մահանայ, եւ եթէ բուն ինքնապաշտանութեան համար Բ-ն սպանի Ա-ին, ապա Բ-ի աննեղությունը անառարկելի է, որովհետեւ տրամաբանական է համաձայնուել այն տեսակետին, թէ առանց Ա-ի հասարակությունը ստելի ցանկալի կացութեան մէջ կը լինի, որը պարզապէս նախայարձակ լինելով, ստելի չարիք էր: Սա մի խելամիտ փաստարկ է: Բայց սա այդքան համոզիչ փաստակ չէ, որ թոյլ տայ արհամարհելու նախանձախնդիր Բրիտանացիին, որը նախընտրում է իր Տիրոջը հետեւել մինչեւ Գողգոթայ: Երբ Աստուած մարդացաւ, Նա «կամրջեց» (ինչպէս Յակոբի երապի մէջ) Իր եւ աշխարհի մարդկանց միջեւ եղած հեռաւորությունը, դրա հետեւանքով էլ անասինան արժէք որեց մարդկանց կեանքի վրայ: Եւ այդ անասինան արժէքի խախտումը, կը նկատուի իբրեւ ամենամեծ անարգանքը: Մակայն եւ այնպէս, աշխարհ կարող է ստել, թէ անձի կեանքը, որին սպառնում են, այն նոյնպէս անասինան արժէք ունի, ուստի պետք չէ օգտագործուի կամ ոչնչացուի նախայարձակի կողմից, վերջինիս սատանայական նպատակների համար: *Աշխարհը* իրօք կարող է տրամաբանօրէն եւ թոյլտութեամբ այդպէս ստել: Արդեօ՞ք *եկեղեցին* էլ նոյն ձեւով պետք է մտածի: Մի փոքր տարակուսելի է:

Միս երեսը դարձնելը, պետք չէ իբրեւ կրօնական շպար գործածուի՝ թաքցնելու համար վախկոտությունը եւ վայրագ տուփանքը: Շատ պատմական դէպքեր ցոյց են տալիս այս իբրեւ իրողություն: Նոր Կտակարանը մեծ դեր է խաղացել Գանդիի քաղաքականութեան ձեւաորման մէջ: Նա յարթեց Բրիտանական Կայսրութեանը առանց մի փանփուշտ կրակելու: Սուալինը, երբ տեղեկացաւ պապի տուած անհաւանութեան մասին՝ իր ծրագրերի վերաբերեալ, արհամարհանքով հարցրեց. «Նա քանի՞ պորագունդ ունի»: Սուալինը շատ պիտի պարսմանար, եթէ իմանար, որ պապը մեծ դեր խաղաց Սովետական Միութեան փլուզման գործում՝ ոչ մի պորագունդ չունենալով իր տրամադրութեան տակ: Միացեալ Նահանգներում ոչ մէկը Մարտին Լուտեր Բինգի չափ չնպաստեց ցեղային խտրականությունը վերացնելու գործին: Մեմֆիսի իր հռչակարո ճառից առաջ, մի քանգումային հանդիպման ժամանակ, Բինգը այսպէս ասաց. «Տէր, այստեղ՝ Մոնոգամերում, մեր սպառնութեան պայքարի պատճառով յուսամ ոչ մէկը չի մահանայ: Անշուշտ եւ չեմ ուզում մահանայ: Բայց եթէ մէկը մահանայ, թող որ այն եւ լինեմ»: Այս ցաւատանջ աղաղակի մէջ Բինգը ցոյց է տալիս Խաչի կեանքի իր խորը գիտակցությունը (եւ ընդունումը):

Ոչ մի քաղաքական գործիչ աւելի խորը կերպով չէր կարող ներշնչուել Նոր Ուխտով, քան Բինգը, որից աւելի յաջող քաղաքական գործիչ հապուաղէպ կը գտնուի: Բինգի քաղաքականությունը՝ համբերութեան եւ բոլորին ընդունելու քաղաքականությունն էր: Բինգը գիտէր, որ իր ծրագիրը ոչ պակաս քան մի քանի տարի, նոյնիսկ տասնամեակներ պիտի չյաջողուի: Եւ այս ծրագրի ազդակներից մէկը պիտի հանդիսանար իր թշնամու սեփական փրկությունը: Վերջ տալով ցեղային խտրականութեանը, սպիտակ մարդը՝ ինքը, մարդկութեան բարձր մակարդակին կը հասնի: Գանդին, Յովհաննէս Պողոս II-ը եւ Բինգը ընդդիմացան չարին: Արդեօ՞ք նրանք Յիսուսի արգելիչ հրահանգին ընդդիմացան: Այս հարցնանը հաստատական պատասխան պետք չէ տալ: Օձին բնորոշ իմաստությունը պահանջում է, որ անդիմադրողականութեան սկզբունքը չափաորուի (բայց երբեք չնոռացուի) եւ կախում

ունենայ պարագաներից, մինչ մեր միջից չարի ոչ բռնի ուժով հեռացունը, ինքնին պարտաւորութիւն է: Գանդին, Զինգի Լանն, (որը վերջինիս ներշնչման աղբիւրն է եղել), իր պահանջների օրինականութեան համար ունէր կրօնական եւ բարոյական հաստատուն հիմքեր: Նա նաեւ ժամանակին գիտէր, որ իր պահանջներին չեն ընդառաջի՝ խմբագրին նամակներ գրելով, կամ քաղաքաւարի կերպով խնդրագրեր ներկայացնելով Փոխարքային: Մէկը, որ ատելի խելացի ու զգայուն չէ, քան Գանդին, բարոյական մակարդակների նկատմամբ կարող էր փորձութեան ենթարկուել եւ գիտակցաբար իր յուսախաբութիւնը պոռթկալ, արիւնտու եւ անմիջական ահաբեկչական գործողութիւնների մէջ մտնելով եւ ուրիշներին էլ նոյն կոտի մէջ ներքաշել:

Երբ մենք նայում ենք Բրիտանական հակապրեցուրթեանը՝ Հնդկական խռովութիւնների դէմ, Գալիլիացիների հանդէպ Պիղատոսի հակապրեցութիւնը մեր միտքն է զայիս: Պիղատոսը մտածեց, թէ ճնշելով ընդդիմութիւնը Հռոմէական Կայսրութեան ապագան ապահով կը լինի: Սովորաբար, հփօր եւ իրենք իրենց արդար համարող պետութիւնները եւ ուրիշ համայնքները, օգտագործում են ամենատարածած այս ռազմավարութիւնը, սակայն վերջ ի վերջոյ մշտապէս հասկացուել է որ դա սխալ է: Հարցը, որ Պիղատոսը ատելի շահաւէտ կերպով կարող էր ինքն իրեն հարցնել, հետեւեալն է. Այս Գալիլիացիները, «փուշ են իմ կողմն», ի՞նչ եղանակով կարող են բարեխաղ կամ բարեփոխել զոյալիճակը՝ բաւարարելով թէ՛ ինձ, եւ թէ՛ պահելով նրանց խաղաղ եւ մշակոյթով ատելի հարուստ հասարակութիւն: Դա կը լինէր ատելի լաւ, ատելի մարդկային, նոյնիսկ ատելի խելացի քաղաքականութիւն, թէ՛ իր տիրակալութեան ընթացքում եւ թէ՛ ընդհանրապէս:

ՊԱՏԵՐԱԶՍ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՌԻԺԻ ՄԻԶՈՅՈՎ

Ինչու \* քաղաքական առաջնորդները միշտ չեն որդեգրում ատելի խելացի, բոլորին ներառելու քաղաքականութիւնը՝ *մերի*, քան թէ *իմ* շահերի քաղաքականութիւնը: Նրանք ձախողում են այդպէս անել շատ պաճառների բերումով, որոնցից մի քանիսն էլ տեսողութիւնից թաքնուած են: Այդպիսի թաքնուած պատճառներից մէկն այն է, որ հակառակ պատերազմի դէմ մեր ամբողջ ձեւական բողոքի ցոյցերի, մենք իրականում բնականօրէն պատերազմի ցանկութիւն ունենք:

Բաւական բացայայտ է դառնում, որ եթէ մարդիկ պատերազմ չուզեն, ապա պատերազմներ չեն լինի: Սակայն, ազգի կեանքի ընթացքում ժամանակ է զայիս, երբ երկրի առաջնորդները՝ առիթը ներկայանալիս, անկեղծ ժողովրդային աջակցութեանը որոշում են, որ երկրի գլխաւորապէս ատելի շահել երիտասարդները պէտք է մահանան, եթէ ազգը, իբրեւ մի ամբողջութիւն, խուսափելու է այնպիսի պայմաններից, որոնց տակ ապրելը, նրանք ենթադրում են, անտանելի: Սա է պատերազմի հանդէպ մեր ունեցած ատելութիւն-սէր դիրքորոշման պատճառներից մէկը: Պատերազմ, որն ընդհանրապէս նկատում է մի բան, որից պէտք է խուսափել, յանկարծ դառնում է միակ տրանսպարանական ընտրութիւնն ու անելիքը: Նոյնիսկ եթէ մենք հաւատում ենք, որ մենք տկար խումբն ենք, յայտարարում ենք, թէ Աստուած մեր թիկունքին է, եւ թէ Աստուած մեզ կ'օգնի, որ յաղթենք: Մենք սիրում ենք ռազմական երգի վարկի տակ քայլել դէպի առաջ: Մենք սիրում ենք շքեղ ցոյցեր, շքահանդէսներ, տարեդարձներ եւ հեծեալների շքախումբ: Զինուորական համապետի մէջ ինչ որ հրապուրիչ բան կայ, մասնաւորապէս, երբ այն վարդարում է շքանշաններով: Այն հրապուրանք է տալիս այդ համապետուր կրողներին - նա ամբողջապէս պատրաստ է մահանալ կամ թոյլ տալ, որ իր մարդիկ մեր պաշտպանութեան եւ ապահովութեան համար մահանան: Մեր սրտերը հպարտութեամբ են լցում պատերազմից առաջացած սխրագործութիւնների պատմութիւններից: Ընդհանուր նպատակից սթափուած, մեր բոլոր ներքին,

բաժանարար վէճերը մի կողմ են դրում, եւ այժմ մենք, մեզանից իրաքանչիւրը անհատապէս, մեծարուած ապգի հետ, փառաւորուած ինչպէս ապգն ինքնին փառաւորում է իր սրբապան նախաակներով: Այդ նախաակը գերակայ է դառնում: Մենք հանդուրժում ենք ճշմարտութեան եւ կեղծիքի միջեւ եղող անորոշ յայտարարութիւնները այնքան ժամանակ, որքան որ դրանք նպաստում են մեր թշնամու պարտութեանը կամ նուաստացումին: Մեր յանձն առած միասնական Կոհողութիւնները ուժեղացնում են մեր պատկանելութեան զգացումը: Մենք հպարտանում ենք հերկույեւեան ջանքերի մեր բաժինով, որոնք ուղղուած են անաղարտ պահելու այն խորհրդանիշների պատիւը, որոնց համար մեր հաւաքականութիւնը գոյութիւն ունի, ներշնչուած այն հաւաստիացմամբ, որ մենք այնտեղ ենք՝ մեր համայնքի գոյատեւման համար, եւ մեր գիտութեան եւ արժէքների համար, որոնք բնութագրում են մեր մշակոյթը: Մենք սիրում ենք դիմաւորել յաղթանակից վերադարձող փնտրողներին՝ գունաւոր թղթիկներ շաղ տալով նրանց վրայ եւ գրկախառնուել նրանց հետ: Մենք լուրջ եւ պատշաճ կերպով ցաւում ենք, երբ զայիս է Կոհուածներին յարգանքի տուրք մատուցելու պահը: Բեւեռախորթակի կենտրոնական դիրքը գրաւող անձը կը ճառի. «Նրանք ի վոր տեղը չնահացան», եւ մենք յարգալից հաւանութիւն կը յայտնենք մեր գլխի դրական շարժումով: Շեփոյի սզալի ձայնի տակ, վիշտը եւ հպարտութիւնը դժուարութեամբ միախառնում են մեր էութեան մէջ ինչ որ խորը մի տեղ: Մեզանից ոմանք չեն կարող մեղաւոր չզգալ մեր երախտագիտութեան համար, որ մեր որդին, Աստուծո շնորհիս տուն վերադարձաւ ողջ, եւ ոչ թէ հարեանի որդու նման՝ դազաղով: Թէպէտ մենք իրօք հպարտանում ենք այդ պահին յաղթական վերադարձի համար: Մեզանից միայն ոմանք պիտի յիշուեն մի դար յետոյ: Որոշ իմաստով, երկրի առաջնորդին, մէկ կամ երկու գեներալներին պիտի տրուի ամբողջ վարկը եւ պատիւը: Յամենայնդէպս, *մեր* մէջ այնպիսի զգացում է առաջանում, որ պատմութեան այս էջը մենք պատրաստեցինք, որի մասին մեր երեխաները եւ *նրանց* երեխաները պիտի կարդան ապագային:

Այս բոլորը շատ կորովի արարքներ են, շատ ուրախութիւն պատճառող: Արդեօք Յիսուս այդ ամէնից ինչ-որ մաս կամ ամբողջը սիրում է: Այդ ուղղութիւնը մատնանշող, ոչ մի ապացոյց չկայ:

«Խաղաղութիւն ուժի միջոցով» խօսքը պաշտպանող տեսակէտը, կապուած է պատերազմի հանդէպ մեր ունեցած ստեղծութիւն-սէր դիրքորոշմանը: Անկասկած մենք ուրում ենք խաղաղութիւն, բայց մենք լաւ ենք զգում, երբ մինչեւ ատաները փնտւած ենք - որպէսզի միշտ պատրաստ լինենք անհրաժեշտութեան պարագային: Իրականում, «Խաղաղութիւն ուժի միջոցով» խօսքը, ինքն իրեն հակասող արտայայտութիւն է: Դա լսողներին ասում է, թէ մենք մտադիր ենք բաւական ուժեղ լինել, որպէսզի մեզ չխանգարեն: Թէ՛ մենք մեր ուրած կերպով պէտք է վարուենք եւ միւսներն էլ պէտք է հանդուրժեն մեզ, իմանալով հանդերձ, որ փնտւած ճակատումի ընթացքին իրենք կը կործանուեն: Խաղաղութիւնը՝ Բրիտանութեան համար եւս առաջնորդող սկզբունք է, բայց խօսքը աշխարհիկ ուժի հետեւանքով առաջացած խաղաղութեան մասին չէ: Բրիտանութեան փնտրում է այն խաղաղութիւնը, որը զայիս է Խաչի միջոցով: Բարի Բրիտանութեան *աշխարհում* ապրում է գործունէայ կերպով, առանց *աշխարհիկ* լինելու: Նա աշխատում է ժամանակի եւ տարածութեան սահմանափակումների մէջ, եւ սպասում է Նրան, Որը նորից պէտք է գայ իր ընտրած ժամանակին: Բանի որ Նա ապրեց մեր հետ եւ մահացաւ մեզ համար, սովորեցրեց մեզ, եւ պատասխանեց մեր հարցերին սրանից առաջ, մենք իրապէս ենք իր նախընտրութիւններին մոտեւորէն, եւ մենք պէտք է իմանանք ինչպէս պատրաստուենք Իր երկրորդ զալտեանը: Եթէ չապաշխարէք, դուք կը կործանուէք:

Անգլերէնից թարգմանեց՝  
ՅՈՒՆԱՆ ՍԱՐԿԱՒԱԳ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

## Շ. Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆԸ ՈՒՍՈՒՑԻՉ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

### Ընդհանուր ուրուագիծ

Տասնիններորդ դարի կեսերից արեւմտահայ իրականութեան մէջ լայն քափ է առնում կրթական, լուսաւորական շարժումը, որն իր շարունակութիւնն է գտնում նաեւ հետագայ տասնամեակներին արդէն սփիւռեան պայմաններում: Աւելի ուշ, հայ մանկավարժական մտքի կարկառուն ներկայացուցիչների կողմից, յառաջ տանելով հոր՝ Ռէթէոս Պերպերեանի կրթական գործը, իր մնայուն տեղն է գրաւում եւ Շահան Պերպերեանը, մասնաւորապէս որպէս իմաստասիրական գիտութիւնների դասախօս, ժողովրդային լուսաւորիչ: Ան երոպայում զարգացող նոր իմաստասիրական մտքի առաջատար մտածողների թարգմանը հայրենի եզերում: Շ. Պերպերեան Փարիզի Սորբոնի համալսարանում եւ Գոլէթ Տը Ֆրանսում ունկնդրել էր Անրի Բերկսոնին, Էմիլ Դիւրկհէյմին, Փիեռ Ժանէին, Ժորժ Տիւ Մանին եւ ամբարել հսկայական գիտական պաշար - իր ամբողջ կեանքը նուիրել լուսաւորչական ու մանկավարժական աշխատանքի: Յայտնի է թէ գիտնականը անխիճ էր քան զուտ մանկավարժը - հոգեբան, երաժիշտ, հրապարակախօս, բեմադրիչ, երգահան, գեղագէտ, արուեստաբան, իմաստասէր, իմաստասիրութեան պատմաբան-ասպարէզներ որ առանձին-առանձին մի մարդու ամբողջ կեանք կարող էին լցնել: Բազմա-հմուտ մասնագէտ էր, մեծ մտածող. թեւ նրա սրտին ու հոգիին բոլորովին մօտ էր իմաստասիրութիւնը, սակայն Շահան Պերպերեանը առանկապէս զբաղուեց ուսուցչութեամբ, թերեւս կեանքի ապրուստ հայթայթելու ստիպողականութեամբ: Կենցաղային դժուարութիւնները, ընտանիքի հոգսը, ապա սիրասուն որդիի արկածահար կորուստը, ի վերջոյ անշարժութեան մատնեցին գիտնականին: Կեանքի ողիսականը որ սկսել էր Պոլիս՝ 1906-1924, Կահիրէ՝ 1924-1934, Երուսաղէմ՝ 1934-1944, Անթիլիաս՝ 1944-1956, ողբերգականօրէն ու անժամանակ աւարտուեց Փարիզի մէջ: Շ. Պերպերեանի կեանքն ու գործը ներդաշնակ չեղան, ինչպէս հետագայում ասիտսանք պիտի յայտնեն իմաստասէրի աշակերտները. նրան չյաջողուեց երկնել գէթ մէկ կոթողային գործ, իմաստասիրական ծաւալուն աշխատութիւն՝ իր կարողութիւններուն համազօր: «Շահան Պերպերեան ուներ բոլոր տունայնները - իմաստասիրական հզօր միտք, խոր պատրաստութիւն ու լայն հմտութիւն, հայեցողական խառնուածք ու բնութիւն, արուեստի նուրբ զգայարանք ու նոյնպէս լայն հմտութիւն-իմաստասիրական կոթողական գործեր ստեղծելու. դժբախտաբար, սակայն, չստեղծագործեց, հակառակ իրեն եղած յանախակի խնդրանքներուն՝ յատկապէս այն օրերուն Դպրեվանքի Տեսուչ Դերենիկ Եպիսկոպոսին կողմէ»(1), ցաւով գրում է Արտաւազ Արքեպս. Թոթոեանը: Սակայն յստակ է թէ կոթողային գործերը խնդրանքով կամ պատուէրով չեն ստեղծուում, այնուամենայնիւ մտաւորականը արարեց մի կոթողային գործ՝ - հենց իր քովանդակ կեանքը: Իսկ նրա աշակերտները իրենք դարձան գիտնականի իմաստասիրական երկերը: Շ. Պերպերեան հասցրեց իմաստասիրական ճաշակով եւ հմտութիւններով սաներ՝ եկեղեցականներ, ակնառու ուսուցիչներ, գրագէտներ, արուեստի ու հասարակական գործիչներ՝ Մատթէոս Զարիֆեան, Շահան Շահնուր, Ժագ Յակոբեան, Գարեգին Ա. Ամեն. Հայոց Կաթողիկոս, Թորգոմ Մանուկեան՝ Երուսաղէմի Հայոց Պատրիարք եւ քազմաթիւ ուրիշներ, որոնց յիշել ենք տարբեր առիթով: Գլխաւորաբար վերոյիշեալ երախտագէտ աշակերտների եւ մի շարք նուիրեալների ջանքերով կորուստից փրկուել, խմբագրուել եւ մեզ են հասել Շ. Պերպերեանի դասախօսութիւնները, հայ մամուլի մէջ ցրուած, օրինակ՝ «Ոստան», «Ձուարթնոց», «Բարձրավանք», «Սիոն», «Հասկ»,

«Անի», «Ծիածան», տարբեր բնոյթի եւ բովանդակութեան յօդուածները: Վերոյիշեալ աղբիւրները եւ ի մասնաւորի հեղինակի աշակերտների իսկ կողմից նօթագրուած «Իմաստասիրութեան պատմութիւն», «Քննազանցութիւն» դասագիրքերը հիմք են ծառայել մեզ՝ վեր հանելու ուսուցիչ Շ. Պէրպլերեանը որպէս իմաստասէր: Միեւնոյն ժամանակ նշեմք որ վերոյիշեալ եւ միւս դասագիրքերը պատրաստուած աշակերտների սղագրութիւններով՝ ունեն իրենց պակասութիւններն ու թերութիւնները. նախ չլինելով Պէրպլերեանի գրչի արդիւնքը՝ կրած են ռեալիստ եւ տրամաբանական կառոյցների փոփոխութիւններ: Ուստի մենք ջանացել ենք կարելի չափով անջատել հեղինակը նօթագրողից:

Պէրպլերեան իմաստասէրը գրասենեակային գիտնական կամ ուսուցիչ չէր, հակառակ իր ինքնամփոփ նկարագրին, նա եղաւ ժողովրդային ուսուցիչ: Առաջիններից մէկը որ իր հարուստ կենսափորձով եւ մասնագիտական գիտելիքներով փորձեց ժամանակին միայն ընտրեալներին հասու «Իմաստասիրութիւն» առարկան դարձնել ժողովուրդի տարբեր խաւերի սեփականութիւնը: Ուր էլ որ բախտի բերումով գտնուեց Շ. Պէրպլերեանը՝ խանդավառութեամբ ծաւալեց մշակութային-կրթական գործունէութիւն, առաջին պլան մղելով առաջադէմ իմաստասիրական գաղափարների տարածումը լայն մասսաների շրջանակում: Գիտնականը, թէ՛ խօսելով եւ թէ՛ գրելով ամբողջապէս ծառայել է իր առջեւ դրուած վեհ նպատակին ու պէտք է ասել արդիւնքի հասել է:

Շահան ուսուցիչը անբաժան է Շահան իմաստասէրից, գեղագետից, մարդո՛ւց. ինչը փոքրիշատէ լուսարանել եւ ներկայացրել ենք մեր նախորդ յօդուածներով: Մասնաւորապէս պարզեցինք, որ հեղինակը ունի ինքնուրոյն մտածողութիւն եւ իմաստասիրական դիրք: Ժամանակին հայրենիքում կուսակցական այլամերժ ու անհաշտ մօտեցումը Պէրպլերեանին որակեցին սուկ Բերկսոնական իմաստասիրութեան հետեւորդ, բուրժուազիայի հլու սպասարկող, որ նոր խօսք գրեթէ չունի եւ անիրաւացիօրէն նրա իմաստասիրութիւնը թողեցին լուսանցում: «Նա միայն կրկնում է Բերկսոնին» յայտարարում է անուանի գիտնական Հ. Գարրիւեանը, (2) (Հայ Փիլիսոփայական մտքի պատմութիւն, հատոր 4-րդ, Երեւան 1965, էջ 401), որին կարելի է չհամաձայնել, քանզի կրկնել՝ չի նշանակում տակաւին կապել, միւս կողմից նշմարիտ է թէ ցանկացած շարունակող, հետեւորդ աշակերտ նաեւ ինչ որ չափով իր ուսուցչի ժխտողն է, ուրեմն նոր խօսք ասող է: Ինչեւէ, միւս բեւեռում՝ սփիւտում, իրենց «ասպարէզով» ոչ իմաստասէր աշակերտները հակառակ ազնիւ ջանքերի, կոյր հիացումից այնկողմ չկարողացան անցնել, պարզելու համար գիտնականի իրական եւ ինքնուրոյն դէմքը, իմաստասիրական հայեացքները՝ որն իրականութեան մէջ քաւականին հետաքրքրական է, թէպէտ եւ խնուած: Իմաստասէրը մնաց երկու հակառակ բեւեռների միջեւ: Իրականութեան մէջ Պէրպլերեանի մօտ իմաստասիրական ուղղութիւնները այնքան ներդաշնակ են միաձուլուած, որ անհնար է նրան խստօրէն գատորոշելով ներկայացնել իրրեւ ուրիշ դպրոցի հետեւորդ, անգամ գաղափարապաշտ՝ իդեալիստ կամ նիւթապաշտ մտածող: Իսկ ինչ վերաբերում է Բերկսոնեան դպրոցի ներկայացուցիչ լինել-չլինելուն, ապա այս դպրոցը որպէս այդպիսին ամբողջութեան մէջ չի կայացել, որպէսզի Պէրպլերեանը լինէր նրա հետեւորդը: Այո, Պէրպլերեանը, հրեայ՝ ծագումով ֆրանսացի իմաստասէր Անրի Բերկսոնի (1859-1941) աշակերտն էր, նրա իմաստասիրական հայեացքների առաջին ներկայացուցիչը եւ ջատագովը արեւմտահայ՝ թերեւս եւ ընդհանրապէս հայ իրականութեան մէջ, բայց միևնոյն ժամանակ նորովի մեկնարանն էր, թարգմանը. միայն «երկու ժամանակներ»ը զուտ իմաստասիրական աշխատութիւնը քաւարար է փաստելու համար այս կարծիքը: Ժամանակի առաջատար մտածողի գաղափարների լուսարանումը, տարածումը ինքնին նշանակալի երեւոյթ է, արժանիք, առաւել եւս երբ այն կը ներկայանայ տարբեր մեկնութեամբ եւ մօտեցումով, ինչ որ արեց Պէրպլերեանը: Նրա

հիմնական արժանիքներից մեկն այն է որ ինք՝ Անրի Բերկտնի իմաստասիրութեան մարդասիրական, լուստեսական գաղափարները քերում է մեր ժողովուրդին մի այնպիսի ծանրագոյն շրջանում, երբ հայ հոգիների մէջ կարծես երկրային կեանքը վերածուած էր դժոխքի, իրականութիւնը արժէգրկուած, ու տիրում էր համատարած յոռետեսութիւնն ու յուսալուծիւնը: Պէրպլերեանը հայ մարդու հայեացքը փորձեց ուղղել դէպի հոգեւորը, անանը, կոչեց նորից ստեղծելու ու վերաստեղծելու եւ մանաւանդ սկսելով հոգիների աշխարհից: Նա կենսաբեր իմաստասէր է. գաղափարակիրը յանրժութեան, անմահութեան, ազատ կամքի, գործելու եւ ստեղծագործելու, որոնք այդ ժամանակահատուածում հաց ու ջրի նման անհրաժեշտ էին մեր ժողովուրդին: Հայ իմաստասէրը մեր տարաբախտ ժողովրդի մէջ նորից բորբոքեց ապրելու եւ արարելու կեանքի կրակը: Որովհետեւ իմաստասիրութիւնը նրա համար գոտ տեսութիւն չէր, պատմական թուականներ ու անձեր չէր, այլ՝ առ օրեայ ապրում, իրականութիւն, նշարտութիւն, բարիք, գեղեցկութիւն: Այսուհանդերձ, նա լուրջ մտածող էր, որ փայլուն կերպով կարողացաւ մասնագիտօրէն մեկնաբանել ժամանակի առաջատար՝ ի մասնաւորի ֆրանսացի մտածող Ա. Բերկտնի հայեացքները. եւ ոչ միայն լուսաբանեց, այլեւ «հայացրեց», զարգացրեց, ցոյց տալով իր ուսուցչի իմաստասիրութեան գործնական կողմերը: Հայ իմաստասէրի նուաճումն է օրինակ «երաժշտական ժամանակ»ի գաղափարը. աւելին՝ նա անուղակիօրէն փաստեց թէ հայ մարդը իր ողջ պատմութիւնը կերտել է համաձայն այս ժամանակի, եւ այդ է ֆենոմենը մեր ազգի գոյատեւման, յարատեւման: Երբ արտաքին «ժամացուցային» ժամանակով ապրող Դրապաշտ ազգերը, հզօր պետութիւնները հեռացել են աշխարհի թատերաբեմից՝ հայը վերածնուած է նորից: Հայ ազգը կարծես հաւաքական ինտուիցիայով՝ նախնական յայտնատեսութեամբ վաղուց ապրում էր Բերկտնեան՝ տակաւին չճեւարուած իմաստասիրութեամբ: Պէրպլերեանը մարդուն խանդավառում է շարունակել ապրելու հոգեկան յանրժական տարածքի ու ժամանակի մէջ: Քանզի մարդը յանրժական հոգի է: Այս լուստեսական նոտայի վրայ է կառուցուած նրա ամբողջ իմաստասիրութիւնը:

*Պէրպլերեանի գաղափարները շատ առումով միայն իմաստասիրութեան պատմութեան չեն պատկանում, այլեւ այսօր հայրենիքում, անցումային այս շրջանում կարող են ունենալ դրական եւ ուղեցուցային նշանակութիւն:*

Պէրպլերեանի իմաստասիրութեան բնորոշ կողմերից մեկը նրա քննազննական՝ մետաֆիզիկական լինելն է, որը ի դէպ մեծ յացողութեամբ համաձայնեցում է իդեալիստական դիալեկտիկայի հետ: «Բարձրագոյն մետաֆիզիկի խնդիրները, ամէնէն էական խնդիրներն են, որոնք մարդուն կու տան իսկական ուղղութիւններ» այսպէս է կարելուում Մահան Պէրպլերեանը քննազննութիւնն ու յարակից հարցերը գործնական գետնի վրայ: Հայրենի գիտնական Հ. Գ. Գաբրիէլեանը հակուած է իմաստասէրին տեսնելու որպէս իդեալիզմի ներկայացուցիչ, նա գրում է. «Այսպէս, օրինակ, Պէրպլերեանը յայտարարում է, որ ինքը ոչ թէ մետաֆիզիկայի, այլ Հերակլիտի դիալեկտիկայի հետեւորդ է: Ըստ Հերակլիտի ամեն ինչ շարժում է եւ փոխում, յանրժ անփոփոխ ոչինչ չկայ»: Հիմք ընդունելով այս դրոյթը, Պէրպլերեանը գրում է. «Կեանքը կեցած քան մը չէ, այլ ստեղծագործող իրականութիւն մը, միշտ ինքզինքը գերազանցող»: Դա նիշտ է, որովհետեւ իրօք որ մշտապէս անշարժ ոչինչ չկայ: Բայց ինչպէ՞ս է տեղի ունենում այդ ստեղծագործութիւնը կամ ինքնագերազանցումը: Մէկ էութիւնից մէկ այլ էութիւն կատարուող անցումն անընդհատութեան ընդհատումն է, մի որակից մի այլ որակ կատարուող թոնչ: Այդպէս չի դատում Պէրպլերեանը: Նրա կարծիքով աշխարհի զարգացումը կամ «ինքնագերազանցումը» պարզապէս «աստիճանաբար լայնագոյն շրջաններու վրայ ընդլայնուող ու բարձրացող» մի պրոցես է, այսինքն՝

էվոլյուցիա առանց թռիչքի: Սակայն փաստը ժխտել հնարաւոր չէ: Մարդը, օրինակ, գոյութիւն ունի որպէս նոր որակ, որպէս միաբջիջ կենդանու ոչ թէ բազմապատկման, այլ բացասման արդիւնք»(3): Պէրպլեբանը քննադատում է որովհետեւ նա ընդունելով հանդերձ էվոլյուցիան՝ կեանքի եղափոխութիւնը, այն բացատրում է ոչ թէ նիւթական եւ մեխանիկական պատճառայ-հետեւանաբանական կապով՝ այլ ստեղծագործ խոյանքով, ամէն պարագայի, այսօր յայտնի է թէ Գարվինի եւ յաջորդների տեսութիւնն եւս ամբողջապէս չի կարող բացատրել կեանքը, նոյնիսկ յիշեալ էվոլյուցիայի թռիչքով: Որպէսզի աւելի հիմնաւորէ իր մեկնաբանութիւնները, Ն. Գ. Գարբիլեբանը հարցնում է «Կարո՞ղ ենք, օրինակ, ֆեոդալական «կեանքի» անցումը կապիտալիստականի կամ այս վերջինի փոխարինումը սոցիալիստական հասարակութեամբ հին «տարբերու վերադասաւորում» կամ «վերախմբաւորում» համարել: Պէրպլեբանը կարող է այս հարցին դրական պատասխան տալ, սակայն դրանով նշմարտութիւնը չի հերքուի: Իսկ նշմարտութիւնն այն է, որ բանուորները «վերադասաւորում» նորտեք չեն, այլ նոր դասակարգ, ծնունդ՝ կապիտալիստական յարաբերութիւններին:»(4) Այո, կարելի է համաձայնել գիտնականի հետ, այնուամենայնիւ խորհրդային երկրի փլուզումը եւ դրան նախորդած վերակառուցման շրջանն շատ ու շատ հարցեր վերանայելու առիթ է տալիս:

Փորձենք աւելի որշակի եւ աստիճանաբար ներկայացնել Պէրպլեբանի իմաստասիրութեան որոշ կողմերը:

Պէրպլեբանը «բուն իմաստասիրական կոչում» հարցերը՝ իր «Բնագանցութիւն» դասընթացում կարգաւորել է հետեւեալ կերպ.

- 1.-Ծանօթութեան արժէքի հարց  
(Problème de la Valeur de la Connaissance)
- 2.-Տիգերաբանական հարց  
(Problème Cosmologique)
- 3.-Աստուծոյ հարց  
(Problème de Dieu)
- 4.-Վախճանաբանական հարց  
(Problème Eschatologique).»

Իմաստասէրը Ծանօթութեան արժէքի կամ նանաչողութեան հարցը բաժանում է երկու մասի, ապա նախ ռացիոնալիզմի դիրքերից հերքում նրանցից առաջինը՝ Սկեպտիկութիւնը (Scepticisme) վստահութիւն յայտնելով մարդկային նանաչողութեանն ու բանականութեանը: Արդարամիտ լինելու համար նկատենք, որ այստեղ հեղինակը փոքր ինչ չափազանցում է իր քննադատութիւնը, գտնելով որ սկեպտիցիզմը պատկանում է արդէն պատմութեանը: Այս գնահատականը պատահական է եւ ոչ փիլիսոփայական: 17-18րդ դարերին սկեպտիցիզմը նորից դարձաւ տիրապետող վարդապետութիւն եւ նոյն ոգիով շարունակեց յաջորդ դարաշրջանում՝ Մոնտէ, Պիեռ Բեյլ, Գեկարտ, ապա Հիւմ, Կանտ: Ինչպէս կարելի է նկատել սկեպտիցիզմի ոգին երբեք պատմութեան մէջ նետուած չի եղել, ինչպէս կարծում է Պէրպլեբանը, երբ գրում է. «Սկեպտիկութիւնը այլեւս պատմութեան կը պատկանի: Այսօր կեանքի ուել հետք կամ նշան չունի: Գիտութեանց գոյութիւնն ու հետզհետէ զարգացումը կը վանեն այսօր այդ սկեպտիկ կեցումով: Գիտական օրէնքներու կիրարկումը կեանքի մէջ կը յաջողի, ինչ-որ փաստ մըն է այդ օրէնքներուն, այսինքն բնութեան նանաչման ստոյգ արժէքին»(5):

Իր բաժանման երկրորդ հանգրուանին հեղինակը ներկայացնում է «գիտնալ կարենալու վարդապետութիւնը՝ վարդապետական Բանապաշտութիւն (Rationalisme Dogmatique)» որ իւր ծայրայեղութեան մէջ հասնում է «Միամիտ իրապաշտութեան» (Réalisme Naif), որտեղ Զգայարանական

նանաչողութիւնը կամ ծանօթութիւնը համարում է բացարձակօրէն ստոյգ ու հաւաստի: Ըստ Պերպլեբանի, այս վարդապետութիւնը բերի է: Ինչպէս որ բերի է միւս ծայրայեղութիւնը «Դադափարապաշտ վարդապետութիւնը» ի՛ր «մենատեսական (Solipsiste) գաղափարապաշտութիւն» ձեւի մէջ, որի համաձայն արտաքին իրականութիւնը, առարկաները հասանելի չեն մարդուն, այլ միայն նրանց յղացմանը: Պերպլեբանը վերոյիշեալ ուղղութիւններին մէջ գրաւում է միջին դիրք, այն կոչելով «Յարաբերական Իրապաշտութիւն» (Réalisme relativiste), ըստ որում արտաքին աշխարհը գոյութիւն ունի մեզանից, մեր գիտակցութիւնից դուրս. «Մեր զգայարանները մեզի կը ցուցնեն արտաքին աշխարհը, որ իրապէս գոյութիւն ունի մեզմէ դուրս: Բայց մեր զգայարանները մեզի չեն ցուցնէր ուղղակիօրէն արտաքին իրերը այնպէս ինչպէս որ են, այլ յարաբերաբար շատ մը պայմաններու: Աշխարհը իրապէս կայ եւ մեր զգայարանները այդ եղած աշխարհը կը ցուցնեն, բայց ոչ թէ բացարձակ ձեւով մը, ինչպէս ներզգայութեան պարագային, այլ յարաբերական ձեւով մը: Հետեւաբար մեր տեսածը արտաքին աշխարհին է, բայց ոչ թէ այնպէս ինչպէս զայն կը տեսնենք իրողապէս (actuellement) այլ ի կարողութեան ձեւով (virtuellement):

Զգայարանները թեւ կ'արտապատկերեն իրեն ու երեւոյթները (phénomène), սակայն ոչ բացարձակօրէն, դրանք «ըստ ինքեան եղածը» չեն կարող հաղորդել, որովհետեւ. «Այդ ըստ ինքեան եղածը չի տեսնուիր, այլ կը մտածուի: Ասոր համար է որ կ'ըսենք թէ գիտութիւնը մեզի իմանալի՝ տիեզերք մը կը ցուցնէ եւ ոչ թէ տեսանելի, զգալի տիեզերք մը» (Բնագանցութիւն, էջ 29): Կանտեան գիտակցութեան մէջ արտացոլումը ինքնին իրերը Պերպլեբանի մօտ ձեւակերպում են որպէս ի կարողութեան իրեր, որտեղ «ըստ ինքեան» այդ իրերը պատկանում են մտահասանելի աշխարհին: Բայց «ըստ ինքեան» իրերը ինքնին իրերի նմանողութեամբ չեն բաժանում մարդ սուրյեկտից այլ ներկայանում միասնական մէկ համակարգի մէջ:

Իմաստասէրի համար գիտութեան բացայայտած տիեզերքը, եւ կամ ծանօթութիւնը ստոյգ է եւ արժէաւոր, քնականաբար այստեղ Հեղինակը ինչ-որ չափով չափազանցում է գիտութեան դերը: Ամէն պարագայի, այն հաստատելով անցնում է քնագանցական նանաչողութեան արժէքին. «Տեսնել որ գիտութիւնը կրնայ տալ մեզի արժեւոր ծանօթութիւն, բայց որ իր սահմանները ունի եւ կը մնայ միշտ երեւոյթի կալուածին մէջ: Արդ, ծանօթութիւնը կրնա՞յ հասնիլ էոյթին: Ահաւասիկ ինչ-որ քնագանցութեան նպատակն է, ուր խնդիրը է՝ն է իրրեւ է՝ եւ ոչ թէ իր երեւնալու կերպին մէջ: Այդպիսի ծանօթութիւն մը կարելի՞ է. ծանօթութիւն մը որ կարենայ տիեզերական արժէք ունենալ իրրեւ իրականութիւնը միտքին իմանալի դարձնող:» (Բնագանցութիւն, էջ 30)

Բնագանցութիւնը (métaphysique) այսպիսով պէտք է գրադուի «էոյթի» (noumena) նանաչողութեամբ: Պերպլեբանը իր առջեւ դնում է երկու խնդիր, որի լուծումը կը պատասխանի «Բնագանցութիւն մը կարելիութեան» հարցին ընդհանրապէս, որն է.

«-Կրնա՞նք ունենալ իմանալիին յայտնատեսութիւնը.

-Տրամախոհութիւնը արժէաւոր ծանօթութեան մը հասցնո՞ղ Միտքի գործելակերպ է: (Բնագանցութիւն, էջ 37): Պերպլեբանը այստեղ յայտնատեսութիւնը Ծօպէնհաուերի կամ Բերկսոնի նմանողութեամբ չի բաժանում քանականութիւնից, այլ ներդաշնակելով գտնում է թէ «իմացական յայտնատեսութեամբ» (intelligible intuition) կարելի է հասնել «էոյթին»: Նա քննադատելով Կանտին գրում է. «Հետեւաբար կայ իմացական յայտնատեսութիւն մը, գոր պէտք չէ շփոթել երեւակայական պատկերին հետ, եւ նաեւ այդ ծանօթութիւնը տուող իմացական յայտնատեսութիւն

մը: Ու Կանտ աղէկ վերլուծում մը ըրած չըլլալուն համար է որ ինկած է Հիւմի սխալին մէջ:» (Բնագանցութիւն, էջ 40)

Սակայն միշտ չէ որ յայտնատեսութեամբ կը գտնենք իմանալին, նաեւ տրամախոհութիւնն իբրեւ գործիք ունենալով կարելի է աստի-նանաբար երեւոյթէն քափանցել էոյթին եւ ուստի «տրամախոհութիւնը իմացական յայտնատեսութիւններու շարք մըն է»:

Այս է Պերպլեքեանի իմացաբանութեան ուրուագիծը իր «Բնագանցութիւն» դասախօսական շարքի մէջ: Նրա իմացաբանական որոշ հարցերին տակաւին կ'անդրադառնանք շարադրանքի ընթացքին:

Փորձենք հետեւել նաեւ իմաստաստի գոյարանութեանը:

Նախորդ յօդուածով անդրադարձանք Պերպլեքեանի իմաստասիրական համակարգի առանցքը կազմող «Ժամանակի» ըմբռնման, որ սերտօրէն աղընչուած է Տարածութեան, Հոգու, Կեանքի, Յանրժութեան խնդիրներին: Իրականութեան մէջ հեղինակի կողմից առաջ քաշուած վերոյիշեալ հարցերը, եւ կամ նրա էաբանութիւնը, տիեզերաբանութիւնը, բնագանցութիւնը չափազանց ընդելուզուած են, միահիստուած:

Ինչեւէ իմաստաստերը «բանաւոր տիեզերաբանութեան» նպատակն է համարում «Բուն էութեան, ինչութեան նախաշումը»: «Տիեզերաբանական հարցը» Պերպլեքեանը բաժանում է երկուսի՝ ընդհանուր եւ մասնաւոր՝

1.«Վերլուծական Տիեզերաբանութիւն»

2.«Համադրական Տիեզերաբանութիւն», որն իր կարգին ունի երկու մակարդակ՝ «Ընդհանուր էաբանութիւն» եւ «Տիեզերքի Կազմախօսութիւն»:

«Համադրական Տիեզերաբանութեան» նպատակն է Տիեզերքի (universe) դիտարկումը ամբողջութեամբ առնուած, «Վերլուծական Տիեզերաբանութեան» (Analytic Cosmology) մէջ, ուր վերցուած է ամբողջ իրականութիւնը իր ընդհանրութիւններով եւ տարբերութիւններով: Այստեղ Բաւականին հետաքրքրական են իմաստաստի՝ Տեսողութեան ու Ժամանակի, Տարածութեան ու Միջոցի, Հոգու, Կեանքի, Նիւթի, շարժման հարցերի ըմբռնումը: Պերպլեքեանը էյնշտայնի տեսողութիւն-եռաչափ միջոց առանցքին աւելացնում է Հոգու առանցքը որպէս հիմնգերորդ, ըստ որում ժամանակը ու տարածութիւնը դիտում իբրեւ հոգու attribute-ներ, որոնք բացարձակ մեծութիւններ չեն:

Առաջին երկուսին արդէն հանգամանօրէն անդրադարձել ենք տարբեր առիթով. ինչ կը վերաբերի Հոգու եւ Նիւթի հարցի, օրինակ, ապա կարելի է նկատել որ Պերպլեքեանը թէեւ որոշ առումով հոգեկանութեան (spiritualism) կողմնակից է, բայց ոչ ծայրայեղօրէն: Նրա համար «Հոգին գոյացութիւն մըն է» (Բնագանցութիւն էջ 81), այս աւելի աքսիոմատիկ (axiomatic), անապացոյց նշմարտութիւն է, որը սակայն նիւթապաշտական հայեացքի դէմ առնակատման չի գնում: Հոգու գոյութիւնը «փաստելու» համար Պերպլեքեանը կատարում է հետեւեալ դատողութիւնը. «Ուրեմն պէտք է ընդունիլ որ ներքին վիճակներուն տակ, եթէ նոյնիսկ զանոնք ունեցող մը չենթադրենք, գոնէ զգացող մը պէտք է ենթադրենք: Եւ իրաւ ալ այդ ներքին վիճակները երբ դիտենք, կը տեսնենք որ անոնք կ'ըզգացուին իբրեւ ի՛մ կամ քո՛ւ վիճակները: Հետեւաբար, ինչ-որ տրամաբանօրէն անհրաժեշտ է՝ իրականութեան մէջ ալ կայ: Եւ Ուիլիլըմ ձէյմս շատ իրաւամբ կ'ըսէ. «Երբէք մեզի չ'երեւիր մտածում մը, զգացում մը, կամեցում մը, այլ ի՛մ մտածումս, ի՛մ զգացումս, ի՛մ կամեցումս: Ամեն բաղձանք մէկո՛ւ մը բաղձանքն է եւ ոչ թէ չէգոք վիճակ մըն է: Հետեւաբար հոգեկան երեւոյթները Եսի մը վիճակներն են. ուստի ինչ որ տրամաբանօրէն կը պահանջուի՝ իրա՛ւ ալ փորձին մէջ այդպէս կը յայտնուի:» (Բնագանցութիւն էջ 80)

Պերպլեքեանը հոգու գոյութիւնը -ինչպէս նկատելի է- չի ապացուցում, նա պարզապէս ընդունում է որպէս «տրամաբանօրէն անհրաժեշտ» իրական գոյութիւն: Կայ «ենթական», որ ինքնիրեն ի՛ր Ես-ը նախաշում է

անուղղակիորեն ո՛չ «ուղղակի յայտնատեսությամբ», այսինքն իր վիճակների փորձով, պնդում է հեղինակը, գտնելով որ «Բան մը երբ տրամաբանօրէն պահանջուած է եւ անելին՝ իրականութեան մէջ ալ փորձով հաստատուած, ուրիշ փաստի պէտք չունի» (Բնագանցութիւն, էջ 80):

Պերպլեբանի առաջ քաշած փաստարկները թեւ անհրաժեշտ, բայց քաւարար չեն ապացուցելու հոգու գոյակցական գոյութիւնը: Իմաստասէրի փաստարկը իրենից ներկայացնում է սոսկ Արիստոտէլեան գոյացութեան ստորոգութեան, Բերկտնի քանականութիւնից անջատուած յայտնատեսութեան եւ նոյն ժամանակ Դեկարտեան տրամաբանութեան հաշտեցնող մի փորձ: Ամէն պարագայի՝ արժէքաւոր մտեցում է խնդրին:

Պերպլեբանը հոգին օժտում է անմահութեամբ, աննիրականացնելով եւ անջատելով մարմնից: Հոգին մտածող է կամ դրան խթանող Մի բան, սակայն ուղեղի հետ առնչութիւն չունի որպէս նրա մի մաս. «Հոգին ո՛չ միայն ուղեղին մէջ չէ, այլ նոյնիսկ հոգիին մէջ եղածները գուգահեռական չեն ուղեղին մէջ եղածներուն: Հետեւաբար՝ ուղեղին չճացումը չ'ենթադրեք հոգիին քայքայումը»: (6):

Հոգիի ստորոգելիներն են միութիւնը, պարզութիւնը, աննիրականութիւնը. «Մեր մէջ կայ էութիւն մը, որ բոլոր հոգեկան վիճակները յառաջ բերողն է եւ որ մէկ է, պարզ է, եւ հոգեկան գոյացութիւն մըն է: Այդ գոյացութիւնը չի կրնար նիւթ ըլլալ»: (Բնագանցութիւն, էջ 82)

Հոգին՝ ըստ իմաստասէրի, շատ անելին է քան մարդու իմացական գործողութիւնները կառավարող Ուղեղը, որ անկախ էութիւններ են. «Հոգիին մէջ շատ անելի բան կայ քան ուղեղին մէջ».(7) կը շեշտէ հայ իմաստասէրը հետեւելով Բերկտնին:

Իմացականութիւն եւ զգայականութիւնը եւս գատուած են հոգուց: Եթէ մարդու զգայարանները եւ իմացականութիւնն կենսականօրէն եւ փոխադարձաբար կապուած են, ապա Հոգին առանկա անկախ է ու ազատ: Թեւ իմացականութեան կամ քանականութեան անջատումը Հոգուց, կարարդէն անելի վաղ մտածողների մօտ, բայց այժմ դրան տրուած է նոր որակ- Պերպլեբանի մօտ հաստատուած է կապը այս անկախ, անջատ գոյութիւնների միջեւ, որի իրականացնողը՝ յայտնատեսութիւնն է: Ինչպէս Կանտի մօտ, այստեղ եւս գուտ քանականութեան եւ յայտնատեսութեան ինտուիցիայի (intuition) սահմանները յստակ են, սակայն յարաբերութիւնն անելի նկուն է: Յայտնատեսութիւնն ինքը ակտիւ կապող օղակ է: Փաստօրէն յայտնատեսութիւնը քանաչողութեան ձեւ է՝ կեանքի ինքնահայեցողութիւն - այստեղ առնչում ենք Պերպլեբանի իմացաբանութեան: Իմաստասէրը անելի կողմնակից է քանական յայտնատեսութեան, նա Բերկտնի նման ինտիլիկտը՝ քանականութիւնը եւ ինտուիցիան՝ յայտնատեսութիւն չի հակադրում իրար, այլ փորձում տեսնել դրանց որպէս իրար լրացնող, զարգացող օղակ: Մօտաւոր այսպիսի կապուած զարգացում է տեսնում իմաստասէրը մարմնական զգայութիւններից մինչեւ անմարմին Հոգի (տե՛ս վարը): Հեղինակը իր «Հոգեբանութիւն» դասախօսութիւնների մէջ աւելի հանգամանօրէն է անդրադարձել խնդրին, որին կ'արժէ անդրադառնալ ուրիշ առիթով:

ԾԱՐՈՒՆԱԿԵԼԻ

ԶԱՔԱՐԻԱ ՔՀՆՅ. ՍԱՐԻԲԷԿԵԱՆ

ՆԱԴՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՅԱԿՈՒԹՈՍ ՏԵԱՌՆԵՂԲՕՐ ԱՃԻՒՆՆԵՐԸ

Ս. ՅԱԿՈՒԹ ՏԵԱՌՆԵՂԲՕՐ ԳԱԳԱՂԸ, ԱՌԵՂԾՈՒԱ՞Ծ ԹԷ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

2002 Հոկտեմբեր ամսուն Biblical Archaeology Review (BAR)ը տեղեկագրեց հնագիտական մեծ գիւտի մը մասին: Յայտարարեց թէ յայտնաբերուած է Տեառնեղբօր Յակոբոսի դագաղը երուսաղէմի մէջ եւ թէ դագաղը կը կրէր հետեւեալ արձանագրութիւնը. «Յակոբ, որդի Յովսեփայ, եղբայր Յիսուսի»:

Biblical Archaeology Review (BAR)ը յանձնեց յիշեալ դագաղի արձանագրութեան ստուգման կարեւոր գործը երկու Ա. Դարու երբայերէնի եւ Արամեբէնի մասնագէտներու: Այս գոյգ մասնագէտներու ֆննութեան համաձայն, դագաղի վրայ փորագրուած արձանագրութիւնը կը կրէր առաջին դարու Արամեբէն տառերու ճիշդ ձեւը եւ բառերու գործածութիւնը, եւ Geological Survey of Israelի կազմակերպութենէն երկու ուրիշ մասնագէտներ ֆննարկեցին դագաղը ամէն իր մանրամասնութիւններով:

Դագաղը, ի միջի այլոց, չէ յայտնաբերուած հնագիտական պեղումի մը ընթացքին, այլ սոսկ հրեայ հնավանառի մը կողմէ, որ կը զբաղի նման հնագիտական ապրանքներու առուծախով: Յայտնի չէ դագաղի ուրտեղէն ըլլալը եւ կամ անոր ծագումը: Երբ դագաղի յայտնաբերման առիթով հնագէտ մասնագէտներ սկսան թեր եւ դէմ կարծիքներ յայտնել անոր կեղծ թէ իրական ըլլալու մասին, 2003 Մարտին Israeli Antiquities Authority (IAA)ն յանձնախումբ մը կազմեց 14 մասնագէտներէ բաղկացեալ, որպէս զի

ֆննեն այս յայտարարուածը, ներառեալ արամեբէն արձանագրութիւնը: Յունիս 18, 2003ին, Israeli Antiquities Authority (IAA)ն յայտարարեց որ «Յակոբ Տեառնեղբօր դագաղը կեղծ է»:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Յակոբոս Տեառնեղբօր դագաղ ներկայացուածը կը կոչուի «անիւններու տուփ»: Առաջին դարու հրեաներ կը թաղէին իրենց մեռելները ժայռափոր տեղերու մէջ մինչեւ դիակին ապականիլը: Մէկ կամ երկու տարի յետոյ, ոսկորները կը փոխադրէին ու կը զետեղէին նման ֆարէ տուփերու մէջ:

Հնավանառը, որ վանառեց Յակոբոս Տեառնեղբօր դագաղը Անտրէ Լէմէրին, Օտէտ Կոլան անունով հրեայ մըն էր: Օտէտ Կոլան յայտնի է Իսրայէլի մէջ որպէս մեծագոյն հնավանառներէն մին: 2003 Մարտ ամսուն, Իսրայէլի ռստիկանութիւնը ձերբակալեց Օտէտ Կոլանը բայց յետոյ ազատ արձակուեցաւ, երբ փաստուեցաւ թէ Օտէտի Թել Ավիվի կալուածին աշխատանոցին մէջ գտնուեցան հին կնիքներ եւ աշխատցուած արձանագրութիւններ, գործիքներ փոխադրութեան համար եւ այլ հնագիտական պեղումներէ դուրս եկած ապրանքներ: Իսրայէլի ռստիկանութիւնը պիտի շարունակէ Օտէտը հարցաֆննութեան կանչել:

Israeli Antiquities Authority (IAA)ի կողմէ կազմուած 14 մասնագէտներէ բաղկացեալ յանձնախումբը յանձնեց իր վերջնական տեղեկագիրը, որուն համաձայն կը յայտարարուի թէ «Դագաղը իսկական է, սակայն արձանագրութիւնը՝ կեղծ, եւ թէ

արձանագրութիւնը կը կրէ հետքեր երկու տարբեր անհատներու գործելակերպի»:

*The ossuary is authentic. Its inscription is a forgery. All the various scratches in the ossuary are coated in the original patina and only the inscription and its immediate surroundings are coated with an artificial "patina" - like (a) material of round crystalline granules. The inscription cuts through the original patina and appears to have been written by two different writers using different tools.*

**ՅԱԿՈՐՈՍ ՏԵԱՌՆԵՂԲՕՐ  
ԳԵՐԵՋՄԱՆԸ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՐԵԱՆՆՑ  
ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ**

Իսկ ինչ կը վերաբերի երուսաղէմի առաջին եպիսկոպոսու եւ առաջելոց գլուխ՝ Յակոբոս Տեառնեղբայրայր առաքեալի գերեզմանին աւանդական տեղին մասին, կը մէջբերենք Սաւալանեանցի Պատմութիւն երուսաղէմի գրքէն ներքոյի շեշտաւ տեղեկութիւնը իրրեւ փաստ, որ Յակոբոս Տեառնեղբայր թաղուած է Սրբոց Յակոբեանց Տանարի աւագ սեղանին ներքեւ եւ ոչ այլուր, եւ թէ անոր աճիւնները դարերէ ի վեր կը մնան աւագ սեղանին ներքեւ եւ աճիւններու այլուր փոխադրութեան ոչ մէկ պատմական յիշատակութիւն կայ:

Սաւալանեանց իր Պատմութիւն երուսաղէմի գրքին մէջ կը գրէ հետեւեալը. «Սուրբ Քահանայապետիս գերեզմանը ազգային աւանդութեան համաձայն, կը գտնուի Ս. Քաղաքիս մայր եկեղեցիին մէջ, իր անունով կառուցուած աւագ սեղանին ներքեւ: Ջայս մասամբ կը հաստատէ նաեւ Լեւոն Ալատիոս՝ ըսելով. «Յովսափատի ձորէն ոչ շատ հեռու կը գտնուի Յակոբ Աստուածեղբոր վանքը, ուր հայերը կը բնակին» (Վարդ Սրբոց. Վկ. Էակ. Արդ. Հտ. Ժ. եր. 257): Հաւանական է որ Արդարին նահատակութենէն ետք իրենները զայն վերցուցած ու ամփոփած ըլլան ձորին մօտիկ իր սեփական բնակարանին մէջ, որ է այժմեան Սրբոց Յակոբեանց վանքը: Իսկ նահատակութեան տեղը կը գտնուի ձորին մէջ, Աստուածածնի գերեզմանին նամբուն վրայ գտնուող կամուրջին տակ: Անդրէի ու Ջաֆարիայի գերեզմաններուն դէմ եւ ուխտատեղի էրոլոր քրիստոնեաներուն ու սեփական է հայոց՝ եզերքը գտնուած ջրհորով միասին» (Տիգրան Հ.Թ. Սաւալանեանց, Պատմութիւն երուսաղէմի, տպեալ յերուսաղէմ 1931, Ա. հատոր, էջ 147-148):

ԲԱԳՐԱՏ ԱՐՂ. ՊՈՒՐՃԷՔԵԱՆ

## *ՏԱՄՆԱՄԵԱՅ ՏԱՐԵԼԻՑ ՎԱԶԳԷՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ*

Ներկայ տարույս Օգոստոս 18ին կը լրանայ Երջանկայիշատակ Վազգէն Ա. Հայրապետի վախճանման տասնամեայ տարելիցը: Քսաներորդ դարու նրկրորդ կէսին Հայ Եկեղեցին վերջին հարիւրամեակներու ընթացքին առաջին անգամն ըլլալով փայլեցաւ բացառիկ յառաջդիմութեամբ, շնորհիւ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ իր անձին հմայրովն ու նուիրումով, իմաստութեամբն ու բարեմոյն նկարագրով, իր գահակալութեան 39 տարիներու նրկայնքին (1955-1994), ղեկավարեց այդ հաստատութիւնը, գայն առաջնորդելով դէպի խաղաղ, նրջանիկ ու շինարար հորիզոններ:

Համալսարանական կրթութեամբ օժտուած, ուսուցչական փորձառու թեամբ զինուած, հայրապետական օժմամբ Լուսաւորչի Գահ բարձրացած, Վազգէն Հայրապետ, ինչպէս ինք սովոր էր ըսել, եղաւ «հայ Եկեղեցւոյ առաջին սպասաւորը» ու այդ ուղիով եղաւ նաեւ մեծագործ, շինարար եւ արդիւնաշատ Հայրապետը, որ աննախընթաց քայլեր առնելով, մօտեցուց իր ցրունալ հօտը Ս. Էջմիածնին, ինք անձամբ մօտենալով իր հօտին, նի պատուով ու փառքով ներկայացուց Հայ Եկեղեցին օտար աշխարհին:

Դիւանագէտի իր թաքուն առաքինութիւնը զինք դարձուց օրուան մարդը, ու ան կրցաւ դժուարին ժամանակներու մէջ ամէն ձեռնարկ յաջողցնել յաշս Խորհրդային իշխանութեանց ու Հայրենի պետութեան: Իրեն նկատմամբ պետական անձերուն ցոյց տուած պատկառանքն ու յարգանքը բնական երեւոյթներ եղան, որովհետեւ Վազգէն Ա. գիտէր լսելու եւ խօսելու ժամանակն ու կերպը, զգայուն էր կացութեանց նկատմամբ, եւ խնդրելու ու ստանալու, եւ նրբէր շմերժուելու հաւասարակշռութիւնը ունէր, լաւատեսութեամբ, համբերութեամբ, յոյսով, հաւատքով, եռանդով, ու Հայ Եկեղեցւոյ հանդէպ իր տածած անկեղծ սիրով:

«գԱստուած փնտռելու իր ճանապարհին վրայ Մայր Աթոռ Ս. Էջմիա ծիւր գտեր էր» ինչպէս ինք ըսեր էր մի քանի առիթներով: Յանուն Ս. Էջմիածնի եւ Հայոց Ընդհանրական Հայրապետութեան ու անոր հեղինակութեան, Վազգէն Ա. եղաւ եւ կառուցող, եւ այցելող Հայրապետը: Վանական համալիրը բոլորովին պայծառակերպուեցաւ, շնորհիւ իր մտաւորականի եւ արուեստագէտի առաքինութեանց: Բարերարներ անպակաս եղան, տեսնելով իրական դիտապետը Հայոց որ իր զգուշատր իմաստութեամբ կը յառաջդիմէր, քայլ առ քայլ, թէ՛ հոգևոր եւ թէ՛ շինարար իր ծրագիրներուն մէջ, միշտ արձանագրելով մնայուն յաջողութիւն:

Վանքեր վերանորոգուեցան ու Վեհարանը վերածնաւ, ու անվարան կարելի է իր կատարած ամէն գործ «աննախընթաց» նկատել, նրբ ականատես կ'ըլլայինք իր արտասահմանեան հովուապետական այցելութիւններուն, եւ կամ նրբ մենք կ'այցնէինք Մայր Աթոռ եւ հայրենիք: Ատլանտեանի եւ Խաղաղականի ափերը հասնող առաջին Հայրապետը եղաւ Վազգէն Ա., մի քանի սերունդներու իսկական Հայրապետը, գոր բախտը ունեցան անձամբ տեսնելու եւ աջը համբուրելու: Օտար եկեղեցական պետեր իր օրով միայն սկսան ժամանել Մայր Աթոռ, որոնց ինք

անձամբ այցելել էր արտասահմանեան իր ուղևորութեանց ընթացքին: Վանական ներքին կեանքն ու հոգևոր ճնմարանի արձանագրած յաջողութիւնը նոյնպէս եղան բացատրիկ: Իր ձեռնադրած 65 եպիսկոպոսները հայ եկեղեցւոյ վերջին շրջանի պատմութիւնը վերակերտեցին, թեմեր աւելցնելով ու հայ եկեղեցին ուճագնելով:

Միամօր որդին բարեպաշտ ծնողաց, Վազգէն Ա. Հայրապետ ազնուական հոգևոր պետ մը եղաւ, բարեկիրթ, ժպտադէմ, յարգալից ու միշտ գնահատող, այլ նաև խիստ իր սկզբունքներուն նկատմամբ: Յուսախաբութիւններ ունեցաւ անշուշտ, յատկապէս Անթիլիասի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տագնապին պատճառով որ ծայր տուաւ իր գահակալութենէն միայն մի քանի ամիսներ ետք, որ խորացաւ հետզհետէ ու չլուծուեցաւ երբևէ, հակառակ իր տարիներու իմաստուն եւ համբերատար հետապնդումներուն: Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ Կաթողիկոսի օրով, Վազգէն Հայրապետ յուսալից որոշ նշաններ ուզեց տեսնել, եւ սակայն անոնք եւս խաբուսիկ եղան, մանաւանդ երբ Հայաստաննայց Եկեղեցւոյ կանոնագրութիւնը խմբագրելու կարևոր եւ սպառիչ աշխատանքին մէջ Անթիլիաս չուզեց մաս կազմել, անհրաժեշտ եւ օգտակար իսկ չնկատելով անոր պատրաստութիւնը:

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ենթարկուած Մայր Աթոռի պատմական թեմերը չվերադարձուեցան, ոչ իսկ անուանական կերպով: Իր կեանքի վերջալոյսին, Վազգէն Հայրապետ, Հայաստանի մեծ երկրաշարժին պատճառած իր ցափն մէջ, Լեռնային Ղարաբաղի ազատագրութեան պայքարին համար նահատակուած հայ մարտիկներու իր տուայտանքին մէջ, եւ միւս կողմէ Հայաստանի Հանրապետութեան հռչակման ու անոր հետեւանքով կատարուելիք հսկայ աշխատանքի բեռն տակ, ու ձեռով մըն ալ Կիլիկիոյ Կաթողիկոսին Մայր Աթոռի նկատմամբ ցոյց տուած գործակցութեան մէջ, մոռնալ ուզեց անցնալի այդ տագնապը, ու առանց ժողովական որոշման, ինքզինք հաշտեցնելով կացութեան հետ, փակեց իր աչքերը:

Վազգէն Ա. յուսախաբութիւններ ունեցաւ նաև Երուսաղէմի պատրիարքութեան գործառնութեանց եւ ներքին կոիւնքերու առիթներով, կատարելով իր լաւագոյնը որպէս գլուխը Հայ Եկեղեցւոյ, հոն եւս իր ձայնը եւ սաստը հասցնելով ու փրկելով հայերէն ձեռագիրները որոնք 1967ին վաճառքի պիտի հանուէին Լոնտոնի մէջ:

Վազգէն Հայրապետի գերեզմանը կը կնքենք անվարան գրելով սա տողերը: Յուսահատիլ չգիտցող եւ բարին կամեցող ու կատարող Հայրապետը եղաւ ան, հանդիսանալով հայոց պատմութեան վերջին շրջանի ամենէն կարկառուն դէմքը, որ իր բազմարդիին եւ անմնացորդ կեանքը կնքեց տասը տարիներ առաջ, խղճի մտօք կատարելագործելով ամէն ինչ որ իր համոզումովն ու դատողութեամբ պէտք էին կատարուիլ:

ԴՈԿՏ. ՀԱՅՐ ԶԱԻԷՆ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

## ՊԱՏԱՐԱԳԻ ԼԵԶՈՒՆ

«Կան կրկնութիւններ, որոնք նման են մեխի. մի քանի հատ է պէտք, որ մեխուելիքը ոչ միայն վայր չընկնի, այլև մնայ ընդմիշտ»:

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Հայ Եկեղեցւոյ Պատարագի լեզուն՝ գրաբարը, անգլերէնի վերածելու հարցը, կրկին հրապարակ բերուած է այս օրերուն, եւ այդ առիթով ստեղծուած են անհարկի խօսակցութիւններ, անտեղի բանավեճեր ու անախորժ լեզուակոխիւններ: Հրապարակը վերստին փոթորկած է ու բռնկած լափլիզող հուրով, վասնզի մեր Եկեղեցւոյ աւանդութեանց նախանձախնդիր մարդիկ՝ հաւատարմօրէն կ'ուխտեն պահել պատմականօրէն նուիրագործուած գրաբարը առանց տատամտումի ու այլեւայլի: Անոնք ի գին ամէն գոհողութեան կը պայտարին պաշտպանելու գայն: Ի դիմաց գրաբարը փոխելու այս անհարկի ու անիմաստ առաջարկին ոչ միայն ապշահար ենք ու զարմացած, այլև մեր ուղեղները ընդարմացած են: Իցիւ թէ ամբողջապէս հասու ըլլալին նմանատիպ մտածումնէի ու վարմունքի հիմնական ու մանաւանդ տրամաբանական ու գործնական պատեանաբանութիւններուն:

Համայն հայութիւնը յուզող, վրդովող ու խռովող հարց է այս, որուն կարելի չէ թեթեւակիօրէն ու պարզամտօրէն մօտենալ: Ներկայիս, երբ հայութիւնը շրջապատուած է քիւրաւոր խաչերով ու հոգեմաշ նեղութիւններով, գրաբարը անգլերէնով փոխարինելու հարցը իբրեւ աւելորդ բռն, կու գայ ծանրացնելու անոր վիշտը եւ վիհեր բանալու անոր սրտին

մէջ: Արդ, ուրեմն, անտարբեր մնալու քարոյական իրաւունք չունինք: Պահն է աչալըջութեան ու զգաստութեան: Հոգեւոր արիութիւն է հարկաւոր դէմ կանգնելու նման պատմական որոշումի:

Գրաբարին դէմ շղթայագերծուած կատաղի հալածանքը, անոր հանդէպ ցուցաբերուած աննպաստ կեցուածքը եւ անտարբերութիւնը նոր չեն բնաւ: Անցեալին, գրաբարէն ձերբազատուելու փորձեր բազմիցս կատարուած են ու ձախողած որովհետեւ Եկեղեցւոյ վերին իշխանութիւնը հաստատ ու աներբեր մնացած է գայն պահելու իր որոշումին վրայ:

Վերջին քանի մը տասնեակ տարիներուն, յարատեւ շուկաներ կը բեւաճէին գրաբարի ոչ-այժմէականութիւնը եւ անցողակիութիւնը շեշտող-նոյնիսկ ոմանք Պատարագը անգլերէնով մատուցելու փորձեր ալ կը կատարէին՝ տեսնելու հակազդեցութիւնը մեր ժողովուրդին եւ քաղելու արդիւնքը իրենց փորձին: Այս նախափորձերը, անտարակոյս, յուզումի ու վրդովումի ալիք բարձրացուցին մեր թեմէն ներս: Անդին, եղան ուրիշներ, որոնք խորին գոհունակութեամբ դիմաւորեցին այս յամեցած նորութիւնը եւ ողջունեցին անգլերէնի հնարաւոր ու փառաւոր մուտքը մեր սրբազան, հնարոյր Եկեղեցիներէն ներս: Ներկայիս, անգլերէն լեզուի կողմնակիցներ, բուն ընդդիմութիւն կը ցուցաբերեն գրաբարի գործածութեան, վասնզի կ'առարկեն որ

գրաբար հասկցող չկայ եւ ծէսը պէտք է դարձնել կենդանի՝ Պատարագը մատուցելով հասկնալի լեզուով եւ համօրէն հաւատացելոց մասնակցութեամբ, որպէս զի դառնայ գրաւիչ ե՛ւ հայերուն ե՛ւ օտարներուն:

Հիմնականին մէջ, դարի հրամայականէն առաջնորդուած, եւ բնականաբար, օտարները սիրաշահելու մարմաջէն մղուած, ծէսը արդիականացնելու մտահոգութեամբ, եւ այն՝ ամէնքին հաւասարապէս դիւրամատչելի դարձնելու դիտաւորութեամբ, ներքին անզուսպ շարժում, եւ կամ բուն ցանկութիւն յառաջացած է անգլերէնին ընթացք տալու: Այս աննախադէպ երեւոյթը դրական ու փրկարար ըլլալէ աւելի կրնայ ըլլալ ժխտական ու կործանարար: Այսպիսով, կարելի է ըսել, որ գաղթաշխարհի հայութիւնը վերջապէս ազատութիւն պիտի վայելէ, իւրաքանչիւրը իր երկրին մէջ, իրեն յատուկ լեզուով Պատարագը մատուցելու՝ ընդմիջտ փոխելով հայ եկեղեցւոյ դիմագիծը կամ կերպարանքը:

Այս հարցը, ժամանակին օրակարգի նիւթ դարձաւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի ժողովին եւ անոր բարձրագոյն որոշումը մեզի հաղորդուեցաւ շրջաբերականով՝ Առաջնորդին կողմէ, որուն մէջ յստակօրէն կը յայտնուէր մեզի Պատարագի լեզուն պահել անխախտ:

Մեր Թեմի կանոնադրութեան համաձայն, Միական Խորհուրդը եւ Թեմական Պատգամաւորական ժողովը երբեւիցէ ծիսական, կանոնական, դաւանարանական, աստուածաբանական հարցերով չեն զբաղած եւ նման հարցեր արծարծելու կարիք ալ չունին: Անոնց իրաւասութիւնը վարչական ու կազմակերպչական աշխատանքի ծիրին մէջ է:

Խնդրոյ առարկայ հայ պաշտամունքի լեզուն՝ գրաբարը, ճիշդ է, հնացած է ու դժուարըմբռնելի, բայց մեր պահանջը մեր ժողովուրդէն՝ գրաբար սորվիլ չէ, այլ՝ էական որոշ տարրերու իւրացում: Յընթացս Ս. Պատարագի, բազում անգամներ կը կրկնուին նոյն բառերը եւ նախադասութիւնները: Թեթիւ ջանք մը մեր ժողովուրդին կողմէ սորվելու հարկ եղածը՝ բարւո՛ք լուծում պիտի տայ ստեղծուած հարցին:

Պէտք է նկատի ունենալ որ մեր ողջ Պատարագի երգեցողութիւնը ստեղծագործուած է գրաբարի բնագրի համաձայն: Եղանակներուն շեշտադրութիւնը, շնչառութիւնը, տրոհումները եւս կատարուած են գրաբարի մտածողութեամբ, հայկական տրոփումով ու յագեցումով: Մեր Պատարագի գրաբարեան բնագիրը հանդերձուած է հայկական եղանակներու տարագով: Վերցնել մէկ այլ օտար լեզու եւ գայն հանդերձել հայ Պատարագին մասնայատուկ երաժշտութեամբ, անոր երանգով, անկասկած, պիտի ըլլար պարզապէս կարկտել, հետեւաբար եւ բարոյապէս ոչնչացնել մեր ողջ հրաշալի ստեղծագործութիւնը: Երգարուեստի մէջ կարելի է նկատի ունենալ բառերը, որոնց վրայ (իմա՛ իմաստի, հնչիւնի, վանկի, շեշտի, եւլն) կը գրուի երգը:

Ներկայիս, շեշտը կը դրուի փոխելու Պատարագիչի ու սարկաւազի մասերը: Ապագային հաւանաբար պիտի առաջարկուի փոխել նաեւ դպրաց դասի բաժինը: Արդ, եթէ անգլերէն թարգմանուած Պատարագի նոր եղանակներ պիտի յարմարցուին ու երգուին, տարակոյս չկայ որ անոնք պիտի ըլլան գուրկ հայկականութենէ, արուեստական ու բոնագրօսիկ: Լեզուի փոփոխութեամբ,

հայկական ոգին ալ մեզմէ վանած պիտի ըլլանք:

Գրաբարի րացակայութիւնը շատ ծանրօրէն պիտի ննշէ մեր հոգիները: Անգլերէնով Պատարագի մատուցումը խորապէս պիտի վշտացնէ մանաւանդ մեր աւագ սերունդը, որ անցաւ սուրէն, հուրէն ու ջուրէն, քամեց ցմրուր քաժակը դառնութեան՝ տեսնելով սով ու սրածութիւն, զրկանք ու սպառնալիք, ախոր ու ջարդ, անվերջ ցաւ ու տառապանք: Հակառակ այս ամբողջին, այդ տառապակոծ սերունդը ամուր կառչած մնաց իր մայրենի լեզուին, «ցեղին ձայնին», հաւատքին, ինքնութեան, լինելութեան: Մեր հին սերունդը րացարձակապէս նախատուած ու վիրաւորուած պիտի զգայ այս արմատական փոփոխութեամբ: Ոմանք նոյնիսկ պիտի դադրին հայ եկեղեցի յաճախելէ որովհետեւ իրենց համար հայկական ոչինչ մնացած պիտի ըլլայ: Ուրիշներ, հաւանաբար, նախընտրեն օտար եկեղեցի յաճախել՝ խզելով իրենց կապը սնուցիչ մայր երակէն:

Հայ դարաւոր եկեղեցւոյ հաստարեստ մոյթերը սասանելու եւ անոր ամրակուռ պարիսպները քանդելու նշաններ են ասոնք: Նման անպատասխանատու արարքներ մեզի ազգովին պիտի կործանեն: Այս հարուածը գէթ պէտք է խնայուի հայոց րազմաչարչար եկեղեցիին:

Դժբախտաբար, ոմանց համար գրաբարը ոչ մէկ նշանակութիւն եւ արժէք չունի: Անոր վերացումը մեր եկեղեցական կեանքէն ոչ մէկ պակաս կրնայ ստեղծել: Մեր մեծ քանաստեղծ Յովհաննէս Թումանեան տեղ մը շատ գեղեցիկ կերպով կ'ըսէ. «Հոգեւորական ասելով երկար շորեր են հասկանում եւ երկար միտում: Ու եթէ նա Աւետարանը փնացնի - ոչինչ, քայց եթէ միտումը

խուզի, մեծ իրարանցում կը ձգի հաւատացեալներին մէջ»: Նոյնն է պարագան նաեւ գրաբարին: Գրաբարը անդամահատել, կրճատել, վերացնել, փնացնել - ոչինչ, ապա փորձեցէ վերացնել կամ ջնջել եկեղեցիներու դաշտահանդէսները (Picnic) կամ վաճառատուները (Bazaar), եւ կամ գորգավաճառութիւնը (Rug Sale) եւ կը տեսնէք թէ ինչ ահաւոր աղմուկ կը քարձրանայ, կը տեսնէք թէ ինչպէս զանգուածային դժգոհութիւն կ'առաջանայ: Ոմանց համար եկեղեցին հանդիսավար է լոկ, ուր մարդիկ կը հաւաքուին ակումբային դիտաւորութեամբ ու հոգեքանութեամբ, եւ կամ աւելի լաւ է ըսել՝ առեւտրական հաստատութիւն մը դեկավարելու ցանկութեամբ:

Մարդ մերթ կ'ուզէ հարցնել թէ անգլերէն լեզուի նորամուծումը արդեօք մտածողութեան ու մանաւանդ հոգեւոր զգացողութեան նոր որակ ու մակարդակ պիտի բերէ: Բնական է՝ ո'չ: Գրաբարի հակառակորդներ, կը զգան որ ժամանակը եկած է որ դարաւոր օրէնքը բեկանուի եւ սովորոյթը վերացուի: Վստահաբար ի մտի ունին «Հարկ լուծանէ զօրէնս» նշանաւոր խօսքը: Ոմանք նոյնիսկ կը հաւատան որ Մարտ Թուէյնի խորհուրդով հարկ է ընթանալ. «Սովորոյթը սովորոյթ է, զայն պատուհանէն դուրս չեն նետեր, հարկաւոր է զայն քայլ առ քայլ հրապուրելով դուրս հանել տունէն»: Անտարակոյս, սովորութիւններ կան կեանքի մէջ, որ պէտք ունին փոփոխութեան: «Սովորոյթի ուժը» շատ մը հարցերու մէջ կրնայ մեզ կաշկանդել եւ թոյլ չտալ որ մենք յառաջանանք ու զարգանանք: Բայց գէթ այս հարցի մէջ «սովորոյթի ուժի յաղթահարում»-ի հետ գործ չունինք: Գրաբարի պահպանումը կ'անդրանցնի սովորական սովորոյթը,

որովհետեւ ան այլեւս դարաւոր աւանդոյթ է, որ մենք ժառանգած ենք մեր նախնիներէն: Աւանդոյթը կարելի չէ ժխտել որովհետեւ սերտ աղերս ունի մեր ժառանգականութեան հետ:

Գրաբարը ժանգագերծ է ու անընդունակ հիննալու, եթէ հիննայ իսկ, աւելի կը քաղցրանայ: Օտարներ կրնան զարմանալ թէ ինչպէ՞ս այս լուսաւոր դարուն, հայեր կը շարունակեն գործածել հնացած ու անգործածելի դարձած գրաբարը: Վահան Տէրեան ճիշդ րսած է. «Մեզ չի հասկանայ օտարերկրացին»: Եւ իրօք, ոչ-հայեր, երբեք պիտի չհասկնան թէ հայեր միայն ու միայն այսպիսի աւանդապահութեամբ ու բծախնդրութեամբ կրցած են պահել ոչ միայն իրենց ինքնութիւնը, այլեւ բազմաթիւ գանձերը եւ ոգեղէն արժէքները:

Խորին ցաւ ու փստսանք հարկ է յայտնել որ հասած ենք այսպիսի դժբախտ ու անբաղձալի օրերու: Միշտ առկայ էին բաղձանքն ու ակնկալիքը, որ «բախտորոշ ու ժպտուն» օր մը գրաբարը վերջնականապէս կը դադրի գործածութենէ: Դարերով՝ արեւմտ, արուստեամբ ու սրբութեամբ պահպանուած եւ ոչ երբեք հնացած անզուգական գրաբարը մահախուճի կ'ուզեն դրկել եւ անոր փոխարէն կը պահանջեն հայոց պաշտամունքին անհարազատ ու անհաղորդ լեզու մը: Կեանքի մէջ, կան գնալուն ու մնալուն արժէքներ, կորչող ու մշտատեւ իրականութիւններ: Գրաբարը ցարդ ներկայացուցած է մնալուն արժէք ու յուսալի է որ նշանախէց մ'իսկ չփոխուի եւ մնայ անհպելի ու անփոփոխ:

Դարերով, հայ կղերը, հաւատարիմ ու բծախնդիր իր նախահարց

աւանդին, խղճմտութեամբ ունկնդրելով իր ցեղին ձայնը, ամենայն ճշդակատարութեամբ ու օրինապահութեամբ պահպանած է իրեն սրբութեամբ աւանդուածը:

Գրաբարը մեր Պատարագի ոգին է: Ան յաւերժական ակունքն է մեր ներշնչումի, աղօթքի: Պատարագը կարելի է մատուցել աշխարհի որեւէ լեզուով, բայց հայ Պատարագ չըլլար: Հայ Պատարագի համար կենսական է ունենալ հայերէն լեզու: Մեր ոսկեղէնիկ գրաբարը հարազատ արտայայտութիւնն է մեր վճիտ զգացումներուն: Գրաբարով շնչած, աղօթած ու ապրած են մեր նախահայրերը դարերով: Մենք եւս, իբրեւ արժանաւոր յաջորդները մեր նախնեաց, պարտինք շարունակել գրաբարը եւ անոր ոգիով հաղորդել ու մկրտել նորահաս սերունդը:

Աւանդախախտութիւն պիտի ըլլար գրաբարի ջնջումը (թէկուզ եւ ժամանակաւոր) կամ փոխարինումը մէկ այլ լեզուով: Լեզուն խտացումն է մեր նուիրական զգացումներուն: Լեզուն է որ կը միատեղէ ու կը զօդէ ժողովուրդի բոլոր բեկորները եւ անոնց միջեւ կը ստեղծէ անփակտելի կապ: Լեզուն է որ թարգմանը կը հանդիսանայ մեր կոտտացող ցաւերուն եւ հրճուանքներուն, տենչերուն ու երազներուն:

Վերստին կրկնենք, վասն զի «կան կրկնութիւններ, որոնք նման են մեխի. մի էանի հատ է...»: Գրաբարը այսօր եւս կը խօսի մեր սիրտերուն իբրեւ պերն, սահուն, պատկերաւոր, հարազատ, հարուստ, պարզ ու վճիտ լեզու: Հետեւաբար, հարկ է գրաբարը պահպանել իբրեւ զրիք ական:

ՋԵՆՈՒՐ ՔԷՆՅ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

**ՏԵՂԵԿԱՆՔ ԿՈՐԻԻՆ ԱԲՂ. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԻ**

**ՄԱՆԿԱՊԱՐԷԶԻ ՀԱՆԴԵՍ**

2004 թ. Մայիսի 30-ին, Ժառանգաորաց Վարժարանի սրահի մեջ տեղի ունեցավ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Մանկապարտէչի բաժնի ամառային հանդէպը:

Փոքրիկներն իրենց Կուսակցութեան և խինդով լեցուն երգեցողութեան, արտասանութիւններով, ինչպէս նաև փոքրիկ թատերական բեմականացման մեծ բարարութիւն և հաճելի պատեր նուիրեցին իրենց ծնողներին, ներկայ բոլոր հանդիսականներին: Մանկապարտէչի Ծաղիկ բաժնի 10 շրջանաւարտները Պատրիարք Սրբապանից սուսցան իրենց վկայականները, որոնք յաջորդ ուսումնական տարի՝ կը համալրեն Նախակրթարանի բաժնի Ա. դասարանը:

Հանդէսի աւարտին, Պատրիարք Սրբապան Հայրը անդրադարձաւ մանկապարտէչից դուրս՝ տանը տրուելիք դաստիարակութեան անհրաժեշտութեանը, որտեղ ուսուցիչները ծնողներն են: Տանը ծնողների տուած դաստիարակութեանը և մանկապարտէչում դաստիարակների կողմից տրուած կրթութեանը միայն կարելի է մեր մանուկներին անթերի և ամբողջական մանկական կրթութիւն տալ: Իր խօսքի վերջում, Սրբապան Հայրը քաջալերեց Մանկապարտէչի բաժնի դաստիարակներին՝ իրենց կատարած աշխատանքի համար և օրհնեց նրանց՝ իրենց հետագայ գործունէութեանց մէջ:

Հանդէսն աւարտուեց Սրբապան Հօր «Պահպանիչով» և «Հայր Մեր»-ի երգեցողութեանը:

**ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐՃԱՐԱՆԻ ԱՍԱՎԵՐԶԻ ՀԱՆԴԵՍ**

2004 թուականի Յունիսի 5-ին, Ժառանգաորաց Վարժարանի սրահի մէջ տեղի ունեցավ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի ամառային հանդէպը:

Հանդէպը բացուեց Հայաստանի Հանրապետութեան հիմնով և Սրբոց Թարգմանչաց Վարժարանի քայլերգով, որին յաջորդեց շրջանաւարտներից Արմիկ Պէլեանի բացման խօսքը: Այնուհետև ուսանողները փայլուն կերպով երգեցին հայրենասիրական երգերի շարան, մի քանիսը հանդէս եկան գեղեցիկ արտասանութիւններով, իսկ աւարտական դասարանի շրջանաւարտներից երկուսը նուագեցին կիթառի վրայ:

Շրջանաւարտներից Սեդրակ Պալեանը, Արմիսկ Նազգաշեանը, Պետիկ Պաղամեանը և Մէլի Յովհաննէսեանը հանդէս եկան հայերէն, անգլերէն, արաբերէն և երբայերէն ուղերձներով: Իրենց խօսքում նրանք երախտագիտութիւն յայտնեցին Երուսաղէմի գահակալին, այն բանի համար, որ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի անհրաժեշտ կարիքներն ու ծախսերը հոգում է պատրիարքարանը, որով և հնարաորութիւն է տրուում Երուսաղէմի բոլոր հայ մանուկներին հայեցի կրթութիւն ստանալ հայրենիքից դուրս: Նրանք նաև իրենց խորին շնորհակալութիւնը յայտնեցին իրենց բոլոր ուսուցիչներին, որոնք ոչինչ չեն ինչպէս իրենց կրթութիւնը անթերի և կատարեալ դարձնելու համար: Այնուհետև, Վարժարանի Տեսուչ Թէոդորոս Աբղ. Զաքարեանը ներկայացրեց Վարժարանի տարեկան տեղեկագիրը:

Ապա տեղի ունեցաւ մրցանակաբաշխութիւն: Մրցանակների արժանացան աւարտական դասարանի ուսման մէջ բարձրագոյն և երկրորդ հանդիսացած ուսանողները, վարքի և կարգապահութեան մէջ լաւագոյն ճանաչուած ուսանողը, օտար լեզուների մէջ բարձրագոյն նիշ ապահոված

ուսանողը, ինչպէս նաեւ կրօնագիտական եւ ընդհանուր գիտութիւնների մէջ բարձրագոյն միջին բերած ուսանողը:

Մրցանակաբաշխութեանը յաջորդեց վկայականների յանձնումը:

Հանդէսի աւարտին Պատրիարք Սրբապանը իր փակման խօսքում շեշտեց սփիւրքում տրուած հայեցի կրթութեան կարեւորութիւնը, իսկ ուսանողներին ուղղած իր խօսքում ասաց. «Այժմ աւարտեցիք ուսման ընդամենը մէկ շրջան, եւ այժմ մտքով եւ հոգով պորտաքած, ինչպէս նաեւ ձեր ստացած կրթութեամբ, պիտի սնունէք կեանքի բոլորովին նոր սապարէլ, պիտի շարունակէք ուսմանը նոր համակարգում եւ դա առիթ է, որ ձեր ստացած կրթութեամբ կարողանաք յաղթահարել բոլոր դժուարութիւնները եւ փորձութիւնները»:

Հանդէսը աւարտուեց Պատրիարք Սրբապանի «Պահպանիչով» եւ «Հայր Մեր»-ի խմբական երգեցողութեամբ:

### ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԷՍ

Սոյն թուականի Յունիսի 11-ին, տեղի ունեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի ամավերջի հանդէսը:

Պատրիարք Սրբապան Հօր եւ Միաբան Հայրերի մուտքից յետոյ Ժառանգաւոր սաներ երգեցին Հայաստանի Հանրապետութեան հիմնը եւ Ժառանգաւորաց Վարժարանի քայլերգը, որին յաջորդեց Վարժարանի Տեսուչ Պարէտ Ծ. Վրդ. Երեցեանի բացման խօսքը: Այնուհետեւ սաները հանդէս եկան հայրենասիրական երգերով, իսկ մի քանիսը՝ յաջող կերպով դասական կտորներ կատարեցին դաշնամուրի վրայ:

Հայերէն, անգլերէն եւ երբայերէն ուղերձներով հանդէս եկան Ժառանգաւորաց Վարժարանի երեք շրջանաւարտները եւ Ընծայարանի բաժնի շրջանաւարտը: Նրանք իրենց երախտագիտութիւնը յայտնեցին Պատրիարք Սրբապան Հօրը եւ Միաբանութեանը՝ իրենց ջանքում կրթութեան եւ դաստիարակութեան համար: Այնուհետեւ, Տեսուչ Հայր Սուրբը ներկայացրեց Վարժարանի տարեկան տեղեկագիրը:

Ապա տեղի ունեցաւ մրցանակաբաշխութիւն: Մրցանակների արժանացան իւրաքանչիւր դասարանի ուսման մէջ բարձրագոյն եւ երկրորդ հանդիսացած ուսանողները, վարքի եւ կարգապահութեան մէջ լաւագոյն ճանաչուած ուսանողները, ինչպէս նաեւ բարձրագոյն միջին բերած ուսանողը:

Մրցանակաբաշխութեանը յաջորդեց վկայականների յանձնումը: Ընծայարանի շրջանաւարտ սարկաւազը յառաջիկային պիտի համալրի Միաբանութեան շարքերը, իսկ Ժառանգաւորաց Վարժարանի շրջանաւարտները յաջորդ ուսումնական տարում պիտի շարունակեն իրենց ուսումը Ընծայարանի առաջին դասարանում:

Հանդէսի աւարտին, Պատրիարք Սրբապանը իր փակման խօսքում շեշտեց կրօնական, ընդհանուր կրթութեան եւ դաստիարակութեան կարեւորութիւնը: Սրբապան Հայրն իր խօսքն եպրափակեց իմաստասիրական հետեւեալ խորհուրդով. «Կրթութիւնը պէտք չէ որ լինի ձեր նպատակը, այլ ձեր նպատակին հասնելու միջոցը»:

Հանդէսը աւարտուեց Սուրբ Աթոռոյս օրհներգի երգեցողութեամբ եւ Պատրիարք Սրբապանի «Պահպանիչով»:

Ապա, Պատրիարք Սրբազանը եւ շրջանաւարտները միասին կոտեցին կարկանդակը, որ նուիրել էր Երուսաղէմի Բարեսիրաց Միութիւնը ի պատիւ շրջանաւարտ ուսանողների: Տեղի ունեցաւ նաեւ հիւրասիրութիւն:

### Տ. ՇԱՀԱՆ ԱՐՔ. ՍՎԱՃԵԱՆԸ ԱՅՅԵԼԵՑ ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐ

2004 թուականի Յուլիսի 13-ին Թուրքիայից Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Մայրավանք ժամանեց Կ. Պոլսոյ Պատրիարքական Փոխանորդ Տ. Շահան Արք. Սվաճեանը:

2004 թուականը յոբելիանական տարի է Սրբազան Հօր համար: Ուղիղ 50 տարիներ առաջ՝ 1954, Այլակերպութեան օսոնին, Սր. Յակոբի կամարների ներքոյ Սրբազան Հայրը ընդունեց կուսակրօն քահանայի ձեռնադրութիւնը:

Յուլիսի 19-ին. ձեռնադրութիւնից 50 տարիներ յետոյ, Այլակերպութեան օսոնին Սրբազան Հայրը իր յոբելեանի առիթով, Ուխտի Պատարագ մատուցեց եւ յատուր պատշաճի քարոյեց:

Պատարագից յետոյ Բաղչաթաղի վարդապետաց սեղանատան մէջ միաբանական ճաշի ընթացքին Սրբազան Հօրը շնորհատորանքի եւ գնահատանքի խօսքեր ուղղեցին Հոգեւորական Հայեր եւ Պատրիարք Սրբազան Հայրը: Իսկ Շահան Սրբազան Հայրը իր խօսքում երանութեանք յիշեց Սր. Աթոռին ծառայած իր տարիներն ու բարի յիշատակները եւ երախտագիտութիւն յայտնեց վանական իշխանութեանը՝ այսքան ջերմ ընդունելութեան եւ հիւրասիրութեան համար:

Սրբազան Հայրը այցելեց նաեւ Բեթղեհէմի Ծմնդեան Սր. Տաճար, Գեթսեմանիի Սր. Աստուածածին Տաճար, ինչպէս նաեւ Սուրբ Երկրիս քրիստոնէական կարեւոր սրբավայրերն ու եկեղեցիները:

Յուլիսի 21-ին, Շահան Սրբազան Հայրը իր ուխտը նորոգած եւ հոգեկան մեծ լիցք ստացած, վերադարձաւ Թուրքիա՝ իր հետ տանելով Սուրբ Երկրի օրհնութիւնները Թուրքիայի հայ համայնքին:

### Տ. ԱՌԷՆ ԱՐԴ. ՃԷՊԷՃԵԱՆՆ ԵՒ ՊՐ. ՅԱԿՈՒ ԵՆՐՍՈՅԵԱՆԸ ԱՅՅԵԼԵՑԻՆ ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐ

Երուսաղէմը, դարերի ընթացքում եղել է այն քաղաքը, դէպի ուր կեանքի ընթացքում գոնէ մէկ անգամ ուխտի գնալը, միշտ եղել է իւրաքանչիւր հայի փայփայեամ նուիրական երազանքը:

2004 թուականի Սեպտեմբերի 30-ին ուխտաւորաբար Ամերիկայի Միացեալ Նահանգներից Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Մայրավանք ժամանեցին Շիկագոյի հոգեւոր հովիւ Տ. Առէն Արդ.Ճէպէճեանը եւ մեծ մօրեղբայրը՝ Պր. Յակոբ Ներսոյեանը:

Տ. Առէն Արդ. Ճէպէճեանը (ձեռնադրուած Ապրիլ 24, 2004 թ.) կեցութեան կարճ ժամանակահատուածում Ուխտի Պատարագներ մատուցեց Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի Սուրբ Գլխաղրի խորանում, Սուրբ Յարութեան Տաճարում՝ Տիրոջ Սր. Գերեպմանի վրայ, Գեթսեմանիի Սր. Աստուածածին եկեղեցում եւ Բեթղեհէմի Ծմնդեան Տաճարի Սուրբ Այրում: Ուխտի բոլոր պատարագներին իր մասնակցութիւնը բերեց նաեւ Հայր Սուրբի ձեռնադրութեան կնքահայր Պր. Յակոբ Ներսոյեանը:

Ի պատիս հիւրերի՝ հիւրասիրութիւն տրուեց Պատրիարքարանի փոքր դպիւհանում, որի ընթացքում Պր. Յակոբ Ներսոյեանը խօսեց Հայ Եկեղեցու առջեւ ծառայած ինդիքների մասին եւ տուեց իր անձնական լուծումները եւ մօտեցումները դրանց վերաբերեալ: Պր. Յակոբ Ներսոյեանը ինաստուայ է, երկար տարիներ դասախօսել է Օհայօի Դէթն քաղաքի համալսարանում եւ հեղինակ է մի շարք ինաստասիրական եւ աստուածաբանական գրքերի եւ յօդուածների:

Հոկտեմբերի 5-ին Հայր Սուրբը եւ Պր. Յակոբ Ներսոյեանը իրենց ուխտը նորոգած եւ հոգեկան մեծ լիցք ստացած վերադարձան Ամերիկայի Միացեալ Նահանգներ՝ իրենց ծուխին տանելով Սուրբ Երկրի օրհնութիւնները: Պր. Յակոբ Ներսոյեանը Տ. Տիրան Արք. Ներսոյեանի եղբայրն է, իսկ Հայր Սուրբը՝ Սրբապանի քրոջ թոռը:

### ՁԵՆՆԱՊՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՅ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Ձեռնադրութիւնը Հայ Եկեղեցու եօթ խորհուրդներից մէկն է: Ձեռնադրութիւն, բառացի նշանակում է ձեռք դնել ձեռնադրեալի՝ կրօնական աստիճան ստացողի գլխին: Ձեռնադրութեամբ Եկեղեցու ծառայութեանը կոչուած անձը ստանում է Սուրբ Հոգու շնորհները, ինչպէս նաեւ աստուածային ինաստութիւն, այսինքն՝ Ձեռնադրութիւնը շնորհի եւ ինաստութեան բաշխման խորհուրդ է: Ձեռնադրութեան խորհուրդը հաստատել է Ինքը՝ Բրիտանոս, Իր աշակերտներին մեղքերի թողութիւն տալու, քարոզելու եւ բժշկելու իշխանութիւն տալով, իսկ առաքեալները Հոգեգալստեան օրը Սուրբ Հոգու շնորհները ստանալով՝ նոյն իշխանութիւնը փոխանցեցին նաեւ իրենց յաջորդներին:

Շնորհաբաշխութեան նմանօրինակ արարողութիւններ տեղի ունեցան նաեւ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարում. Հոկտեմբերի 22-ին եւ 23-ին՝ Սրբոց Թարգմաչաց տօնին եւ տօնի նախորդ օրը:

Հոկտեմբեր 21-ին, Երեկոյեան ժամերգութեան աւարտին Ժառանգաւորաց Վարժարանի շրջանաւարտ ուրարակիրներ Արուսակ Յակոբեանը, Յովհաննէս Գեորգեանը, Պատել Դաթեանը, ինչպէս նաեւ, Հայֆաբնակ Աւետիս Ծախիւեանը Կիսասարկաւազի աստիճան ստացան, իսկ Ժառանգաւորաց Վարժարանի չորրորդ դասարանի ուսանողներ Սամուէլ Սաֆարեանը, Նարեկ Սկրոչեանը, Պատել Կարապետեանը եւ Սահակ Յովակիմեանը ստացան ուրար կրելու իրաւունք, ձեռամբ Պատրիարք Սրբապան Հօր:

Հոկտեմբերի 22-ին, Սուրբ Պատարագի ընթացքին չորս կիսասարկաւազները Պատրիարք Սրբապան Հօր ձեռամբ ձեռնադրուեցին սարկաւազ եւ անմիջապէս սպասարկեցին Սուրբ Պատարագին: Ձեռնադրութեան խարտաւիլակն էր Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ Տ. Նուրիան Արք. Մանուկեանը, իսկ առընթերականները՝ Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երեցեան եւ Տ. Թէոդորոս Արդ. Չաքարեան:

Նոյն օրը, երեկոյեան ժամերգութեան աւարտին, տեղի ունեցաւ Ընծայարանի շրջանաւարտ Յարութիւն Սրկ. Եղիայեանի քահանայական կոչման արարողութիւնը: Խարտաւիլակ Սրբապան Հօր եւ առընթերակայ վարդապետների ողեկցութեամբ ընծայեալը Մայր Տաճարի աւագ մուտքից մտնելով առաջացաւ դէպի Աւագ խորան, ուր՝ փոքր ատեանի մէջ բապնած էր Պատրիարք Սրբապան Հայրը: Արարողութեան ընթացքին ընծայեալը յանձն

առաւ հետեւելու Հայ Եկեղեցու ուղղափառ դասանանքին եւ Սուրբ Հայրերի ուսուցումներին՝ միաժամանակ մերժելով բոլոր աղանդաւոր վարդապետութիւններն ու հերետիկոսութիւնները, դրանց հեղինակներին եւ գաղափարակիրներին եւ ապա ընթերցեց Ս. Գրիգոր Տաթեւացու բանաձեւած Հաւատամքը:

Յաջորդ օրը, Սրբոց Թարգմանչաց տօնին մատուցուած Սուրբ Պատարագի ընթացքում, Խարոտալիլակ Սրբապան Հօր եւ առնթերակայ վարդապետների ուղեկցութեամբ ընծայեալը առաջնորդուեց փոքր առեան: Աւետարանը համբուրելուց յետոյ ընծայեալը ծնկաչոք բարձրացաւ դէպի Աւագ խորան, ուր եւ կատարուեց Ձեռնադրութեան արարողութեան առաջին մասը, որի ընթացքում ընծայեալն ի նշան աշխարհից հրաժարման շրջուեց դէպի ժողովուրդը՝ բապուկները վեր բռնած, այնուհետեւ կատարուեցին աւետարանական համապատասխան ընթերցումներ եւ աղօթքներ:

Սուրբ Պատարագը շարունակուեց մինչեւ «Ողջոյնի» պահը: Ապա, երգեցողութեամբ Աւագ խորան բերուեց Սուրբ Մխռոնը, որով եւ օծուեց ընծայեալի ճակատը, աջ եւ ձախ ձեռքի սիւերը: Օծման արարողութեան ընթացքում Ձեռնադրող Պատրիարք Սրբապանը ընծայեալին օծեց Տէր Հայկապուն անուամբ: Ըստ Եկեղեցու աւանդութեան՝ ձեռնադրուողի անուանափոխութիւնը նոր մարդ դառնալու խորհրդանշանն է: Նոր ձեռնադրեալին տրուեց նաեւ պատարագելու իշխանութիւն (սկիի): Ապա քահանայական ձեռնադրութիւն ստացած ընծայեալը տուեց իր անդրանիկ օրինութիւնը եկեղեցում հաւարուած բապուկեանը: Օծման արարողութիւնից յետոյ, Պատրիարք Սրբապանը իր քարոզում յորդորեց նոր ձեռնադրեալին անխախտ եւ հաստատուն մնալ իր նոր կոչման մէջ, չընկրկել փորձութիւնների եւ դժուարութիւնների առջեւ, հաստատրիւմ մնալ Հայց. Եկեղեցոյ դարաւոր եւ հարուստ ժառանգութեանն ու աւանդութիւններին եւ լինել «մշակ առանց անօթոյ»:

Նոյն օրուայ երեկոյեան տեղի ունեցաւ նորընծայի վեղարի տուուչութեան արարողութիւնը: Հայր Աստծուն, Որդի Աստծուն եւ Սուրբ Հոգուն ուղղուած աղօթքների ընթերցումից յետոյ, օրինուեց նաեւ վեղարը, որով եւ փոխարինուեց նորընծայի գրակը:

Նոյն երեկոյեան Բարչաթաղի վարդապետաց սեղանատան մէջ միաբանական ընթրիք տրուեց ի պատիւ նոր ձեռնադրեալ Հայր Սուրբի: Ընթրիքի ընթացքին Հայր Սուրբին շնորհաւորանքի խօսքեր եւ բարեմտաղթանքներ ուղղեցին Ժառանգաւորաց Վարժարանի Տեսուչ Հայր Պարեւ Ծ. Վրդ. Երեցեանը եւ Արիս Եսաւ. Շիրվանեանը: Իսկ նորընծայ Տ. Հայկապուն Արդ. Եղիայեանը երախտագիտութիւն յայտնեց վանական իշխանութեանը՝ իր համղեպ ցուցաբերած վստահութեան համար եւ խոստացաւ իրականացնել բոլոր յոյսերն ու ակնկալիքները: Ընթրիքն աւարտուեց Պատրիարք Սրբապան Հօր քաջալերական խօսքով: Ընթրիքին ներկայ էին Միաբան Հայրերը եւ Ժառանգաւորաց Վարժարանի սաները:

Հայկապուն Արդ. Եղիայեանը քառասնօրեայ պատրաստութեան շրջանը պիտի անցկացնի Բեթլեհէմի Վանքում՝ իրեն ուսուցիչ ունենալով Վանքի տեսուչ Տ. Ռապիկ Վրդ. Պողոսեանին:

## ՎԵՐԱԾՈՒՅՑ ՌԱՍԼԷԻ ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՅԻՆ

Երուսաղեմի ընկալեալ սովորութեան համաձայն ամէն տարի՝ Սբ. Գէորգ Կորափայի տօնի յաջորդ կիրակին, Ռասլէի Սբ. Գէորգ վանքի տարեկան ուխտագնացութեան օրն է:

Երուսաղեմի բոլոր հայերը եւ, առ հասարակ՝ Իսրայէլի հայութիւնը թաքուն անհամբերութեամբ են սպասում Սուրբ Գէորգին յայտնելու իրենց արտի անկիւնում փայփայած տաքուկ երազներն ու ցանկութիւնները: Եւ սա պայմանաւորուած է Սուրբի հանդէպ ունեցած մեր ազգի մեծ սիրով եւ փառահռութեամբ:

Սակայն այս տարուայ ուխտագնացութեան օրը, Հոկտեմբեր 17-ին, կրկնակի ուրախութեան եւ բերկրանքի տօն էր բոլոր ուխտաւորների համար, քանզի երկար տարիներից ի վեր հիմնաւոր նորոգութեան կարօտ եկեղեցին, այս տարի նորոգուեց եւ ձեռամբ Սբ. Աթոռոյս Լուսարարապետ Տ. Նուրիան Արք. Մանուկեանի՝ վերածուեց:

Ռասլէի Սբ. Գէորգ Եկեղեցին կառուցուել է Երուսաղեմի Եղիապար Պատրիարքի օրօք՝ 17-րդ դարի երկրորդ կէսին: Տարիների ընթացքում վանքը ծառայել է իբր հայ ուխտաւորների կայանավայր եւ հանգստավայր: Վանքը արաբ զիւղացիների կողմից բազմիցս ենթարկուել է հարստահարութիւնների եւ կողոպուտի: 1843 թուին Երուսաղեմի Չաքարիա Պատրիարքի ջանքերով եւ տնօրինութեամբ, Ռասլէի վանքում հիմնուել է Ժառանգաւորաց Վարժարանը, որը երկու տարի գործելուց յետոյ՝ տեղափոխուել է Երուսաղէմ: 1915 թ. Եղեռնից յետոյ Ռասլէի Վանքում ապաստանել են տասնեակ հայ փոսարանդի ընտանիքներ: Այժմ վանքն անմխիթար եւ աներակ վիճակում է եւ կարօտ է նորոգութեան:

Եկեղեցու վերանորոգման եւ բարեկարգման դրամական միջոցները հայթայթուել են վանքի հոգեւոր հովիւ Տ. Ընծանուէր Արք. Բարախանեանի անմիջական ջանքերի շնորհիւ, Իսրայէլի հայութեան դրամական նուիրատուութիւններով, ինչպէս նաեւ Պատրիարքարանի տրամադրած միջոցներով:

Եկեղեցու վերանորոգման աշխատանքները սկսուել էին սելէի քան մէկ տարի առաջ եւ աւարտին հասցուեցին Տօնի նախօրէին:

Օձման աւարտին մատուցուեց Սուրբ եւ աննահ Պատարագ, յաւարտս որոյ՝ Հոգեհանգստեան պաշտօն՝ բոլոր նուիրատուների ննջեցեալների հոգիների համար:

Պատարագի աւարտին, աւանդութեան համաձայն, կատարուեց նաեւ մատաղի օրհնութիւն:

ԿՈՐԻՒՆ ԱԲԵՂԱՅ



ARMENIAN PATRIARCHATE OF JERUSALEM

بطريركيسة الأرمن القبطية الأرثوذكسية

PATRIARCAT ARMÉNIEN DE JÉRUSALEM

Կապ - Արիս Եպիսկոպոս Ծիրվանեան  
 Էֆումենիփ եւ Արտափին Գործերու Վարիչ  
 Tel: 9722-6282331; Fax: 6264861  
 E-Mail: [arminf@netvision.net.il](mailto:arminf@netvision.net.il)  
 Website: [www.armenian-patriarchate.org](http://www.armenian-patriarchate.org)

15 Հոկտեմբեր 2004, Երուսաղէմ

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**  
**ԹՈՒԿԻ ՄԻՋԱԴԵՊ**

Կիրակի, 10 Հոկտեմբեր 2004-ին, Հին Տոմարով Վարագայ Սուրբ Խաչի Տօնին առփիւ, երբ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, առաջնորդութեամբ Ամեն. Պատրիարք Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեանի խորալեացի ոստիկաններու ընկերակցութեամբ հանդիսաւոր թափօրով Սրբոց Յակոբեանց Մայրավանէն կ'ուղղուէր դէպի Սուրբ Յարութեան Տանար, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Գերեզմանին վրայ Սուրբ Պատարագ մատուցանելու՝ հրէական դպրեվանքի մը 21 տարեկան ուսանող երիտասարդ մը յանկարծ թքեց թափօրական Ս. Խաչին եւ Սրբազան Պատրիարքին կողմէն քաղով Ս. Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Տ. Նուրհան Արքեպ. Մանուկեանին վրայ: Վերջինս չհանդուրժելով հակաքրիստոնէական այս անվայել եւ անարգական վերաբերմունքին՝ ապտակեց անկիրթ երիտասարդին, որ յանդգնեցաւ Սրբազան Հօր լանջապանակը պոկել: Ոստիկաններ զինք ձերբակալեցին եւ ոստիկանատուն տարին:

Այս միջադէպը որ հրապարակուեցաւ տեղական եւ միջազգային մամուլին մէջ՝ իր դրական ներգործութիւնը ունեցաւ Իսրայէլի պետական եւ կրօնական շրջանակներու վրայ: Ներքին Գործոց Նախարար պարոն Արրահամ Փօրագ Երուսաղէմի քրիստոնեայ եկեղեցիներուն ուղղած իր նամակով իր ցասումը արտայայտեց այսպիսի հակաքրիստոնէական արարքներու դէմ թելադրելով որ Ապահովութեան Ուժերու նախարարը անհրաժեշտ միջոցները ձեռք առնէ կանխելու համար նմանօրինակ երեւոյթներ:

Արդարեւ Երուսաղէմի Հին Քաղաքի ոստիկանապետը հանդիպում մը կազմակերպեց պատրիարքարանիս ներկայացուցիչներուն եւ հրեայ երիտասարդին, իր հօր եւ իր դպրեվանքին ղեկավարներուն միջեւ 14 Հոկտեմբերին: Մեր ներկայացուցիչներն էին՝ Լուսարարապետ Գերշ. Տ. Նուրհան Արքեպս. Մանուկեան, Էֆումենիփ եւ Արտափին Յարաբերութեանց Վարիչ Գերշ. Տ. Արիս Եպս. Ծիրվանեան եւ Աւագ Թարգման Հոգշ. Տ. Գուսան Վարդապետ Ալեանեան: Յանցաւոր երիտասարդը եւ իր ընկերակիցները ցաւ յայտնեցին եւ ներողութիւն խնդրեցին այս ցաւալի պատահարին համար: Մեր ներկայացուցիչները քրիստոնէական սիրոյ ոգիով ընդունեցին անոնց զոյգումը միաժամանակ թելադրելով որ անոնք իրեց նոր սերունդը դաստիարակեն ուրիշներու կրօնական ազատութիւնը եւ մարդկային իրաւունքները յարգելու պարտաւորութեամբ:

ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ Ա.ԹՈՒՌՅ



ARMENIAN PATRIARCHATE OF JERUSALEM  
 بطريركية الأرمن القبطية في القدس  
 PATRIARCAT ARMÉNIEN DE JÉRUSALEM

OFFICE OF ECUMENICAL  
 AND FOREIGN RELATIONS  
 Contact person: Bishop Aris Shirvanyan  
 Tel: 972-2-6282331  
 Fax: 972-2-626-4861  
 E-Mail: [arminf@netvision.net.il](mailto:arminf@netvision.net.il)

**ՊԱՇՏՏՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**  
**ԹԻՔԵԼՈՒ ՄԻՋԱԴԷՊԵՐՈՒՆ ՀԵՏ**  
**ԱՌՆՉՈՒՈՂ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ**

Նրուսաղէմի Հին Քաղաքին մէջ դէպի Սուրբ Յարութեան Տանար երբի հանդիսաւոր թափօրի ընթացքին հրեական դպրեմանքի մը երիտասարդ ուսանողի մը կողմէ արձակուած թուփը Լուսարարապետ Գերշ. Տ. Նուրիան Արքեպ. Մանուկեանի եւ թափօրական խաչին վրայ՝ լայն արձագանգ գտնելով մամուլին մէջ՝ դրական հետեւանքներ ունեցաւ:

Պատրիարքարանս բազմաթիւ հեռախօսագանգեր ստացաւ հրեայ ռարքիներէ եւ այլ ականաւոր անձնաւորութիւններէ որոնք իրենց զգուսնքն ու ցաւը կ'արտայայտէին այսպիսի վիրաւորական երեւոյթի մը նկատմամբ:

Արքեպ. Պատրիարքը՝ Նորին Ամենապատուութիւն Տ. Թորգոմ Արքեպ. Մանուկեան՝ նամակներ յղեց Իսրայէլի Նախագահ Վսեմաշուֆ Պարոն Մոշէ Քացաւին եւ Վարչապետ Վսեմաշուֆ Պարոն Արիէլ Շարօնին յիշեալ հարցին առնչութեամբ եւ խնդրեց որ անոնք անհրաժեշտ միջոցները ձեռք առնեն կասեցնելու համար հրեայ ծայրայեղ կրօնական տարրերու կողմէ այսպիսի հակաքրիստոնէական անարգական արարքներ: Նորին Ամենապատուութիւնը իր գնահատանքը արտայայտեց Ներքին Գործոց Նախարար Պարոն Արրահամ Փօրագին՝ նմանօրինակ արարքներ դատապարտելուն համար:

Լոս Անճելըսի Սիմոն Ուիզընթալի Կեդրոնի Հանդուրժողութեան Թանգարանի ղեկավարները Նորին Ամենապատուութեան ուղղուած նամակով մը իրենց ցասումը արտայայտեցին յիշեալ արհամարհալից թուփով յարձակման համար եւ կը խոստանան իրենց կողմէ ջանքերը կրկնապատկել արգիլելու այսպիսի միջադէպեր:

Իր կարգին Վատիկանը Հրեաներու եւ Իսրայէլի Ռաբունապետութեան հետ կրօնական Յարաբերութեանց իր Միացեալ Յանձնաժողովի կողմէն հրապարակեց յայտարարութիւն մը 19 Հոկտեմբեր 2004-ին բնելով. «Նրուսաղէմը Արքեպ. Պարոնի որդիներուն համար սուրբ նկարագիր մը ունի: Մենք կոչ կ'ընենք թոյր պատկան իշխանութիւններուն յարգելու այս նկարագիրը եւ արգիլելու այն արարքները որոնք կը վիրաւորեն զգայնութիւնները կրօնական համայնքներու որոնք կ'ապրին Նրուսաղէմի մէջ եւ որոնց համար Նրուսաղէմը բանկ է»:

«Մենք կոչ կ'ուղղենք կրօնական իշխանութիւններուն հրապարակաւ բողոքելու տեղի ունեցող անարգական արարքներու դէմ՝ ըլլան ստոնք կրօնական անձերու, խորհրդանիշերու կամ Սուրբ Վայրերու հանդէպ՝ ինչպէս գերեզմանոցներու սրբապղծումներու՝ եւ վերջերս Նրուսաղէմի Հայոց Պատրիարքին դէմ կատարուած յարձակման պարագաներուն: Մենք իրենց կոչ կ'ուղղենք իրենց համայնքները



ARMENIAN PATRIARCHATE OF JERUSALEM  
 بطريركية ارمينية القسطنطينية  
 PATRIARCAT ARMÉNIEN DE JÉRUSALEM

դաստիարակել յարգանքով և պատկառանքով վերաբերուիլ մարդոց և անոնց ունեցած հաւատքին նկատմամբ»:

21 Հոկտեմբերին Նրուսաղէի Բաղաւապետը՝ Պարոն Ուրի Լուփոյեանսփին՝ հանդիպում ունեցաւ Նորին Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր և Գերշ. Տ. Արիս Նպիսկ. Շիրվանեանի՝ Պատրիարքանիս Միջ-եկեղեցական և Արտաքին Յարաբերութիւններու Վարիչին հետ և ներողութիւն խնդրեց հրեական դպրեվանքի ուսանողին թփելու արարքին համար: Ան խոստացաւ ռաբբիներուն հետ խօսիլ որ դաստիարակութեան նախապարհով պայտարին այս կերպ վարմունքի դէմ: Ան նաեւ յայտնեց թէ շուտով Քրիստոնէական Հարցերու Խորհրդական մը պիտի նշանակէ որ կապ պիտի պահէ քրիստոնէական եկեղեցիներու հետ: Նորին Ամենապատուութիւնը գնահատեց պարոն Բաղաւապետին այս ժեսթը:

26 Հոկտեմբերին Իսրայէլի Ասֆանգիներու Ռարունապետ Եօնա Մէցլէրի հրաւերով քրիստոնեայ եկեղեցիներու ներկայացուցիչներ հանդիպում մը ունեցան իրեն հետ Ռարունապետական Գրասենեակին մէջ: Սա իր տեսակին մէջ առաջին պատմական հանդիպում մըն էր Իսրայէլի պատմութեան մէջ որուն համար քրիստոնեայ պետերը իրենց գնահատանքը արտայայտեցին: Ներկայ էին Յոյն, Հայ, Ասորի, Ղպտի, Եթովպիացի և Ռուս Ուղղափառ Եկեղեցիներու՝ ինչպէս նաեւ Լատին, Յոյն Կաթողիկէ, Հայ Կաթողիկէ և Լուտերական Եկեղեցիներու նպիսկոպոսներ և վարդապետներ: Արիս Նպիսկոպոս Շիրվանեան կը ներկայացնէր Հայոց Պատրիարքը: Նաեւ ներկայ էին Քրիստոնեաներու և Հրեաներու Միջազգային Ընկերակցութեան Նախագահ Ռաբբի Նեխիէլ Էֆսայն և Ներքին Գործոց Նախարարութեան ու Կրօնական Գործերու պաշտօնեաներ:

Ռարունապետը բարիգալստեան խօսքերով ողջունեց բոլորի ներկայութիւնը: Ան գորաւոր կերպով դատապարտեց այլակրօն անդամներու դէմ ցուցաբերուած անարգական վերաբերմունքը նշելով որ ամէնքն ալ ստեղծուած են «Աստուծոյ պատկերով» և ուստի փոխադարձաբար անոնք պէտք է յարգուին հակառակ որ տարբեր կրօնական հաւատք և սովորութիւններ ունին: Բաց աստի ան յայտարարեց որ պիտի հրահանգէ ռաբբիներու որ իրենց սինակոկներուն մէջ սորվեցնեն իրենց հաւատացեալներուն քրիստոնեաներու հանդէպ վիրաւորիչ արարքներէ հեռու մնալ և յարգել գանձնէ:

Արիս Սրբազան շնչեց որ երկու շաբաթ առաջ հաղորդուած թփելու միջադէպը մեկուսի դէպք մը չէ: Անկէ յետոյ մման երկու դէպքեր եղած են ծայրայեղ հրեայ կրօնականներու կողմէ: Ան յայտնեց որ այսպիսի արարքներ ոչ միայն հրեայ տղամարդոց կողմէ կը կատարուին՝ այլ նաեւ կիներու և մանուկներու կողմէ որոնք անհրաժեշտաբար պէտք է դաստիարակուին ռաբբիներու կողմէ: Այսուհանդերձ ան նշեց որ հրեաներու մեծամասնութիւնը յարգալից են քրիստոնեայ հոգեւորականներու նկատմամբ:

Հանդիպումը եզրափակուեցաւ բոլոր մասնակիցներու կողմէ միատեղ ստորագրուած յայտարարութեամբ մը որով հրեայ և քրիստոնեայ հոգեւոր պետեր կոչ կ'ուղղեն իրենց հետեւորդներուն «աւելցնել իրենց հանդուրժողութիւնը, յարգանքը և հասկացողութիւնը այլ կրօններու պատկանող անդամներու նկատմամբ»:

**ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐՈՒ ՅԱՆԿ 2004 ՏԱՐԻՈՅ  
ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ ՏԱՃԱՐԻՆ ԵՒ Ս. ՏԵՂԵԱՅ**

1- Հոլանտարնակ, և Սուրբ Աթոռոյս միաբանութեան անդամներէն՝ Հոգչ. Տ. Մանուէլ Վրդ. Երկաթեան, Ս. Յակոբայ տաճարին կը նուիրէ արծաթեայ սկիւ մը, մաղղմայով միասին:  
(Յունուար)

2- Սաղիմարնակ Տիար Սեան Փանոսեան, Ս. Յակոբի կը նուիրէ երկու թիթեղ սոյայի իւղ:  
(Մարտ)

3- Մօրիկ Աւետիսեան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ կը նուիրէ բիւրեղեայ ջահ մը:  
(Մարտ)

4- Մարի և Անգինէ Գարակէօզեան քոյրեր, Ս. Յակոբի կը նուիրեն 12 սպիտակ և ժանեկաւոր բռնիչներ՝ ձեռաց խաչերու համար, և մէկ գունաւոր բռնիչ:  
(Մարտ)

5- Տիար Կարէն Մկրտչեան, Ս. Մակարայ մատրան դասին կը նուիրէ մեքենայի գործ գորգ մը:  
(Մարտ)

6- Տիկին Արմինէ Անդրէասեան՝ Ս. Յակոբի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկեայ մատանի մը:  
(Մարտ)

7- Աթէնքարնակ Տիկին Գոհարիկ Թաղէոսեան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ կը նուիրէ պղնձեայ բուրվառ մը:  
(Ապրիլ)

8- Տիար Գարիկ Հախվերտեան Սուրբ Աստուածածնի պատկերին կը նուիրէ սև ակով, ոսկեայ մատանի մը:  
(Ապրիլ)

9- Ս. Աթոռոյս միաբաններէն՝ Հոգչ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան, Ս. Յակոբի Մայր Տաճարին կը նուիրէ երկու ձեռք պատարագի զգեստ, ինչպէս նաև մէկական ձեռք Սրբոց Հրեշտակապետաց եւ Ս. Մննդեան տաճարներուն:  
(Օգոստոս)

10- Նազարէթարնակ ուխտաւոր՝ Միխայիլ Ղաթթաս, Ս. Յակոբի Աստուածածնայ Գեղեցիկ պատկերին կը նուիրէ ոսկեայ խաչ մը շղթայով: (Սեպտեմբեր)

11- Սաղիմարնակ Մարի եւ Անգինէ Գարակէօզեան քոյրեր, Սուրբ Գլխազրի խորանին կը նուիրեն սեղանի սպիտակ ծածկոց մը:  
(Հոկտեմբեր)

12- Սաղիմարնակ փոքրիկն Անուշ Կէճէքուչեան, Ս. Յակոբի կը նուիրէ զոյգ մը փոքր, արծաթագոյն աշտանակ:  
(Հոկտեմբեր)

13- Պէյրուժէն՝ Տիար Գրիգոր Գապաքեան, Ս. Յարութեան տաճարին կը նը-  
ւիրէ Հինգ (5) Հատ կարմիր, ոսկեթել բանուածքով եւ Հայկական խաչերով ուրարներ:  
(Նոյեմբեր)

14- Սաղիմարնակ Օրիորդներ Մարի եւ Անգինէ Գարակէօզեան, Ս.Յակոբի Աւագ  
խորանին կը նուիրեն սպիտակ, ժանեկաւոր ծածկոց մը: (Նոյեմբեր)

ՆուրՀան Արք. Մանուկեան  
Լուսարարապետ Ս. Աթոռոյ

ԵՐԱՆԻ ՎՈՐ ՈՒՆԻՅԻ ՅԻՇԱՏԱԿ Ի ՍԻՈՎՆ

### ՀՈԳՇ. ՏԵՐ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱԲՂ. ԵՂԻԱՅԵԱՆ

Հոգշ. Տ. Հայկապուն Աբղ. Եղիայեան, աւապանի անունով՝ Յարութիւն, ծնած է 1979-ին, Պէլրութ: Զաւակն է Սարգիս եւ Սիլվա Եղիայեաններու: Նախնական ուսումը ստացած է Մելակթոն - Հայկ Աւլանեան եւ Մխիթարեան դպրոցներուն մէջ:

1996-ին ընդունուած է Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանի ուսանող:

2001-ին կ'աւարտէ Ժառանգաւորաց Վարժարանը, իսկ 2003-ին կը ձեռնադրուի սարկաւազ՝ ձեռամբ Պատրիարք Մրաբապան Հօր: 2004-ին կ'աւարտէ Ընծայարանի բաժինը:

23 Հոկտեմբեր 2004-ին, Սրբոց Թարգմանչաց տօնին կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի ձեռամբ Պատրիարք Սրբապան Հօր:



Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՔ-ԲԵՄԱԿԱՆ ԻՔ

Շր. 5 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան:

Կիր. 6 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան եպս. Ղարիպեան: Ժամարարը եւ Բարոզիչն էր Տ. Պարէտ Մ. Վրդ. Երէցեան:

- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց Տ. Սեւան եպս. Ղարիպեան:

Բշ. 7 Յունիս.- Ա. Կուսանացն Հռիփ-սիմեանց: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ աւանդատան Ս. Հռիփսիմէի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրեան:

Ուր. 11 Յունիս.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Սեւան եպս. Ղարիպեան:

Շր. 12 Յունիս.- Ա. Գրիգոր Լուսաւորչին (Ելն ի Վիրապէն): Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորչի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Այնանեան:

- Կէսօրէ ետք Պատրիարք Սրբազանը նախագահեց «Կարող իկէ Եկեղեցւոյ» նախատօնակին եւ ծնրաղիր «Տէր Ողորմեա» երգուեցաւ ըստ սովորութեան:

Կիր. 13 Յունիս.- Տօն Կարողիկէ Արքայ էջմիածնի: Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Առաւօտեան ժամերգութեան աւարտին, կատարուեցաւ «Անդատան», Հանդիսապետութեամբ Տ. Սեւան եպս. Ղարիպեանի:

Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գազազեան: «Հայր Մեր»էն առաջ կատարուեցաւ «Հայրապետական Մաղրանը» վասն Մայր Արոտոյ Սրբոյ էջմիածնի, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Շր. 19 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գազազեան:

«Հայր Մեր»էն առաջ կատարուեցաւ «Հայրապետական Մաղրանը» վասն Մայր Արոտոյ Սրբոյ էջմիածնի, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Շր. 19 Յունիս.- Ս. Պատարագը

մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

Կիր. 20 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Ուր. 25 Յունիս.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Սեւան եպս. Ղարիպեան:

Շր. 26 Յունիս.- Ա. Գրիգոր Լուսաւորչին (Գիւտ Նշխարաց): Մայր Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ պատարագեց Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 27 Յունիս.- Երէկուան Ս. Գրիգոր Լուսաւորչի տօնին առիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Երուսաղէմի Հրէական բաժնին մէջ գտնուող եւ Մեծ Սուրբին անունը կրող Եկեղեցւոյ մէջ: Ժամարարը եւ Բարոզիչն էր Տ. Բագրատ Արդ. Պուրնէեան:

Դշ. 30 Յունիս.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Սեւան եպս. Ղարիպեան:

Եշ. 1 Յուլիս.- Ա. Թարգմանչաց վարադապետացն Մերոց Սահակայ եւ Մեսրոպայ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Կրկյակնեան Մատենադարանի Տեսուչ Տ. Նորայր Արդ. Գազազեան:

Շր. 3 Յուլիս.- Ա. Տրդատայ Թագաւորին Մերոյ եւ Աշխէն Տիկնոջ եւ Խոսրովի գիստոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արդ. Արաջանեան:

- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Կիր. 4 Յուլիս.- Գիւտ Տիգրայ Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Այնանեան:

Ուր. 9 Յուլիս.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Ուր. 10 Յուլիս.- Երկուտասան Առաւելոցն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պօղոսի վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

Կիր. 11 Յուլիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրեան:

Ուր. 16 Յուլիս.- Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից Ս. Էջմիածին մատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը:

Շր. 17 Յուլիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին: Ժամարարն էր Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

- Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը «Հրաշափառ»ով մուտք գործեց Մայր Տաճար, եւ նախագահեց Այլակերպութեան մեծահանդէս նախատօնակին եւ Տեառնեղբայր Յակոբոս Առաքելի Յիշատակի հանդէսին:

Ապա «Օրհնեցէ՛ք զՏէր» շարականի երգեցողութեամբ Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան:

- Գիշերակիրին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեցէ՛ք»ի եւ «Հսկման» կարգերուն հանդիսապետեց Տ. Տահան Արք. Ավանեան, նոյն խորանին վրայ իր կուսակրօն Բահանայ ծեռնադրութեան 50ամեակին առիթով ուխտաւորաբար երուսողէմ գալով Պոլիսէն:

Կիր. 18 Յուլիս.- Վարդավառ (Տօն Այլակերպութեան Տեսնուն) Ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «Անդաստան»: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ Բարոզեց Տ. Տահան Արք. Ավանեան:

Բշ. 19 Յուլիս.- Յիշատակ Մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գազազեան:

Ուր. 23 Յուլիս.- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Շր. 24 Յուլիս: Թագէտսի Առաքելոյն եւ Աննիստայ Կուսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 25 Յուլիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Բագրատ Արդ. Պուրճեմեան:

Շր. 31 Յուլիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Կորին Արդ. Բաղդասարեան:

Կիր. 1 Օգոստ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արդ. Բարախանեան:

Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Միացեալ Նահանգաց մէջ նորոգ հանգուցեալ Գեր. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեանի հոգւոյն համար:

Շր. 7 Օգոստ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Պարէտ Մ. Վրդ. Երէցեան:

Կիր. 8 Օգոստ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Շր. 14 Օգոստ.- Արքայն Գրիգորի Աստուածաբանին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

Կիր. 15 Օգոստ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Արդ. Ջախարեան: «Հայր Մեր»էն տաաջ Պատրիարք Սրբազանը կատարեց «Խաղողօրհնէ՛ք»ի արարողութիւնը:

Բշ. 16 Օգոստ.- Այսօր սկսաւ Ս. Կոսի վերափոխման տօնը կանխող հանդիսաւոր Ս. Պատարագներու մատուցումը Գերսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ:

Շր. 21 Օգոստ.- Եփեսոսի Ս. Ժողովոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աստուածամայր: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Կիր. 22 Օգոստ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աստուածամայր եւ ի Ս. Յարութիւն եւս, մեր վերնամատրան մէջ, ուր հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան եւ ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գազազեան:

Ուր. 27 Օգոստ.- Նախատօնակին ի Ս. Էջմիածին հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Շր. 28 Օգոստ.- Տօն Շուգակաբի Ս. Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աստուածամայր: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրեան:

- Կէսօրէ ետք Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գերսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւն ու նախատօնակ:

- Գիշերասկիզբին, նոյն վայրին մէջ պաշտուեցաւ «Եկեցէ՛ք» ի եւ Հսկման կարգերը: Հանդիսապէս էր Լուսարարապետ Սրբազանը:

Կիր. 29 Օգոստ.- Վերափոխումն Ա. Աստուածածնի: Առաւօտուն, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միարան Հայրեր, ինճնաշարժերով իջան Գերսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ա. Աստուածածնայ Տանար, ուր Տիրամօր Ա. Գերեզմանին վրայ հանդիսաւոր Ա. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Լուսարարապետ Սրբազանը: Պատարագիչ Սրբազանը հանդիսապետեց «Անդաստան»ին:

Բշ. 30 Օգոստ.- Յիշատակ Մեռելոց: Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Ա. Պատարագէն վերջ կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան կարգ, համայն ննջեցեալներուն հոգիներուն ի հանգիստ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Շր. 4 Սեպտ.- Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տանարի աջակողմեան դասին մէջ գտնուող Ա. Յովհաննու Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 5 Սեպտ.- Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Յարութիւն, ըստ սովորութեան պատարագեց Տանարին Տեսուչը Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան, երաշխաւորաց խորանին վրայ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը:

Բշ. 6 Սեպտ.- Նախատօնակին ի Ա. Յակոբ, հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Գշ. 7 Սեպտ.- Ա. Յովակիմայ եւ Աննայի: Ըստ սովորութեան, Ա. Պատարագը մատուցուեցաւ Գերսեմանիի Ա. Աստուածածնայ Տանարի Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Պատարագեց Տանարին Տեսուչը Տ. Հայրիկ Վրդ. Գայայեան: Հանդիսապետն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Շր. 11 Սեպտ.- Արքայ Առաքելոցն Թովմայի Յակօբայ եւ Շմաւոնի: Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արդ. Արաջանեան: Նախատօնակին ի Ա. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Կիր. 12 Սեպտ.- Գիւտ Գօտույ Ա. Աստուածածնի: Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Աստուածածնայ Տանարի, Ա. Տիրամօր Գերեզմանին վրայ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Թէոդորոս Արդ. Զաւարեան: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Ա. Պատարագէն ետք, մասնաւոր

Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ 6 Սեպտեմբերին Տանարին մարտոյներուն, համայն ննջեցեալներուն հոգիներուն համար: Ծանուցման երկար ցանկը կարողաց տանարին տեսուչը Տ. Հայրիկ Վրդ. Գայայեան:

Շր. 18 Սեպտ.- Նիկիայ Ա. Ժողովոյն երեւեհարիւրութեամբն Հայրապետացն: Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

Կիր. 19 Սեպտ.- Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Յարութիւն, մեր վերնամտարան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արդ. Բարախանեան:

Բշ. 20 Սեպտ.- Նախատօնակին ի Ա. Յակոբ հանդիսապետեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Գշ. 21 Սեպտ.- Մնուէր Ա. Աստուածածնի: Առաւօտուն Տ. Արիս Եպս. Շիրվանեանի գլխաւորութեամբ Միարան Հայրեր ինճնաշարժերով իջան Գերսեմանիի ձորը, օրուան հանդիսաւոր Ա. Պատարագը Տիրամօր Ա. Գերեզմանին վրայ մատուցեց եւ քարոզեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Կատարուեցաւ Գոհարանական Մաղբանք, Հայաստանի Հանրապետութեան Ժ. Գ. տարեդարձին առթիւ, հանդիսապետեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Շր. 25 Սեպտ.- Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան:

- Խաչվերացի մեծահանդէս նախատօնակին նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը: Ապա Կենաց Փայտի մասունէր Ա. Գլխաղիրի մատուէն թափօրով փոխադրեց Աւագ Սեղան:

- Գիշերասկիզբին Մայր Տանարին մէջ պաշտուած «Հսկման» եւ «Եկեցէ՛ք» ի կարգերուն հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Կիր. 26 Սեպտ.- Տօն Վերացման Ա. Խաչին: Ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «Անդաստան» հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը: Օրուան հանդիսաւոր Ա. Պատարագը Մայր Տանարի Աւագ Սեղանին վրայ մատուցեց եւ քարոզեց Լուսարարապետ Սրբազանը:

Բշ. 27 Սեպտ.- Յիշատակ Մեռելոց: Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Կորիւն Արդ. Բաղդասարեան: Ա. Պատարագէն ետք կատարուեցաւ հոգեհանգիստ վասն հոգւոցն Մեկզոնեան հարազատաց Կարապետի եւ Գրիգորի բարերարաց ազգիս եւ Ա. Արոտոյ: Հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Շր. 2 Հոկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիլիսայիր: Ժամարարն էր Նիւ-Եօրթ, քաղաքէն հիւրարար ժամանած Տ. Առէն Արդ. ձեպէնեան:

Կիր. 3 Հոկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տանարի ձսխակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրնեան:

Ուր. 8 Հոկտ.- Նախատօնակը պաշտուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ վանքի եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Պարէտ Մ. Վրդ. Երէցեան:

Շր. 9 Հոկտ.- Ա. Գէորգայ Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Պարէտ Մ. Վրդ. Երէցեան: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Նորայր Արդ. Գազաբեան:

- ՎԼՍԹԵ ԵՄԲ, Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տանար, ուր մեր վերնամատրան մէջ պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսուր բափօր Տանարէն ներս: Թափօրապետն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրնեան:

Կիր. 10 Հոկտ.- Տօն Վարագայ Ա. Խաչին: (66Ո): Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

- Պատրիարք Սրբազան Հօր երկրորդ պաշտօնական մուտքէն ետք, օրուան հանդիսուր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Շր. 16 Հոկտ.- Արքեպիսկոպոստն եւ երկու Աշակերտացն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տանարի ներքին գաւթին մէջ գտնուող Ս. Գէորգայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 17 Հոկտ.- Այսօր կատարուեցաւ Ռամլէի Ս. Գէորգայ վանքի տարեկան ուխտագնացութիւնը, ի ներկայութեան Ճաֆայէն, Հայֆայէն եւ Երուսաղէմէն մասնակցող հաւատացեալներու: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Բագրատ Արդ. Պուրնէնեան:

ԵՂ. 21 Հոկտ.- Յետ երեկոյեան ժամերգութեան Պատրիարք Սրբազան Հօր ձեռամբ կատարուեցաւ կիսասարկաւազի Աստիճանի տուուչութիւն Ուրարակիրներ Արտակ

Յակոբեանի, Յովհաննէս Գէորգեանի եւ Պաւլ Դաւրեանի, եւ Աւետիս Շահինեանի: Արարողութեան խարտախլակն էր Լուսարարապետ Սրբազան, իսկ առընթերականները ժառանգաւորաց վարժարանի եւ ընծայարանի Տեսուչ Տ. Պարէտ Մ. Վրդ. Երէցեան եւ Տ. Թէոդորոս Արդ. Ջաւարեան: Իսկ Գ. դասարանի աշակերտներէն Սամուէլ Սաֆարեան, Նարեկ Մկրտչեան, Պաւլ Կարապետեան եւ Սահակ Յովակիմեան ստացան Ուրար կրելու արտօնութիւն:

Ուր. 22 Հոկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տանարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Բագրատ Արդ. Պուրնէնեան: Չորս նորընծայ կիսասարկաւազները ձեռնադրուեցան Սարկաւազ, Պատրիարք Սրբազան Հօր ձեռամբ:

- Սրբոց Թարգմանչաց նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը: Արարողութենէն ետք, կատարուեցաւ քահանայական կոչում Ս. Արոտոյս ընծայարանի Գ. Տարուայ ուսանող քարեշէնրի Յարութիւն Սարկաւազ եղիայեանի, խարտախլակութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր եւ առընթերակայութեամբ Ընծայարանի Տեսուչ Տ. Պարէտ Մ. Վրդ. Երէցեանի եւ Տ. Թէոդորոս Արդ. Ջաւարեանի:

Շր. 23 Հոկտ.- Ա. Թարգմանչաց Վարդապետացն մերոց: Տօն Ազգային եւ եկեղեցական: Մայր Տանարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Ս. Թարգմանչաց վարժարանին տեսուչը Տ. Թէոդորոս Արդ. Ջաւարեան:

Յարութիւն Սրկ. Եղիայեանի քահանայական ձեռնադրութիւնը կատարուեցաւ Աւագ Խորանին վրայ ձեռամբ Պատրիարք Սրբազան Հօր, խարտախլակութեամբ Լուսարարապետ Սրբազանի եւ առընթերակայութեամբ Տ. Պարէտ Մ. Վրդ. Երէցեանի եւ Տ. Բագրատ Արդ. Պուրնէնեանի: «Ողջոյն»էն առաջ Պատրիարք Սրբազան Ս. Միւռնոնով օծեց նակատը եւ Աջ եւ Ահեակ ձեռքերը ձեռնադրեալին, գայն վերակոչելով «Տէր Հայկազուն»:

«Ողջոյնի» պահուն, նախ Պատրիարք Սրբազան կը համրուրէ նոր օծեալին նակատը, ապա եկեղեցական դասը խորան քարձրանալով կը համրուրէ օծեալին նակատը եւ ձեռքը: Ժողովուրդը Ս. Պատարագի աւարտին, կը մօտենայ աջախամրոյրի, երբ եկեղեցւոյ ստեանին մէջ նորընծան լոյնեայն կ'ընթերցէ Ս. Աւետարանը:

Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն մեծանուն քարեբարներ, Գալուստի, Նուարդի, Սարգսի եւ

Տիրուհիի եւ համայն Կիւլպէնկեան գերդաստանի ննջեցեալներուն հոգիներուն ի հանգիստ, նախագահութեամբ Պատրիարք Արքայան Հօր:

- Կէսօրէ ետք, նորած Տ. Հայկազուն Արեղային վեղարի տուուչութիւնը կատարուեցաւ ժամերգութենէն ետք, ձեռամբ Պատրիարք Արքայան Հօր:

Կիր. 24 Հոկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Ծիրվանեան: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Էմմանուէլ Արդ. Աթաշանեան:

Շր. 30 Հոկտ.- Արքայան Չորից Աւետարանչացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարին գաւթին վրայ բացուող Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեան: Ժամարարն էր Տ. Համարածում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 31 Հոկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արդ. Բարսիսանեան:

Բշ. 1 Նոյ.- Ա. Յովսէփայ Աստուածաձեռն: Ըստ սովորութեան, Գեարեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարի Տեսուչը՝ Տ. Հայրիկ Վրդ. Գայայեան պատարագեց նոյն տաճարին մէջ գտնուող Հայր Յովսէփի գերեզմանի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Պարէտ Մ. Վրդ. Երէցեան:

Շր. 6 Նոյ.- Ա. Երկուտասան Վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Կորիւն Արդ. Բաղդասարեան:

- Կէսօրէ ետք Լուսարարապետ Արքայան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանի եւ Խաչգիւտի ուխտերէն ետք, վերջնոյս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ:

Ապա կատարուեցաւ Տնօրինական Արքատեղեցաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 7 Նոյ.- Գիւտ Խաչի (326) Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Իսահակ Արդ. Մինասեան: Ապա կազմուեցաւ մեծահանդէս թափօր իջնելով նախ Գիւտ Խաչի այրը եւ քարծրանալով Ս. Գերեզմանին շրջափակը, երիցս դառնալով անոր շուրջը եւ մէկ անգամ Պատանատեղւոյն: Թափօրը կը գլխաւորէր Պատրիարք Արքայան Հայրը, ամպհովանիի տակ եւ Կենաց Փայտի մասունքն ի ձեռին: «Խաչի Քո Քրիստոս» շարականի երգեցողութենէն եւ խնկարկութենէն ետք, արարողութիւնները վերջացան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Շր. 13 Նոյ.- Տօն Ամենայն Արքայ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Պարէտ Մ. Վրդ. Երէցեան:

Կիր. 14 Նոյ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Երուսաղէմի Հրէական բաժնին մէջ գտնուող Մեծ Սուրբին Գրիգոր Լուսաւորիչ անուը կրող եկեղեցւոյ մէջ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրեան:

Ուր. 19 Նոյ.- Նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Ծիրվանեան:

Շր. 20 Նոյ.- Ա. Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

- Ըստ սովորութեան կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն, Ս. Արոճոյ քարերարուի Աղաւնի ձէվահիրեանի եւ պարագայից հոգիներուն ի հանգիստ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Ծիրվանեան:

Կիր. 21 Նոյ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Ծիրվանեան: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Շր. 27 Նոյ.- Արքայ Առաքելացն՝ Անգրէի եւ Փիլիպպոսի: Նորընծայ՝ Հոգեշնորհ Տ. Հայկազուն Արդ. Եղիայեան իր անդրանիկ Ս. Պատարագը մատուց Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ:

Կիր. 28 Նոյ.- Նորընծային ուսուցիչն ու վարժիչը Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան, պատարագեց Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ: Նորընծայ Արեղան սպասարկեց իր ուսուցիչին եւ վարժիչին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Բշ. 4 Յուլիս.- Միացելու նահանգներու Անկախութեան 228րդ տարեդարձին առթիւ, Միացելու նահանգաց Ընդհանուր Հիւպատոս Դաւիթ Փիրսին հրաւերով, Պատրիարք Սրբազանը ներկայ գտնուեցաւ Նօթր Տամին մէջ կազմակերպուած ընդունելութեան, ընկերակցութեամբ Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեանի, Գուսան Վրդ. Ալեանեանի եւ Իսահակ Արդ. Միմասեանի:

Դշ. 14 Յուլիս.- Յրանսայի Ազգային Օրուան առիթով, Յրանսական Ընդհանուր Հիւպատոսի Ռէժի Քեթշէթին հրաւերին ընդունաչելով, հիւպատոսարանի շէնքին մէջ կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Գուսան Վրդ. Ալեանեանի եւ Իսահակ Արդ. Միմասեանի:

Եշ. 29 Յուլիս - Ի պատիւ Վրաստանի նորընտիր նախագահ Վեսի. Միխայէլ Սահակաշուիլիի, Վրաստանի Ընդհանուր Դեսպան Փրօֆ. Ռէվազ Գաչեչիլաձէի հրաւերին ընդունաչելով, Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Ընծանուէր Արդ. Բարախանեանի, Թեոդորոս Արդ. Զաքարեանի եւ Նորայր Արդ. Գազազեանի, ներկայ գտնուեցաւ Երուսաղէմի "King David" պանդոկին մէջ կազմակերպուած հիւրասիրութեան:

Ուրբ. 13 Օգոս.- Հ.Մ.Ը.Միութեան ըսկառններու եւ արեւմուտներու բանակումին, որ կազմակերպուած էր Լաթրուիի անտառակին մէջ, Պատրիարք Սրբազան Հայրը այցելութիւն տուաւ, ընկերակցութեամբ Նորայր Արդ. Գազազեանի:

Դշ. 1 Սեպտ.- Առաւօտեան ժամը 8.30ին, տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Մանկապարտէզի եւ Երկրորդական վարժարանի ուսումնական նոր տարեշրջանի բացումը, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր, որուն կ'ընկերանային Միարան Հայրեր: Պատրիարք Սրբազան Հայրը մաղթեց կրթական գործունէութեան ոլորտին մէջ նորանոր յաջողութիւններ՝ գործակցութեամբ թէ՛ աշակերտութեան, թէ՛ ուսուցչական կազմին եւ թէ՛ ծնողաց:

Եշ. 2 Սեպտ. - Վրաստանի Ընդհանուր Դեսպան Փրօֆ. Ռէվազ Գաչեչիլաձէի «Բարի Երթ»ի առիթով Հերցելիոյ մէջ կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ըն-

կերակցութեամբ Տ. Արիս Եպս. Եիրվանեանի եւ Տ. Իսահակ Արդ. Միմասեանի:

Բշ. 6 Սեպտ.- Առաւօտեան ժամը 9ին տեղի ունեցաւ ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի վերաբացումը: Կրթական տարեմուտի արարողութեանը Պատրիարք Սրբազան Հօր հետ ներկայ էին Միարանութիւն եւ ուսուցչական կազմ: Յետ ընթերցման «Ս. Աւետարանի» պատգամին, Պատրիարք Սրբազան Հայրը դիտել տուաւ որ 2004-2005 ուսումնական տարեշրջանին ժառանգաւորաց աշակերտներու թիւը պիտի համալրուի Հայաստանէն աւելի ուշ ժամանող ուսուցիչներով եւ 16 ժառանգաւոր սաներով: Պատրիարք Սրբազան Հայրը առանձին տեսակցութիւն ունեցաւ ուսուցչական կազմին հետ:

Գշ. 14 Սեպտ.- Ոստիկանապետ Նիսօ Շախամի հրաւերով, Հրէից Նոր Տարեմուտին առթիւ Հին Քաղաքին Նափայի Դարպասին կից Դաւիթ Բերդին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութեան արարողութիւն, որուն կը մասնակցէին Երուսաղէմի եւ շրջակայ տարբեր համայնքներու եւ յարանուանութեանց ներկայացուցիչներ եւ համայնապետեր (մուխթար): Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Արիս Եպս. Եիրվանեանի, Իսահակ Արդ. Միմասեանի եւ Հայոց Մուխթար Կարապետ Յակոբեանի ներկայ գտնուեցաւ հիւրասիրութեան: Այս առթիւ Ոստիկանապետ Նիսօ Շախամ ներկայացուց զինք փոխարինող Իլան Յրանֆօ Ոստիկանապետը:

Դշ. 15 Սեպտ.- Երուսաղէմի քաղաքապետ Ուրի Լուփիանսփի կողմէ բոլոր կրօնապետներուն ուղղուած, Հրէից տօնին առթիւ եղած հրաւերին ընդառաջելով, Դաւիթ Բերդին բացօթեայ հրապարակին մէջ տեղի ունեցած հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս Եպս. Եիրվանեանի, Գուսան Վրդ. Ալեանեանի:

Գշ. 21 Սեպտ.- Հայաստանի Հանրապետութեան 13րդ տարեդարձի առթիւ, Երուսաղէմի մէջ ՀՀ Պատույ Հիւպատոս Յուլիկ Մումեանի հրաւերով, Նօթր Տամի բացօթեայ հաւաքավայրին մէջ կազմակերպուած հիւրասիրութեան, ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը Միարանութեան անդամներով:

Գշ. 12 Հոկտ.- Ընդառաջելով Սպանիոյ Ազգային Օրուան տօնակատարութեան առթիւ Երուսաղէմի Ընդհանուր Հիւպատոս Սէնորա Յօզէ Ֆէրէյի հրաւերին, հիւպատոսարանի պարտէզին մէջ կազմակերպուած ընդունե-

լուծեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս Եպս. Ծիրվանեանի, Գուսան Վրդ. Ալեանեանի եւ Նորայր Արդ. Գազազեանի:

Գշ. 26 Հոկտ.- Աւստրիոյ Ընդհանուր եւ Լիազօր Դեսպան Հէնկըլ Գըրթին հրաւերով, Հերցելիոյ դեսպանատան բակին մէջ, Աւստրիոյ ազգային օրուան առիթով կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գրտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Ընծանուէր Արդ. Բարախանեանի եւ Իսահակ Արդ. Մինասեանի:

Մր. 30 Հոկտ.- Սպանիական Կաթոլիկ Եպիսկոպոսաց Ժողովի ներկայացուցչութիւն մը, նախագահութեամբ Մատրիտի Արքեպիսկոպոս Կարտինալ Անտոնիա Մարի Ռուֆօ Վարելայի, Ս. Երկիր կատարած ուխտի առթիւ, Երուսաղէմի Նոթրը Տամ Կեդրոնին մէջ հանդիպում ունեցաւ Երուսաղէմի հոգեւոր պետերուն հետ: Ընդառաջելով Երուսաղէմի Լատին Պատրիարք Մօնս. Միշէլ Սապպահի հրաւերին, Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Արիս Եպս. Ծիրվանեանի եւ Իսահակ Արդ. Մինասեանի, ներկայ գտնուեցաւ հանդիպմանը, ուր քննարկուեցաւ ներկայիս քաղաքական կացութիւնը:

Ուրբ. 12 Նոյ.- Պաղեստինի Ինքնավար Իշխանութեան առաջին Նախագահ Եսաէր Արաֆատին յուղարկաւորութեան առթիւ, առաւօտուն Եգիպտոսի մայրաքաղաք Գահիթէի մէջ կատարուած գինուորական արարողութեան, ներկայ գտնուեցաւ Ս. Աթոռոյ Լուսարարպետ Նուրհան Արք. Մանուկեան, ներկայացնելով Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը:

Կէսօրին, Երուսաղէմի եկեղեցիներու հոգեւոր պետերը միասնաբար ինքնաշարժերու թափօրով մեկնեցան դէպի Ռամալլա քաղաքը, ուր տեղի պիտի ունենար թաղման արարողութիւնը: Պատրիարք Սրբազան Հօր կ'ընկերակցէին Արիս Եպս. Ծիրվանեան, Սեւան Եպս. Ղարիպեան եւ Իսահակ Արդ. Մինասեան:

Կէսօրէ ետք, ուղղաթիւներով Գահիթէ քաղաքէն բերուեցաւ Պաղեստինեան Առաջնորդի դագաղը, ներկայութեամբ բազմահազար Պաղեստինցի ժողովուրդի: Եւ մայրամուտէն առաջ Պաղեստինի Իշխանութեան նախագահ Եսաէր Արաֆատին մարմինը ամփոփուեցաւ իր Մուստա քնակավայրին բակին մէջ:

Պատրիարք Սրբազան Հայրը իր ցաւակցութիւնը յայտնեց Պաղեստինի Վարչապետին եւ գործող Իշխանաւորներուն, յանուն Միաբանութեան եւ Հայ Համայնքին:

Դշ. 17 Նոյ.- Մերօպալիկայի հանրապետութիւններէն Լատվիայի պետութեան 86րդ տարեդարձին առթիւ, Թել Ավիվին "David International" պանդոկին մէջ կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս Եպս. Ծիրվանեանի, Ընծանուէր Արդ. Բարախանեանի եւ Իսահակ Արդ. Մինասեանի:

Բշ. 22 Նոյ.- Պելինիայի Թագաւորի ծննդեան տարեդարձին առթիւ, Երուսաղէմի Պելինիայի Ընդհանուր Հիւպատոս Կիտօ Կորթիսին հրաւերով կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս Եպս. Ծիրվանեանի եւ Գուսան Վրդ. Ալեանեանի:



ՅՈՒՍԻԿ ԵՊՍ. ՊԱՂՏԱՍԵԱՆ  
1934 - 2004

## ՀԱՆԳԻՍՏ ՏԷՐ ՅՈՒՄԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՂՏԱՍԵԱՆԻ

2004 թ. Յուլիսի 27-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Ճլորիոյայի հիւանդանոցի մէջ ի Տէր հանգեալ Գերշ. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեանը:

Սրբապան Հայրը պատանի տարիքից իր կրօնական ուսումն ու դաստիարակութիւնը ստացել է Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանում, եւ երկար տարիներ ծառայել Հայֆայի եւ Եաֆայի համայնքներում իբր հոգեւոր հովիւ, ինչպէս նաեւ Սբ. Աթորոյս կալուածոց տեսուչ:

Սրբապան Հօր Թաղման Տան Կարգը տեղի է ունեցել Օգոստոսի 1-ին Լիվինկաթընի (Նիւ Ճըրպի) Սբ. Աստուածածին Եկեղեցում, իսկ վերջին օծումը՝ Օգոստոսի 2-ին՝ նոյն եկեղեցում: Վերջին օծման արարողութեանը նախագահել է Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Տ. Խաժակ Արք. Պարսամեանը:

Սրբապան Հօր մարմինը անփոփոխել է իր ծննդավայր Փրովիդընս քաղաքում՝ Ռոյ Այլնդ, Երեքշաբթի օրը՝ Օգոստոս 3-ին:

Սրբապան Հօր մահուան կապակցութեամբ Հոգեհանգստեան պաշտօն կատարուեց նաեւ Երուսաղէնում, Օգոստոսի 1-ին՝ Սբ. Հրեշտակապետաց Եկեղեցում մատուցուած պատարագից անմիջապէս յետոյ:

Ստորեւ ներկայացնում ենք Հանգուցեալ Սրբապան Հօր անփոփ կենսագրութիւնը.

\* \* \*

Յուսիկ Եպս. Պաղտասեանը (աւապանի անունը Սարգիս) ծնուել է 1934 թուականին՝ Ռոյ Այլնդ նահանգի Փրովիդընս քաղաքում: 1959 թուականին Երուսաղէնում ձեռնադրուել է կուսակրօն քահանայ: 1960 թուականին նշանակուել է Իսրայէլում Հայ Պատրիարքի ներկայացուցիչ եւ Հոգեւոր հովիւ Հայֆայի եւ Եաֆայի համայնքների: Միաժամանակ նշանակուել է կալուածոց տեսուչ:

Սուրբ Երկրում 11 տարի ծառայելուց յետոյ, 1971 թուականին մեկնում է Ամերիկա եւ նշանակուում հոգեւոր հովիւ Նիւ Ճըրպի նահանգի Իրվինկթոն քաղաքի Սուրբ Աստուածածին Եկեղեցում: 1974-ին Լիվինկաթըն քաղաքում Իրվինկթոն համայնքի գնած նոր կալուածքի վրայ Հոգեւոր Հովիւ Տ. Յուսիկ Ծ. Վրդ. Պաղտասեանի ջանքերով կառուցում է նոր եկեղեցի, ուր փոխադրուելով հաստատում է նաեւ Հայր Սուրբը: Ծիսական հովուի պարտականութիւններին պուզահեռ, Սրբապան Հայրը եղել է նաեւ Միացեալ Նահանգաց Հայց. Եկեղեցոյ Արեւելեան Թեմի Առաջնորդ Սրբապանի փոխանորդ եւ առաջնորդարանի հաշուապահական հարցերի գլխաւոր պատասխանատու: 1992 թ. վերադառնալով Երուսաղէն, Պատրիարք Սրբապան Հօր թելադրութեամբ եւ Տնօրէն Ժողովի որոշումով նշանակուում է կալուածոց տեսուչ, իսկ նոյն տարուայ Սեպտեմբեր ամսին Ն.Ս.Օ.Տ.Տ. Վապգէն Ա. Վեհափառի ձեռամբ օծում է եպիսկոպոս՝ հանդիսանալով Հայ եկեղեցու առաջին ամերիկածին եպիսկոպոսը: 1998 թուականին առողջական պատճառներով վերադառնում է Ամերիկա, ուր կնքում է իր մահկանացուն 2004 Յուլիս 27-ին:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA (EASTERN)  
ԱՄԵՐԻԿԱՆ ԱՐԽԵՊԻՍԿՈՒՊՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐՄԵՆԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի. 5534  
Յուլիս 29, 2004

Ամենապատիւ  
Տ. Թորգոմ Արք. Մանուկեան  
Պատրիարք Երուսաղէմի Առաքելական Արտի  
Երուսաղէմ

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայր:

Սրտի ցաւով կը տեղեկացնեմ թէ Ամերիկայի Արեւելեան Թեմի նախկին  
հոգեւոր հովիւներէն Գ. Երչ. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան, սրտի տագնապի  
հետեւանքով, ի Տէր հանգեաւ Երեքշաբթի, Յուլիս 27, 2004, երեկոյեան ժամը  
8:00-ին՝ Ֆլորիտայի հիւանդանոցին մէջ:

Վախճանեալ Սրբազան Հօր Տան Կարգը տեղի պիտի ունենայ Կիրակի,  
Օգոստոս 1, 2004, երեկոյեան ժամը 7:00-ին Լիվինկսքրնի (Նիւ Դըրզի) Մ.  
Աստուածածին Եկեղեցոյ մէջ. իսկ Վերջին Օծումը՝ Երկուշաբթի, Օգոստոս 2,  
2004, առաւօտեան ժամը 10-ին, Մ. Պատարագի ընթացքին:

Հանգուցեալ Յուսիկ Սրբազանի մարմինը պիտի ամփոփուի Փրավիտենսի  
(Ռօս Այլընտ) գերեզմանատան ընտանեկան դամբարանին մէջ:

Մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ Հոգեհանգստեան Պաշտօն պիտի  
կատարուի Կիրակի, Մեպտեմբեր 5, 2004, Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեանի  
վախճանման քառասունքին առիթով:

Կ'աղօթեմ որ Տէրը ընդունի Յուսիկ Սրբազանի հոգին եւ Իր երկնային  
լոյսերուն մէջ հանգչեցնէ:

Մատչելով ի համբոյր Ձերդ Ամենապատուութեան Օծեալ Աջոյն  
Խոնարհաբար

Խաժակ Արք. Պարսամեան  
Առաջնորդ

### ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻԻՆ

- Հայրապետական Կոնդակ Հայ Գրերու 1600 ամեակի	Ամենայն Հայոց Կթղկս. Գարեգին Բ.	227-228
<b>ԿՐՕՆԱԿԱՆ</b>		
- Տարբերութիւնը Երկու Եղբայրներու Միջեւ	Նուրհան Արք. Մանուկեան	229- 232
- Անմահութեան Գաղափարը Անհերքելի Ճշմարտութիւն է	Վարդան Ա. Քհնյ Տիւլկերեան	232-234
- Ուխտ եւ Ուխտագնացութիւն	Կորիւն Արդ. Բաղդասարեան	235-236
- Աղօթք	Զաւարիա Քհնյ. Սարիբէկեան	237-240
- Աղբատ Ղազարոսի Առակը	Շահէ Ա. Քհնյ. Ալթունեան	240-241
- Երանի Այն Մեռելներուն Որոնք Այժմէն իսկ Գնջեցին ի Տէր	Ալպէո Նորատունկեան	242-250
<b>ԲԱՆԱՍՏԵՂՄԱԿԱՆ</b>		
- Ինչպէ՞ս Սգայ Սիրելին	Անել	251
- Հաւատք	Ժագ Ս. Թակոբեան	252
- Քարաւան	Արտակ Համբարձումեան	253
- Անանցը	Թորգոմ Կարապետեան	254-255
<b>ԳՐԱԿԱՆ</b>		
- Համօն	Նահապետ Մելիքնեան	256-260
- Երգը	Վեր. Յովհաննէս Գարնեան	261
- Թրվոունը	Ալիք	262-265
- Պուրակին մէջ		
<b>ԵՐԱԺՇՏԱԿԱՆ</b>		
- Կոմիտաս Վարդապետի Թուրքերէն Ստեղծագործութիւնները	Տիրան Լոգմագյոզեան	266-275
<b>ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ</b>		
- «Զի Ուր ԳէՇն ԻՑէ, ԱնԴՐ Ժողովեցին Արծուիք	Ադամ Քհնյ. Մակարեան	276-284

**ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ**

- Միւս Երեսն էլ դարձնել  
Երեւ Տեղին Հարցեր 285-287
- Միւս Երեսը Շրջելը 287-289  
Ռազմավարութիւն է.
- Միւս Երեսը Շրջելը 289-291  
Նոր Կտակարանի Մէջ
- Պատերազմ եւ Խաղաղութիւն 291-292  
Ուժի Միջոցով  
**ՅԱԿՈՒՐ ՆԵՐՍՈՅԵԱՆ**  
Անգլիերէնից  
Թարգմանեց  
Յովնան Արղ. Բաղդասարեան

- Շ. Ռ. Պերպերեանը 293-299  
ուսուցիչ իմաստասիրութեան  
Ջաֆարիա Քիւնյ.  
Սարիբէկեան

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ**

- Յակոբոս Տեառնեղբոր Անիւնները 300-301  
Բագրատ Արղ.  
Պուրճեմեան
- Տասնամեայ Տարելից 302-303  
Վազգէն Ա. Կարողիկոսի  
Դոկտ. Հ. Զաւէն  
Արզումանեան
- Պատարագի Լեզուն 304-307  
Ջենոբ Քիւնյ.  
Նալպանտեան

**ՏԵՂԵԿԱՆՔ ԿՈՐԻԻՆ ԱԲՂ. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԻ** 308-313

- Մանկապարտէզի Հանդէս 308
- Սրբոց Թարգմանչաց Ամավերջի Հանդէս 308
- Ժառ. Վարժարանի Ամավերջի Հանդէս 309
- Շահան Արք. Սվանեանի Այցելութիւն 310
- Առէն Արղ. Ճէպէմեանի եւ Յակոբ Ներսոյեանի Այցելութիւն 310-311
- Չեռնադրութիւններ Սարկաւազաց եւ  
Հայկազուն Արղ. Եղիայեանի 311-312
- Ռամլէի Ս. Գէորգ Եկեղեցւոյ վերածում 313

- Թուֆի Միջադէպ 314  
Դիւան Ս. Աթոռոյ
- ԹԲՆԵԼՈՒ Միջադէպերուն Հետ 315-316  
Առընչուող մտահոգութիւններ  
Դիւան Ս. Աթոռոյ

- Բարեպաշտական Նուէրներու 317-318  
Յանկ 2004 Տարւոյ  
Նուրեան Արք. Մանուկեան  
Լուսարարապետ Ս. Աթոռոյ
- Տ. Հայկազուն Արղ. Եղիայեան 319


- Ս. ՅԱԿՈՒՐ ՆԵՐՍԷՆ 320-326

- Հանգիստ Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեանի 327-329

- Բովանդակութիւն 330-331



ԵԱՍԷՐ ԱՐԱՅԱԹ (1929-2004)  
Պաղեստինեան Իշխանութեան Նախագահ



ԵՂ. 12 ՆՈՅ. 04.- Պաղեստինեան Իշխանութեան Նախագահ Եւաղը Արամիարի բարուհը  
 Բամալլայի մէջ: Իճնաբիւրներ Պահիրէնէ Նախագահին գլխաւորը հը փոխանցին  
 Բամալլա: Պատրաստուած գերեզմանին մօտիկ, դագարին ժամանան սպասող  
 ամբոյին մէջ Յունաց Պատրիարքին հետ՝ Թորոզ Պատրիարք, Սեւան Եպս. Ղարիպեան:





Կիր. 30 Մայիս 04.- Մանկապարտեզի Շրջանաւարտ Մաղիկ դասարան. (Բ. Շարֆ՝ Զախէն Աջ) Օր. Սուսաննա Միրզոյեան, Տիկին Այրին Էօրտէկեան, Թորգո՛ Պատրիարք, Տեսուչ՝ Թէոդորոս Արղ. Զաւարեան, Տիկին Ալին Պոյանեան



Շր. 5 Յունիս 04.- Սրբոց Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի շրջանաւարտներ  
 Եւ ուսուցչական կազմ.- Զախէն աջ՝ Ա. Շարֆ.- Արմինէ Անդրէասեան, Սօսի  
 Մելիտոսեան, Յակոբ Մնացականեան, Անուշ Նազգաշեան, Արփինէ Նազգաշեան,  
 Տնօրէն՝ Եղիա Տիգրանեան, Պատրիարք Սրբազան, Տեսուչ՝ Թէոդորոս Արղ. Զաւարեան,  
 Արշալոյս Եագուպեան, Գեղան Նանարեան, Նորա Նազգաշեան, Յրանսուհի Աւագեան,  
 Անթառամ Գարակէօզեան: Բ. Շարֆ.- Ազնիւ Պաղտասարեան, Սեդրակ Պալեան, Ռիքա  
 Դաւիթեան, Արփիակ Նազգաշեան, Արմիկ Պէլեան, Պետիկ Պաղամեան, Մակի  
 Յովհաննիսեան եւ Անահիտ Օհաննէսեան:






Ուր. 11 Յունիս 04.- Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի շրջանաւարտից հանդէսը: (Աջէն Չախ) Յովհաննէս Գէորգեան (Ժառանգաւորաց), Յարութիւն Սրկ. Եղիայեան (Ընծայարան), Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան (Տեսուչ), Պաւել Դաւրեան եւ Արտակ Յակոբեան (Ժառանգաւորաց):





Կիր. 18 Յուլիս 04.- Եսեան Արք. Ավանեան, Պոլիսէն, ուխտի պատարագ իր ճարտարանէն  
 Սրբոյ Յակոբեանց Մայր Տանարի մէջ կուսակիտն Քահանայ, ձեռնկոնքըրդան 50-  
 անեակին աղիթով: Միարանական սերմանտան մէջ. Եսեան Արք. Ավանեանի ուխտի  
 Քորզոմ Պատրիարք, Անուան եպս. Ղարիպեան:






Շր. 2 Հոկտ. 04.- Ուխտաւորաբար երուսաղէմ այցելող Տիար Յակոբ Ներսոյեանի հետ տեսակցութիւն Պատրիարքարանի մէջ: (Խմբանկար) Աշէն՝ ծախ, Ա. շարք.- Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան, Նորայր Արդ. Գազազեան, Կորիւն Արդ. Բաղդասարեան. Բ. շարք.- Թէոդորոս Արդ. Զաւարեան, Արիս Եպս. Շիրվանեան, Թորգոմ Պատրիարք, Յակոբ Ներսոյեան, Առէն Արդ. Ճէպէնեան, Էմմանուէլ Արդ. Արաջանեան:



Կիր. 17 Հոկտ. 04.- Ուխտագնացուրիւն Բազմէկի Ա. Քրտի Եկեղեցւոյ Կաթողիկոսը



Կիր. 17 Հոկտ. 04.- Ուխտացանցութիւն Քամէի Ա. Գեորգ աւերակ վանքին: Լուսցում եւ Օձուն Ա. Գեորգ Եկեղեցւոյ խորանի ձեռամբ Լուսաբարձացեալ Յարինի Արք. Մանուկեանի, արքեպիսկոպոս Գրուսան Գրք. Ալեանեան, Խաչրատ Արք. Պարթեւեան:



Կիր. 17 Հոկտ. 04.- Ռեխտացնացուքիւն Բամբէր Ա. Քէորց տնայի չափէն Ա. Պատարոց նորած Ա. Քէորց Եկեղեցւոյ մէջ: Պատարոցի Քայլան Արք. Պատրիարք.



Եջ. 21 Հոկտ. 04.- Ուրբաթ կրօնու տրւչութիւն ժառանգաւորաց Վարժարանի չորս սաներու. (Աջէն Չախ) Սահակ Յովակիմեան, Գաւէլ Կարապետեան, Սամուէլ Սաֆարեան, Նարեկ Մկրտչեան:



Ուրբաթ 22 Հոկտ. 04.- Սարկաւազ ձեռնադրութիւն ժառանգաւորաց Վարժարանի շրջանաւարտ երեք սաներու՝ (Աջէն Չախ) Արտակ Յակոբեան, Յովհաննէս Գէորգեան, Գաւէլ Դարեան, եւ (Հայֆայէն) Աւետիս Շահինեան:



Նր. 23 Հոկտ. 04.- Տօն Սրբոց Քարգմանչաց: Կուսակրօն Քահանայ ձեռնադրութիւն Տ. Հայկազուն Արղ. Եղիայեանի, ձեռամբ Քորգոմ Պատրիարքի, խարտաւիյակութեամբ Լուսարարապետ Նուրհան Արք. Մանուկեանի, առընթերակայութեամբ Պարէտ Մ. Վրդ. Երեցեանի եւ Բագրատ Արղ. Պուրեւեանի: Պատարագիչ՝ Քեղդորոս Արղ. Զաւարեան:



Վեղարի տրւչութիւն եւ օրհնութիւն Հայկազուն Արղ. Եղիայեանի:

**«Սիոն» Ամսագրի բաժանորդագրութիւն**

- Սիոն ամսագրի խմբագրութիւնը կը փորձէ սրբագրել եւ ամբողջացնել ցամկը իր բաժանորդներում:

- Եթէ կը ցամկաց որ ձեր անունը ունենամք ցամկիմ մէջ մեր բաժանորդներում, հանձնէք մերքեւի կտրումը յստակ եւ գլխազիր տասերով ամբողջացնել եւ փութով մեր մօր հասցէիմ ղրկել: P.O.Box 14235 Jerusalem, Old City. Isr.

- Նախորդ տարիներում Սիոն ամսագիրը ձրի ղրկուած է հարիւրներով հասցէներու: Նկատի առած մամուամղ զուժաւոր էջերու տպագրութեամ սղութիւնը պարտաւոր ենք ձեզմէ բաժանորդագիմ խմղրել:

խմբագրութիւն

**ՊԱՏՐԱՐՔՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄ  
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԻՈՆԻ**

Անուն.- -----

Տիտղոս.- -----

Կազմակերպութիւն.- -----

Հասցէ.- -----

Հանձնէք մերփակ գտմել մեր փոխգիրը-----

Իրր բաժանորդագիմ ՍԻՈՆԻ -----

ՊԱՐՁ կամ ՕԴԱՅԻՆ ԹՂԹԱՏԱՐՈՎ ՂՐԿԵԼՈՒ -----

Ստորագրութիւն

Բաժմեզիմ.-

Պարզ Թղթատարով

US\$108\*

US\$200

Մէկ տարի

Երկու տարի

Օղայիմ Թղթատարով

US\$ 128

US\$ 240

\*Կամ՝ ձեր երկրիմ համազատասխամ զումարով:



**NOTICE TO SUBSCRIBERS**

The Armenian Patriarchate of Jerusalem is drawing up a new updated list of subscribers to its official gazette, SION.

In order to ensure that your name is on the list, you are kindly requested to fill in the form below and send it back to us, with your remittance, as soon as possible.

Please write to our new address: POB 14235, Jerusalem, Israel.

We would like to point out that while in previous years it has been the custom to distribute the gazette virtually free of charge to hundreds of subscribers, escalating costs and, particularly, the introduction of colour printing, has imposed upon us the obligation of trying to recover part of these costs.

The Editor

**"SION" SUBSCRIPTION RENEWAL FORM**

Name:	Address:
Title:	
Organisation:	
Please enter my/our subscription for "SION," for a period of _____ year(s). My/our check for _____ covering the cost of subscription and Surface/Airmail charges, made out to the Patriarchate, is enclosed.	
Signature:	RATES: Surface Mail      Air Mail
Official seal:	1 year: US\$108*      1 year: US\$ 128 2 years: US\$200      2 years: US\$ 240
	*Or equivalent in your local currency.